Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՕՆԻԿ ՍԱՐԳՍԻ ԽՆԿԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(ՀԻՆ ՔԱՐԻ ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ
ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ)

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԱՍՈՂԻԿ

«ԱՍՈՂԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ – 2009

ՀՏԴ 902/904 (479.25) (07)
ԳՄԴ 63.4 (2Հ) y 7
Խ 642

Աշխատանքը հրատարակվում է Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Աշխատանքը հրատարակվում է «Ասողիկ» հրատարակչության հովանավորությամբ

Խմբագիր՝ պատմ. գիտ. թեկնածու
ՊԱՎԵԼ ՍԵԴՐԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԽՆԿԻԿՅԱՆ Օ.Ս.

Խ 642 Հայաստանի հնագիտություն: (Հին քարի դարից մինչև Վանի թագավորության անկումը): Ուսումնական ձեռնարկ: – Եր.: «Ասողիկ» հրատարակչություն, 2009 թ., 242 էջ:

Աշխատանքում կարևորվում է նյութական մշակույթի աղբյուրագիտական նշանակությունը, հակիրճ ներկայացվում են հնագիտության զարգացման փուլերը, հնագիտական հասկացությունները, հուշարձանների հետազոտության եղանակները, Հայաստանի հնագիտության ձեռք բերած նվաճումները:

Ամփոփ կերպով ցույց է տրվում նախնադարից մ.թ.ա VIդ. ընդգրկող ժամանակաշրջանում Հայաստանի բնակիչների նյութական մշակույթի զարգացման ընթացքը, տարբեր դարաշրջանների մշակույթներին բնորոշ առանձնահատկությունները ու հատկանշական գծերը, ներկայացվում են տնտեսության տարբեր ճյուղերը, հավատալիքները:

Ձեռնարկը նախատեսված է բուհերի պատմության, հումանիտար բաժինների ուսանողների և Հայաստանի հնագույն պատմությամբ հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակների համար:

ISBN 978-9939-50-074-4

ԳՄԴ 63.4 (2Հ) y 7

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հնագիտության առարկան. սահմանումը. Ձեռնամուխ լինելով հայոց պատմությունը շարադրելու ծանր ու պատասխանատու աշխատանքին՝ պատմահայր Խորենացին, ակնարկելով իր օգտագործած աղբյուրների առատությունը, միաժամանակ նշում է, որ դրանք, այնուամենայնիվ, անբավարար են եղել «փիշատակության արժանի քաջության շատ գործեր» կատարած ժողովրդի անցյալը հանգամանորեն ներկայացնելու համար: Պատմահոր կարծիքով՝ աղբյուրների սակավության պատճառը «մեր առաջին թագավորների և նախնիների անիմաստասիրությունն ու անփութությունն է եղել դեպի գիտությունը»: Պատմահայրը մեղադրում է նրանց, որ իրենցից առաջ եղած և իրենց իսկ կատարած հերոսական գործերը գրի չեն առել, որի պատճառով էլ դրանք մոռացության են մատնվել:

Պատմության մեջ, սակայն, ոչինչ չի կորչում, ոչինչ չի մոռացվում: Գրավոր աղբյուրների բացակայության կամ անբավարարության պատճառով, բնական է, տարբեր հարցեր կարող են իրենց արտացոլումը չգտնել պատմագիտական ուսումնասիրություններում, բայց ժողովրդի անցած ճանապարհը չի անհետանում: Այն հետազոտելու համար սոսկ գրավոր աղբյուրների տվյալները բավարար չեն: Իրոք, եթե փորձենք պատմությունը վեր հանել՝ հիմնվելով սոսկ գրավոր աղբյուրների վրա, ապա հազիվ թե կարողանանք 5000 տարուց ավելի խորանալ դեպի անցյալը, որը չնչին ժամանակաշրջան է մարդկության պատմության մեջ: Ավելին, չխոսելով արդեն դրանից առաջ տեղի ունեցածի մասին՝ միայն գրավոր աղբյուրների վկայություններով դժվար կլինի վեր հանել ուսումնասիրության ենթակա ժամանակաշրջանի պատմությունն իսկ. գրավոր աղբյուրները հաճախ անհրաժեշտ տվյալներ չեն պարունակում տարբեր հարցերի վերաբերյալ, շատ դեպքերում էլ այդ տեղեկությունները կցկտուր են, երբեմն՝ միակողմանի ու կանխակալ:

Ստեղծված բացը լրացվում է տարաբնույթ ու տարբեր ժամանակաշրջանների պատկանող հուշարձանների հետազոտությամբ, որով և զբաղվում է հնագիտությունը: Առանց հնագիտության հազիվ թե կարելի լինի հետևել մարդկության առաջացմանը, կազմավորմանը, զարգացման ընթացքին, վերականգնել նրա գործունեությունն ու ամբողջական պատմությունը իր ողջ բազմազանությամբ:

Խոսելով հնագիտության նշանակության մասին՝ անգլիացի նշանավոր հնագետ Գորդոն Չայլդը (1892-1957թթ.) նշում է, թե հնագիտությունը հեղաշրջում կատարեց պատմական գիտության մեջ՝ տարածական և ժամանակագրական առումներով ընդլայնելով պատմության մեջ խորանալու մեր հնարավորությունները: Հնագիտությունը, Գ.Չայլդի հա-

մոզմամբ, պատմական գիտության համար կատարեց այն դերը, ինչ աստղադիտակը աստղագիտության, մանրադիտակը՝ բնագիտության և ռադիոակտիվությունը՝ քիմիայի համար: Գ. Չայլդը հնագիտության նշանակությունը չի չափազանցնում. հնագիտությունը, հատկապես պատմության վաղագույն շրջանների ուսումնասիրության համար նոր դարաշրջան բացեց՝ հնարավորություն տալով անցյալի մեջ խորանալ ընդհուպ մինչև կենդանական աշխարհից մարդկային գծեր ձեռք բերող էակների անջատման ժամանակաշրջանը: Այդ հեռավոր անցյալը հնագիտությունն ուսումնասիրում է զգայական՝ տեսանելի և շոշափելի աղբյուրների միջոցով: Ասվածից հետևում է, որ հնագիտության ուսումնասիրության **օբյեկտը** մարդու գործունեության նյութականացված ձև հանդիսացող հին իրերն ու հուշարձաններն են: Դրանք հետազոտվում են գրավոր աղբյուրների ուսումնասիրության եղանակներից միանգամայն տարբեր, միմիայն հնագիտությանը հատուկ մեթոդներով: Հնագիտության այդ առանձնահատկությունները, որոնք արտացոլվում են նրա **աղբյուրների, դրանց ուսումնասիրության մեթոդների և հնագիտական հիմնային հասկացությունների եռյակի**՝ պատմության հետազոտության եղանակներից ամբողջությամբ տարբերվող ձևով, հնագիտությունը գիտությունների համակարգում առանձնացնում է իբրև բնական (օբյեկտի հետազոտության մեթոդներով. ճանաչողության էմպիրիկ մակարդակում) և հասարակական (հետազոտության տեսական մակարդակում) գիտությունների հետ սերտորեն կապված **ինքնուրույն գիտություն**: Վերջինիս ուսումնասիրության ժամանակագրական ընդգրկումը նախնադարից մինչև XV-XVI դդ. է: Դրանից հետո բազմաբնույթ գրավոր աղբյուրների առատությունը նվազագույնի է հասցնում հնագիտական աղբյուրները հետազոտելու անհրաժեշտությունը:

Հնագիտությունն, այսպիսով, գիտություն է, որն ուսումնասիրում է անցյալի նյութական մշակույթի օբյեկտների զարգացման օրինաչափությունները տարածության ու ժամանակի մեջ և այդ օբյեկտների միջոցով վեր հանում նախնադարից միջնադարն ընդգրկող հասարակական կյանքի տարբեր կողմերը:

Ներկա աշխատանքի նպատակը հնագիտության առարկայի, ուսումնասիրության եղանակների, հնագիտական հասկացությունների, ընդհանրացումներ կատարելու և գիտելիքներ ձեռք բերելու ուղիների մասին ընդհանուր պատկերացում տալն է. դրանք կօգնեն ընթերցողին այս կամ այն չափով խորամուխ լինել հնագիտական աշխատանքների մանրամասների մեջ, հասկանալ դրանց իմաստն ու նշանակությունը և ըստ այդմ, գեթ ընդհանուր գծերով, պատկերացում կազմել Հայաստան աշխարհում ապրած մարդու անցած ուղու մասին, որը տրվում է ամենաընդհանուր գծերով՝ նախնադարից մինչև վաղ հայկական միասնական պետության հանդես գալը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

§ 1. ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՆՉԵՎ XIX Դ. ԿԵՍԵՐԸ

«Հնագիտություն» անվանումն առաջացել է հունարեն **արխայոսհին** և **լոգոս**- խոսք, գիտելիք բառերից: **Արխեոլոգիա** բառն առաջին անգամ օգտագործել է Պլատոնը (մ.թ.ա. 427–347թթ.) «հնախոսություններ» կամ լայն առումով՝ «հին պատմություններ» իմաստով: Արխեոլոգիա բառի մեջ նույն իմաստն են ներդրել և հետագա հեղինակները (Դիոդորոս Սիկիլիացի, Դիոնիսիոս Հալիկառնասցի, Ստրաբոն և այլք): Դա բնական է. հնագիտությունն, իբրև գիտություն, պարզապես գոյություն չուներ և հնագիտական աշխատանքներ, եթե անտեսենք Բաբելոնի թագավոր Նաբոնիդի կամ Նաբոնահիդի (մ.թ.ա. 555–538թթ.), իր պալատի և Սիպպարի տաճարի հիմքերի մոտ կատարած «պեղումները», որոնց նպատակը պարզ չէ, բնականաբար չեն կատարվել: Այլ տեղեկություններ հնում կատարված հնագիտական աշխատանքների վերաբերյալ, հայտնի չեն: Ինչ վերաբերում է շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված հնագիտական նյութերի գերակշռող մեծամասնությանը, ապա դրանք անուշադրության են մատնվել. չնչին մասն է, երևի, թանգարան հանձնվել (դրանք գոյություն ունեին Հին Հունաստանում և Հռոմում) և կամ իբրև զարդ, կամ սոսկ իբրև գեղարվեստական արժեք ներկայացնող իրեր, հավաքվել են սիրողների կողմից:

Շքեղության, արվեստի տեսանկյունից են դիտվել և ըստ այդմ արժեքավորվել ու ձեռք բերվել հատկապես անտիկ դարաշրջանին պատկանող արձանները, արվեստի գործերը, որոնց հանդեպ եղած պահանջարկը, որը պայմանավորված էր նաև Հունաստանի ու Հռոմի պատմության և բանասիրության հանդեպ աճող հետաքրքրությամբ, պայմանավորում էր դրանց ձեռք բերման եղանակները. դրանք միջնադարում կատարյալ գանձախուզության բնույթ էին կրում: Այդ վիճակը շարունակվեց մինչև XVIII դ. կեսերը: Իբրև օրինակ կարելի է հիշատակել 79թ. Վե-

զուվից ժայթքած կարծրացած մոխրացեխով ծածկված Հերկուլանում և Պոմպեյ քաղաքներում կատարված գանձախուզական աշխատանքները. դրանք կատարում էր յուրաքանչյուր ոք, ով աշխատում էր հնություններ ձեռք բերելով ու վաճառելով դրամ վաստակել: Այդ հորատումներն արգելվեցին 1753թ., երբ սիրող հնագետները հարց հարուցեցին, թե որքանով է արդարացված նման մոտեցումը պատմական հուշարձանների հանդեպ: Այդ ժամանակ էր (1767թ.), որ Գեոտինգենի համալսարանի պրոֆ. Ք.Գ.Գեյնեն կրկին շրջանառության մեջ դրեց **արխեոլոգիա** տերմինը, դրա մեջ ներդնելով միանգամայն նոր՝ անտիկ ժամանակաշրջանի արվեստի հուշարձանների նկարագրության և դասակարգման նեղ իմաստը: Այդուհանդերձ, ոլքան էլ նախնական, անկատար ու թերի, այդ աշխատանքները այն հիմքն էին, որի վրա ձևավորվեց հնագիտությունը. XVIIIդ. եղավ այն ժամանակաշրջանը, երբ նախնական քայլեր սկսեցին կատարվել հավաքված նյութերը համակարգելու և հետազոտելու ուղղությամբ: Հետևելով Ֆրանսիայի օրինակին՝ եվրոպական մյուս երկրներում էլ սկսեցին համախմբել սիրողների ուժերը, նյութերը նպատակամղված կերպով հավաքելու և ուսումնասիրելու համար հիմնել ակադեմիաներ (Ճարտարապետության, գեղարվեստի, քանդակագործության, վիմագրերի ուսումնասիրության) ու թանգարաններ: Ռուսաստանում դրա հիմքը դրեց Պետրոս I-ը (1718թ.), Անգլիայում 1753-1756թթ. հիմնադրվեց Բրիտանական թանգարանը և այլն:

XVIIIդ. վերջում, XIXդ., նյութի կուտակման և այն դասակարգելուն զուգընթաց, հնությունների ուսումնասիրմամբ զբաղվող խմբերն աստիճանաբար սկսեցին ընդլայնել ուսումնասիրությունների ոլորտը: Դա պայմանավորված էր նաև բնական գիտությունների զարգացմամբ, ազգագրական նյութերի հանդեպ եղած նորովի մոտեցմամբ: Հետաքրքրություն էին առաջացնում և տարաբնույթ աշխատանքների ժամանակ հայտնաբերվող քարե պարզունակ գործիքները, ոսկրաբանական նյութերը և այլն, որոնք համեմատվում էին զարգացման ցածր աստիճանների վրա մնացած հասարակությունների կողմից օգտագործվող իրերի հետ: Առաջին քայլերը կատարող նախնադարյան հնագիտությունը համեմատական մեթոդի միջոցով, նորաստեղծ ազգագրության հետ փորձում էր վեր հանել, հետևել մարդկության զարգացման ընթացքին, պատասխանել իրեն հուզող այլևայլ հարցերի: Մասնավորապես XIXդ. լայն ճանաչում գտավ երեք դարերի (քար, պղինձ/բրոնզ, երկաթ), Լուկրեցիոս Կարոսի կողմից պատկերված, մարդկության զարգացման ընթացքը, որի պատճառը Դեմոկրիտը (մ.թ.ա. V-IVդդ.) կարիքն էր համարում:

Հայտնաբերված քարե գործիքները դասակարգվում էին, մշակվում դրանց հետազոտության մեթոդները, ուսումնասիրվում էին քարանձավների պատերին արված կենդանիների և այլ նկարները ու համադրվում պեղումների և տարբեր աշխատանքների ընթացքում գտնված կենդանիների ոսկրաբանական մնացորդների հետ: XIXդ. հնագիտական խոշոր հայտնագործությունների ժամանակաշրջան էր: Տարբեր երկրներում կատարվող պեղումներից հայտնաբերված մեծաքանակ նյութերը, լայն հորիզոններ բացելով պատմության առջև, նոր խնդիրներ էին առաջադրում, որոնց լուծումը համատեղ ջանքեր էր պահանջում: Դա որոշակի բարդությունների հետ էր կապված այն առումով, որ յուրաքանչյուր երկիր ուներ «իր հնագիտությունը»: Նման սահմանազատումը զգալիորեն խոչընդոտում էր ընդհանուր խնդիրների լուծմանը, այդ թվում և հնագույն մշակույթների ընդգրկած սահմանները պարզաբանելուն և այլն: Նման իրավիճակը բացասաբար էր անդրադառնում հետազոտությունների վրա, որոնք պահանջում էին փոխհամաձայնեցված աշխատանքներ, բոլորի կողմից ճանաչում գտած անվանումների և տերմինների կիրառում: Պայմանավորվածություն ձեռք բերվեց վաղնջական նյութերի և մշակույթների համար օգտագործել այն տեղավայրերի անունները, որտեղից առաջին անգամ հայտնաբերվել են հնագիտական այս կամ այն իրողությանը բնորոշ նյութերը (օրինակ՝ շելլ, աշել, նեանդերթալցի և այլն):

Նախնադարի և անտիկ շրջանի հնագիտության զարգացմանը զուգընթաց, XIXդ. մեծ առաջընթաց ապրեց և հնագույն քաղաքակրթությունները (Եգիպտոս, Միջագետք, Առաջավոր Ասիա) ուսումնասիրող Հին Արևելքի հնագիտությունը: Այս ճյուղի նշանակությունը՝ հնագույն քաղաքակրթությունների խաչմերուկում իր ճանապարհը հարթող հայ ժողովրդի պատմության համակողմանի ուսումնասիրության համար, հազիվ թե հնարավոր լինի գերագնահատել:

Նշված ճյուղերին զուգահեռ զարգանում էր և ընդհանուր հնագիտության միջնադարի ճյուղը, որի հանդեպ առաջացած հետաքրքրությունը պայմանավորված էր սեփական երկրի պատմությունը համակողմանի ուսումնասիրելու շահագրգռվածությամբ: Մասնավորապես այդ միտքն էր շեշտում և Ռուսաստանի միջնադարյան հնագիտության կազմակերպիչ ու ղեկավար կոմս Ալեքսեյ Ուվարովը (1825-1884թթ.), որը 1864թ. հիմնեց «Մոսկովյան հնագիտական ընկերությունը» (այն 1866թ. վերանվանվեց «Ռուսաստանի հնագիտական ընկերություն») որտեղ ընդգրկված ճանաչված մտավորականների առջև խնդիր դրվեց հնագի-

տական նյութը ծառայեցնել Ռուսաստանի անցյալը վեր հանելուն, Ռուսաստանում հնագիտական գիտելիքները տարածելուն: Խմբի անդամները պեղումներ էին կատարում (դրանք շատ հեռու էին ներկայիս «պեղում» հասկացությունից), համագումարներ հրավիրում, հրատարակում աշխատանքների արդյունքներն իրենց հանդեսներում. Հայաստանում և Կովկասում կատարված աշխատանքների արդյունքները հրապարակվեցին 14 հատոր կազմած «**Материалы по археологии Кавказа**» պարբերականում: Այդ գործում ներգրավված էին ընկերության՝ տեղերում գործող մասնաճյուղերը. Կովկասի մասնաճյուղի կենտրոնը գտնվում էր Թիֆլիսում: Հնագիտական ընկերությունների աշխատանքները կարգավորում և ղեկավարում էր 1859թ. ստեղծված «Կայսերական հնագիտական հանձնաժողովը», իսկ մինչ այդ, 1846թ. Նիկոլայ I-ի հրամանով ստեղծվել էր «Ռուսական պետության հնությունները» հրատարակող հանձնաժողով:

XIXդ. առաջին կեսում Սև ծովի մի շարք քաղաքներում (Օդեսա, Կերչ և այլն) ստեղծված թանգարանները, որտեղ հիմնականում հավաքվում էին անտիկ շրջանի նյութերը, այլևս չէին բավարարում առաջադրված խնդիրներին ու պեղումների ծավալներին: Ստեղծվում էին նոր թանգարաններ, որոնք սերտորեն համագործակցում էին XXդ. սկզբում չորս ճյուղերը (նախնադար, Հին Արևելք, անտիկ շրջան և միջնադար), մեկ ամբողջական գիտության մեջ միավորած հնագիտության հետ, որը միանգամայն այլ որակ էր ձեռք բերել: Այսպիսին էր հնագիտության զարգացման մակարդակը, երբ Ռուսաստանին միավորված Արևելյան Հայաստանում սկսեցին պեղումներ կատարվել:

§ 2. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում հնագիտական աշխատանքները սկսվեցին 1871թ. Ա.Դ. Երիցյանի՝ Լոռվա գավառի գյուղերի (Ակներ, Դսեղ, Քարինջ, Կուրթան, Շահալի, Սանահին և այլն) տարածքներում գտնվող դամբարանների պեղումներով: 1878թ. նա Սարիղամիշում հայտնաբերեց Արգիշտի Ա-ին պատկանող սեպագիր արձանագրություն: 1893-94թթ. Ակներում պեղումներ կատարեցին նաև Ն.Յա. Մարը և Ե.Ա. Թաքայշվիլին: Հայտնաբերված նյութերը վերագրվում են բրոնզի և երկաթի դարաշրջաններին: Այդ աշխատանքներին հաջորդեցին Վիրուբովի, Բայերնի, Ֆիլիմոնովի, Բորբինսկու, Ցիլոսեանու և Պ.Ս. Ուվարովայի պեղումները Դիլիջանից մոտ 6կմ հյուսիս գտնվող «Ռեդկին լագեր» կոչված վայրում (1876, 1878, 1879թթ.): Այդ աշխատանքներից հարկ է առանձնացնել Ֆրեդերիկ Բայերնի պեղումները, որոնց արդյունքները հրատարակվեցին հավուր պատշաճի, որը և զգալիորեն նպաստեց այդ դամբարանադաշտից հետագայում հայտնաբերված նյութերի և ընդհանրապես մ.թ.ա. I հազարամյակի սկզբին պատկանող մշակույթի հետազոտմանը: Այդուհանդերձ, կատարված աշխատանքների ընդհանուր մակարդակը ցածր էր. պեղողները, որոնք մասնագետ հնագետներ չէին, ուշադրություն չէին դարձնում դամբարանների և դրանց վերգետնյա կառույցների առանձնահատկություններին, հաճախ անտեսվում էին և մասնակի վիճակով դամբարան դրված և կամ դամբարանաթմբի լիցքից հայտնաբերված խեցանոթների մասերը, ուշադրություն չէր դարձվում կմախքի դիրքի, նյութերի տեղադրության և այլ մանրամասների վրա, որոնց պատճառով մերօրյա հետազոտողների համար մութ են մնում նախկինում կատարված ուսումնասիրություններին առնչվող, կարևոր նշանակություն ունեցող տարբեր հարցեր:

Քննադատելով պեղումների նման եղանակը՝ հնագետ Ա.Ա.Իվանովսկին, որը 1894 և 1896թթ. պեղումներ էր կատարել Սևանի ավազանի և Արցախի դամբարանադաշտերում (Առաջաձոր, Խոջալի, Կոլաթաղ, Վանք և այլն), օրինակ բերելով Շուշիի ռեալական դպրոցի ուսուցիչ Էմիլ Ռոսլերի պեղումների եղանակը, նշում է, որ նա հազվադեպ է կողմնացույց օգտագործել դամբարանների ուղղությունները հստակեցնելու համար: Ա.Ա.Իվանովսկուն, եթե նկատի ունենանք, որ Է.Ռոսլերի՝ Արցախում (Շուշի, Ասկերան, Խոջալի, Կալաքենդ և այլն), Գորիսի շրջանի Տեղ գյուղի մոտ գտնվող դամբարանադաշտում և այլուր կատարած աշխատանքների ընթացքում հայտնաբերված նյութերն զգալիորեն արժեզրկված են նաև տարբեր թանգարաններ, առանց պատշաճ անձնագրման հանձնված լինելու պատճառով, դժվար չէ հասկանալ: Տեղին է ասել, որ Խոջալուի դամբարաններից մեկում Է.Ռոսլերը հայտնաբերեց Աղաղնիրարի թագավորի անունը կրող ագաթե ուլունք:

Սիրողական մակարդակով կատարված պեղումները, նյութի հանդեպ ցուցաբերվող անփույթ վերաբերմունքը և այլ բացասական երևույթներ, որոնք մեծապես արժեզրկել են դրանք հետագա ուսումնասիրությունների համար, այն ժամանակ իսկ չվրիպեցին մասնագետների ուշադրությունից: 1881թ. Թիֆլիսում գումարված Կովկասագետների V համագումարը խնդիր դրեց պատահական բնույթ կրող աշխատանքներից անցնել տարածաշրջանի հուշարձանների սիստեմատիկ, ծրագրավոր-

ված հետազոտություններին, բարձրացնել պեղումների մակարդակը: Պահանջվում էր ոչ միայն մանրամասն նկարագրել հուշարձաններն ու հայտնաբերված նյութերը, քարտագրել դրանք, այլև նշել բոլոր մանրամասները. որպես յուրաքանչյուր հնագիտական աշխատանքի նախապայման: Դրանք մանրուքներ չեն. ընդհանրապես հնագիտության մեջ «մանրուք» հասկացություն գոյություն չունի: Այստեղ տեղին է նշել ակադեմիկոս հնագետ Ա.Ա. Սպիցինին (1859–1931թթ.) պատկանող այն խոսքերը, թե պեղումները ոչ սպորտ են և ոչ էլ բավականություն. դրանք լուրջ աշխատանքներ են, հաճախ ծանր և միշտ պատասխանատու: Բավական չէ միայն նյութեր գտնել: Հարկ է կռահել հուշարձանը կառուցող անձի մտքերը, այն իրականացնելու եղանակները, աշխատանքի ընթացքը, հուշարձանի կամ իրերի առանձին մասերի նշանակությունը: Յուրաքանչյուր նոր դամբարանաթումբ, դամբարան տալիս է նոր նյութ՝ հին հարցերը լուծելու համար, բայց դրանք առաջադրում են և նոր հարցեր, որոնք առաջանում են ինչպես պեղումների, այնպես էլ հետագայում՝ դրանց արդյունքները վերլուծելու ընթացքում:

Ընդհանրապես, հնագիտության զարգացման նախնական փուլի պեղումների բնորոշ գիծը՝ աշխատանքների իրագործումն էր ոչ մասնագետների կողմից. նրանց ուշադրությունը հիմնականում բևեռված էր նյութի հայտնաբերմանը և ցուցադրմանը: Հայտնաբերված հսկայական նյութի հետագա մշակման, գիտական մեկնաբանման հարցերին առանձին ուշադրություն չէր դարձվում: Այդ է պատճառը, որ տարբեր թանգարաններում (Էրմիտաժ, Մոսկվա, Թիֆլիս և այլն) պահպանվող, մեծ քանակով իրեր մեծապես արժեզրկված են ժամանակին քարտագրված չլինելու պատճառով. հայտնի չէ նույնիսկ դրանց հայտնաբերման վայրը: Նման նյութերի անձնագրում սոսկ նշված է «հայտնաբերման վայրը անհայտ է», «գնված է այսինչից» և կամ «այնինչի հավաքածուից է»: Ա.Ա. Սպիցինը ժամանակին հսկայական աշխատանք կատարեց ոչ միայն Ա.Ս. Ուվարովի, այլև Ֆեդորովի Կարմիր-վանքյան հավաքածուն և Պ.Վ. Չարկովսկու կողմից 1896թ. Կարմիր-Բերդի (Թազաքենդ) դամբարանադաշտից հայտնաբերված նյութերը կարգավորելու և հետազոտելու ուղղությամբ. դա ավելի քան ծանր աշխատանք էր, որովհետև 1903–1904թթ. այդտեղ պեղումներ էին կատարել նաև Մ.Զախարյանցն ու Է.Ռյոսլերը:

Ալավերդու, Այրումի, Ախթալայի, Սադախլոի և այլ դամբարանադաշտերում պեղված 908 դամբարաններից հայտնաբերված նյութերը համեմատաբար ամբողջական տեսքով հրատարակեց Ալավերդու

պղնձահանքերի ճարտարագետ Ժ.դը Մորգանն իր «Արևելքի նախապատմությունը» ֆրանսերեն աշխատանքում: Աշխատանքի վերտառությունից իսկ նկատելի է, որ 1887–1888թթ. կատարած պեղումներից հայտնաբերված նյութերը հեղինակն աշխատել է օգտագործել իբրև պատմական աղբյուր: Ավելին, նա փորձում է նույնիսկ պատմական ընդհանրացումներ կատարել. դրանք մերժվեցին հետագա հետազոտությունների արդյունքներով: Տվյալ դեպքում էականը, սակայն, հնագիտական նյութը իբրև պատմական աղբյուր օգտագործելն էր: Ահա այս տեսանկյունից մոտենալով նախախորհրդային աշխատանքների անկատար եղանակներին, նյութի մատուցման թերություններին և այլ բացասական կողմերի՝ չպետք է անտեսել, որ այդ աշխատանքների շնորհիվ աստիճանաբար բացվել սկսեց տարածաշրջանի հեռավոր անցյալի պատմությունը ծածկող վարագույրը: Այս իմաստով յուրաքանչյուր նոր հուշարձան, կարևոր լինելով հանդերձ, հետաքրքրություն էր առաջացնում թե Ռուսաստանում և թե արևմտյան Եվրոպայում: Այդ գործում մեծ դեր ունեցան տարբեր լեզուներով կատարված հրատարակությունները, որոնք ցույց էին տալիս թե Հայկական լեռնաշխարհը մարդկային քաղաքակրթության հնագույն օջախներից է, որի հանդեպ աճող հետաքրքրությունն ավելանում էր ուրարտական արձանագրությունների հայտնաբերմամբ. դրանք հետազոտողների առջև պատմության նոր էջ էին բացում: Այդ արձանագրությունները հավաքելու և պատճենահանելու ժամանակ (1828–1829թթ.) զոհվեց Հեսսենի համալսարանի երիտասարդ պրոֆեսոր, ուրարտագիտության պիոներներից մեկը՝ Ֆրիդրիխ Էդուարդ Շուլցը, որն առաջինն արձագանքեց արևելագետ Ժան Անտուան Սեն-Մարտենի, Վանը՝ «Շամիրամի» քաղաքը, հետազոտելու և արձանագրությունները հավաքելու անհրաժեշտության կոչին: Ֆ.Է.Շուլցի պատճենահանած 42 սեպագիր արձանագրությունները «Փարիզի Ասիական ընկերությունը» հրատարակեց 1840թ.: Շուլցի գործը շարունակեցին Հենրի Լեյարդը, Օրմոզդ Ռասամը, որոնք 1850 և 1877-1880թթ. պեղումներ կատարեցին Վանում, Թուփրակ-Կալեում, ուր հայտնաբերեցին շատ արժեքավոր նյութեր. դրանց մի փոքր մասը միայն մուտք գործեց Բրիտանական թանգարան: Այդտեղ պեղումները շարունակեցին Լեման-Հաուպտը և Բելկը (1898թ), իսկ Օքսֆորդի համալսարանի պրոֆ. Ա.Գ.Սեյսը ձեռնամուխ եղավ սեպագրերի վերծանությանը:

Նորածին ուրարտագիտության հիմքերը դնողների շարքում են նաև Կլեյտոնը, Ռեյնոլդսն ու այլ հետազոտողներ. նրանց աշխատանքները մեծ արձագանք առաջացրին գիտական աշխարհում. ուրարտագիտութ-

յունն աշխատում էր հնարավորին չափ շատ տեղեկություններ հավաքել Հին Արևելքի այդ հզոր պետության պատմության վերաբերյալ, որի առանձին դրվագներն էին լուսաբանում Սևանի ավազանի տարբեր վայրերում՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի, ուրարտագետ Մ.Վ.Նիկոլսկու և Ա.Ա. Իվանովսկու հայտնաբերած արձանագրությունները: Սևանի ավազանի տարբեր դամբարանադաշտերում (Նորատուս, Գավառ, Ներքին Գետաշեն և այլն) լայնածավալ պեղումներ կատարեց նշանավոր ազգագրագետ Ե.Լալայանը. 1905, 1906, 1908թթ. կատարած պեղումների ընթացքում նա բացեց շուրջ 500 դամբարան:

Վանի թագավորության պատմության համար (Ուրարտու անվան արմատավորումը պայմանավորված է ասուրական արձանագրություններով) առանձնակի կարևորություն են ներկայացնում նաև Հ.Ա.Օրբելու և Ն.Յա. Մառի 1911–1912թթ., 1916թ. Թոփրակ-Կալեում (Վան) կատարած պեղումները. Սարդուր Բ թագավորի տարեգրության հայտնաբերման պատիվը պատկանում է Հ.Ա. Օրբելուն: Այդ արձանագրությունների վերծանման գործում իրենց ծանրակշիռ ավանդը ներդրեցին նաև Մ.Ծերեթելին և Ալբրեխտ Գյոտցեն:

Ընդհանուր գծերով այսպիսին էր նախախորհրդային շրջանից ստացված գիտական ժառանգությունը, որը բազմաթիվ թերություններով հանդերձ ցույց տվեց, որ հնագիտությունն անգնահատելի նշանակություն ունի պատմության բազմակողմանի ուսումնասիրության համար: Պատահական չէ, որ 1918–1920թթ., չնայած երկրի խառնակ վիճակին, Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարությունը փորձեր կատարեց հնագիտական հանձնաժողով ստեղծել, հիմնադրել ազգային թանգարան և Հայաստանի հնությունների կոմիտե: Այդ աշխատանքները մեծ թափով ծավալվեցին խորհրդային ժամանակաշրջանում: Դրանց զուգահեռ, հատկապես 20-30-ական թվականներին, պայմանավորված նոր գաղափարախոսության պահանջներով, հնագիտության հիմնարար նշանակություն ունեցող ընդունված հասկացություններից մի քանիսը լուրջ ձևախեղումների ենթարկվեցին: Այս պահը հստակեցնելու նպատակով հարկ է ընդհանուր գծերով անդրադառնալ XIXդ. վերջ և XXդ. սկզբում առկա տեսություններին, հասկացություններին:

§ 3. ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԸ XIX Դ. ՎԵՐՋՈՒՄ XX Դ. ՍԿԶԲՈՒՄ

Հնագիտության, իբրև գիտություն, ձևավորման ու զարգացման ընթացքին հետևելու ժամանակ նշվեց, որ XIXդ. հետազոտողները լուրջ արդյունքների էին հասել ոչ միայն նյութի ճանաչման մեթոդները կատարելագործելու ուղղությամբ, այլև համադրելով ձեռք բերված արդյունքները ազգագրական տվյալների հետ, աշխատում էին պարզել մարդկության անհամաչափ զարգացման պատճառները, կատարել տեսական բնույթի ընդհանրացումներ: Արդյունքում հետազոտողները համոզվեցին, որ լայն ճանաչում գտած երեք դարերի (քար, պղինձ/բրոնզ, երկաթ) պարբերացումը, որը համադրվում էր Լուի Մորգանի պատմամշակութային, Բախովենի սոցիոլոգիական և Չ.Դարվինի մարդաբանական պարբերացումների հետ, հատկապես քարի դարաշրջանի համար, փակուղի էր տանում: Ակնհայտ էր, որ նույն նյութից պատրաստված իրերն իրարից տարբերվում են թե՛ ձևով, թե՛ պատրաստման եղանակներով, որը և հաշվի առնելով. ֆրանսիացի հետազոտող Գ.Մորտիլյեն պարբերացման հիմքում դրեց նյութի **մշակման** սկզբունքը, համադրելով քարից պատրաստված այդ պարզունակ իրերը երկրաբանական շերտերի հետ: Նյութի հանդեպ նման մոտեցումը քարի դարաշրջանի ներսում երևան բերեց նոր դարաշրջաններ: Այդ աշխատանքների շնորհիվ երեք դարերի պարբերացումն իր տեղը զիջեց հասարակության զարգացման հնագիտական վեց դարաշրջանի: Դրանք են՝ պալեոլիթը, մեզոլիթը, նեոլիթը, էնեոլիթը, բրոնզի և երկաթի դարաշրջաններն՝ իրենց ներքին փուլաբաժանմամբ (օր.՝ պալեոլիթի համար շելլ, աշել, մուստյե և այլն), որը կիրառվում է նաև այսօր: Դա մեծ առաջընթաց էր, որովհետև յուրաքանչյուր հուշարձան դասվում և իր որոշակի տեղն էր գտնում ժամանակի մեջ: Միաժամանակ ակնհայտ էր և այն փաստը, որ տարբեր վայրերից հայտնաբերված համաժամանակյա նյութերը զարգացման ընթացքում զգալի փոփոխություններ են դրսևորում: Հարց էր առաջանում, թե ի՞նչ գործոններ են պայմանավորում այդ անհամաչափ զարգացումը, որո՞նք են հասարակության անհամաչափ զարգացման պատճառները, որոնք խոչընդոտում են հասարակության զարգացմանը զուգընթաց: Այդ հարցերի շուրջ արտահայտված տեսակետները տարբեր են:

Էվոլյուցիոն տեսության հետևորդները, ընդունելով միապաղաղ, ուղղագիծ աստիճանական զարգացումը, հանգեցին այն հետևության,

թե մարդկությունը երկրագնդի տարբեր մասերում միատեսակ զարգանալով, անցնում է նույն փուլերը: Դրանք ներկայացվում էին հետևյալ հաջորդականությամբ.

I փուլ՝ վայրենություն. համապատասխանում է որսորդ-ձկնորսներին:

II փուլ՝ բարբարոսություն. զբաղվում են անասնապահությամբ:

III փուլը քաղաքակրթությունն է, որի ժամանակ էլ անցում է կատարվում երկրագործությանը: Ընդգծվում էր այն դրույթը, թե գտնվելով զարգացման նույն աստիճանի վրա և նույն մտածելակերպն ու գործիքներն ունեցող մարդիկ նույն արդյունքն են ստանում: Նման մոտեցումը հետազոտողներին փակուղու առջև էր կանգնեցնում, որովհետև անհասկանալի էր մնում, թե ինչու, օրինակ, նեոլիթում որոշ հասարակություններ անցել էին երկրագործությանն ու անասնապահությանը, իսկ մյուսները դեռ յուրացնող տնտեսաձև էին վարում, այլ կերպ ասած՝ հասարակությունները տարբեր կերպ են զարգացել, և որ դրանք խորանում են հասարակության զարգացմանը զուգընթաց: Այս և այլ փաստեր ցույց էին տալիս, որ հասարակության ոչ միանման զարգացման հիմքում ընկած են և այլ պատճառներ, որ զարգացումն ամենևին էլ պարզ ուղղագիծ շարժում չէ:

Բնականաբար հարց էր առաջանում, ի՞նչ բնույթի են այդ պատճառները՝ աշխարհագրակա՞ն, տնտեսակա՞ն, ծագման ընդհանրությա՞ն, ազդեցությունն՞ե՞ր և այլն: Լուծումներից մեկն այն էր, որ հնագիտական մշակույթների ետևում կանգնած են որոշակի ցեղեր, հասարակական ընդհանրություններ, որոնց զբաղեցրած տարածքները հետազոտողները փորձում էին վեր հանել տիպաբանական մեթոդի միջոցով՝ լայնորեն օգտագործելով և քարտեզագրումը: Դա հանգեցրեց հնագիտական մշակույթը որոշակի պատմական ժողովրդի հետ կապելուն (մշակույթ-էթնոս): Հնագիտական նյութի հանդեպ նման մոտեցումը, եթե, ի-հարկե, այն կատարվում է տարածության և ժամանակի մեջ փոփոխվող մշակույթի զարգացման ընթացքին հետևելով ու համադրելով ստացված արդյունքները լեզվաբանական ու մարդաբանական տվյալների, ինչպես և պատմական տեղեկությունների հետ, կարող է հանգեցնել պատմական կարևոր հետևությունների: Դժբախտաբար այդ միտքը ավարտուն տեսքով ներկայացնող Գ.Կոսինան (1858-1931թթ), ձգտելով գտնել հնդգերմանացիների (իմա՝ հնդեվրոպացիներ) նախահայրենիքը Հյուսիսային Եվրոպայում, փորձում էր միաժամանակ ապացուցել, որ Եվրոպան իր զարգացմամբ պարտական է ռազմատենչ գերմանացիներին, որոնք իրենց նվաճումներով տարածեցին առաջավոր մշակույթը: Մա ռասիստական տեսակետ է, որը գիտության հետ կապ չունի, որովհետև նման տեսությունն անմիջականորեն հանգեցնում է որոշ ռասաների զարգացած և առաջադեմ կամ զարգացման ունակ լինելուն, իսկ մյուսները՝ ոչ:

Մշակույթների նմանությունը տեղաշարժերով ու ազդեցություններով է բացատրում **պատմամշակութային** դպրոցը: Վերջինիս ներկայացուցիչները ընդունում էին, որ խոշոր հայտնագործությունները մեկ անգամ են կատարվում որոշակի տարածքում և այդ օջախից էլ տարածվում են այլուր: Այս տեսակետն իր հերթին հանգեցրեց **դիֆուզիոնիզմի** տեսությանը: Մշակույթների ձևավորման ու զարգացման մեջ տեղաշարժերի և ազդեցությունների դերն անժխտելի է և չի անտեսվում, բայց դրանց գերագնահատումը կարող է հանգեցնել տեղական, ինքնուրույն զարգացումը և առանձնահատկությունները մերժելուն, անտեսելուն կամ լավագույն դեպքում՝ դրանց նշանակությունը նվազեցնելուն ու փոխառությունների դերը մեծացնելուն:

Տեսություններից հաջորդի կողմնակիցները որոշիչ դերը **աշխարհագրական գործոնին** էին վերագրում (**աշխարհագրական դետերմինիզմ**): Աշխարհագրական գործոնը, հատկապես մարդկության զարգացման վաղ շրջանում, չի անտեսվում և չի ժխտվում, բայց այդ գործոնի գերագնահատումը հանգեցնում է յուրատեսակ դատապարտվածության, աշխարհագրական ճակատագրապաշտության, որն անտեսում է մարդկային գործոնի դերն ու նշանակությունը, քանի որ հիմնական դերը միջավայրին է հատկացնում: Վերջինս, և դա իր ժամանակին էլ չընդունվեց հետազոտողների մեծ մասի կողմից (օրինակ՝ Կոսինայի **էթնոմշակութային** դպրոցի հետևորդները), մարդկային հասարակության զարգացման համար կանխորոշիչ հանդիսանալ չի կարող, որն ապացուցող օրինակներ, վերցված տարբեր երկրներից, եզակի չեն:

Հիմնական տեսությունների հակիրճ շարադրանքից իսկ նկատելի է, որ XIXդ.–XXդ. սկզբում ձգտում է նկատվում հնագիտական նյութն օգտագործել հին հասարակությունների հասարակական և տնտեսական կյանքը վերականգնելու, պատմական ընդհանրացումներ կատարելու համար: Հնագիտության հանդեպ ձևավորվող այս մոտեցումը հստակ ձևակերպվեց **պատմական մատերիալիզմի** հիմնադիրների կողմից: Հասարակության զարգացման հիմնապատճառը արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև եղած կապերի ու զարգացման օրինաչափությունների մեջ տեսնող ուսմունքի հիմնադիրները հանդիսացին այն բանին, որ աշխատանքի միջոցների մնացորդները չքացած

հասարակական-տնտեսական կացութաձևերի ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունեն: Այս միտքը ուղենիշ դարձավ իր զարգացման ընթացքում ձևավորման ու կայացման խորդուբորդ ճանապարհի անցած խորհրդային հնագիտության համար:

§ 4. ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Խորհրդային հնագիտությունը, որի հիմքը դրվեց անձամբ Վ.Լենինի կողմից, 1919թ. ստորագրած, «Նյութական մշակույթի պատմության ակադեմիա» ստեղծելու դեկրետով, որակապես նոր գիտություն էր: Այն սկզբնական շրջանում ընթացավ մարքս-լենինյան դրույթները հաստատագրելով ու կանոնակարգելով, գիտությունների համակարգում հնագիտության տեղը իբրև պատմական գիտություն որոշելով, նոր կադրեր պատրաստելով, վերաիմաստավորվող հիմնախնդիրներին նոր մոտեցում ցուցաբերելով: Բուռն վեճերով ուղեկցվող այդ որոնումների ճանապարհին, երբ աշխատում էին հնագիտության համար նոր կադրեր պատրաստել ու մեթոդներ մշակել, որոնց նպատակը նյութական աղբյուրներով մինչկապիտալիստական համակարգերի ու տնտեսաձևերի, հասարակական երևույթների զարգացման օրինաչափությունների վերհանումն ու դրանց հիմնավորումը պետք է լինեին, հնագիտությունն զգալի վնասներ կրեց: Քննադատաբար մոտենալով նախկին տեսություններին ու մշակված հասկացություններին՝ նոր կադրերը բացարձակեցնելով Կ.-Մարքսի միտքը հնագիտական նյութի վերաբերյալ, իբրև մարքս-լենինյան դրույթներին հակասող, հրաժարվեցին առանցքային նշանակություն ունեցող հասկացություններից ու դրույթներից: Այսպես, հնագիտական պարբերացումն իր տեղը զիջեց սոցիալական բովանդակություն կրող պարբերացմանը (նախնադարյան համայնական կամ նախադասակարգային, անտիկ կամ ստրկատիրական և ֆեոդալական), որի հետ հնագիտությունը ոչ մի կապ չունի. դա քաղաքատնտեսության ուսումնասիրության ոլորտն է: Նման մոտեցման պատճառով հնագիտական **օբյեկտի դերում** հայտնվեց ոչ թե հնագիտական նյութը, այլ՝ **անցյալի հասարակությունները** կամ **ընդհանուր պատմական գործընթացը**: Արդյունքը եղավ այն, որ պատմություն ուսումնասիրող հնագիտությունը ինքնուրույնից փոխարկվեց անդեմ, օժանդակ գիտության, որը պիտի հնագիտական նյութով ապացուցեր անցյալ հասարակության զարգացման

ընդհանուր պատմական գործընթացը, ուսումնասիրեր հասարակական-տնտեսական կառույցները. դա հնագիտության հետազոտության շրջանակներից դուրս է: Շեշտը սոցիալական կողմի վրա դնող նման մոտեցումը նվազագույնի հասցրեց տիպաբանական դասակարգման նշանակությունը: Արդյունքում, աղճատվեց և «հնագիտական մշակույթ» հասկացության իմաստն ու բովանդակությունը. դրանք վերաիմաստավորվեցին իբրև ժամանակագրորեն իրար հաջորդող փուլեր, որոնք դիտվում էին իբրև համակարգի առանձին հատվածներ: Այսպիսով, տիպաբանական մեթոդը, որը դասակարգման հիմքն է և իրողության ճանաչության առաջին՝ էմպիրիկ մակարդակի նախապայմանը, կորցրեց իր հիմքային իմաստը : Մերժվեց և հնագիտական մշակույթի էթնիկական մեկնաբանության տեսակետը:

Առաջին փուլի հնագիտության բնորոշ գծերից մեկը հնագիտական նյութից և պատմական փաստերից կտրված սոցիալական սխեմաների ուռճացումն էր, որից հնագիտությունն սկսեց աստիճանաբար ձերբազատվել 1930-ականների կեսերից, իսկ 60-ականներից սկսած՝ գիտական միտքն աշխատում էր տարբեր մեթոդներ կիրառելով, իրերից քաղել հնարավոր բոլոր տեղեկությունները, հիմնավորել դրանք, վեր հանել զարգացման օբյեկտիվ չափանիշները, իրը դարձնել առավել տեղեկատվական, պարզել նյութականի տեղը հասարակականի մեջ: Հնագիտական հետազոտություններին մեծ նշանակություն էր տրվում: Նույնիսկ որոնումների և բուռն քննադատությունների առաջին շրջանում հուշարձանների հետազոտությունը չէր դադարում, իսկ հետագայում հսկայական աշխատանք կատարվեց ողջ երկրով մեկ ծավալված շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերվող հուշարձանները փրկելու և հետազոտելու, մասնագետ հնագետներ պատրաստելու ուղղությամբ. մասնագետների կարիքը, նորակառույցներում ծավալված հնագիտությունը, սրությամբ էր զգում:

Այդ աշխատանքները կատարվում էին և Հայաստանում: Պատմամշակութային գիտություն դիտվող հնագիտության համար մասնագետ-հնագետներ էր պատրաստում և դեռևս 1919թ. հիմնադրված Երևանի պետական համալսարանը: 1921թ. ՀԽՍՀ լուսժողկոմատի համակարգում հիմնվեց Գեղարվեստական թանգարանը, որի «Հնագիտության» և

Իրողության ճանաչողության էմպիրիկ (փորձնական) և տեսական մակարդակները փիլիսոփայական կատեգորիաներ են, որոնց որոշ հետազոտողների կարծիքով հարկ է միացնել «վերականգնողական» մակարդակը:

«Ազգագրության» բաժինների վարիչը Ե.Լալայանն էր. 1922թ. նա դարձավ գեղարվեստից «Պետական Կենտրոնական թանգարան» վերանվանված հիմնարկության տնօրենը: Հնագիտական և ազգագրական նյութերը կենտրոնացվեցին թանգարանում, որը 1935թ. բաժանվեց երեք մասի: Դրանցից մեկը «Հայաստանի պատմության պետական թանգարանն» էր, մյուսը՝ «Գրական թանգարանը» և երրորդը՝ «Կերպարվեստի թանգարանը»: Հնագիտական աշխատանքների ծավալման մեջ իր ներդրումը կատարեց և 1923թ. հիմնված «Հնությունների պահպանության կոմիտեն»: 1937թ. «Նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիան» ընդգրկվեց ԽՍՀՄ ԳԱ համակարգում իբրև «Նյութական մշակույթի պատմության ինստիտուտ»: Հայաստանում հնագիտություն բաժինը, իբրև առանձին խումբ, գործում էր «Պատմության ինստիտուտի» կազմում: Նոր կադրերով համալրված բաժինը 1959թ. առանձնացավ պատմության ինստիտուտից և վերափոխվեց ՀԽՍՀ ԳԱ համակարգի մեջ մտնող առանձին՝ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի». վերջինիս հիմնադիրը և տնօրենը ակադեմիկոս Բ.Ն. Առաքելյանն էր:

Խորհրդային իշխանության տարիներին կատարված հնագիտական աշխատանքների վրա, որոնք իրագործվում էին Պատմության պետական թանգարանի, Հնությունների պահպանության կոմիտեի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից, ծանրանալը իմաստ չունի. դրանց սոսկ թվարկումն իսկ բավականին ժամանակ կպահանջի: Չխոսելով փրկչական բնույթ կրող կարճաժամկետ պեղումների մասին, որոնց իրագործումը հանրապետության սակավաթիվ մասնագետներից ուժերի հսկայական լարում էր պահանջում, նշենք միայն, որ հիմնական, ծրագրավորված պեղումներն ընդգրկել էին հանրապետության ողջ տարածքը: Դրանք կատարվում էին ինչպես ըստ տարածաշրջանների (Արարատյան դաշտ, Շիրակ, Լոռի և այլն), այնպես էլ ըստ ժամանակաշրջանների (քարի դար, պղնձի և քարի դարաշրջան, բրոնզի դար և այլն): Այսպես, Արարատյան դաշտի տարբեր դարաշրջանների պատկանող հուշարձաններում՝ պեղումներ կատարեցին Ե.Բայբուրդյանը, Է.Խանզադյանը, Կ.Ք.Քուշնարյովան, Ռ.Մ.Թորոսյանը, Գ.Արեշյանը (հիմնականում էնեոլիթ-երկաթի դարաշրջաններ), Կ.Հովհաննիսյանը, Բ.Բ.Պիոտրովսկին, Հ.Ա.Մարտիրոսյանը (Ուրարտու), Բ.Ն.Առաքելյանը, Գ.Ա.Տիրացյանը, Ժ.Դ.Խաչատրյանը, Ի.Կարապետյանը (Ուրարտու-Անտիկ), Կ.Գ.Ղաֆադարյանը, Ա.Քալանթարյանը (միջնադար), Սևանի ավազանում՝ Հ.Հ.Մնացականյանը, Վ.Ավետյանը, Լ.Ա.Պետրոսյանը.

վերջինս պեղումներ է կատարել նաև Շիրակի դաշտում, ուր երկար տարիներ աշխատել էր նաև Տ.Ս. Խաչատրյանը հետազոտելով բրոնզ - երկաթեդարյան հուշարձանները: Ինչ վերաբերում է Շիրակի դաշտի մյուս դարաշրջանների հուշարձաններին, ապա դրանք հետազոտվում էին Ֆ. Տեր-Մարտիրոսովի (անտիկ դարաշրջան), Ս.Հարությունյանի (միջնադար) կողմից: Մյուս տարածքների հուշարձանների հետազոտման մեջ իրենց ծանրակշիռ ավանդը ներդրեցին Ս.Ա.Եսայանը, Ս.Հ.Դևեջյանը (Լոռի, Գուգարք, Գարդման), Ի.Ղարիբյանը (միջնադար), Սյունիքում՝ Օ.Խնկիկյանը (բրոնզ-երկաթ), Գ.Գրիգորյանը և Հ.Մելքոնյանը (միջնադար): Քարեդարյան հուշարձանները հետազոտվում էին Բ.Լյուբինի, Ս.Զամյատնու, Մ.Զ.Պանիչկինայի, Ս.Սարդարյանի, Բ.Երիցյանի կողմից, իսկ ժայռանկարների հետազոտմանը ձեռնամուխ եղան Գ.Կարախանյանը, Հ.Մարտիրոսյանն ու Հ.Ռ.Իսրայելյանը:

Հպանցիկ ներկայացված այս ցանկը կարելի է ընդլայնել և երկրի տարբեր շրջաններում երիտասարդ սերնդի կողմից (Պ.Ս.Ավետիսյան, Հ.Ավետիսյան, Ռ.Բաղալյան, Հ.Սիմոնյան, Ս.Հմայակյան, Ն.Ենգիբարյան, Ա.Փիլիպոսյան, Վ.Հովհաննիսյան, Գ.Թումանյան, Բ.Գասպարյան, Ֆ.Մուրադյան և ուրիշներ) կատարված աշխատանքներով: Վերջին տարիներին զգալի աշխատանքներ են կատարվել Հայաստանի և արտասահմանյան գիտական կենտրոնների (ամերիկյան, բելգիական, իտալական, գերմանական, ֆրանսիական) համատեղ արշավախմբերի կողմից:

Կատարված (և կատարվող) աշխատանքները, որոնք իրագործվել են իրենց գործին նվիրված և իրենց ծանրակշիռ ավանդը հայագիտության զարգացման մեջ ներդրած բազմաթիվ մտավորականների կողմից (անտիկ և միջնադարի հնագիտությամբ զբաղվող՝ Ն.Հակոբյանը, Ա.Ժամկոչյանը, Ֆ.Բաբայանը, Գ. Քոչարյանը և բազմաթիվ այլ հնագետներ, որոնք շարունակում են աշխատել տարբեր հուշարձաններում), հնարավորություն տվեցին լուսաբանել ոչ միայն հայ ժողովրդի, այլև Հին Արևելքի պատմության մի շարք կնճռոտ հարցեր: Ուրարտագիտության համար մեծ նշանակություն ունեցան Վանի թագավորության արձանագրությունների կորպուսները, որոնք իրականացվել են Գ.Ա. Մելիքիշվիլիի և Ն.Վ. Հարությունյանի կողմից: Կատարված բոլոր աշխատանքների մանրամասն թվարկումն անհնարին է: Այդուհանդերձ, չի կարելի շրջանցել մի շարք ընդհանրացնող բնույթի աշխատություններ, որոնց հիմնադրույթներից շատերը, չնայած որ ներկայումս վերանայված են, բայց այդ աշխատանքներն իրենց ժամանակ մեծապես օժանդակեցին տարածաշրջանի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազ-

մելուն, այլևայլ հիմնահարցեր վեր հանելուն: Պատշաճը մատուցելով Բ.Ա.Կուֆտինի, Ա.Ա.Իսսենի և այլ մեծությունների կատարած աշխատանքներին, չի կարելի չնշել Ս.Հ.Սարդարյանի «Նախնադարյան հասարակությունը Հայաստանում», Հ.Ա.Մարտիրոսյանի «Հայաստանը բրոնզի և երկաթի դարաշրջաններում» (չխոսելով արդեն Հ.Ա. Մարտիրոսյանի՝ ժայռապատկերների և այլ հարցերի լուսաբանմանը նվիրած աշխատանքների մասին), Բ.Բ.Պիոտրովսկու՝ Ուրարտուի պատմությանը նվիրած աշխատանքները, «Անդրկովկասի հնագիտություն» բուհական ձեռնարկը, այլ հեղինակների գործեր, որոնցում բազմաթիվ հարցեր են լուսաբանված: Կատարված աշխատանքների շարքում առանձնանում է «ԽՍՀՄ հնագիտություն» (ռուս.) 20 հատորյակը, որը հսկայական գիտական ներդրում է համաշխարհային չափանիշով: Ասվածից պետք չէ եզրակացնել, թե հնագիտությունը լուծել է իր առջև դրված բոլոր խնդիրները: Ընդհակառակը, այս ավելի քան երիտասարդ գիտությանն առաջադրված հարցերի շարքում ավելի քան շատ են և այնպիսիները, որոնց վերաբերյալ հետազոտողները դեռևս միասնական կարծիք չունեն. դրանց լուսաբանումը նոր սերնդի խնդիրն է:

Հեղինակը իր հաճելի պարտքն է համարում խորին շնորհակալություն հայտնել թե՛ գործընկերներին, որոնք իրենց խորհուրդներով և անտիպ նյութերը տրամադրելով, զգալիորեն օգնել են աշխատանքի իրագործմանը և, թե՛ Գավառի պետական համալսարանի համակարգչային բաժնի աշխատակից Կարեն Միրականյանին նկարների աղյուսակների ձևավորումը իրագործելու համար:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

§ 1. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հնագիտական սկզբնաղբյուրները տարատեսակ են. դրանք սոսկ բնակատեղիներով, դամբարաններով ու դրանցից հայտնաբերված նյութերով չեն սահմանափակվում: Հնագիտության համար սկզբնաղբյուր է հանդիսանում այն ամենը, ինչ կարող է որևէ տեղեկություն պարունակել մարդու անցած պատմական ուղու, նրա գործունեության և ընդհանրապես նրա կյանքի տարբեր կողմերի վերաբերյալ: Իրենց բազմազանությամբ հանդերձ դրանք պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝ ա) բնական և բ) արհեստական:

Բնական սկզբնաղբյուրների ստեղծման գործում մարդը բացարձակապես դեր չունի: Առաջին հերթին դա այն բնական միջավայրն է որտեղ գործել է մարդը, օգտվել բնության, իրեն շրջապատող միջավայրի ընձեռած հնարավորություններից, ծառայեցրել դրանք իր կարիքներին: Այս կարգի սկզբնաղբյուր են հանդիսանում ուշ երրորդական - վաղ չորրորդական ժամանակաշրջանի նստվածքները. դրանց մեջ հանդես են գալիս վաղ հոմինիդների մնացորդներ, տարբեր կենդանիների ոսկորներ, բույսերի դաջվածքներ և այլն: Այդ նյութերը ցույց են տալիս մարդու կազմավորման ժամանակաշրջանն ու ընթացքը, նրան շրջապատող կենդանական ու բուսական աշխարհը, սնունդը, կլիման: Սկզբնաղբյուրների այս խմբին են պատկանում նաև բնական քարայրները, որոնք հազարամյակներ շարունակ օգտագործվել են մարդու կողմից, ինչպես և հանքախորշերը, որոնցից մարդը հանքաքար է ձեռք բերել:

Սկզբնաղբյուրների երկրորդ խումբն են կազմում մարդու կողմից ստեղծվածները: Դրանք պայմանականորեն երեք խմբում են միավորվում՝ ա) նյութական, բ) գրավոր, գ) խառը (նյութական ու գրավոր): Նշված խմբերից յուրաքանչյուրն իր հերթին ստորաբաժանվում է առանձին ճյուղերի, որոնք երբեմն միահյուսվելով պայմանական են դարձնում

տվյալ սկզբնաղբյուրի դասումն այս կամ այն խմբում: Նման իրավիճակը որոշ բարդություն է առաջացնում վերջիններս որևէ գիտության ուսումնասիրելու մենաշնորհ դիտելը և այդ է պատճառը, որ նույն սկզբնաղբյուրը հետազոտվում է տարբեր գիտությունների կողմից: Տվյալ դեպքում խոսքը չի վերաբերում այնպիսի նեղ մասնագիտությունների, ինչպիսին են ասենք վիմագրությունը, հնագրությունը, դրամագիտությունը, կնքագիտությունը և այլն, որոնք ունեն հետազոտության իրենց որոշակի օբյեկտները, ուսումնասիրության իրենց մեթոդները: Խոսքը վերաբերում է նույն օբյեկտի տարբեր կողմերը հետազոտող գիտություններին: Օրինակի համար ընդունենք, որ հետազոտվում է որևէ բնակատեղի, ամրոց և այլն: Բնական է, որ դրանց կառուցողական առանձնահատկություններով կզբաղվի ճարտարապետը, խեցեղենի թրծման, բաղադրության և այլ հարցերով՝ քիմիկոսը, տարատեսակ քարե գործիքների վրա առկա հետքերի և այդ նյութերի կիրառության հարցերով՝ հետքաբանը և այլն: Ասվածից հետևում է, որ հնագիտությունն իր սկզբնաղբյուրները հետազոտում է համալիր եղանակով, մյուս գիտությունների հետ համատեղ: Բնականաբար, հնագիտությունն օգտվում է այլ գիտությունների տվյալներից, որոնց և ինքն իր հերթին նյութեր է մատակարարում, հիմնականում իրեն վերապահելով սկզբնաղբյուրների առաջին՝ նյութական, իրեղեն խումբը: Առանց համալիր հետազոտության հնագիտությունը ոչ միայն արհեստականորեն կնեղացնի իր ուսումնասիրությունների շրջանակները, կսահմանափակի սեփական հնարավորությունները, այլև չի կարող հիմնավոր եզրահանգումներ կատարել:

§ 2. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

Հնագիտական սկզբնաղբյուրների առանձնահատկություններն ուրույն բնույթ են հաղորդում հնագետի աշխատանքներին, նրա հետազոտության եղանակներին: Դրանք ներառում են մի քանի փուլեր, որոնցից սկզբնականը տեղազննությունն է և հուշարձանի հայտնաբերումը: Պեղումներ կատարելու համար անհրաժեշտ է սկզբից գտնել հուշարձանը, որի առանձին տեսակներ, ինչպես ասենք, խոշոր բնակավայրերը, կիկլոպյան ամրոցները, քաղաքները, դամբանաբլուրները և այլն, դյուրին են հայտնաբերվում, քանի որ ունեն վերգետնյա տարբեր նշաններ: Ամբողջությամբ հողով ծածկված հուշարձանները երևան են գալիս և հողաշինական աշխատանքների ընթացքում, շինարարության ժամանակ,

երևում են առուների, հեղեղատների կտրվածքում և այլն: Այդուհանդերձ, սակավ չեն և այն հուշարձանները, որոնց հայտնաբերումը երբեմն շատ դժվար է լինում: Առանձին բարդություն է ներկայացնում մշակովի հողատարածություններում, անտառներում, ճանապարհների տակ ընկած դամբարանների և նման այլ հուշարձանների հայտնաբերումը:

Գտնելով հուշարձանը, հնագետը դրա տեղը նշում է տեղագրական քարտեզի վրա: Ասվածից հետևում է, որ հուշարձանների որոնման եղանակները տարբեր են. հողի մակերեսին ինչ-ինչ պատճառներով հայտնված վերգետնյա գտածոն, հողի գույնի տարբերությունները, բուսականությունը և այլն, կարող են հուշել հուշարձանի առկայությունը: Հուշարձանը հայտնաբերելուց հետո հնագետն այն մանրամասն նկարագրում է, լուսանկարում, չափագրում, տալիս ուղղությունները, նշում հեռավորությունը որևէ հիմնական վայրից (լեռ, բնակավայր և այլն), քարտեզագրում, քարտագրում, հավաքում վերգետնյա նյութերը, կատարում է գրչանկարներ, նշում հուշարձանի պատրաստման եղանակները: Ելնելով անհրաժեշտությունից, հնագետը աշխատանքների սկզբնական փուլում, հուշարձանի շերտագրությունը, ժամանակագրությունը, նշանակությունը և այլ հարցեր պարզելու նպատակով կարող է փոքր հրապարակի վրա հետախուզական բնույթի պեղումներ կատարել, երբեք չմոռանալով, որ պեղումների ընթացքում մեկ անգամ ավերված հատվածն անհնար է երկրորդ անգամ պեղել: Ձեռք բերված տվյալները օրագրի հետ արխիվ են հանձնվում հետագա հետազոտությունների համար և կամ անհրաժեշտության դեպքում, անմիջապես սկսվում են պեղումները:

Հուշարձանների որոնումները և դրանց նախնական՝ մակերեսային հետազոտությունը, կոչվում է **հնագիտական հետախուզություն**: Այն մշտապես նախորդում է պեղումներին, ներառելով մակերեսային նյութի հավաքում, տեղադրության հստակեցում, քարտեզագրում, քարտագրում և հետախուզական հորատում: **Հետախուզական հորատում** է կոչվում բնակավայրի վերաբերյալ նախնական բնույթի տեղեկությունների ստացման նպատակով, ոչ մեծ չափերի, քառակուսի կամ ուղղանկյուն հատակագծով, մինչև բնահողը իջեցված փոսը, որն օգնում է որոշել մշակութային շերտերի հզորությունը, պարունակությունը, թվագրությունը: Հորատումների ընթացքում ձեռք բերված նյութերը և ստացված արդյունքները (շերտի կամ շերտերի հզորությունը, հողի գույնը, մոխրի, կառույցների առկայությունը և այլն) մանրամասն նշվում են օրագրում: Նախնական այս աշխատանքներից հետո հնագետը, որին այդ աշխատանքներն իրագործելու համար **բաց թերթիկ**, այսինքն պեղումներ սկսե-

լու թույլտվություն է տրվում, ձեռնամուխ է լինում դաշտային աշխատանքների երկրորդ փուլին՝ պեղումներին:

Հուշարձանները որոնելուն և գտնելուն մեծապես օգնում են օդից կատարված դիտարկումները. հուշարձանները օդից լավ են երևում: Լայնորեն կիրառվում է և ստորջրյա հնագիտությունը. Հայաստանում դրա կարիքը չի զգացվում: Այդուհանդերձ, չնայած ավիացիային, պատահական հայտնագործություններին և այլ դեպքերի, հիմնականը մնում են նպատակամղված որոնումները, որոնք նախնական փուլում կրում են **տեղագննության** բնույթ:

§ 3. ԲԱՑ ԵՎ ՓԱԿ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ

Յուրաքանչյուր հուշարձան, անկախ նրանից, թե ինչ տեսակի է պատկանում (բնակատեղի, քարայր, դամբարան, տաճար, արհեստանոց, ժայռապատկեր և այլն), իրենից ներկայացնում է բաց կամ փակ համալիր: Բաց համալիրները, հիմնականում, ժամանակի ընթացքում փոփոխված կամ ձևափոխումների ենթակա, բացօթյա հուշարձաններն են: Դրանց շարքում են տարատեսակ բնակավայրերը, քարանձավները, ժայռապատկերները, քարանձավների պատերի վրա արված նկարները, հնում օգտագործված հանքավայրերը և այլն: Բաց համալիր են հանդիսանում և բազմակի օգտագործված, խաթարված դամբարանները: Հակառակ դրանց, իրենց նախասկզբնական վիճակը պահպանած, ժամանակի ընթացքում արտաքին միջամտության չենթարկված դամբարանները փակ համալիրներ են: Այդպիսիք են և ամանների մեջ լցված ու իրրև գանձ թաքցված, կոտրված կամ ամբողջական զենքերը, գործիքները այլ իրերը: Փակ համալիրը ի հակադրություն բացի, որն արտացոլում է փոփոխվող կյանքն իր զարգացման մեջ, նույն տարիքն ունեցող, համաժամանակյա նյութերի ու կառույցների ամբողջությունն է, որը պատկերում է կյանքի մեկ ակնթարթը միայն:

Դամբարանային համալիրներն ինչպես կառուցվածքով, այնպես էլ գույքով ու թաղման ձևերով տարբեր են: Իրոք, եթե մի դեպքում դրանք հողից, հող ու քարից և կամ տարբեր չափերի քարերից պատրաստված դամբարանաթմբեր են, որոնք անփորձ աչքը կարող է շփոթել դաշտերը մաքրելու ընթացքում կուտակված քարակույտերի հետ (աղ. I_1), ապա մեկ այլ դեպքում, այդ վերգետնյա նշանները հողի մակերեսին առանձնանում են շրջանի տեսքով դասավորված քարերի ձևով (աղ. I_3): Այդ տեսակը կոչվում է **կրոմլեխ** (ըստ Ֆրանսիայի Բրետան մարզի բրետոներենի՝ կրոմ-շրջան և լեխ-տեղ բառերի): Երբեմն այդ շրջանների կենտրոնում, ինչպես և առանձին դամբարանաթմբերի վրա, դրված են լինում խոշոր քարեր (աղ. I_2). դրանք կոչվում են **մենհիրներ** (բրետոներեն՝ մեն-քար և հիր-երկար): Վերգետնյա կառուցվածք ունեն և **դոլմենները** (բրետոներեն՝ դոլ-սեղան, մեն-քար): Դրանք դամբարանաթմբից զուրկ, սալաքարերից պատրաստված արկղի են նման, որի պատերից մեկի վրա, պայմանավորված հոգեպաշտական պատկերացումներով, անցք է բացված (աղ. I_7): Դոլմենների հետ չպետք է շփոթել հողի մակերեսին պատրաստված քարարկղներն ու սալարկղները, որոնք դամբարանաթմբով են ծածկված: Այդ կառույցների պատերին անցքերը բացակայում են: Ինչ վերաբերում է գետնի մեջ պատրաստված դամբարանախցերին, ապա դրանք քարարկղներ են (աղ. I_4), սալարկղներ և կամ պարզապես մայր հողի մեջ փորված, հատակագծում տարբեր ձև ունեցող փոսեր (աղ. I_3). վերջիններս անվանվում են **հիմնահողային** դամբարաններ: Նշված տեսակներին զուգահեռ Շիրակի դաշտում հաճախ են հանդիպում և տուֆի շերտի մեջ, բարձրաճիտ կոշիկի տեսքով փորված դամբարանախցեր, որոնց «ճիտքը» խցանված է տուֆի կտորներով (աղ. I_6): Ինչ վերաբերում է հիմնահողային կամ քարարկղային դամբարանախցերին, ապա դրանք սովորաբար ծածկված են լինում տարբեր չափերի սալաքարերով: Առանձին դեպքերում հանդիպում են և գերաններից կազմված ծածկ ունեցող խոշոր դամբարանախցեր, որոնց պատերի երկայնքով ու լայնքով նույնպես գերաններ են կանգնեցված:

Տարբեր ժամանակներում թաղումները կատարվել են և խոշոր կարասների (աղ. I_5), աճյունասափորների (դրանք կոչվում են **օսսուարիա**) և կամ սարկոֆագների մեջ (աղ. I_8): Վերջիններս պատրաստված են քարից կամ կավից: Առանձին դեպքերում հանդիպում են և քարանձավներում կատարված թաղումներ: Դիաթաղմանը զուգահեռ (կմախքների դիրքը նույնպես տարբեր է. կան կողքի վրա ծալած վերջույթներով պառկեցված, կքանստած, մեջքի վրա պառկեցված և այլն) առկա են դիակիզումներ, մկանածածկույթից նախապես ազատված ոսկորների երկրորդական թաղումներ, դիամասնատում: Հաճախ են հանդիպում և հուշադամբարանները (դրանք հայտնի են և **կենոտաֆ** անվամբ. հուն.-լատ. կենոս-դատարկ, տաֆոս-գերեզման): Դրանց մեջ թաղում չի կատարված. մարդու կմախքը բացակայում է: Նման դամբարաններում սովորաբար դրված են լինում կենցաղային իրեր, ամաններ կամ դրանց մասերը:



1

2



3

7

4

5



Կավե սարկոֆագի մնացորդներ



6

8

§ 4. ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնակավայրերը և դամբարանները տարբեր կերպ են պեղվում և հետազոտվում, բայց երկու դեպքում էլ ընդհանուրը՝ հորիզոնական հարթությամբ հուշարձանի ողջ մակերեսով աստիճանաբար խորանալն է. ոչ մի դեպքում չի կարելի հուշարձանը պեղել առանձին հատվածներով, հորատումներ կատարելով ու մինչև բնահողը խորանալով կամ սոսկ դամբարանախուցը պեղելով: Հորատումները կարող են սոսկ ընդհանուր պատկերացում տալ կտրվածքի, շերտերի, դրանց հզորության, հարաբերական թվագրության վերաբերյալ, բայց ոչ երբեք ամբողջ հուշարձանի մասին: Ինչ վերաբերում է սոսկ դամբանախուցը պեղելուն, ապա նման հետազոտությունը թույլ չի տա պարզել թաղման ժամանակ կատարված արարողությունները:

Դամբարանների պեղումների ընթացքում անխաթար է թողնվում դամբարանաթմբի տրամագծով անցնող հողաշերտը. խաչաձև տեսք ունեցող այդ հողերիզի կտրվածքում պարզ երևում են կատարված գործողությունները հակառակ հաջորդականությանբ (աղ. II_1): Թաղման ժամանակ, կապված անդրշիրիմյան կյանքին առնչվող հավատալիքների և պատկերացումների հետ, ծիսական բարդ արարողություններ են կատարվել, ինչպես ասենք՝ զոհաբերությունները, կրակ վառելը, իրեր նետելը, ամաններ կոտրելը, քարեր լցնելն ու կուտակելը և այլն: Կատարված գործողությունները երևում են հողերիզների կտրվածքում տարբեր խորությունների վրա: Թողնված այդ հողերիզները վերջում են հանվում (աղ. II_2) նախապես չափագրելով յուրաքանչյուր շերտն ու լուսանկարելով դրանում հայտնաբերված նյութերը, վերջիններիս տեղադրությունները նշելով (աղ. II_4):

Պեղումների ժամանակ հայտնաբերվում են և օրգանական նյութերից պատրաստված իրեր, որոնք շփվելով օդի հետ շատ արագ են ձևափոխվում ու փչանում: Այդ երևույթը կանխելու համար, հնագետը նման իրերի պահպանումը ապահովելու նպատակով, անմիջապես պեղավայրում կոնսերվացնում է դրանք, օգտագործելով հալած մոմ, գիպսի կամ հատուկ քիմիական նյութերի լուծույթներ: Գիպսը օգտագործվում է և փտած իրերի դաջվածքը հանելու համար: Այդ միջոցառումները ժամանակավոր բնույթ են կրում. նման նյութերը (փայտ, կաշի, կտորեղեն) աշխատում են հնարավորին չափ արագ հանձնել լաբորատոր մշակման և հետազոտման:

Առավել բարդ են բնակավայրերի պեղումները: Սովորաբար տարիներ տևող այդ աշխատանքները ոչ միայն մեծագույն զգուշություն, համբերություն, աչալրջություն են պահանջում, այլև՝ պեղումներ կատարելու իմացություն և համապատասխան գիտելիքներ, որովհետև բնակատեղին ինքը կյանքն է իր բոլոր դրսևորումներով: Ապրելով որևէ վայրում մարդն այդտեղ շինարարություն է կատարում, տնտեսական աղբ թափում, վերակառուցում ավերված տունը և կամ՝ դրա ավերակների վրա նոր շինարարություն ծավալում: Այդ աշխատանքների հետևանքով ձևավորվում է քարից, կավից, մոխրից, այսինքն՝ տվյալ ժամանակաշրջանին բնորոշ նյութական մշակույթի մնացորդներ հանդիսացող իրերից, թափոններից բաղկացած նստվածք: Այդ հողաշերտը կոչվում է **մշակութային շերտ**, որովհետև այն պարունակում է մարդու գործունեությամբ ստեղծված մշակույթի մնացորդներ: Մշակութային շերտի հզորությունը, կախված մարդու գործունեության ինտենսիվությունից, ապրած ժամանակի տևողությունից և այլ հանգամանքներից, տարբեր է լինում: Օրինակ, եթե մարդը որևէ վայրում կարճ ժամանակ է ապրում, ինչպես ասենք անասնապահների, որսորդների ժամանակավոր կացարանները, ճամբարները, ապա այդտեղի մշակութային շերտի հզորությունը մեծ լինել չի կարող: Ընդհակառակը, եթե մարդն այդ վայրում երկար է ապրում և հետո ինչ-ինչ պատճառներով լքում է այն, ապա այդտեղ մշակութային շերտի հզորությունը մեծ կլինի:

Միաշերտ հուշարձաններին զուգահեռ, բազմաթիվ են և այնպիսիները, որոնք ինչ-ինչ պատճառներով (երաշտ, տարերային աղետ, պատերազմ և այլն) լքվելով, ժամանակ անց կրկին վերաբնակեցվել են: Բնականաբար լքված, ավերված բնակատեղին այդ ժամանակամիջոցում ծածկվում է հողի և բուսականության շերտով, որը մարդու կողմից ստեղծված նյութեր չի պարունակում: Նյութական մշակույթի մնացորդներ չպարունակող այդ շերտը կոչվում է **մաքուր** կամ **ստերիլ**: Վերաբնակեցված հուշարձանը, բնականաբար, ներկայացնում է արդեն ոչ թե մեկ, այլ՝ երկու և ավելի բնակավայրերի հաջորդականություն: Նման հուշարձանները կոչվում են **բազմաշերտ**: Վերաբնակեցումները կարող են կրկնվել մի քանի անգամ, որի հետևանքով առաջանում են նույն կամ տարբեր դարաշրջանների պատկանող, տարբեր հզորություն ունեցող մշակութային շերտեր: Մշակութային շերտերի հզորությունը, նայած կյանքի տևողության, տարբեր է լինում. այն կարող է հասնել տասնյակ մետրերի:

Անկախ հուշարձանի բնույթից (միաշերտ կամ բազմաշերտ), նայած դրա բնակեցված լինելու ժամանակաշրջանի տևողության, **մարդը**

կարող է 100 տարում մի քանի անգամ վերակառուցել սոսկ արևի ջերմությամբ «թրծված» աղյուսներից պատրաստված կամ կավաշեն պատեր ունեցող իր բնակարանը. նման կացարանների կյանքը սովորաբար 25-30 տարի է: Նույն ժամանակաշրջանում, վերակառուցումների հետևանքով առաջացած նման շերտերը կոչվում են **շինարարական հորիզոններ**: Վերջիններս, ինչպես և շերտերը, թվագրությունները հստակեցնելու, շփոթությունների տեղիք չտալու, հուշարձանի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու նպատակով, համարակալվում են: Այդ համարներն, ըստ հաջորդականության, նշվում են տառերով, թվերով կամ երկուսը միասին: Հուշարձանի ստորին՝ վաղագույն շերտից ցած գտնվող բնական մայր հողը կոչվում է **բնահող**: Շերտերի, շինարարական հորիզոնների և, ընդհանրապես, բոլոր մանրամասների վեր հանման նպատակով, ինչպես և հաշվի առնելով բնակավայրի չափերը, հուշարձանը նախապես բաժանվում է պեղման առանձին հրապարակների. դրանք ժամանակի ընթացքում ավելացվում են և ընդգրկում ողջ բնակավայրը: Պեղումների ավարտին այդ հրապարակները միացվում են՝ հանվում անաղարտ թողնված հողերիզները:

Պեղավայր է կոչվում այն սահմանափակ տարածքը, որտեղ պեղվում է մշակութային շերտը: Պեղավայրերի շերտերը և քանակը, կախված հուշարձանի ընդհանուր չափերից, առաջադրված խնդիրներից, առկա հնարավորություններից, տարբեր են լինում: Դրանք, սովորաբար, չեն անցնում 1000մ^2 սահմաններից, որովհետև դրանից մեծ լինելու դեպքում դժվար կլինի հետևել հուշարձանի շերտագրությանը, իրերի տեղադրությանը և այլն: Պեղումները իրականացվում են միայն ձեռքով՝ բահով, քլունգով, դանակով, վրձինով, իսկ հողը հեռացվում է պատգարակներով:

Պեղավայրն իր հերթին բաժանվում է քառակուսիների, որոնք նշագծվում են ձողեր ամրացնելով և դրանք լարերով միացնելով: Այդ ձողերը իջեցվում են խորանալուն զուգընթաց ինչը հնարավորություն է տալիս տարբեր խորությունների վրա հետևել նույն քառակուսում կատարված փոփոխություններին: Պեղումները խորացվում են հավասար կերպով. միջին խորությունը յուրաքանչյուր խորացման դեպքում չի անցնում 20սմ-ից: Հողի կտրվածքում երևացող տարբեր ժամանակաշրջանների մշակութային շերտերը նշագծվում են փոքրիկ ձողիկներով. ցույց են տրվում և շինարարական հորիզոնները, որոնցից ձեռք բերված նյութերը ենթարկվում են տարբեր տեսակի անալիզների: Վերջիններս կատարվում են լաբորատոր մշակման և հետազոտման պայմաններում:

Շերտագրության նպատակն է հետևել նյութական մշակույթի զարգացման օրինաչափություններին հնագիտական տարբեր դարաշրջաններում: **Հնագիտական դարաշրջանը**, որը չպետք է շփոթել դար (100 տարի) հասկացության հետ, զարգացման որոշակի աստիճան արտահայտող ժամանակաշրջան է, որը մյուսներից առանձնանում է արտադրության ձևերով, ինչպես և այս կամ այն նյութից (քար, բրոնզ, երկաթ) պատրաստված արտադրանքի (գործիք, զենք) տեսականու պատրաստման ձևերի ու դրանց բնորոշ առանձնահատկությունների տարածմամբ և գերիշխմամբ:

Հուշարձանի շերտերի հաջորդականության ստույգ որոշումը (ըստ նյութերի, շերտի գույնի, տեղանքի առանձնահատկությունների և այլն) հնագետի առաջնահերթ խնդիրներից մեկն է. հուշարձանի շերտագրության ճշգրիտ վեր հանումը պայմանավորում է հնագիտական նյութերի, շերտերի ստույգ մեկնաբանությունը: Հնագետը պետք է հաշվի առնի շերտագրության օրենքը, համաձայն որի հուշարձանի ստորին շերտի նստվածքը ավելի վաղ է քան դրա վրա տարածվողը: Այդուհանդերձ այդ օրենքը միշտ չէ, որ համապատասխանում է հնագիտական իրողությանը: Տարբեր պատճառների հետևանքով (հողասահքեր, հետագայում կատարված շինարարական աշխատանքներ, հեղեղատների գործունեություն, ռելիեֆի առանձնահատկություններ և այլն) վաղ տարիք ունեցող նյութերը կարող են հայտնվել վերին շերտերում: Նման օրինակները բազմաթիվ են: Ասվածը հստակեցնելու նպատակով ենթադրենք, թե վաղ շրջանում կառուցված ինչ-որ շինության անմիջական հարևանությամբ հետագայում կառուցվել են այլ շինություններ, գոյացնելով ուշ շրջանի մշակութային շերտ: Վերջինս ժամանակ անց, նոր շինարարության համար անհրաժեշտ հրապարակ ստեղծելու նպատակով, կարող է ծածկվել վաղ շրջանի շինարարության մնացորդները ուշ շրջանի շերտի վրա նետված հողաշերտով: Բնականաբար վաղ շրջանի նյութերը կհայտնվեն վերին շերտում, իսկ ուշը՝ ստորին: Նման պատկեր կարող է առաջանալ և ռելիեֆի առանձնահատկությունների հետևանքով (վաղ շրջանի կառույցը կարող է տեղադրված լինել բարձրադիր տեղում, իսկ հարևան գոգավորության մեջ կառուցված լինեն ուշ շրջանի շինություններ և այլն): Նման օրինակները բազմաթիվ են, ինչը և ցույց է տալիս, որ հորիզոնական ուղղությամբ, շերտ առ շերտ հուշարձանը պեղող հնագետը պարտավոր է հաշվի առնել ոչ միայն հուշարձանի խաթարվածության պահը, այլև՝ տեղանքի առանձնահատկությունները, այլ մանրամասներ, որոնք նա պետք է մեծագույն ճշտությամբ ներկայացնի հուշարձանի

ուղղահայաց կտրվածքը ցույց տվող գծագրի վրա (աղ. $II_{5,6}$): Դա հնարավորություն կտա մյուս հնագետներին համոզվել նրա հետևությունների իրավացիության մեջ, օգտվել նրա աշխատանքների արդյունքներից: Շերտագրությունն անհրաժեշտ է համադրությունների միջոցով **հնագիտական սանդղակ** կազմելու համար, որի նշանակությունը մեծ է նյութերի թվագրության, դրանց տեղը հուշարձանների շարքում հստակեցնելու համար: Հնագիտական սանդղակում աղյուսակի տեսքով, ըստ շերտերի և դրանց թվագրությունների, ներկայացվում և համադրվում են հնագիտական հուշարձանները, համեմատվում դրանք, ինչը և նպաստում է վերջիններիս միջև առկա կապերը վեր հանելուն, անհայտ թվագրություն ունեցող նյութերի տեղը ժամանակի մեջ պարզելուն: Շերտագրության պարզաբանումը հնագետից պահանջում է ոչ միայն օրագրում գրի առնել բոլոր մանրամասները, այլև՝ միլիմետրանոց թղթի վրա (այն թույլ է տալիս պահպանել մասշտաբները) նշել բոլոր կառույցները, դրանցից հայտնաբերված նյութերի տեղերը և տվյալները (շերտի հզորությունը, հողի գույնը, մոխրի շերտը և այլն):

Ասվածից դժվար չէ նկատել, որ տարբեր հարցերի պարզաբանման համար, հնագիտական իրերի հայտնաբերման հանգամանքները, մեծ նշանակություն ունեն: Պեղումներից հայտնաբերված որևէ իր կամ իրի մաս շատ ավելի մեծ արժեք ունի գիտության համար, քան ասենք, եթե նույն իրն ամբողջական վիճակով, բայց պատահական կերպով գտնված լինի: Ըստ նշանակության, գիտության համար ունեցած կարևորության, հնագիտական իրերը բաժանվում են երկու խմբի: Հնագիտական համալիրներից, լինի դա բնակատեղի, դամբարան թե այլ տեսակի հուշարձան, հայտնաբերված նյութերը, կազմելով **հնագիտական գույքի** ողջ տեսականին, գիտության համար մեծ կարևորություն են ներկայացնում: Համալիրներից դուրս գտնված նյութերը, ինչպես ասենք հողի մեջ պատահաբար հայտնված տարբեր տեսակի իրերը, թաղված գանձերը կամ ինչ-ինչ պատճառներով հողի երես ելածները, որոնք **հնագիտական գտածոներ** են հանդիսանում, համեմատաբար նվազ արժեք ունեն և ավելի շատ զուգահեռների դեր են կատարում: Վերջիններս, պատմական ընդհանրացումներ կատարելու համար կարող են արժեքավորվել, կապվելով որոշակի խմբեր ու շարքեր կազմող համանման այլ նյութերի խմբերի հետ: Առանց հնագիտական հսկայական նյութը ըստ տիպերի խմբավորելու ու դասակարգելու, անհնար կլինի դրանք հետազոտել և հանգել հիմնավորված հետևությունների:

1



2



3



5



6

4

քարացած կավաշերտ
մայր հող
խճաքար
կավաշերտ

«Տիպ» հասկացությունը ծագել է հունարեն «տիպոս»՝ հատված, դրոշմ, կերպար, տեսակ, նախանմուշ իմաստներն արտահայտող բառից, ինչը չի նշանակում, թե «տիպ» և «ձև» հասկացությունները հոմանիշներ են: «Տիպ» հասկացությունը հնագիտության մեջ ավելի ընդգրկուն, լայն բովանդակություն ունի: «Տիպաբանական խմբավորում» ասելով հասկացվում է տվյալ նյութի կիրառության բնագավառը (դաս), այսինքն ինչ նպատակի են ծառայել (կացին, թուր, խոփ և այլն), ձևերի առանձնահատկություններն, ըստ որի, դրանք խմբավորվում են (բաժին), այդ իրերը պատրաստելու համար օգտագործված նյութերը (խումբ), որոնք կարող են տարբեր լինել: Տիպն այս երեքի միասնությունն է ներկայացնում, որը և ընկած է տիպաբանական դասակարգման հիմքում: **«Տիպը» նույն նյութից պատրաստված, միատեսակ կիրառություն ունեցող նույնաձև իրերի, հուշարձանների ընդհանրությունն է, որը նույն նշանակությունն ունեցող մյուս ընդհանրություններից տարբերվում է ձևաբանական հատկանիշների և առանձնահատկությունների կայուն կրկնմամբ:**

Նյութի տիպաբանական դասակարգումը և ուսումնասիրությունը առաջնային նշանակություն ունի, որովհետև նյութերի տարածքաժամանակագրական բաժանումը և խմբավորումը դյուրացնում է հետազոտության ընթացքը և ձևաբանական համեմատությունը, թույլ է տալիս վեր հանել համանման իրերի մերձակցության աստիճանը: Տիպաբանությունն օգնում է դասակարգել նյութերը, պարզել դրանց զարգացումը տարածության ու ժամանակի մեջ, վեր հանել այս կամ այն տիպի տարածման շրջանակները: Տիպաբանական հետազոտության համար շատ կարևոր է տիպերի բաժանման օբյեկտիվ չափանիշներ գտնելը, նյութերի բոլոր առանձնահատկությունները վեր հանելը, այլապես հետազոտությունը կարող է սխալ եզրակացությունների հանգեցնել. դրանք կարող են արտահայտվել թե՛ թվագրության, թե՛ հնագիտական մշակույթների ուսումնասիրությանն առնչվող հարցեր պարզաբանելու ընթացքում: Նման սխալներից խուսափելու համար, հնագետները տիպաբանական մեթոդները կատարելագործելու ուղղությամբ կիրառում են թե՛ համեմատության, և թե՛ մաթեմատիկական մեթոդներ: Տիպաբանական մեթոդը հնարավորություն է տալիս հետևել ոչ միայն նյութերի՝ ժամանակի ընթացքում կրած փոփոխություններին, այլև վեր հանել հնագիտական մշակույթների սահմանները ժամանակի և տարածության մեջ:

Հնագիտական մշակույթի առանձնացումը կարևոր նշանակություն ունի հետազոտության համար: Այն ցույց է տալիս ոչ միայն նյութական մշակույթի զարգացման ընթացքը, օրինաչափությունները, ժառանգականությունը, կապերը այլ մշակույթների հետ, այլև՝ մարդկանց տարբեր խմբերի բնակեցրած տարածքները, նրանց տեղաշարժերը, կապերը, ազդեցություններն ու փոխազդեցությունները: Ասվածից հետևում է, որ «հնագիտական մշակույթ» հասկացությունը, հասարակության զարգացման որոշակի աստիճանում կապվում է «տնտեսամշակութային», «պատմաազգագրական շրջան» և «էթնիկական ընդհանրություն» հասկացությունների հետ, ինչը և ցույց է տալիս, թե տիպաբանական համադրությունները սոսկ հետազոտության ընթացքը դյուրացնելու համար չեն կատարվում:

Իրոք, հետևելով տարբեր ժամանակաշրջանների պատկանող, բայց նույն նպատակին ծառայած նյութերի առանձնահատկություններին, համոզվում ենք, որ դրանք տարբերվում են միմյանցից: Դա բնական է. նյութերը ձևափոխում, կատարելագործում և իր պահանջներին է հարմարեցնում մարդը: Հետևաբար այդ տարբերությունները պայմանավորված են ժամանակաշրջանի առաջընթացով: Նման եզրակացությունը բացառվում է համաժամանակյա նյութերի տարբերությունների դեպքում: Ասվածից հետևում է, որ նյութական մշակույթը զարգանում է ոչ միայն ժամանակի, այլև՝ տարածության մեջ: Իրոք, երբ հետևում ենք առանձնացված տիպերի տարածմանը, քարտեզագրում դրանք, ապա համոզվում ենք, որ նույնատիպ իրերը որոշակի տարածքներում են խմբավորվում և հանդես են գալիս այլատեսակ նյութերի հետ մշտական միասնություններով: Դա ցույց է տալիս, որ որոշակի տեսակի նյութեր, երևույթներ և այլն, բնորոշ են եղել մարդկանց որոշակի խմբերի և ոչ ուրիշների (ցեղ, ցեղամիություն, ժողովուրդ և այլն): Ասվածը չի նշանակում, թե *հնագիտական մշակույթ* ասելով հասկացվում է ժամանակագրորեն և տարածականորեն կապված հնագիտական հուշարձանների ընդհանրություն, որն ընդգրկելով որոշակի տարածք, տարբերվում է համաժամանակյա այլ ընդհանրություններից: Նման ձևակերպումը ամբողջական համարվել չի կարող, քանի որ տպավորություն կստացվի, թե հնագիտական մշակույթները կազմող հուշարձանների ընդհանրությունը իր տարածման սահմաններում առանձնանում է որոշակի, միանման տեսքով և զբաղեցնում խիստ որոշակի սահմաններ. պետական սահմաններ հիշեցնող նման անջրպետումներ, հնագիտական մշակույթների համար չեն դիտվում: Հնագիտական մշակույթների սահմանամերձ գոտիներում դիտվում են երկու մշակույթների փոխազդեցության հետևանքով առաջացած տարրեր, որոնք թուլանում են դեպի հնագիտական մշակույթի կենտրոնը, միջուկը մերձեցող տարածքներում: Նման փոխշփման և փոխազդեցության հետևանքով, նույն մշակույթի հարավային և հյուսիսային, արևմտյան և արևելյան «ծայրամասերի» նյութերը, դրսևորելով հանդերձ հիմնական մշակույթին բնորոշ բոլոր հատկանիշները, կարող են զգալիորեն տարբերվել միմյանցից:

«Հնագիտական մշակույթն» այսպիսով, հնագիտական համալիրների որոշակի, փոխկապակցված ընդհանրություն է, որը չափվում ու տեղայնացվում է ժամանակի և տարածության մեջ, տարբերվում նույն կարգի այլ ընդհանրություններից, երևան բերելով շփման գոտիներում անցումային ձևեր:

Հնագիտական նյութի ձևաբանական, տիպաբանական խմբավորումն ու դասակարգումն, այսպիսով, հնարավորություն է ընձեռում ձևահամեմատական հետազոտությամբ վեր հանել այս կամ այն մշակույթը ստեղծած հանրության տեղաշարժերը, փոխազդեցությունները, պարզել այդ մշակույթի ետևում կանգնած հանրության զբաղեցրած տարածքը. այդ հարցերի պարզաբանումը ընդլայնում է պատմական երևույթների մեջ խորանալու հնագիտության հնարավորությունները: Տիպաբանական համադրությունները կարևորվում են նաև թվագրության հետ կապված հարցերը պարզաբանելու համար:

§ 6. ՆՅՈՒԹԵՐԻ ՏԱՐԻՔԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գոյություն ունեն նյութերի տարիքը պարզելու տարբեր եղանակներ, որոնք լայնորեն կիրառվում են հնագիտության մեջ: Դրանցից առաջինը հնագիտական թվագրությունն է, որը հիմնվելով բնակավայրերի շերտագրական տվյալների վրա, իրենից ներկայացնում է երկու համակարգ՝ ա) հարաբերական և բ) բացարձակ: Հարաբերական թվագրությունը ցույց է տալիս իրադարձությունների հաջորդականությունը ժամանակի մեջ, իսկ բացարձակը վեր է հանում հստակ, ստույգ ժամանակը, լինի դա տարի, դար, թե հազարամյակ:

Ասվածը հստակեցնելու նպատակով բերենք այսպիսի օրինակ: Եթե դիտարկենք թե որևէ բնակավայրի ստորին շերտում հայտնաբերվել են էնեոլիթյան նյութեր, որոնցից վեր ընկած շերտում հայտնաբերված նյութերի թվագրությունը պարզ չէ. բնականաբար դրանք եռէնեոլիթյան են, որոնք, եթե ծածկված լինեն երկաթեդարյան նյութեր պարունակող շերտով, ապա

պարզ է, որ դրանք բրոնզեդարյան նյութեր են, քանի որ այդ անհայտ շերտը կարող էր գոյանալ էնեոլիթից հետո և նախքան երկաթի դարաշրջանի սկիզբն ընկած ժամանակաշրջանում: Քանի որ բրոնզի դարաշրջանը Հայաստանում ընդգրկում է մ.թ.ա. IV հազ. III քառորդ – II հազ. ժամանակաշրջանը, ապա հայտնաբերված նյութերը ընդհանուր կերպով կարող են թվագրվել նշված ժամանակաշրջանով: Բնականաբար թվագրությունն ավելի ստույգ կլինի եթե շերտում հայտնաբերվեն հստակ թվագրող նյութեր: Այս դեպքում մենք կարող ենք ստանալ և բացարձակ թվագրություն: Բերված օրինակը հնագիտական թվագրության պարզեցված սխեման է, որի նպատակն է ցույց տալ, թե շերտագրությունն ինչպես է օգնում թվագրության հստակեցմանը: Թվագրության պարզաբանումը, սակայն, շատ ավելի բարդ է և կատարվում է ոչ թե սոսկ շերտագրական տվյալների հաշվառմամբ, այլև՝ բնական գիտությունների, զուգահեռների, տիպաբանական համադրությունների միջոցով: Ասվածը պարզեցնելու նպատակով բերենք մեկ այլ օրինակ: Ենթադրենք, թե հուշարձանը ոչ թե բազմաշերտ է ինչպես առաջին դեպքում, այլ՝ միաշերտ, որտեղից հայտնաբերված նյութերի թվագրությունը որոշակի չէ: Այս դեպքում հայտնաբերված նյութերի թվագրությունը որոշվում է տիպաբանական համադրությունների միջոցով. նյութերը խմբավորվում են, բաժանվում տիպերի հաշվի առնելով բոլոր մանրամասները: Այնուհետև առանձնացված տեսակներից և ենթատեսակներից յուրաքանչյուրը համադրվում, համեմատվում է հստակ թվագրություն ունեցող այլ հուշարձաններից գտնված համանման նյութերի հետ, հաշվի առնելով վերջիններիս շերտագրական տվյալները: Այդ համադրությունների օգնությամբ և ստեղծվում է ***հնագիտական սանդղակ***, որը և հնարավորություն է տալիս թվագրել նորահայտ նյութերը: Այս դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել անհայտ թվագրություն ունեցող հուշարձանից հայտնաբերված վաղ և ուշ թվագրություն ունեցող նյութերի առկայությունը: Տվյալ դեպքում, թվագրության համար հիմնական դերը կատարում է տվյալ հուշարձանից հայտնաբերված ուշ թվագրություն ունեցող նյութը, որը և ցույց է տալիս բոլոր նյութերի թվագրության վերին սահմանը, իսկ ստորինը կարող է որոշվել վաղ թվագրություն ունեցող նյութերի միջոցով, որը երբ է գործածությունից դուրս եկել: Այս երկու թվագրությունները (վաղ և ուշ) ցույց են տալիս հայտնաբերված նյութերի տեղը ժամանակագրական սանդղակում: Այն կազմելու ժամանակ հարկ է մշտապես նկատի ունենալ, որ հնագիտական նյութերի մի մասը կարող է գրեթե անփոփոխ կերպով երկար ժամանակ կիրառվել, իսկ մյուսները՝ հանդես գալ որոշակի ժամանակաշրջանում:

Նյութերի թվագրությունը սոսկ շերտագրական տվյալներով ու տիպաբանական համադրությունների եղանակով չի որոշվում: Այդ երկու մեթոդները մեծ նշանակություն ունեն ինչպես հարաբերական (այսինքն, ինչ-որ իրադարձություն տեղի է ունեցել ինչ-որ դեպքից առաջ կամ հետո), այնպես էլ բացարձակ (այս դեպքում նշվում է նյութի որոշակի ժամանակաշրջանը, դարը և այլն) ժամանակաշրջանը որոշելու համար: Դրանք հիմք են հանդիսանում նաև հնագիտական պարբերացումների համար, որը հիմնվում է գործիքների պատրաստման նյութի (քար, բրոնզ, երկաթ) և պատրաստման եղանակների հաշվառման վրա: Բնականաբար, դա թույլ է տալիս հետևել մշակույթի զարգացման ժառանգականությանը, քանի որ ուշադրությունը բևեռում է մշակույթի զարգացմանը և դրանով իսկ նպաստում հասարակական հարաբերությունների ընթացքի պարզաբանմանը: Այդուհանդերձ, սոսկ այս երկու մեթոդներով նյութերի տարիքը չի որոշվում. այս հարցում մեծ դեր են կատարում և բնական գիտությունները, որոնք մեծապես օգնում են թվագրության հստակեցմանը:

Ժամանակագրությունը պատմական ժամանակը որոշող գիտություն է, որն օգտվում է տարբեր մեթոդներից: Երկրաբանական շերտագրության մեջ մեծ նշանակություն ունի և կավային նստվածքներով ժամանակաշրջանը որոշելու եղանակը. այն մեծ նշանակություն ունի հնագիտության համար: Հատկապես լայն կերպով հնագիտությունը օգտվում է սառցապատումների և միջսառցային ժամանակաշրջանների համար առաջարկված երկրաբանական թվագրություններից: Թվագրությունը հստակեցնելու համար մեծ նշանակություն ունի և աստղագիտական (մաթեմատիկական) կամ այլ կերպ ասած օրացուցային (իրական) թվագրումը, որը հանդես է գալիս բրոնզի դարաշրջանից կամ գրերի գյուտից: Սա բարդ աշխատանք է, որովհետև հների օրացուցային հաշվարկների համադրումը մեր ժամանակագրության հետ բավական բարդ հաշվարկներ է պահանջում: Հարցն այն է, որ հների ժամանակագրական համակարգերը հիմնված չեն ինչ-որ կայուն ելման կետի վրա: Դրանք մի դեպքում կատարվել են թագավորների արքայատոհմերի իշխանության տարիների հաշվառմամբ, մեկ այլ դեպքում՝ օլիմպիադաների միջոցով և այլն: Մյուս բարդությունն այն է, որ պարզ չէ, թե հներն իրենց հաշվարկները լուսնային, արեգակնային, թե երկուսի համատեղմամբ են կատարել: Այդ հաշվարկները, որոնց հետևանքով էլ առաջացել են երկար, կարճ, միջին թվագրությունները, բարդ են և որոշվում են ետընթաց՝ ներկայից դեպի անցյալը խորանալու, տարբեր իրադարձությունների, դեպքերի, հաջորդականությունները համադրելու միջոցով: Այս թվագրության

թույլ կողմը կայանում է նրանում, որ գործում է գրային ժամանակի և միանգամայն անզոր է նախագրային դարաշրջանների համար:

Թվագրության հստակեցմանը օգնում են և այլ օժանդակ գիտություններ: Դրանցից **բուսաժամանակագրությունը (դենդրոխրոնոլոգիա)** թվագրությունը որոշում է ըստ ծառաբնի օղակների՝ մինչև մեկ տարվա ճշտությամբ: Հարցն այն է, որ բարենպաստ կլիմայական պայմանների դեպքում այդ օղակները լայն են լինում, իսկ երաշտ տարիներին՝ նեղ: Անկախ նրանից, թե տվյալ ծառատեսակը, որ անտառում է աճում, այդ օրինաչափությունը գործում է և համադրելով հուշարձանում օգտագործված այդ ծառատեսակը տարբեր վայրերում դեռևս աճող նույնատեսակ ծառերի հետ, ետընթաց հաշվարկի միջոցով կարելի է խորանալ մի քանի հազար տարի այն դեպքում, եթե տվյալ ծառատեսակը երկարակյաց է: Այս մեթոդի թերությունը, բացի այն, որ որոշ երկարակյաց ծառեր ամենուր չեն աճում, նաև այն է, որ փայտը օրգանական նյութ լինելով, նպաստ պայմանների, կարող է շուտ փտել:

Թվագրությունը հստակեցնելու համար ավելի օգտակար և արդյունավետ են **ֆիզիկա-քիմիական մեթոդները**. դրանք լայնորեն կիրառվում են հնագիտության մեջ: Այդ մեթոդներից մեկը տարիքը որոշում է ըստ ֆտորի քանակի: Հայտնի է, որ հողում գտնվող ոսկորը հիմնահողային ջրերից ֆտոր է ընդունում: Այս դեպքում հաշվի է առնվում տվյալ վայրի հիմնահողային ջրերում գտնվող ֆտորի քանակը: Որքան ոսկորը երկար է մնում հողում, այնքան մեծ է լինում նրա մեջ ֆտորի քանակը: Հաշվարկված է, որ ոչ վաղ անցյալում (1500–2000 տարի) հողի մեջ ընկած ոսկորը պարունակում է 0.3– 0.5% ֆտոր, իսկ վերին պալեոլիթի համար այն կազմում է արդեն 2% և այլն: Այս մեթոդը լավ է հնեամարդաբանական ու հնեակենդանաբանական նյութերի տարիքը որոշելու համար:

Մեթոդներից մյուսը, որն իր արդյունավետության համար մշտապես օգտագործվում է հնագետների կողմից, ռադիոկարբոնային կամ ռադիոածխածնայինն (լատ. կարբո - ածուխ) է: Հայտնի է, որ ածխածինն ունի երկու կայուն իզոտոպ՝ C_{12} և C_{13}, բայց մթնոլորտում կա նաև չնչին քանակով C_{14} ռադիոակտիվ իզոտոպը, որն ընդունվում է բույսերի կողմից և ապա դրանց միջոցով անցնում կենդանիներին: Այդ իզոտոպի քանակն օրգանական նյութերի յուրաքանչյուր կիլոգրամում վերջին 40-50 հազար տարիների ընթացքում կայուն է և չի ենթարկվում փոփոխության: Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր Վիլարդ Լիբիի կողմից 1948թ. հայտնաբերված այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ մահացած օրգանիզմում C_{14}–ի քանակը, օրինաչափ կերպով սկսում է նվազել,

այսինքն որոշակի ժամանակում խիստ որոշակի քանակ է կիսաքայքայվում: Այդ ժամանակը հավասար է 5360 ± 50 տարվա: Մահացած մարմնում գտնվող C_{14} մնացորդային զանգվածն էլ ուղենիշ է դառնում, մեր օրերից սկսած, գոյի (բուսական և կենդանական օրգանիզմներ) ոչնչանալու ժամանակը որոշելու համար: Ընդ որում շեղումն, ինչպես տեսնում ենք, կազմում է 50-100 տարի: Այս մեթոդի թերությունը կայանում է նրանում, որ այն գործում է վերջին 40–50 հազ. տարիների համար. դրանից վաղ այն պիտանի չէ:

Մեթոդներից մյուսը կալիում-արգոնայինն է, որը հիմնվում է հրաբխային նստվածքներում գտնվող կալիում K – 40 և արգոն Ar - 40 կիսաքայքայման ժամանակի վրա: Այս մեթոդը բավարար արդյունքներ է տալիս 400.000-ից սկսած մի քանի մլն. տարվա հնություն ունեցող հրաբխային նստվածքների համար: Ներկայումս մշակվում են հնամագնիսական, ջերմալուսարձակման և այլ մեթոդներ. այդ ուղղությամբ կատարվող աշխատանքներն ընթացքի մեջ են: Այս մեթոդները համադրվում են երկրաբանական ժամանակաշրջանների հետ:

§ 7. ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ԱՅԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Վերը շարադրվածից դժվար չէ նկատել, որ հնագիտությունն իր աղբյուրները հետազոտում է համալիր եղանակով, մյուս գիտությունների օժանդակությամբ, վերջիններիս հետ սերտ կապ պահպանելով: Առանց նման հետազոտության այնպիսի բազմերիզ գիտություն, ինչպիսին հնագիտությունն է, ոչ միայն արհեստականորեն կնեղացնի իր ուսումնասիրությունների շրջանակները, կսահմանափակի սեփական հնարավորությունները, այլև չի կարող հիմնավոր եզրահանգումներ կատարել առանձին հարցերի վերաբերյալ. դրանք զգալի չափով թերի կլինեն:

Այդ գիտություններից **ազգագրությունը**, որից մեծապես օգտվում է հնագիտությունը, հարուստ տվյալներ է տալիս զարգացման ստորին աստիճանների վրա մնացած ժամանակակից հասարակությունների վերաբերյալ: Այդ տվյալներն օգնում են հնագիտական նյութի բազմակողմանի ուսումնասիրությանը, դրա «կենդանացմանը»: Ազգագրությունը և հնագիտությունը փոխադարձաբար լրացնելով միմյանց, չեն փոխարինում իրար. եթե ազգագրությունը «շունչ է տալիս» հնագիտական նյութին, ապա հնագիտությունն իր հերթին նպաստում է ազգագրական

երևույթների ծագման ժամանակաշրջանը պարզելուն, այդ երևույթների զարգացման փուլերին հետևելուն:

Պատմական մարդաբանություն. առանձնահատուկ նշանակություն ունի մարդու հեռավոր նախնիների զարգացման ընթացքը, մարդաբոյացման գործընթացի տեղը, ժամանակը, ինչպես և ռասաների կազմավորման ու տարածման և առանցքային նշանակություն ունեցող այլևայլ հարցերի պարզաբանման համար:

Լեզվաբանություն. խոշոր նշանակություն ունի նախնադարի (և ոչ միայն) լեզվական քարտեզի գծագրման համար: Այն ցույց է տալիս լեզվաընտանիքների տարածումը, դրանց տեղաշարժերը: Համադրելով լեզվաբանության տվյալները հնագիտական նյութի հետ, պատմությունը որոշակի եզրահանգումներ է կատարում նաև «վաղ և ուշ նախահայրենիքների» վերաբերյալ:

Ընդհանուր երկրաբանություն. առանց այս գիտության տվյալների հազիվ թե հնարավոր լինի հետևել երկրագնդի շերտերի կազմավորմանը, դրանց հաջորդական զարգացմանը, պարզել համանման այլ հարցեր, որոնք անմիջականորեն կապվում են հնագիտության հետ: Բավական է ասել, որ մարդկության վաղագույն շրջանի ուսումնասիրության համար անփոխարինելի նշանակություն ունի երկրաբանական շերտագրությունը. վերջինս հարուստ տվյալներ է տալիս մարդկության առաջացման, նրան շրջապատող միջավայրում կատարված փոփոխությունների ժամանակաշրջանների և այլ հարցերի վերաբերյալ: Անմիջապես նշենք, որ թյուրիմացությունների և շփոթությունների տեղիք չտալու նպատակով, աշխատանքում օգտագործվել են սառցապատումների և միջսառցային ժամանակների համար, Ա.Պենկի և Է.Բրյուկների կողմից առաջարկված անվանումները, որոնք ընդունելություն են գտել հետազոտողների կողմից:

Նախնադարի՝ մարդկության պատմության մեծագույն մասն ընդգրկող ժամանակաշրջանի մասին եղած գիտելիքները հարստացնելու են գալիս չորրորդական շրջանի **հնեակենդանաբանությունն** ու **հնեաբուսաբանությունը**, հարակից այլ գիտություններ: Դրանք հնարավորություն են տալիս հետևել մարդու միջավայրի փոփոխությանը, կլիմայական պայմաններին, բուսական ու կենդանական աշխարհների, համապատասխանաբար՝ անասնապահության և երկրագործության զարգացմանը, որսորդության և հավաքչության կատարած դերին, պարզել բազմաթիվ հարցեր, որոնց ճանաչողական նշանակությունը հազիվ թե հնարավոր լինի գերագնահատել:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԻՆ ՔԱՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ (ՊԱԼԵՈԼԻԹ)

§ 1. ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՓՈՒԼԱԲԱԺԱՆՈՒՄԸ

Մարդկության զարգացման ամենաերկարատև ժամանակաշրջանն ընդգրկող հին քարի դարաշրջանի հուշարձանների թվագրությունը սերտորեն կապված է երկրագնդի զարգացման վերջին՝ մոտավորապես 65մլն. տարի առաջ սկսված կայնոզոյան (հուն. կայնոս-նոր, ժամանակակից, զոե-կյանք) էրայի անտրոպոգեն կոչվող դարաշրջանի երկրաբանական շերտերի հետ: Անտրոպոգեն դարաշրջանը երկու մասի է բաժանվում: Դրանցից առաջինը ներառում է նախապլեյստոցենը կամ էոպլեյստոցենը (հուն. էո-ցած, նախա -, մինչ-) և պլեյստոցենը, իսկ երկրորդը՝ հոլոցենը (հուն.հոլոս-ամբողջ, լրիվ) կամ ետսառցային ժամանակաշրջանը: Հին քարի դարաշրջանը, որն ըստ ներկա տվյալների, սկսվել է 2,6-3մլն. տարի առաջ (եթե ոչ ավելի վաղ. առկա են ժամանակագրական ընդհատումներ), համապատասխանում է նշվածներից առաջինին: Այդ ժամանակաշրջանի երկրաբանական շերտերում են հայտնաբերված ավստրալոպիթեկների (հարավային կապիկ) բազմաձյուղ ընտանիքին (մոտ 60 տեսակ) պատկանող, այդ թվում և ավելի զարգացած աստիճանը ներկայացնող, գործիք պատրաստելու ունակ, Homo habilis կոչված արարածների ոսկրաբանական մնացորդները: Դրանք գտնված են օլդուվայան (ըստ Տանզանիայում գտնվող Օլդուվայ կիրճի անվան) կամ «կոտրտված գլաքարերի մշակույթ» (չշփոթել «հնագիտական մշակույթ» հասկացության հետ, որը զարգացման որոշակի աստիճանում երևան եկած պատմական երևույթ է) պատկանող նյութերի հետ:

Բնականաբար հարց է ծագում. մի՞թե քարե այդ պարզունակ գործիքները բավարար հիմք են ողջ ժամանակաշրջանը «քարեդարյան» բնորոշելու համար: Ինչու՞, օրինակ, չենք առանձնացնում «փայտի» կամ «ոսկրի» դարաշրջան, նմանավանդ մասնագիտական գրականության մեջ հանդիպում է և «ոսկրե ինդուստրիա» հասկացությունը, իսկ փայտը, որն անտարակույս, իբրև գործիք, գործածվել է քարին համահավասար, պարզապես մեզ չի հասել: Տվյալ դեպքում, սակայն, էականը տարբեր

նյութերից պատրաստված գործիքների, այսինքն՝ *գիտակցված* և ըստ այդմ կիրառության բնագավառին ու եղանակին համապատասխան *ձևափոխված* իրերի գտնված կամ չգտնված լինելու հանգամանքը չէ, որ կարևորում է անվանումը (այս պահը կարևոր է անտրոպոգեն անվանման՝ նաև վերացական մտածողությամբ օժտված մարդուն կենդանուց տարբերվելը շեշտելու համար): Դարաշրջանի անվանումը ցույց է տալիս, որ տվյալ դարաշրջանի համար քարն էր այն միակ նյութը, որով հնարավոր էր այլ նյութերից և հենց քարից գործիքներ պատրաստել: Փայտը և ոսկորը չունեն քարի հատկությունները. դրանցով անհնար է քարը բեկոտել, կոտրել և այլն: Դարաշրջանի անվանումը քարն առանձնացնում է իբրև այլ գործիք ստեղծելու համար օգտագործված նյութ, որից պատրաստված իրերը նշանավորում են կենդանական աշխարհից մտածող էակի առանձնանալու պահը: Քարի դարաշրջանի տարբեր փուլերի նյութերն արտացոլում են այդ էակի զարգացման աստիճանները:

Քարի դարաշրջանն առաջին անգամ երկու խոշոր մասերի բաժանեց Լեբբոկը 1865թ., առանձնացնելու համար չհղկված, կոպիտ մշակված քարե գործիքները հղկվածներից: Առաջինների համար նա առաջարկեց պալեոլիթ (հուն. պալայոս-հին, լիթոս- քար), իսկ երկրորդների համար նեոլիթ (հուն. նեոս-նոր) անվանումները: Նման խմբավորումն ավելի քան ընդհանուր էր և ոչինչ չասող,որովհետև թե՛ մեկ (պալեոլիթ), թե՛ մյուս դեպքում (նեոլիթ) հազարամյակներով իրարից հեռու գտնվող նյութերը հայտնվելով նույն խմբում, համաժամանակեցվում էին, կորցնում իրենց ժամանակագրական, մշակման, ձևաբանական առանձնահատկությունները, գիտական արժեքն ու իմաստը:

Հնագիտության հետ անհամատեղելի, սխալների հանգեցնող այս իրողությունը ճշգրտվեց, մշակվեց և գիտական հիմքերի վրա դրվեց տարբեր երկրների հետազոտողների աշխատանքների շնորհիվ (Բուշե դը Պերտ, Է. Լարտե, Ք.Թոմսեն, Մ.Կուտյե, Դ. Վորսո, Ա.Էվանս, Ֆ.Պետրի, Գ.Օբերմայեր, Դ.Կարտալյակ և շատ ու շատ ուրիշներ), որոնց հպանցիկ անդրադարձը նույնիսկ բավական ժամանակ կպահանջի: Այդուհանդերձ, հետագա շարադրանքը հստակեցնելու, տերմինների իմաստը պարզ դարձնելու համար, անհրաժեշտ է ներկայացնել մասնագիտությամբ երկրաբան Գ. Մորտիլյեի (1821-1898) և Փարիզի համալսարանի պրոֆեսոր Ա. Բրեյլի (1877-1961թթ) պալեոլիթի համար առաջին անգամ կատարած գիտական պարբերացման և ընդհանրապես այն հետազոտելու ուղղությամբ տարած աշխատանքներն ու օգտագործած

տերմինները. դրանք այժմ էլ կիրառվում են դարաշրջանի այս կամ այն փուլն առանձնացնելու, գործիքների պատրաստման բնորոշ եղանակներն ընդգծելու համար:

Զուգակցելով երկրաբանությունը հնագիտության հետ, հիմք ընդունելով գործիքների և զենքերի պատրաստման եղանակները, ձևերն ու առանձնահատկությունները՝ Գ. Մորտիլյեն պալեոլիթում սկզբնապես առանձնացրեց երեք աստիճան: Դրանցից առաջինում էին խմբավորված քարը քարին խփելով, բեկոտմամբ ստացված պարզ գործիքները: Դրանք, ըստ Փարիզի մոտ գտնվող Շելլ տեղանվան,որտեղից առաջին անգամ էին հայտնաբերվել այդ եղանակով պատրաստված գործիքները, շելյան անվանեց: Երկրորդ խումբն էին կազմում ցլեպմամբ ստացված շեղբերից պատրաստվածները. դրանք Վեզերի գետահովտում գտնվող Մուստյե քարանձավի անունով, մուստյերյան կոչվեցին, իսկ երրորդում, որոնց տրվեց սոլյուտրե անվանումը (ըստ Սոնա և Լուարայի մոտ գտնվող Սոլյուտրե վայրի), խմբավորվեցին սեղմման եղանակով, նուրբ հարդարված գործիքները: Առանձնացված խմբերը Գ.Մորտիլյեն փոքր-ինչ ուշ համալրեց ևս երկուսով՝ աշելով (ըստ Ամյենի արվարձան Սենտ-Աշելի) և մադլենով (ըստ Վեզերի գետահովտում գտնվող լյա-Մադլեն քարանձավի անվան): Հետևելով տարբեր հուշարձաններից հայտնաբերված նյութերի հաջորդականությանը՝ Գ.Մորտիլյեն դրանք կապեց երկրաբանական շերտերի հետ, որով և յուրաքանչյուր խումբ իր տեղն ստացավ ժամանակագրական սանդղակում: Դա գիտականորեն հիմնավորված պարբերացման համակարգ էր, որը ցույց էր տալիս աստիճանական զարգացման պատկերը:

Գ.Մորտիլյեի առանձնացրած խմբերին Ա.Բրեյլը և Է.Կարտելյակը ավելացրին ևս երեքը. դրանք անվանվեցին կլեկտոն (շելլ-աշելի միջև), լևալլուա (աշելի և մուստյեի միջև) և օրինյակ (այն տեղադրվեց մուստյեի և սոլյուտրեի միջև): Առանձնացված խմբերում միավորված իրերը դրսևորում էին պատրաստման եղանակների ընդհանրություններ, որոնք և նպատակահարմար դարձրին դրանք միավորել պալեոլիթի վաղ (շելլ, կլեկտոն, աշել, լևալլուա), միջին (մուստյե) և ուշ (օրինյակ, սոլյուտրե, մադլեն) փուլերին բնորոշ, երեք խոշոր խմբերի մեջ: Դրանցից երրորդում միավորվածները, ինչպես ցույց տվեցին հետագա պեղումների արդյունքները, առանձին տարածքների էին բնորոշ, դրսևորում էին տեղական առանձնահատկություններ:

Հետագա հայտնագործությունները ցույց տվեցին նաև, որ հարկ է ընդլայնել, խորացնել պալեոլիթի ստորին սահմանը: Կազմվեց նոր պար-

բերացում, որտեղ առաջին խումբն էին կազմում շելլին նախորդող օլդուվայան նյութերը, երկրորդը՝ շելլ- վաղ աշելյան, իսկ երրորդը՝ միջին և ուշ աշելյան նյութերը: Վաղ պալեոլիթը ներկայացնող այս խմբերին հաջորդում էին միջին և ուշ պալեոլիթի փուլերը, որոնցում համապատասխանաբար դասված էին մուստյեն (IV խումբ) և հինգերորդ խումբը (օրինյակ, սոլյուտրե, մադլեն) կամ պալեոլիթի ավարտական փուլը: Այս պարբերացումը ներկայումս փոքր-ինչ ձևափոխված է: Ներկա փուլաբաժանմամբ պալեոլիթի վաղ շրջանն են ներկայացնում օլդուվայից ուշ աշելը ներառյալ (I –III խմբերը միասին), միջին փուլը ներկայացնում է մուստյեն, իսկ հինգերորդ խումբը մնում է ավարտական: Այս փուլաբաժանումը հարմարության համար է կատարված, որտեղ հաշվի է առնված նաև գործիքի մշակման բնորոշ բեկոտման եղանակը: Առանձին դեպքերում, սակայն, հետազոտողները հիմք ընդունելով ուշ աշելյան և մուստյերյան նյութերի նմանությունները, առաջին՝ վաղ խմբում են միավորում օլդուվայից մուստյեն ներառյալ (երկփուլ պարբերացում), դիտելով մուստյեն իբրև ուշ պալեոլիթին անցնելու վաղ պալեոլիթի վերջին օղակ:

§ 2. ՎԱՂ ՊԱԼԵՈԼԻԹ

Հայաստանի և հարևան հանրապետությունների վաղ պալեոլիթյան, այսինքն՝ մարդու կենսաբանականից հասարակական որակի անցման ժամանակաշրջանի հուշարձանները անհամաչափ են հետազոտված. դա զգալիորեն խոչընդոտում է առաջնակարգ կարևորություն ունեցող մի շարք հարցերի պարզաբանմանը: Խոսքն առաջին հերթին վերաբերում է ունակ մարդ (Homo habilis) կոչվող արարածի (աղ. $III_{I,Ia}$) և նրա կողմից պատրաստված ամենանախնական՝ օլդուվայան գործիքների հայտնաբերված չլինելուն: Ներկա տվյալներով, գյուտերից վաղագույնը, կենդանական աշխարհի ջերմասեր տեսակների (հնադարյան փիղ, նախնական ձիու նախնի հիպպարիոն, ռնգեղջյուր, բորենի և այլն) ոսկրաբանական մնացորդների հետ, 1939թ. Կախեթի Ուդաբնո գյուղի (Արևելյան Վրաստան) ուշ երրորդական շրջանի շերտերում գտնված, ուդաբնոպիթեկ անվամբ հայտնի պրիմատի վերին ծնոտի բեկորն է երկու պահպանված ատամով: Ունակ մարդ տեսակին նախորդած այդ արարածի փոքր սեղանատամը հոարմատ է (մարդունը մեկ, հազվադեպ՝ երկու արմատ ունի):



Նկ. 1ա-5ա ըստ Ռ. Զալլինգերի



Երևանյան քարայրը (պեղող՝ Բ. Երիցյան)

Մարդաբանական հաջորդ գտածոները, որոնց հետ հայտնաբերված են և աշխատանքի պարզունակ գործիքներ, պատկանում են գիտության մեջ Homo erectus կոչված (աղ. $III_{2,2ա}$), ուղիղ քայլող հնագույն մարդկանց վաղ տեսակին: Վերջինիս մնացորդները (6 գանգ և 4 ստորին ծնոտ) հայտնաբերված են Փինեզաուրի և Մաշավերա գետակիրճերի միջնատարածքում գտնվող Դմանիսիի բացօթյա կայանից, որը տարածաշրջանում հնագույնն է մինչ այժմ հայտնի պալեոլիթյան հուշարձանների շարքում: Վերջիններս իրենցից ներկայացնում են նախալեռնային ու դրանց հարող իջվածք-հարթավայրային շրջաններում տեղակայված բացօթյա կայաններ, քարհանքերին մոտ գտնվող ընդարձակ արհեստանոցներ, ժայռածածկեր, քարանձավներ, ժայռապաստարաններ, խորշեր:

Դմանիսիի կայանում մշակութային շերտերի հզորությունը կազմում է 3,3մ: Դրանք տարածվում են 1,8 – 1,75մլն. տարվա վաղեմություն ունեցող գետային և հրաբխային նստվածքների վրա: Ստորին շերտից վերցված հնաբուսաբանական անալիզների տվյալները ցույց են տալիս, որ տարածված են եղել լայնատերև անտառները: Վերին շերտերից հայտնաբերված գործիքները ներկայացված են կոպիտ բեկոտված գլաքարե միջուկներով (աղ. IV_1), լայն ցլեպներով (աղ. $IV_{2,3}$): Միջուկների շարքում առկա են և այնպիսիները, որոնց մի հատվածը ամենևին մշակված չէ, իսկ մշակված մասը շեշտակի հարվածներով սրված է ցլեպները անջատելու միջոցով: Այդ գործիքների չափերը տատանվում են 4–8սմ-ի միջև: Նյութերի մյուս խումբն են կազմում հնադարյան ձիու, փղի, ռնգեղջյուրի, արջի, գայլի, եղջերուի, այծյամի, ցուլի, ջայլամի, բիզոնի և ջերմասեր այլ կենդանիների ոսկորներ. դրանց մի զգալի մասը կոտրված է և «խոհանոցային թափոն» է ներկայացնում:

Բնական է, որ էոպլեյստոցենի վերջ – պլեյստոցենի(անտրոպոգենի նախնական փուլը) սկզբում ապրած այդ հնագույն մարդիկ, աշելի առաջին կեսին բնորոշ իրենց գործիքներով (և ոչ իսկ խոշոր քարերով) չէին կարող սպանել նշված կենդանիներին ու գիշատիչներին, որոնք ուժեղ են և արագավազ: Այդ կենդանիները կարող էին ոչնչացվել միմիայն շուրջկալների միջոցով՝ գահավեժ կիրճերը քշվելով ու այդտեղից ընկնելով: Ջախջախված կենդանիների մանրատված մասերը կայան են բերվել: Բնականաբար հնագույն մարդիկ որս են կատարել և կայան-արհեստանոցներից հումք ձեռք բերելու և քարե գործիքներ պատրաստելու ընթացքում: Քարհանքերին մոտ գտնվող նման կայան-արհեստանոցներից են Արագած լեռան հարավարևմտյան լանջերին գտնվող Արտին-լեռը, Արեգունի-բլուրը, Ջրաբերը, Սատանի-Դարը և այլն: Թվարկված վայրերից գտնված են պալեոլիթի տարբեր փուլերին, այդ թվում և վաղ շրջանին պատկանող, բազմապիսի ձեռքի հատիչներ (աղ. IV_{4-6}), միջուկներ, կոպիտ մշակված ցլեպներ, քերիչներ, սրածայրեր: Ավարտուն գործիքների շարքում առկա են և անավարտ հատիչներ, միջուկներ, այլ գործիքներ: Այդպիսիք հայտնաբերված են և Տաշիրի սարահարթի հուշարձաններից (Մեծավան, Տաշիր և այլն): Ընդ որում, եթե Վիրահայոց լեռների հուշարձաններում գերակշռում են կայծքարից պատրաստված գործիքները, ապա Ջավախքի լեռնաշղթայի արհեստանոցներում հիմնականը դացիտից պատրաստվածներն են, ինչը ցույց է տալիս, թե հանքաքարը ձեռք է բերվել հնարավորին չափ մոտ գտնվող քարհանքերից:

Վաղ շրջանին պատկանող գործիքներն առանձնանում են ոչ միայն ձևով ու մշակման եղանակներով (օրինակ՝ շելյան հատիչների եզրերը ալիքավոր տեսք ունեն, իսկ աշելին պատկանողներինը ավելի ուղիղ է և այլն), այլև՝ մակերեսի փառի ավելի մուգ գույնով: Նմանօրինակ գործիքներ են հայտնաբերված և Հադրութի շրջանում գտնվող Ազոխի քարայրից, որի մշակութային շերտերը ներկայացնում են աշելյան փուլի զարգացման պատկերը:

Ազոխի քարայրը, որը պատկանում է հուշարձանների քարայրապաստարանների տեսակին,հատակագծում աղեղնաձև,տեղ-տեղ դահլիճ-սրահներ ձևավորող, մոտավորապես 200մ երկարությամբ խորշ է, որը երկու մուտք ունի: Քարայրում իրար են հաջորդում 14մ ընդհանուր հզորությամբ, մշակութային 10 շերտ: Դրանց հետազոտությունը ցույց է տալիս, որ քարայրի բնակեցման շրջանում կլիման մի քանի անգամ փոխվել է. ակնհայտ է, որ երեք անգամ ցուրտ է եղել, իսկ չորս անգամ՝ տաք: Այդ են վկայում ոչ միայն տարբեր շերտերի հնակենդանաբանական ու հնեաբուսաբանական նյութերի քննությունների արդյունքները, այլև՝ նստվածքների կազմության փոփոխությունները. միջսառցային տաք եղանակների նստվածքները, և այդ օրինաչափությունը ամենուր է դիտվում, դեղնա-կարմրավուն կավավազներ են, իսկ ցուրտ եղանակներին բնորոշ են մուգ-շագանակագույն ավազային ու փոքր խճաքարային նստվածքները: Ազոխի քարայրում կլիման տաք ու խոնավ է եղել ստորին՝ VIII – X շերտերի ձևավորման ժամանակ. այդ շերտերը գտնվում են 10 – 14մ. խորության վրա: Այդ խորությունից գտնվել են մոտակա գետերի հովիտներից բերված կայծքար, գլաքար և այլ տեսակի քարեր, որոնց մի մասի վրա մշակման հետքեր կան: Ձեռքի հատիչների և ցլեպների տեսք ունեցող այդ նյութերը սակավաթիվ են:

Պատկերը փոխվում է VI շերտից սկսած. այդտեղից հայտնաբերված ավելի քան 1200 գործիքները ներկայացնում են գլաքարե միջուկներ, երկկողմ մշակված հատիչներ (աղ. $IV_{7,8}$), սրածայրեր, քերիչներ, շեղբեր, ցլեպներ և այլ գործիքներ: Բավական մեծ տոկոս է կազմում և արտադրական թափոնը, ինչը ցույց է տալիս գործիքների տեղում պատրաստվելը: Դրանք հարդարված են աշելին բնորոշ բեկոտման եղանակով, որն այս դեպքում ավելի նուրբ է, իսկ փոքր չափերի սրածայրերը, քերիչները, կտրիչները և այլ գործիքներ (աղ. IV_{9-11}), ավելի խնամքով են մշակված ու մերձենում են միջին աշելին պատկանող, V շերտից հայտնաբերված նյութերին: Շերտում գտնված են նաև միջագետքյան եղջերուի, հնադարյան ձիու, ռնգեղջյուրի, բիզոնի և այլ կենդանիների ոսկորներ:

Ազոխի քարայրի V շերտը, որը համընկնում է մինդել-ռիսյան միջսառցային ժամանակաշրջանին (մոտավորապես 375-275 հազ.), ժամանակավոր բնույթի որսորդական ճամբար է հանդիսացել, որի վկայությունը հայտնաբերված նյութերն են. գործիքների շարքում արտադրական թափոն գրեթե չկա: Ընդհակառակը, հայտնաբերված նյութերը ներկայացված են երկկողմ մշակված նշաձև հատիչներով ու միջուկներով. դրանց պատրաստման եղանակում գերակշռում են ծեծվածքը և աստիճանաձև հարդարումը: Մեծ թիվ են կազմում կտրիչները, կլորացող ու կիսաշրջանաձև քերիչները, ծակիչները: Այս շերտում բացված են և բազմաթիվ օջախներ: Դրանց դասավորությունը հիշեցնում է L տառը: Վերջինիս ստորին հատվածը լայնակի փակում է մուտքը, ինչը ցույց է տալիս գազաններից պաշտպանվելու նպատակը, իսկ երկայնակի շարվածքով օջախները տնտեսական նշանակություն են ունեցել: Այս շերտի կարևորագույն գյուտերից է նախանեանդերթալցու ստորին ծնոտը (Դյուսելդորֆի մոտ գտնվող Նեանդեր հովտի անունից): Այս և այլ փաստեր կարծես թե խոսում են այն մասին, որ վաղ պալեոլիթում արդեն, Homo erectus (աղ. $III_{2,2ա}$) զարգացած տեսակներին (օրինակ՝սինանտրոպը) անմիջապես փոխարինելու է եկել նեանդերթալցին (աղ. $III_{3,3ա}$), բայց Անգլիայից (Քենտի Սվանսկոմբ վայր) մինդել – ռիսյան միջսառցային ժամանակաշրջանին պատկանող շերտից, ուր գտնվել են միջին աշելյան փուլի գործիքներ, ինչպես և Ֆրանսիայից (Շարանտի դեպարտամենտի Ֆոնտեշևադ քարայր) մինչմուստերյան ժամանակաշրջանի շերտից հայտնաբերված հոմինիդների մնացորդները, որոնք ավելի մոտ են կանգնած ժամանակակից մարդուն, քան՝ նեանդերթալցին, այլ կարծիքի են հանգեցնում: Այս տեսակետից կարևորվում են և Աֆրիկայում կատարված պեղումներից ձեռք բերված տվյալները:

Մարդաբանների մեծ մասի կարծիքով նեանդերթալցիների ինչ-որ ճյուղից (չի բացառվում և խառնվելու հնարավորությունը) առաջացել է ժամանակակից մարդը, իսկ մյուս ճյուղերը փակուղի մտնելով անհետացել են: Այս բարդ հարցերը կարող են պարզաբանվել ապագա պեղումներով: Առկա նյութերը ցույց են տալիս, որ նեանդերթալցին եղել է միջահասակ, արագաշարժ, լայնաթիկունք և շատ ուժեղ: Նա ունեցել է թեք ճակատի վրա հստակ արտահայտված վերհոնքային ելուստով ցածր գանգատուփ, բարձր քիմք, խոշոր ատամներ, իսկ ուղեղի ծավալը հավասար է եղել 1400-1600սմ խոր: Ֆրանսիացի մարդաբան Ա. Վալլուայի հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ նեանդերթալցիների 40%-ը մահացել է 14, 15%-ը՝ 14 – 20, 40%-ը՝ 21 – 40 և միայն 5%-ն է հատել 40 տարվա սահմանագիծը: Նեանդերթալցին ունեցել է պարզունակ հողաբաշխ խոսք, բայց նրա մտածելու և տրամաբանելու կարողությունը թույլ է եղել:

§ 3. ՄԻՋԻՆ ՊԱԼԵՈԼԻԹ

Այս ժամանակաշրջանի հուշարձանները ներկայացված են նախորդ շրջանից հայտնի երեք տեսակներով, իսկ ժամանակագրական ընդգրկումը հիմնականում վյուրմյան սառցակալման առաջին կեսն է:Այս ժամանակաշրջանում հին քարայրներին զուգահեռ (օրինակ՝ Ազոխի վերին շերտերը) հանդես են գալիս և նորերը: Վերջիններիս շարքում ամբողջությամբ հետազոտված է ժամանակշրջանի ավարտական փուլին պատկանող Երևան-1 քարայրը (աղ. III_6), որը ոչ խոր, բայց բավական լայն խորշ է (չափերը՝ 9×7,5×3մ): Քարայրի մշակութային շերտերի (7 շերտ և 2 ենթաշերտ) հզորությունը 3-3,3մ է: Քարայրի բնակեցման ժամանակ կլիման երեք անգամ փոխվել է: Բոլոր շերտերում օջախներ են հայտնաբերված: Ստորին երկու շերտերում, որոնց ընդհանուր հզորությունը 2մ է, առկա են ցրտադիմացկուն ծառերից մնացած հետքեր: Այդ ծառատեսակներն են եղևնին, կեչին, սոճին. վերջինս գերակշռում է (89%):

Այդ ժամանակվա կլիմայի ցուրտ լինելն են ապացուցում և կենդանիների ոսկրաբանական մնացորդները (իշայծյամ, հյուսիսային եղջերու և այլն): Միջին շերտերում (3-4) կլիման որոշ չափով խոնավ է եղել և չափավոր ցուրտ. առկա են սոճին, պնդուկենին, գերակշռում է կեչին: Ինչ վերաբերում է կենդանական աշխարհին, ապա այն ներկայացված է ռնգեղջյուրով, ձիով, կուլանով, զուբրով, բեզոարյան այծով ու քարայրի արջով: Այս շերտից վերցված անալիզների տվյալները տվել են 47800 – 49000թթ. արդյունքը: Այլ պատկեր են ներկայացնում վերին երկու շերտերից (0,7–1,3մ)

վերցված անալիզների արդյունքները: Դրանք ցույց են տալիս, որ տարածված է եղել խոտածածկույթը (կաթնբեկը կամ իշամառոը կազմում է 90-97%), իսկ ծառերը ներկայացված են այնպիսի ջերմասեր տեսակներով, ինչպիսիք են պնդուկենին, կաղնին, հնդկական ընկույզը, շագանակենին: Այս շերտերում հայտնաբերված են ցուկի, ոչխարի, աղավնու, ճայի ոսկորներ: Այդ նյութերը վկայում են, որ տարածքի բնորոշ գիծը եղել է տափաստանը, ուր տեղ-տեղ աճել են անտառների պուրակներ: Տարածքը ջրառատ է եղել: Ամենավերին շերտում կլիման շեշտակի ցրտում է:

Պեղումների ընթացքում հայտնաբերվել են մոտ 19000 գործիք և արտադրական թափոն, ինչը ցույց է տալիս գործիքների տեղում պատրաստվելը: Վերջիններիս գերակշռող մեծամասնությունը պատրաստված է 27 – 30կմ հեռավորության վրա գտնվող Նուռնուսի և Հատիսի վանակատի հանքերից բերված հումքից: Գործիքների տեսակներն են՝ ձեռքի հատիչները, միջուկները, ցլեպները: Մեծ քանակություն են կազմում քերիչները, կտրիչները, սրածայրերը, ծակիչները, դրների տեսք ունեցող գործիքները, իսկ միջուկներն ու հատիչները, որոնք նախորդ շրջանի բնորոշ գործիքներից էին, այս ժամանակաշրջանում չնչին տոկոս են կազմում (5%): Դրանք հիմնականում սկավառակաձև են, սակավ՝ բրգաձև, բայց բոլոր դեպքերում առանձնանում են փոքր չափերով (4 – 5սմ): Հակառակ դրանց, ցլեպները զանգվածեղ են, կարճ, ունեն եռանկյունաձև, սեղանաձև կամ ձվածիր տեսք: Մյուս գործիքների դեպքում նկատվում է ձևերի նրբացում, հարդարման տարբեր եղանակների (թեփուկավոր, ատամնավոր, եղունգաձև և այլն) կիրառում, հարթեցում, կոթուն առանձնացնելու միտում, գործիքի ողջ մակերեսի մշակում (աղ. IV_{14-16}): Դիտվում է և հումքը խնայելու ձգտում, ինչպես և ոսկոր, փայտ, կաշի մշակելու համար մասնագիտացված գործիքներ պատրաստելու նպատակ:

Քարայրի բնակիչները նստակյաց որսորդներ են եղել, որոնք ժամանակի մեծ մասը տրամադրել են կաշվից հագուստներ, ոտնամաններ, գլխարկներ, ծածկոցներ պատրաստելուն. դրանք խիստ անհրաժեշտ էին փոփոխվող կլիմայական պայմաններում: Դրա լավագույն ապացույցն են և բոլոր շերտերում հայտնաբերված օջախները, կրակի հետքեր կրող, ամենուր ցցված, կոտրտված խողովակաձև ոսկորները: Ոսկրաբանական նյութերի շարքում գլխավոր գյուտը նեանդերթալցու գանգի կափարիչի մասն է և սեղանատամը: Դրանց քննությունը ցույց է տալիս, որ նեանդերթալցիները այս շրջանում անցում էին կատարում դեպի բանական, գիտության մեջ Homo sapiens անվամբ հայտնի մարդը (աղ. $III_{4,4ա}$), որի ուշ ներկայացուցիչներից մեկը հայտնաբերված է Կրո-Մանյոն (Ֆրանսիա) կոչվող քարայրում (աղ. $III_{5,5ա}$): Այդուհանդերձ, միջին պալեոլիթը, որի բնորոշ գիծը մուստյերյան գործիքներն են, նեանդերթալցիների տիրապետության շրջանն է, որոնց կյանքի տարբեր կողմերի վերաբերյալ պատկերացում են տալիս նաև այլ հուշարձաններից, այդ թվում և Լուսակերտի քարայրից հայտնաբերված նյութերը. դրանք ամենևին չեն տարբերվում Երևանի քարայրից գտնվածներից և ներկայացված են միջուկներով, սրածայրերով, շեղբերով, քերիչներով, այլ գործիքներով (աղ. IV_{17-21}): Այդպիսիք մեծ քանակությամբ հայտնաբերված են և Ռևանդուզից հյուսիս-արևմուտք գտնվող Շանիդարի նշանավոր քարայրից: Վերջինիս մշակութային շերտերի հզորությունը կազմում է 13 մետր.: Այդտեղ, 8 մ. խորության վրա, հայտնաբերվել են վյուրմյան սառցակալման հետքեր և նեանդերթալցի երեխայի կմախք: Քարանձավի I–VI շերտերում հայտնաբերվել են հասուն անհատների պատկանող ևս վեց թաղում. այդ մարդիկ ապրել են 65/60000–40/35000 տարի առաջ: Այդ թաղումները, այսինքն որոշակի ծիսական արարողություններով մահացածին կենդանի մարդկանցից առանձնացնելը, ցույց են տալիս, որ միջին պալեոլիթում երևան են գալիս անդրշիրիմյան կյանքին առնչվող առաջին հավատալիքները: Այս տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում և Ազոխի քարայրում բացված գաղտնարանում հայտնաբերված արջի և քոթոթների գանգերն ու ոսկորները. ըստ երևույթին այստեղ գործ ունենք որոշակի ծեսերի հետ:

§ 4. ՈՒՇ ՊԱԼԵՈԼԻԹ

Պալեոլիթի վերջին շրջանը, որը սկսվում է մոտավորապես 35/33000 տարի առաջ, համընկնում է վյուրմի սառցապատման երկրորդ կեսին, որն ամենացուրտն է եղել: Մի քանի փուլով ընթացող այս սառցապատման ժամանակ, տեղ-տեղ 10–12կմ. երկարությամբ ձգվող սառցադաշտերը և ձյունածածկույթները տարածվում են Հայաստանի գրեթե բոլոր բարձր լեռնաշղթաների ու լեռնավահանների վրա: Այդ սառույցները ժամանակ առ ժամանակ հալվել են պարբերաբար կրկնվող հրաբուխներով: Այդուհանդերձ, չնայած կլիմայական այդ վատթարացումներին, ժամանակաշրջանի մարդիկ, շնորհիվ համատեղ գործելակերպի, տաք հագուստների ու կրակի, կարողացան հաղթահարել բոլոր դժվարությունները, հարմարվել այդ կլիմայափոխություններին՝ շարունակելով կատարելագործել նախորդ շրջանից հայտնի գործիքներն ու զենքերը:

Վերջիններս հայտնաբերված են ինչպես բացօթյա արհեստանոցներից, որսորդական կայաններից, այնպես էլ քարայրներից: Դրանց շարքում են Աղինի շրջանի Ձորաշեն գյուղի, Թալինի շրջանի Սաբունչի, Մաստարայի մոտ գտնվող Արեգ գյուղի և այլ շրջանների քարայրները:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում վերջին տարիներին հետազոտված, Քասախի կիրճում գտնվող Գեղամավան – 1 կոչված քարայրը, որի պատերին առկա են տարբեր ժամանակների ժայռանկարներ: Դրանցից ուշ պալեոլիթին կամ մեզոլիթի սկզբին պատկանողները ստացված են օխրայով: Նկարները կատարված են ինչպես մատով, այնպես էլ անմիջապես տուֆիտի կտորներով, որոնք քարայրի մորֆոլոգիական մասն են կազմում: Նկարների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակաշրջանի հորինվածքների համար բնորոշ է կենդանու (հիմնականը՝ եղջերու) իրական կերպարի պատկերումը, անշարժ վիճակը. հիմնական ուշադրությունը դարձված է կենդանու կերպարի պատճենմանը, ճանաչողության պարագային, որի դեպքում խախտված են նկարչության սկզբունքները: Մասնավորապես ամբողջությունն արտահայտելու համար նկարիչն առանձին մասեր նկարել է ճակատային դիրքով (եղջյուրները), իսկ մնացած մասերը՝ պրոֆիլ, որի պատճառով ստացվել է «պտտվող հեռանկարի» լուծում: Նման պատկերները կարևոր են ոչ միայն նախնադարյան արվեստի բնորոշ գծերը վեր հանելու, այլև՝ հավատալիքների սաղմնավորմանը, կրոմանյոնյան մարդու կենցաղի տարբեր կողմերին հետևելու համար: Այդ գիտելիքները հարստացնում են տարատեսակ գործիքները, զենքերը, որոնք գտնված են Ճատղոանից, Նուռնուսից, այլ բացօթյա կայաններից:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Գեղարքունիք գյուղի մոտ, Բարեպատ գետակի (Գետիկի վտակը) դարավանդի վրա գտնվող Կալավան-2 անվանված որսորդական կայանը, որը թվագրվում է մ.թ.ա. 33100-31500թթ.: Պեղումների ժամանակ 1,15մ. խորության վրա երևան են եկել երկարատև սառցակալման հետքեր (մանր խճաքար, մուգ շագանակագույն ավազի ոսպնյակներ, հնագույն ճաքեր) կրող մշակութային շերտեր, որտեղ գտնվել են խոշոր ցուլի կամ բիզոնի գանգի և ծնոտի մասեր, փշրված ոսկորներ, մոտավորապես 60կմ հեռավորության վրա գտնվող Գութանասարից և Ծաղկունյաց լեռներից բերված վանակատից պատրաստված հարյուրավոր գործիքներ: Վերջիններիս շարքում շատ են հատկապես լավ հարդարված սրածայրերը, փոքր քերիչները, կտրիչները, դուրի տեսք ունեցող գործիքները. առանձին ծակիչներ ու սրածայրեր հնարավոր է, որ նետասլաք լինեն (աղ. IV$_{23-25}$):

Աղյուսակ IV



Հայտնաբերված գործիքները հիմնականում որսորդության են առնչվում, ինչը և ցույց է տալիս, թե Կալավանի բնակիչները փակել են Սևանից Գետիկ անցնող կենդանիների ճանապարհը, որոնց որսը նրանց գոյատևելու նախապայմանն էր: Այս օրինակը, որն ամենևին էլ միակը չէ, ցույց է տալիս, որ բացօթյա կայանները սոսկ հանքավայրերի մոտ գտնվող արհեստանոցներ չեն. դրանք նաև կենդանիների ճանապարհը փակող որսորդական ճամբարներ են:

Ուշ պալեոլիթյան տարբեր հուշարձաններից հայտնաբերված գործիքներն ու զենքերը, որոնց տեսականին ակնհայտորեն ընդլայնված է ու մասնագիտացված, առանձնանում է մի կողմից նախկին՝ մուստյերյան ավանդույթների շարունակմամբ ու զարգացմամբ (վաղ շրջանի նյութերը), մյուս կողմից՝ հին ձևերի անհետացմամբ ու չափերի փոքրացումով, հարդարման եղանակների կատարելագործմամբ, գործիքի ողջ մակերեսի մշակմամբ ու բարակեցմամբ: Այդ փոփոխությունները ցույց են տալիս, որ գործունեության ոլորտն ընդլայնած մարդուն չեն բավարարել գործիքների նախկին ձևերն ու տեսակները: Ժամանակաշրջանի գործիքների շարքում գերակշռողը կտրիչներն են, դանակաձև շեղբերը (աղ. IV_{22-26}), հիմքում հանվածք ունեցող սրածայրերը, ներդիրները, քերիչները, ծակիչները, կաշվի մշակման հետ կապված այլ գործիքներ: Բնորոշ գծերից է նաև նախորդ շրջանի զանգվածեղ գործիքների անհետացումը: Դրանց փոխարինելու են գալիս բոլորաձև հարդարված ոսպնյակաձև, դափնու տերևի տեսք ունեցող տեգերն ու նիզակները (ուշ նյութեր), ինչպես և երկարավուն, զուգահեռ եզրերով, թեքությամբ հարդարված բարակ շեղբերը: Նախորդ շրջաններին բնորոշ, շեշտակի հարվածներով կոպիտ հարդարման եղանակը անհետանում է: Ուշ պալեոլիթում զարգացումն ընթանում է գործիքների չափերը փոքրացնելու, ներդիրների տեսականին ավելացնելու ճանապարհով, որը բնորոշ է դառնում մեզոլիթում:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՄԻՋԻՆ ԵՎ ՆՈՐ ՔԱՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐ

§ 1. ՄԻՋԻՆ ՔԱՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Սովորաբար մեզոլիթ անվանվող (հուն. մեսու-կես, միջին. տերմինն առաջարկվել է Ալֆեն Բրաունի կողմից 1893թ.), այս դարաշրջանի սկիզբը համընկնում է վյուրմյան սառցապատմանը հաջորդած համընդհանուր ջերմացմանը: Մոտավորապես 13,5/13000 տարի առաջ սկսված կլիմայի տաքացումը մինչև 10-րդ հազարամյակը ընդմիջարկվել է կարճատև ցրտեցումներով: Աստիճանաբար տեղի ունեցող կլիմայական այդ փոփոխությունները պալեոլիթյան մարդու կենսաձևում կտրուկ փոփոխություններ չառաջացրեցին: Մեզոլիթի դարաշրջանում ևս, տարածաշրջանի եվրոպոիդ ռասայի հարավային ճյուղի Homo sapiens տեսակին պատկանող բնակիչները (դրանց մնացորդները գտնված են Արմտ. Վրաստանի Կվաչարայի քարայրից) շարունակում էին իրենց հանապազօրյա սնունդը հայթայթել որսորդությամբ ու հավաքչությամբ:

Յուրացնող տնտեսաձև վարող և այն զարգացման բարձրագույն աստիճանի հասցրած մարդիկ, մեզոլիթի սկզբնական շրջանում շարունակում էին բնակվել քարայրներում ու ժայռածածկերում: Դրանց զուգահեռ առկա են և բացօթյա կայաններ, արհեստանոցներ: Այդ է պատճառը, որ հազարամյակներ շարունակ օգտագործվող նույն հանքավայրերում (օր.՝ Սատանի-դար, Արեգունի բլուր և այլն) հայտնաբերվում են տարբեր դարաշրջանների, այդ թվում և՝ մեզոլիթյան նյութեր: Վերջիններս ակնհայտորեն շարունակում են ուշ պալեոլիթյան ավանդույթները (աղ.V_1): Այս նմանությունները զգալիորեն դժվարացնում են մեզոլիթի ստորին սահմանի հստակ սահմանազատումը և թվագրությունը. այն վերապահությամբ է տեղադրվում 13-րդ հազարամյակում: Այդուհանդերձ, որքան էլ պայմանական, նշված հազարամյակը պատահական ու կամայական չէ: Այն հիմնավորվում է տարածաշրջանում ուշ պալեոլիթի ավարտական փուլին պատկանող նյութերի թվագրությամբ (մերձսևծովյան հուշարձաններից Մալայա Վորոնցովկա ուշ պալեոլիթյան քարանձավի նյութերը թվագրվում են 14100 ±140թթ.): Հաշվի է առնվում նաև տարածքի մշակույթի հետ մերձակցություն ցուցաբերող, Զագրոսում գտնվող Շանիդար և Պալիգավ-

ռա քարայրների մեզոլիթյան շերտերի ժամանակագրական ընդգրկումը (XIII-IXհազ.): Կարևորվում է և 13-րդ հազ. սկսած՝ մեզոլիթին բնորոշ քարե փոքրիկ գործիքների, այսպես կոչված, միկրոլիթների գերիշխող դառնալը, տնտեսության ու հասարակական կյանքում երևան եկող նոր գծերը. դրանք հոլոցենի սկզբից սկսած աստիճանաբար արմատավորվելով, մեզոլիթն առանձնացնում են պալեոլիթից: Սաղմնավորվող նորին զուգահեռ, սակայն, մեզոլիթում զգալիորեն պահպանվող նախորդ դարաշրջանին բնորոշ գծերը, այն տարանջատում են և նեոլիթից:

Մեզոլիթն, այսպիսով, հանդես է գալիս իբրև երկակի բնույթ դրսևորող դարաշրջան, որն առանձնանում է նյութական մշակույթով, տնտեսական հատկանիշներով, հասարակական նոր՝ սաղմնավորվող կառույցներով և ժամանակագրական ընդգրկումով: Երկրաբանական պատմության ժամանակակից բաժնի՝ հոլոցենի ծնունդ հանդիսացող մեզոլիթը կապված է բնական միջավայրը, բուսական ու կենդանական աշխարհների տեսականին մեծապես փոխած կլիմայի ընդհանուր ջերմացման հետ: Կլիմայի տաքացմանը զուգընթաց, բարձր լեռնային գոտիներ ու հյուսիս նահանջող սառցադաշտերը ազատված տարածքներում, բայց հատկապես գոգավորություններում, առաջացնում էին ծանծաղ, ընդարձակ ջրային ավազաններ,ճահճուտներ, որոնք հետագա ջերմացման ընթացքում չորացան. սկզբնապես, սակայն, այդ տարածքները ապրելու համար պիտանի չէին: Ճիշտ է, դարաշրջանի հուշարձանները դեռևս բավարար չափով հետազոտված չեն, բայց ուսումնասիրվածներն իսկ ցույց են տալիս, որ մեզոլիթի մարդն աստիճանաբար լքելով հազարամյակներ շարունակ իրեն ապաստան ծառայած ժայռածածկերն ու քարայրները, որսի կենդանիների ետևից սկսել է բարձրանալ նախալեռնային ու լեռնային գոտիները: Դրա վկայությունն են մեզոլիթյան քարայրների տեղադրությունները, մշակութային շերտերի փոքր հզորությունները:

Նման հուշարձաններից են Արագած լեռան շրջակայքում (Ծաղկահովիտ, Շիրակավան, Արագած), Տաշիրում (Կրուգլայա Շիշկա, Կաթնաղբյուր), Աղստև ու Դեբեդ գետերի միջնատարածքում (Դամջլի), Ծալկայում (Էձանի, Զուրբաքեթի) և այլ վայրերում գտնվող կայանները: Վերջիններիս մշակութային շերտերի հզորությունը հաճախ 20-40սմ է կազմում. եզակի դեպքերում միայն, այն գրեթե 1մ է հասնում: Նման իրավիճակը ցույց է տալիս, որ այդ միաշերտ հուշարձանները կարճ ժամանակ են բնակեցվել: Դրանց գերակշռող մեծամասնությունը հենակետային ու սեզոնային բնույթ ունեցող կայաններ են: Այդ հուշարձաններից հայտնաբերված ոսկրաբանական հարուստ նյութերը զգալի տեղեկատ-

վություն են պարունակում: Օրինակի համար, Էձանիի և Զուրբաքեթիի քարայր-կայաններից, որոնց մշակութային շերտերի հզորությունն ընդամենը 10-40սմ և 48-80սմ է կազմում, հայտնաբերվել են կուլանի (վայրի էշ), վիթի, ազնվացեղ եղջերուի, վայրի խոզի, նախնադարյան ցուլի, ձիու, բիզոնի, կովկասյան տուրի, մուֆլոնի, նապաստակի, ոզնու, բադի, կիվիվի, կաքավի, ավազամկան ու դաշտամկան ոսկորներ: Տափաստանաբնակ ու անտառաբնակ այդ ջերմասեր, արագաշարժ կենդանիների որսը մարդիկ իրագործել են ինչպես խմբակային (խոշոր կենդանիները), այնպես էլ անհատական եղանակով, գործածելով ոչ միայն նախկինից հայտնի տեգերն ու նիզակները, այլև՝ աղեղն ու նետը (աղ.$V_{2,3}$): Վերջինս, որն ամենայն հավանականությամբ, ուշ պալեոլիթի ավարտական շրջանի գյուտ էր հանդիսանում, մեզոլիթյան մարդու համար անփոխարինելի զինատեսակ հանդիսացավ: Այդ զենքի թեթևությունը, նշանառությունը, արդյունավետությունը, մեծ տարածության վրա (ազատ թռիչքը՝ 300-350մ) որսին սպանելու կարողությունը, գործելու արագությունը, նախնադարյան որսորդին խոշոր առավելություններ էր տալիս: Նախկինում սոսկ տեգով ու նիզակով զինված որսորդը կարող էր իրեն հզոր և ապահով զգալ ընդամենը 35-40մ տարածության վրա այնքան ժամանակ, քանի դեռ այդ զենքերը նրա ձեռքում էին: Նետ-աղեղը ոչ միայն վերացրեց այդ թերությունը, այլև թույլ տվեց փոքր խմբերով, ավելին՝ նույնիսկ միայնակ որսի գնալ: Այդ գործում նրա հավատարիմ ուղեկիցը շունն էր, որի ընտելացումը մեզոլիթում է կատարվել: Այդ են վկայում և Բաքվից շուրջ 60կմ հարավ գտնվող Կոբուստանի ժայռապատկերները, որոնց շարքում տեսնում ենք նաև նետ-աղեղով զինված որսորդին. վերջինս շան հետ փորձում է ցուլ որսալ: Այդ ժայռապատկերները մասամբ ծածկող մշակութային շերտի պեղումներից հայտնաբերվել են մեզոլիթյան գործիքներ, այդ թվում և մատիտաձև միջուկներ, քերիչներ, կտրիչներ, հիմքում հանվածք ունեցող սրածայրեր, եռանկյունաձև նետդիրներ, միկրոլիթներ: Նշված գործիքները չեն տարբերվում վերը թվարկված հուշարձաններում հայտնաբերվածներից: Վերջիններիս հետ գտնված են և այլ գործիքներ: Մասնավորապես, Քասախի կիրճում գտնվող Քմլո-2 հուշարձանից, որն ընդամենը 30մ.քառ. մակերեսով խորշ է, ինչպես և դրանից հյուսիս ընկած Քուչակ-1 ժայռածածկից, հայտնաբերվել են խարտոցներ, հարպուն, միկրոլիթներ, նետդիրներ, այլևայլ գործիքներ, կուլանի, եղջերուի, այծի և այլ կենդանիների հազարավոր ոսկորներ: Ոսկրաբանական նյութի նման առատությունը ժամանակաշրջանի հուշարձաններում ցույց է տալիս, թե նետ-աղեղը որքան է բարձրացրել որսի արդյունավետությունը: Նետ-

աղեղը ժամանակաշրջանի զանգվածային ոչնչացման զինատեսակն էր: Այն թույլ տվեց մարդուն ոչ միայն հավելյալ մսամթերք ունենալ, որի պահպանումը տաք եղանակին, նա ըստ երևույթին դեռ չգիտեր (մթերքի հորեր առկա են նեոլիթում), այլև՝ գիտակցաբար թեթև վիրավորել կենդանուն և պահել այն հետագայի համար: Բնականաբար, նա նույն նպատակով փնտրելու և վերցնելու էր կենդանիների ձագերին. դրանք կենդանիների ընտելացման ճանապարհին կատարված առաջին քայլերն էին: Դրանց կանոնավորվելուն, ըստ երևույթին, նպաստում էր նաև, զանգվածային որսով պայմանավորված կենդանիների հոտերի գլխաքանակի նվազումը, անհաջող որսի հեռանկարը և այլն:

Կարևոր տեղեկություններ են պարունակում և բացօթյա կայանները, արհեստանոցները, որոնք երբեմն տեղակայված են լեռնային բարձր գոտիներում գտնվող հանքավայրերի մոտ: Դրանցից մեկն է Սիսիանի լեռներում, մոտավորապես 3000մ բարձրության վրա գտնվող Քարքարեր հուշարձանը: Սեզոնային բնույթի բնակավայր հանդիսացող, ամռան ամիսներին բնակեցված այս հուշարձանում, որտեղ վանակատ են ձեռք բերել, հայտնաբերվել են տասնյակ օջախներ, որոնց մեջ գտնվել են շիկացման համար դրված գլաքարեր: Գտնված են և մեզոլիթյան տարիք ունեցող քերիչներ, սրածայրեր, շեղբեր, ցլեպներ, իսկ հուշարձանի հարևանությամբ գտնվող ժայռերի վրա պատկերներ են արված:

Բացօթյա կայանների այլ խումբ են կազմում գետեզրերի դարավանդներին, որսառատ վայրերում տեղադրված հուշարձանները (Գեղարոտ, Ծաղկահովիտ, Հովք, Սարալանջ, Պաղաղբյուր, Մեծավան, Սարատովկա և այլն). նման կայաններից մարդիկ հետևել են ջուր խմելու եկող կենդանիներին: Այդ վայրերը հարմար էին նաև ձկնորսությամբ զբաղվելու համար, որի ապացույցը հարպուններն են: Ձկնորսությունը զգալի չափով լրացրել է նրանց սննդի տեսականին:

Բացօթյա կայաններից հայտնաբերված նյութերը՝ կոնաձև միջուկներ, շեղբեր, քերիչներ, սրածայրեր, գայլիկոններ, նետասլաքներ և որսորդությանն առնչվող այլ գործիքներ ու զենքեր, հայտնաբերված են ինչպես փոքր՝ 1մ.քառ. ընդգրկող հատվածներում, այնպես և ընդարձակ, մինչև 1կմ հասնող տարածքներում: Նյութերի նման տեղադրությունը ցույց է տալիս, որ բոլոր բացօթյա կայանները հիմնական բնակության վայրեր չեն եղել: Վերջիններս գտնվել են բարձրադիր վայրերում, որոնք նպաստավոր էին ինչպես որսորդության, այնպես և հավաքչության համար: Կլիմայական նոր պայմաններում հավաքչությունը, որի նշանակությունը վյուրմյան սառցապատման ժամանակ առանձնապես մեծ չէր, զգալիորեն

լրացնում էր սննդի տեսականին: Այդուհանդերձ, մեզոլիթում ևս, առաջատար դերը որսորդությանն էր պատկանում: Դրա ապացույցը ոչ միայն հազարավոր ոսկորներն են, այլև՝ մսի և կաշվի մշակման համար նախատեսված գործիքներն ու զենքերը. այդ աշխատանքներն առաջնային նշանակություն են ունեցել: Մորթուց և կաշվից պատրաստվել են տարատեսակ հագուստներ, գլխարկներ, տոպրակներ, ծածկոցներ և այլն, իսկ ոսկորներն ու ջլերը օգտագործվել են հերուններ, հարպուններ, բրիչներ, պարաններ, աղեղալարեր և այլ պարագաներ պատրաստելու համար:

Շարունակելով նախկինից եկող ավանդույթները, ինչն առավել հստակությամբ է դիտվում հատկապես վաղ շրջանի նյութերի վրա (դա բնական է տեղական հիմքի վրա զարգացող բոլոր մշակույթների համար), ակնհայտ է և այն, որ զարգացման ընթացքում մեզոլիթի գործիքները երևան են բերում նախկինում անհայտ նոր հատկանիշներ, որոնք դարաշրջանի բնորոշ գիծն են կազմում: Առաջին հերթին աչքի է զարնում գործիքների չափերի խիստ փոքրացումը (2-4սմ), եռանկյունաձև, սեղանաձև, սեգմենտաձև ներդիրների (աղ. V_{12-15}) առատությունը, ինչը ցույց է տալիս բաղադրյալ գործիքների բնորոշ դառնալը. զարգացումն ընթանում է տարբեր մասերի միավորման միջոցով նոր գործիք ստանալու, գործիքների տեսականին ընդլայնելու, մասնագիտացնելու ճանապարհով: Ակնհայտ է և գործիքների ու զենքերի խնամքով, հարթ հարդարման եղանակով, ոսկրե միջնորդիչի և տակդիրի միջոցով, իրի գրեթե ողջ մակերեսն ընդգրկող մշակումը: Հաճախ են հանդիպում և բարակ, կոնաձև միջուկից անջատված, զուգահեռ եզրերով երկարուկ դանակաձև շեղբերը. դրանց սուր եզրերը մեծ մասամբ լրացուցիչ հարդարման չեն ենթարկվել (աղ.V_{4-11}):

Տեղի ունեցող փոփոխությունները հանգեցրին հասարակա-արտադրական հիմնական բջիջներ հանդիսացող փոքր խմբերի, ավելին՝ նույնիսկ անհատի դերի ու հեղինակության բարձրացմանն ըստ վերջինիս արժանիքների: Ժամանակի ընթացքում կայունացող և համայնքի կողմից ճանաչում գտնող այդ խմբերը, որոնք տարբեր որսատեղիներ էին գնում և տարբեր արդյունքներով վերադառնում, խիստ շարժունակ էին: Դա իր հերթին խթանեց նախկին անձև, թույլ կապերով կապված համայնքի աստիճանական տրոհումը, որն ինքնաբերաբար հանգեցնում էր հասարակա-արտադրական կոլեկտիվի թվակազմի կրճատմանը: Մեզոլիթի դարաշրջանում առաջատար դերը պատկանել է արտադրական փոքր խմբերին՝ տոհմա-հասարակական կազմավորումներին, որոնց տարածման և ուրույն զարգացման հետևանքով առաջանում են ազգակից մշակութային ընդհանրություններ: Առկա նյութերը ցույց են տալիս, որ մեզոլիթում ձևավորված են եղել ի-

մերեթական, դաղստանյան, մերձսևծովյան և կենտրոնաանդրկովկասյան կամ թրիալեթյան պայմանական անվանումները կրող ընդհանրություններ, որոնց սահմանները դեռևս հստակ չեն ուրվագծվում:

§ 2. ՆՈՐ ՔԱՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ (ՆԵՈԼԻԹ)

Մարդկության զարգացման երկարատև պատմության մեջ նոր քարի դարաշրջանը, այլ կերպ՝ նեոլիթը, առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Այն առանց չափազանցության, կարելի է ասել, շրջադարձային հանդիսանալով, պայմանավորեց մարդկության զարգացման հետագա ընթացքը: Նեոլիթում էր, որ մարդն աստիճանաբար որսորդա-հավաքչական՝ յուրացնող, սոսկ բնությունից վերցնող տնտեսածևից անցավ արտադրող՝ երկրագործական-անասնապահականին: Այդ հսկայական թռիչքը, որն անգլիացի հնագետ Գորդոն Չայլդը լայն իմաստով բնորոշեց իբրև «նեոլիթյան հեղափոխություն», հիմնովին վերափոխելով մարդու կյանքը, խոր փոփոխությունների սկիզբ դրեց:

Նախորդ բոլոր դարաշրջաններում, մարդն ամենաբարենպաստ պայմաններում իսկ, ամբողջությամբ կախված էր բնությունից, պատահականություններից: Նեոլիթում մեծապես ազատվելով այդ կախվածությունից, մարդն ինքը սկսեց արտադրել իր սնունդը, հիմք դնելով դրա մշտական առկայությանը. այն բազմապատկելու ձգտումը պայմանավորեց նրա հետագա գործունեությունը:

Հազարամյակների ընդգրկում ունեցող ենթափուլերից կազմված այդ գործընթացը, առանձին շրջաններ (վաղ, միջին, ուշ) է անցել. դրանցից յուրաքանչյուրն արտադրող տնտեսության կայացման ճանապարհին կատարված քայլերից մեկն էր: Դրանց ընթացքում մեզոլիթյան գործիքների և այլ իրերի տեսականին որոշակի փոփոխությունների է ենթարկվում: Մասնավորապես, գործածությունից աստիճանաբար դուրս եկող միկրոլիթների փոխարեն երևան են գալիս ու լայն տարածում ստանում քարից պատրաստված սեպաձև կացինները, դրերը, մանգաղների դանակաձև շեղբերը և այլն: Այս նոր նյութերի տեսականին պատրաստելու համար քարի մշակման նոր՝ նախկինում անհայտ եղանակներ են կիրառվել, այդ թվում քարի հղկումը, խողովակաձև ռսկորով այն շաղափելը և այլն: Նեոլիթում հայտնի էին արդեն քարամշակության բոլոր եղանակները, իսկ ուշ շրջանում երևան են գալիս և կավից պատրաստված առաջին պարզունակ ամանները:

Աղյուսակ V



Նեոլիթի ներքին փուլաբաժանումը, որն առավել ընդհանուր կերպով ստորաբաժանվում է «նախախեցեղենային» և «խեցեղենային» փուլերի, կատարված է այդ առաջընթացի հաշվառմամբ. անվանումներն, ավելի շուտ, գործածվում են X/IX – VIII և VII-VI հազ. պատկանող վաղ և ուշ փուլերը տարանջատելու համար, որոնց ընթացքում տեղի ունեցած փոփոխություններն ավելի հստակ են դրսևորվում:

Նախախեցեղենային նեոլիթում առկա են արդեն ընտելացված կենդանիներ (ոչխար, այծ), կատարվում են հողամշակման նախնական քայլեր, որոնք վաղ փուլի ավարտական շրջանում նպատակային և կանոնավոր աշխատանքների բնույթ են ընդունում: Առաջին փուլում կավը լայնորեն օգտագործվում է հյուղակներ պատրաստելու համար: Այդ վաղ շրջանի բնակավայրերը շարունակում են մնալ նախալեռնային ու լեռնային գոտիներում: Դրանց օրինակներից մեկն է Շանիդարի քարայրից ոչ հեռու գտնվող Զավի Չեմի Շանիդար կոչվող, կավակերտ հյուղակներից կազմված բնակատեղին. 9200/8900թթ. թվագրվող այդ հուշարձանի կացարաններում հայտնաբերված են օջախներ, մթերքի պահպանման հորեր, կացիններ, սանդեր ու վարսանդներ, ընտելացված ոչխարի ոսկորներ: Ամենայն հավանականությամբ բնակիչները ցրտաշունչ ձմռան ամիսներին շարունակել են պատսպարվել Շանիդարի քարայրում: Այլ հուշարձաններում (Կալա'ատ Ջարմոն Չեմչեմալի հովտում.այդտեղ բացված են 16 շինարարական հորիզոն) գտնված են միահատիկ ցորեն, երկհատիկ գարի և այլ բույսեր. հայ հողագործը նախալեռներում աճող այդ ցորենը կատվի կամ չոլի հաճար է անվանում:

Նախախեցեղենային նեոլիթյան գործիքներ ու կավակերտ կացարանների մնացորդներ են հայտնաբերված և Բառոժի բնակավայրում: Ժամանակաշրջանի բազմաթիվ հուշարձաններ են հայտնի և Արևմտյան Հայաստանում: Վերջիններիս շարքում են Խարբերդի (Էլյազիգ) շրջանում Ալթինովայի մոտ գտնվող Բոյթեփեն, Բյուրակնում (Բինգյոլ), Պալուի, Մալաթիայի մոտ, Էրզանա-Մադենում գտնվողները: Նման բնակավայրեր են հայտնի և Հաքյարի լեռներում (Կահնի ու Թահթի Մելկաններ). վերջիններիս շրջակայքում կան և ժայռապատկերներ, որտեղ պատկերված են բիզոն, եղջերու, քարայծ որսող որսորդներ: Առկա փաստերն, այսպիսով, ցույց են տալիս, որ որսորդությունն ու հավաքչությունը շարունակում են պահպանել իրենց առաջատար դերը. նեոլիթի սկզբնափուլի մարդն ավելի շուտ նստակյաց որսորդ-հավաքիչ էր քան երկրագործ-անասնապահ: Թափառող որսորդը չէր կարող իր ժամանակը լիարժեք կերպով տրամադրել կենդանիների ընտելացմանը, որը, ինչպես և երկրագործությունը, երկարատև ժամանակ ու նստակյաց կյանք է պահանջում: Այդ նստակեցության ապացույցները հենց անպաճույճ հյուղակներից կազմված բնակատեղիներն են, որոնցում կավամանները դեռևս բացակայում են:

Կարևոր արդյունքներ են ստացվել և Խառանի դաշտում գտնվող, մ.թ.ա. 9200թ. թվագրվող, Գյոբեկլի-թեփեի, ինչպես և Աքաթուրքի ջրամբարի տարածքում եղած Նևալի-Չորի կոչվող հուշարձանի (IX հազ. II կես) հետազոտություններից: Նևալի- Չորիում բացվել են ուղղանկյունաձև ու շրջանաձև, մասերի բաժանված երկար կավակերտ կացարաններ, հայտնաբերվել են մանգաղների շեղբեր, հղկված կացիններ, մարդակերպ արձանիկներ, զուբրի, վարազի, կուլանի, այծի և այլ կենդանիների ոսկորներ:

Բարձրադիր գոտիներում սկսված անասնապահության ու երկրագործության գործընթացը, կապված երկրագործության զարգացման ու դրա պահանջների հետ, հրամայական դարձրեց գետահովիտների մոտ գտնվող ընդարձակ տարածքների յուրացումը: Դարաշրջանի նման բնակավայրերից մեկն է հանդիսանում Էջմիածնից 5կմ հարավ-արևմուտք ընկած, Առատաշեն գյուղի մոտ գտնվող համանուն բնակատեղին: Քասախ գետի արևմտյան ափին տեղակայված այս հուշարձանը 3մ բարձրությամբ բլրակ է, որի ստորին՝ երկրորդ շերտն ունի 1,5մ հզորություն 4 շինարարական հորիզոններով: Շերտերից յուրաքանչյուրում բացված են միջինը 4մ. տրամագիծ ունեցող, 25-65սմ լայնությամբ պահպանված կավակերտ պատերով շրջանաձև կացարաններ (աղ.V_{37}): Սոսկ արևի ջերմությամբ «թրծված» այդ պատերը դժվար են զանազանվում մշակութային շերտի հողից: Այդ կացարանների միջև բացվել են նեղ արահետներ, պահեստարան – հորեր, որոնց տրամագիծը հասնում է 80սմ: Այդ շերտում հայտնաբերվել են և գլաքարերի կուտակումներ, նուրբ հարդարված վանակատե շեղբեր, միջուկներ, եղջերուի կտրած եղջյուրներ, պեռլիտից պատրաստված թասի բեկոր և ֆելզիտային տուֆից ստացված գավաթի մաս (աղ.V_{28}): Շերտից հայտնաբերված նյութերի մյուս խումբն են կազմում խեցանոթների բեկորները (աղ. V_{29-34}), մալախիտի, ազուրիտի և երկաթի հանքաքարի մանրացված կտորները: Դրանց հետ գտնված է և բնածին պղնձի թերթիկից պատրաստված ոլորուն ուլունք, ինչը չի նշանակում, թե այդ մետաղների հանքաքարը մանրացվել է ձուլման համար. մարդը համապատասխան ջերմաստիճան դեռևս ստանալ չէր կարողանում: Կարելի է ենթադրել, որ հանքաքարը մանրացրել են ծիսական և կամ այլ նպատակների համար: Չի բացառվում, օրինակ, ներկ ստանալը: Նման երևույթ դիտված է և Տավրոսի լեռներում գտնվող, մ.թ.ա. VIII հազ. թվագրվող Չայոնու – թեփեսի կոչվող

հուշարձանում. այդտեղ ևս առկա են բնածին պղնձից, սառը կոման եղանակով պատրաստված զարդեր, հերուն, գնդասեղ:

Առանձին կարևորություն է ներկայացնում այն հանգամանքը, որ Առատաշենի կացարանների կավազանգվածում հայտնաբերվել են ցորենի, գարու, ոսպի տարբեր տեսակների մնացորդներ, ուտելի մոլախոտեր: Հացաբույսերի այդ մնացորդները կրկին ցույց են տալիս, որ երկրագործությունը սկսել էր զարգանալ դեռևս նախախեցեղենային նեոլիթում, որի ապացույցը կարող է հանդիսանալ ստորին շերտում կավամանների բացակայությունը: Համանման արդյունքներ են ստացվել և Անատոլիայում գտնվող Հաջիլար (այդտեղ V շերտը թվագրվում է մ.թ.ա. 7040թ.) կոչվող բնակավայրի պեղումների ընթացքում: Այդտեղ հայտնաբերվել են ցորենի, գարու, ոսպի մշակովի մնացորդներ: Նույն երևույթը դիտված է նաև Կոնիայի Չաթալ – Հյույուկ հուշարձանի ստորին՝ նախախեցեղենային շերտերում (հուշարձանն ունի 12 շինարարական հորիզոն, որտեղ խեցեղենը երևան է գալիս IX հորիզոնից սկսած), ինչը չի նշանակում թե մարդիկ կերակուր չեն պատրաստել: Այդ նպատակին կարող էին ծառայել, այսպես կոչված, «հյուսածո ամանները». դրանց բարակ ճյուղերից պատրաստված պատերը կավով են ծեփված: Նման ամանների մեծ տեսականի, փայտից պատրաստված ամանների հետ, հայտնաբերված է և Չաթալ – Հյույուկի ստորին շերտերում: Խեցեղենի ուշ երևան գալու պատճառներից մեկը կարող էր և դա լինել: Այլ պատճառների թվում չի բացառվում և կավի հատկություններին (հարստացնելու, ջրազրկելու անհրաժեշտությունը և այլն) լավ ծանոթ չլինելու հանգամանքը: Ձեռքով պատրաստված կոպիտ խեցեղենի առաջին նմուշները շատ հեռու լինելով փայտից և ոսկրից պատրաստված գեղեցիկ և նուրբ օրինակների հետ համեմատվելուց, Չաթալ – Հյույուկում հանդես են գալիս X–IX հորիզոններում և միայն 6A շերտում (շուրջ՝ 5900թ.) դրանք կատարելագործված տեսք են ստանում: Ինչ վերաբերում է Առատաշենին, ապա այստեղ խեցեղենը հայտնաբերված է վերին՝ առաջին շերտում: Առաջին և երկրորդ շերտերի միջնատարածքից վերցված նմուշների ռադիոածխածնային անալիզները ցույց են տալիս, որ առաջին շերտի ստորին սահմանը մ.թ.ա. VI հազ. II քառորդն է. հետևաբար կյանքը հուշարձանում սկիզբ է առել մ.թ.ա. VII/VI հազ. սահմանագլխում կամ VI հազ. սկզբում:

Առատաշենի առաջին շերտից հայտնաբերված խեցեղենը ներկայացված է կոպիտ, ժապավենային եղանակով ստացված գլանաձև թասերով, կճուճներով: Ամանների մակերեսներն ունեն վարդագույն, դարչնագույն, կարմրա - դարչնագույն, գորշ ու սև երանգներ, իսկ կավախմբը հարստացված է բազալտի, ավազի, վանակատի մանր կտորներով, առանձին դեպքերում՝ օրգանական նյութերով: Թրծումը թույլ է և անհամաչափ, որի հետևանքով մակերեսները հաճախ ծածկված են բծերով:

Հայտնաբերված մյուս նյութերը ոսկրից և եղջյուրից պատրաստված զենքերն ու գործիքներն են (աղ. V_{19-23}), տրորիչները, սանդերը, վարսանդները, շեղերը, հղկված կացինները և դրերը (աղ. V_{16-17}), գլաքարերից պատրաստված ուղղիչները (աղ. V_{18}), որոնցով ուղղել են նետաձողերը, ոսկրից պատրաստված փոքրիկ գեղեցիկ գդալները և թիակաձև իրերը (աղ. V_{24-27}):

Ժամանակաշրջանի առաջընթացի վերաբերյալ պատկերացում կազմելու համար, առավել կարևորը կավազանգվածում պահպանված բուսական մնացորդներն են, դրոշմները: Դրանցից որոշված են հետևյալ մշակաբույսերը. երկհատիկ ցորեն, մերկահատիկ վեցաշարք գարի, մանրահատիկ և ֆրանսիական ոսպ, մանրապտուղ տորուկ, անապատային վառվռուկ, թուխ դունի, ընկուզիկ, սպիտակ թելուկ, սովորական հավակատարի սերմեր: Այդ մնացորդները ցույց են տալիս, որ հացաբույսերի մշակումն արդեն բավական երկար ճանապարհ էր անցել: Երկրագործության զարգացմանը զուգընթաց, սննդի տեսականիում զգալի դեր ունեին և հավաքչությամբ ձեռք բերված ուտելի մոլախոտերը: Այդ բուսական մնացորդները ցույց են տալիս նաև, որ կացարանների շինարարության եռուն շրջանը ընկել է հունիս – հուլիս ամիսներին:

Առատաշենից բացի հայտնի են նեոլիթի տարբեր փուլերին պատկանող և այլ հուշարձաններ: Ժամանակաշրջանի վաղագույն հուշարձաններից է Արագածի հարավ-արևմտյան մասում հայտնաբերվածը, որտեղ մեզոլիթին պատկանող շերտից վեր գտնվել են վանակատից պատրաստված սեգմենտաձև գործիքներ, շեղեր, կենդանիների ոսկորներ, բայց այդ բնակիչները դեռևս ծանոթ չեն եղել երկրագործությանը: Հայտնի են և այլ հուշարձաններ. դրանք, սակայն, ամբողջությամբ հետազոտված չեն: Այդուհանդերձ, առկա տվյալներն իսկ ցույց են տալիս, թե նեոլիթի դարաշրջանը մարդկության պատմության մեջ ինչպիսի խոշոր դեր է կատարել: Վաղ, միջին և ուշ փուլեր ներառնող այդ դարաշրջանը նշանավորվեց ոչ միայն երկրագործության ու անասնապահության սկզբնավորմամբ՝ արտադրող տնտեսության հաստատմամբ, այլև՝ կավից ամաններ պատրաստելով: Մարդը տիրապետում էր քարի մշակման բոլոր եղանակներին (հարդարում, հղկում, շաղափում և այլն): Հետագա դարաշրջաններում պատրաստված քարե գործիքների վրա մշակման նոր եղանակներ չկան. քարի մշակման բոլոր եղանակները հայտնի էին նեոլիթում, որը քարի դարի ավարտը հանդիսացավ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՊՂՆՁԵ-ՔԱՐԵԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ (ԷՆԵՈԼԻԹ)

§ 1. ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գրականության մեջ սովորաբար էնեոլիթ (լատ. էնեոս-պղինձ) կամ խալկոլիթ (հուն. խալկոս-պղինձ) անվանվող այս դարաշրջանը, որն ընդգրկում է մ.թ.ա. VI հազ. կեսերից – IV հազ. երրորդ քառորդն ընկած ժամանակաշրջանը, բնորոշվում է հնագիտական համալիրներում իրենց արտացոլումը գտած էական փոփոխություններով: Առաջին հերթին նկատվում է, որ չնայած առկա են նեոլիթին բնորոշ բոլոր գործիքները, բայց մի շարք տեսակների (միկրոլիթներ, սրածայրեր, կտրիչներ, ծակիչներ և այլն) տոկոսային հարաբերությունը զգալիորեն նվազում է և այլ գործիքներ են բնորոշ դառնում (տարբեր տեսակների բրիչներ, մանգաղներ, ծանրացուցիչներ,աղորիքներ,սանդեր, վարսանդներ և այլն), և երկրորդ՝ երևան են գալիս մետաղե իրերը, ինչը և պայմանավորում է դարաշրջանի անվանումը: Էականը, սակայն, ոչ թե ընդհանրապես մետաղե իրերի առկայությունն է (պղնձից պատրաստված իրերը նեոլիթյան հուշարձաններում հաճախ են հանդիպում), այլ ձուլման եղանակով դրանց պատրաստված լինելը: Նախկինում անծանոթ այս եղանակով պատրաստված նյութերի հանդես գալը ցույց է տալիս, որ մարդը ի դեմս պղնձաքարի, տեսել է ոչ թե նոր տեսակի քար, որը կարելի էր մշակել քարագործության մեջ կիրառվող իրեն հայտնի եղանակներով (հղկում, բոկոտում, հարդարում և այլն), այլ՝ քարից տարբեր հատկություններ ունեցող (պինդ վիճակից հեղուկ վիճակի անցնել և հակառակը, պլաստիկություն, ձևափոխվելու կարողություն և այլն) նոր նյութ. պղնձաքար անվանումն իսկ ցույց է տալիս, որ սկզբնապես պղինձն ընկալվել է իբրև քար, որի մշակման համար նոր եղանակներ էին պահանջվում: Դարակազմիկ նշանակություն ունեցող այս գյուտը, որն ազդարարեց անցումը գիտակցված մետաղագործության, թույլ տվեց մարդուն պատրաստել ոչ միայն բարձր օգտակար գործողության գործակից ունեցող գործիքներ, այլև՝ ունենալ գործիք, որով կարելի էր բազմաբնույթ և նուրբ աշխատանքներ իրագործել. այս հանգամանքը վերացրեց մի շարք գործիքների անհրաժեշտությունը:

Փոփոխություններ են դիտվում և երկրագործության ու անասնապահության բնագավառներում. ընդլայնվում է ոչ միայն մշակվող բույսերի տեսականին (հայտնաբերված են 5 տեսակ ցորենի, 4 տեսակ գարու, կորեկի, սիսեռի, ոսպի, խաղողի և այլ բույսերի մնացորդներ), այլև՝ նախնական քայլեր են կատարվում ոռոգման ուղղությամբ: Երկրագործության առաջընթացը նպաստեց և անասնապահության զարգացմանը. մարդը կերի կայուն բազա էր ստեղծել ընտելացված անասունների համար: Որսորդության նշանակությունը զգալիորեն նվազել էր. այն օժանդակ դեր էր կատարում: Այդ են ապացուցում և ոսկրաբանական նյութերի քննության արդյունքները. դրանք ցույց են տալիս, որ վայրի կենդանիների ոսկորները տոկոսային հարաբերությամբ շատ են զիջում ընտանի անասուններին: Այս տեսակետից բավական խոսուն է և նետերի սակավության փաստը դարաշրջանի հուշարձաններում: Արտադրող տնտեսության վերջնական հաղթանակը, որն ավելի ու ավելի էր մթերքի ավելցուկ բերում, ոչ միայն զգալիորեն նվազեցրեց որսորդության նշանակությունը, այլև խթանեց արդեն նեոլիթում դիտվող բնակչության աճը, ինչը պարզ դիտվում է էնեոլիթի վաղ փուլից: Ժամանակաշրջանի բնակավայրերի բնորոշ տեսակը գետափերին խումբ-խումբ կենտրոնացած, իրարից 0,5 – 1,7 կմ հեռավորության վրա գտնվող, սովորաբար 4–5 փոքրիկ բնակատեղիներից (1–2 հա) կազմված բնակավայրեր են, որոնք պատկանել են արյունակցական կապերով կապված տոհմա-ցեղային միավորումների: Այդ բնակավայրերից մեկը եղել է «մայր» բնակատեղի, որից և առանձնացել են «դուստր» ճյուղավորումները: Տոհմա-ցեղային տարբեր միավորումների պատկանող նման մշտական բնակավայրերը, որոնցում մեկ կամ մի քանի շինարարական հորիզոններից կազմված մշակութային շերտերի հզորությունը տատանվում է 1–10մ սահմաններում, միմյանցից հեռու են 8 – 50կմ:

§ 2. ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

Բնակարանների հիմնական տեսակը, գետնի մակերեսին, հատակագծում շրջանաձև կամ ձվածիր, կոնաձև կամ գլանաձև տեսքով, գմբեթաձև կտուրով և կավածեփ հատակով,սովորաբար 3–5մ տրամագծով փոքր կացարաններ են. դրանցում առավելագույնը կարող էր բնակվել 3–4 շնչից կազմված փոքր ընտանիք: Առկա են և կիսագետնափոր, 2–4սմ հաստություն ունեցող կավաշերտերով իրար միացված հում աղյուսներից (սովորաբար՝ 30×15/20×7/8սմ) պատրաստված կացարաններ: Վերջին-

ներիս մուտքը, որը սովորաբար հատակից բարձր է, ունի 0,5-0,6մ լայնություն: Առանձին դեպքերում հատակները և պատերը ներկվել են: Բոլոր կացարաններում, պատերին կից, օջախներ են պատրաստված: Այս օջախներին զուգահեռ, կացարաններում և դրանցից դուրս ընկած տարածքներում հայտնաբերված են կրակի պաշտամունքի հետ կապված ամաններ, որոնց մեջ, պահպանվել է մշտական կրակը: Կացարաններին կից եղել են նաև տնտեսական նշանակություն ունեցող փոքր (տրամագիծ՝ 0,5–0,7մ) և միջին չափերի (տրամագիծ՝ 1,25–2մ) օժանդակ կառույցներ:

Վաղ շրջանի կացարանները մոտ-մոտ են կառուցված, խմբերով, առանց որոշակի հատակագծման, իսկ հետագայում դրանք խմբավորվում են առանձին փոքր հրապարակների շուրջ: Քարե հիմքի վրա բարձրացող, կավակերտ պատերով կացարանների այդ խմբերի միջև, հանդես են գալիս նեղ, ոչ երկար արահետներ: Առանձին բնակավայրերում բացված են և 6,5–9,5մ լայնություն և 1,25–2մ խորություն ունեցող ջրանցք-առուներ, որոնք ոռոգելուց բացի կարող էին ունենալ և պաշտպանական նշանակություն: Նման առուներով են օղակված Բոլնիսի շրջանի Արուխլո գյուղի էնեոլիթյան բնակատեղին: Այդպիսիք առկա են և Իմիրիս-գորայում: Նման կառույցների հետքեր են դիտված և Շահ-թեփե հուշարձանում (Միլի-Ղարաբաղի հարթավայր) և այլն:

Էնեոլիթի ուշ շրջանին պատկանող առանձին բնակավայրերի կացարանների խմբերը շրջափակված են կավածեփ պարսպապատերով (աղ.VI$_1$): Դիտվում է ևս մեկ կարևոր մանրամասն՝ կացարաններում և անմիջապես բնակավայրերի տարածքներում առկա են կավից պատրաստված գնդերի և գլաքարերի մեծ կուտակումներ, որոնք ցույց են տալիս պարսատիկի լայն կիրառությունը:

Թաղումները կատարվել են կամ անմիջապես կացարանների հատակների տակ կամ կացարանների միջև ընկած տարածքներում: Սովորաբար աջ կամ ձախ կողքի, կծկած վերջույթներով կատարված այդ թաղումներում, որոնց զուգահեռ երբեմն հանդիպում են և մեջքի վրա պառկեցված կմախքներ, առանձին դեպքերում սնունդ ու ամաններ են դրվել: Օրինակի համար կարելի է հիշատակել Նախիջևանի մոտ գտնվող Քյուլթեփե կոչվող բնակավայրը. այդտեղ բացված 73 թաղումներից 25-ը նյութեր են պարունակել: Նույնը կարելի է ասել և Կապանի շրջանի Շիկահող գյուղում պեղված էնեոլիթյան կացարանի վերաբերյալ,որի հատակի տակ բացված դամբարանում ամանների բեկորներ, վանակատի գլեպներ ու գործիքներ են հայտնաբերվել և այլն: Ոսկորների կարմիր գույնից երևում է, որ թաղման ընթացքում օխրա է օգտագործվել:

§ 3. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Էնեոլիթի տարբեր հուշարձաններից հայտնաբերված նյութերը բաժանվում են ժամանակագրական երեք՝ վաղ, միջին և ուշ խմբերի: Պայմանականորեն ընդունված է դրանք անվանել շուլավեր-շոմութեփեյան կամ վաղ կենտրոնաանդրկովկասյան, նախիջևանյան կամ հարավանդրկովկասյան և Թեղուտի խումբ: Նշված խմբերը մեկ միասնական մշակույթի զարգացման տարբեր փուլերն են արտացոլում: Այդ մշակույթի ազդեցությունը նկատվում է նույնիսկ Դաղստանում, իսկ տեղական հիմքի վրա զարգացող և նախկին ավանդույթները շարունակող մերձսևծովյան մշակույթը դրանցից որոշակիորեն առանձնանում է: Մերձսևծովյանից տարբերվող այդ մշակույթը հարավ արևելքում մերձենում է Ուրմիայի շրջակայքի մշակույթին, իսկ հարավում ընդգրկում է Վանա լճի տարածքը: Այս հսկայական տարածքի տարբեր մասերում գտնվող հուշարձաններից հայտնաբերված իրերը, որոնք ըստ նյութի ստորաբաժանվում են քարից, ոսկրից, կավից և պղնձից պատրաստված խմբերի, շեշտված տարբերություններ չեն դրսևորում:

Քարից պատրաստված նյութեր: Հազարավոր օրինակներով հայտնաբերված նյութերի այս խումբը, ինչպես նշվեց վերևում, զարգացման ընթացքում զգալի փոփոխություններ է կրում: Դարաշրջանի վաղ փուլին պատկանողները նախկինից հայտնի, վանակատից և կայծքարից պատրաստված սակավաթիվ միջուկներն են, ատամնավոր և փոսիկավոր հանվածք ունեցող հարդարված շեղբերը, կտրիչները, տարատեսակ քերիչները, ծակիչները և այլ՝ տարբեր ձևերի փոքրիկ գործիքները, գլեպները (աղ. VI$_{3-10}$): Այս գործիքների հետ, սակայն, առավել հաճախ են հանդիպում պահանգավոր մանգաղների ներդիրները: Վերջիններս, ինչպես ցույց են տալիս այդ գործիքներից պահպանված մասերը, ատամնաձև կերպով ամրացվել են փայտե կամ ոսկրե (անասունի ստորին ծնոտը) հիմքի մեջ (աղ. VI$_{25}$): Ներդիրների մյուս խումբը ուղիղ կամ թեթևակի կորացած, մեկ եզրից ատամնավոր հանվածքներ ունեցող, տարբեր չափերի շեղբեր են (աղ. VI$_{13-15}$): Գործիքների նման կառուցվածքը ցույց է տալիս, որ հասկի ցողունները ոչ թե հատվել են, այլ՝ սղոցվել:

Կատարված անալիզների արդյունքները փաստում են, որ վանակատի հանքերից հեռու գտնվող տարածքների բնակիչներն այն բերել են հարևան, իսկ երբեմն և բավական հեռու շրջաններից: Օրինակի համար Ղազախի շրջանի բնակիչները (Բաբաղերվիշ, Շոմութեփե և այլն) վանակատը բերել են Փարավանայից և Հատիսից, Նախիջևանի Քյուլ-թեփե

բնակավայրում ապրողները՝ Հատիսից և Միսիանից, Ալիքեմեկ-թեփեսի կոչվող բնակավայրի (Ջերրայիլի շրջ.) բնակիչները օգտվել են շուրջ 300կմ հեռավորության վրա գտնվող Քարվաճառի հանքավայրից և այլն:

Վանակատից և կայծքարից պատրաստված գործիքներին զուգահեռ էնեոլիթյան բնակիչը լայնորեն օգտագործել է նաև բազալտը, գլաքարը, այլ կարծր քարատեսակներ՝ կացիններ, մուրճեր, աղորիքներ, բրիչների ծայրակալներ, գնդաձև ու տանձաձև գուրզեր, սանդեր, դուրսեպեր, նետաձողերի հարթիչներ և այլ գործիքներ պատրաստելու համար (աղ.VI$_{11,12,16,17,26}$): Առանձին քարատեսակներից, առավելապես՝ փափուկներից (պեռլիտ, ֆելզիտ ևն) պատրաստել են և ամաններ:

Ոսկրից պատրաստված իրեր: Էնեոլիթի դարաշրջանի մարդը քարին զուգահեռ լայնորեն օգտագործել է նաև ոսկորն ու եղջյուրը: Ընդ որում, ակնհայտ է այն, որ նա իրերը պատրաստել է ոսկորների ձևը հաշվի առնելով: Այսպես, եթե նա մանգաղ ստանալու համար օգտագործել է անասունի ստորին ծնոտը, ապա հողուրագի համար նախընտրել է թիակոսկրը, իսկ բրիչներ, հերուն – ծակիչներ, ասեղներ, պատրաստելու համար օգտագործվել են եղջյուրներ, տարբեր չափերի խողովակաձև, ինչպես և նուրբ ոսկորներ (աղ.VI$_{18-24}$):

Փոքր խումբ են կազմում ոսկրից պատրաստված թիակաձև փոքրիկ իրերը, գդալները, տարբեր չափերի պոչիկներ ունեցող նետասլաքները, որոնց որոշ օրինակներ, ինչպես ասենք Առատաշենից գտնվածները, ավարտվում են կտրվածքում շեղանկյունաձև ու եռանկյունաձև տեսք ունեցող մարտական սայրերով:

Առանձին կարևորություն են ներկայացնում կավից պատրաստված մարդակերպ արձանիկները: Դրանք հիմնականում մայր աստվածուհու՝ պտղաբերության կուլտին առնչվող, կանացի արձանիկներ են: Դրանցից բացի հայտնաբերված են նաև գլաքարից պատրաստված, մարդու գլխի տեսք ունեցող քանդակներ, ինչպես և կենդանակերպ փոքրիկ կավակերտ արձանիկներ (աղ.VI$_{27,28}$):

Մետաղե իրեր: Սակավ հանդիպող իրերի այս խումբը ներկայացված է պղնձե ոլորած թելթիկներից պատրաստված ուլունքներով, կիսաշրջանաձև տեսքով պահպանված իրի բեկորով, ասեղներով, բզով ու հերունով, շեղանկյունաձև անորոշ իրով, դանակի մասով, առանձին փոքրիկ բեկորներով (աղ.VI$_{2}$): Թվարկված նյութերը (դրանք հայտնի են Թեղուտից, Քյուլ թեփեից, Առուխլոյից և այլն) տնտեսական աշխատանքների համար բացարձակապես արժեք չեն ներկայացնում. դրանց

կարևորությունը, առանձին իրերի մեջ առկա մկնդեղի և նիկելի զգալի քանակությունն է, որը հնարավոր է, կարող է նույնիսկ արհեստական ճանապարհով ավելացված լինել: Մետաղե իրերի սակավությունը ներկայումս հնարավորություն չի տալիս հստակություն մտցնել այս հարցում և հետևաբար դժվար է ասել, թե տվյալ դեպքում այդ մետաղները շփոթվել են պղնձի հետ, թե գործ ունենք արհեստական եղանակով մետաղի որակը լավացնող նյութի փնտրտուքների հետ:

Խեցեղեն արտադրանք: Զանգվածաբար հայտնաբերվող նյութերի այս տեսակը մեծ նշանակություն ունի տարբեր հարցերի պարզաբանման, մասնավորապես՝ թվագրության, մշակույթների տարածման, դրանց միջև եղած կապերի, ազդեցությունների և առանցքային նշանակություն ունեցող այլ խնդիրների լուծման համար:

Ասվեց, որ էնեոլիթյան մշակույթը ստորաբաժանվում է ժամանակագրորեն իրար հաջորդող երեք խմբի: Դրանցից վաղագույն փուլի՝ շուլավերյան խմբի խեցեղենը, որի մերձակցությունը նեոլիթյան նմուշներին ակնհայտ է, բացի Խրամի գետի հուշարձաններից (Շուլավերիսգորա, Դանգրեուլիգորա, Գաղաչրիկալիգորա, Իմիրիսգորա և այլն), հայտնի է նաև Խրամի ու Մաշավերա գետերի միջև գտնվող (Արուխլոյի խումբ), Աղստև ու Կուր գետերի միախառնման հատվածում տեղակայված (Բաքաղերվիշ-Շոմութեփեի խումբ) հնավայրերից,Արարատյան դաշտի (Ակնաշեն, Առատաշենի վերին շերտ, Կոզլակ-բլուր, Ծաղկունք և այլն) և այլ հուշարձաններից: Դրանք կոպիտ, ձեռքով պատրաստված, տարատեսակ ամաններ են, որոնց շարքում գերակշռում են դուրս ցցված եզրերով, այսպես կոչված, «կրունկով», հարթահատակ, գլանաձև կամ կլորացող իրանով թասերը, ուղիղ կամ դուրս թեքված շուրթով ոչ մեծ կճուճները, գլանաձև, երբեմն՝ տակառիկաձև անոթները: Հազվադեպ կոկված այս ամանների մակերեսներն ունեն հիմնականում կարմրա-դարչնագույն ու դեղնա-դարչնագույն երանգ, որի վրա տարածվող սև խոշոր բծերը, ինչպես և կավախմորում առկա ածխացած բուսական մնացորդները և կոտրվածքի տարբեր երանգավորումները, խոսում են անհամաչափ ու թրծման ջերմաստիճանի ոչ բավարար լինելու մասին: Կավախմորի հարստացման համար օգտագործվել են նաև ավազ, հազվադեպ՝ մանրացված վանակատ: Առանձին ամանների հատակների արտաքին մակերեսի վրա առկա են հյուսվածքի հետքեր, ինչը մատնանշում է պատրաստման ընթացքում կպչուն կավախմորի տակ հյուսվածք դնելը, պատրաստվող ամանը այլ նյութերի (օր. հող) շփումից զերծ պահելու և կամ տակդիր-հարթակին (քար, տախտակ) չկպչելու համար (աղ.VI$_{29-39}$):

Հիմնականում անզարդ այս ամանների խմբում շատ են և այնպիսի օրինակներ, որոնց մակերեսները զարդարված են կոնաձև ելունդներով, ուղղահայաց գոտիներով, կտրվածքով ստացված եղնձաձև ու սանրաձև պատկերներով, կոճակաձև ելունդներով և ուռուցիկ ալիքաձև գոտիներով: Սակավ չեն ցածրիրան թասերը, որոնց շրթի տակ միջանցիկ անցքեր են բացված: Եզակի օրինակներով հանդիպում են վարդագույն մակերեսին սև կամ կարմիր ներկով կատարված ժապավենաձև զարդեր ունեցող ամաններ: Խեցեղենի այս խումբը զարդով և պատրաստման եղանակով մոտենում է այսպես կոչված, «Հասունյան» մշակույթի, մ.թ.ա. VII հազ. վերջ – VI հազ. կեսերով թվագրվող նյութերին: Նշված մշակույթի կենտրոնը Մոսուլ-Հալեպ-Մարդին-Ամիդ (Դիարբեքիր) տարածքն է, բայց դրա սահմանները հասել են Խաբուրի գետահովիտը, որից արևմուտք տարածվել է արևմտյան կամ սիրիական մշակույթը: Առկա նյութերն, այսպիսով, ցույց են տալիս, որ իր ուրույն, հարևան տարածքներից իրեն բնորոշ գծերով առանձնացող Անդրկովկասի մշակույթը, էնեոլիթի վաղ փուլում որոշ կապեր է ունեցել Հասունյան մշակույթի հետ: Անդրկովկասի վաղ, բայց ոչ սկզբնական փուլին պատկանող նշված հուշարձանները, թվագրվում են մ.թ.ա. VI հազ. վերջ – V հազ.:

Համեմատաբար երիտասարդ տարիք ունի նախիջևանյան կամ հարավ-անդրկովկասյան խմբի խեցեղենը (V հազ. II կես– մասամբ՝ IV հազ. սկիզբ): Այս խմբի խեցեղենի հիմնական մասը, ինչպես և վաղ փուլին պատկանողները, նույն՝ թույլ, անհամաչափ թրծվածքով, հարդով, սակավ՝ ավազով հարստացված կավախմորից պատրաստված կոպիտ ամաններն են: Դրանց գերակշռող մեծամասնությունը, նախորդ փուլից հայտնի քրեղան-թասերն են, գնդաձև իրան և ցածր վիզ ունեցող կճուճները, գլանաձև ու տակառիկաձև անոթները: Սրանց վարդագույն մակերեսները, ինչպես և նախորդ փուլի ամանները, հազվադեպ են կոկված: Նախկինից եկող նման գծերին զուգահեռ, սակայն, խեցանոթների նշված խումբը երևան է բերում նոր հատկանիշներ. աչքի է զարնում զարդերի բացակայությունը, հատակների «կրունկների» սակավությունը, իսկ սափորների առանձին նմուշների մոտ երևան են գալիս շրթից սկսվող և ուսին միացող օղակաձև կանթեր: Առանձին ամանների իրաններին առկա են և հորիզոնական ամրացված բոնակ-ելուստներ (աղ.VI43-47): Այս ամանների շարքում հանդիպում են և դրանցից միանգամայն տարբեր գունազարդ նմուշներ: Դրանք բարձրորակ, լավ կոկած և գերազանց թրծված ամաններ են, որոնց մակերեսները զարդարված են դարչնագույն ու կարմիր գույնով ստացված երկրաչափական զարդերով (ե-

ռանկյունիներ, շեղանկյունիներ, ալիքներ, ցանցեր, հորիզոնական գծեր և այլն): Խեցանոթների այս խումբը, ի տարբերություն նախորդ փուլի գունազարդ նմուշների, իր բազմաթիվ զուգահեռներն ունի հասունյանին հաջորդած, այսպես կոչված, «Հալաֆյան» մշակույթին պատկանող հուշարձաններում, որոնք թվագրվում են մ.թ.ա. VI հազ. վերջ – V հազ. (աղ.VI$_{40,42}$): Հալաֆյան հզոր մշակույթը, որը հիմնականում ընդգրկում է Եփրատ – Մեծ Զաբ տարածվող կորը ու հյուսիսում մերձենում Վանին, ազդեցության լայն ոլորտ է ունեցել (ընդհուպ մինչև Միջերկրականի ափերը): Այդ մշակույթը կրողները առևտրական լայն կապեր են ունեցել շրջակա երկրների հետ, Անդրկովկասի տարբեր հուշարձաններից (Քյուլ-թեփե-1, Մուղան-Ղարաբաղի հուշարձանները և այլն) գտնված հալաֆյան խեցանոթները այդ կապերի լավագույն վկաներն են, բայց ընդհանուր առմամբ հալաֆյանից տարբեր Անդրկովկասի մշակույթը ավելի մերձ կապեր է դրսևորում Ուրմիայի շրջակա հուշարձաններից հայտնաբերված մ.թ.ա. V հազ. վերջ – IV հազ սկզբով թվագրվող նյութերին: Այդպիսիները առկա են և Քյուլ թեփեից փոքր ինչ երիտասարդ տարիք ունեցող Ալիքեմեկ-թեփեսի (Զեբրայիլի շրջ.) կոչվող հուշարձանում: Այդ ժամանակաշրջանին են պատկանում և Արարատյան դաշտավայրի մի շարք հուշարձաններից (Մաշտոցի բլուր, Տերտերի ձոր և այլն), Իգդիրի մոտ գտնվող Խազինե թեփե բնակավայրից և այլ վայրերից հայտնաբերված նյութերը: Նման համադրությունները, որոնք հազիվ թե պարզ պատահականություններ արդյունք հանդիսանան, օգնում են թվագրության և մշակույթների տարածման հարցերի պարզաբանմանը:

Միջագետքում տեղի ունեցող իրադարձությունները, որոնք ճակատագրական հանդիսացան Հալաֆյան մշակույթը ստեղծողների համար, իրենց արտացոլումը գտան և Անդրկովկասի հարավային շրջաններում: Այդ են փաստում Էջմիածնից 3 կմ հարավ ընկած, Թեղուտ միաշերտ (շերտի հզորությունը 1,6մ) բնակավայրից հայտնաբերված նյութերը, որոնք թվագրվում են մ.թ.ա. IV հազ. առաջին կեսով: Էնեոլիթի վերջին շրջանին պատկանող այս հուշարձանից հայտնաբերված խեցեղեն արտադրանքը հիմնականում ներկայացված է նախորդ փուլերից հայտնի նմուշներով: Դրանք նույն՝ կոպիտ, անհարթ մակերես, հարդի և ավազի խառնուրդ ունեցող կավախմորից պատրաստված, գնդաձև իրանով կճուճներն են, գլանաձև անոթները, որոնց առանձին օրինակներ, սակայն, զոգավոր հատակ ունեն: Մեծ խումբ են կազմում և դեղնավուն մակերեսով քրեղաններն ու թասերը: Ինչպես Մուղանի հարթավայրում ու Քյուլ-թեփե հուշարձանում, այստեղ ևս շատ են երկու երեսներից կավի

դեղնավուն շերտով ծածկված ամանները, որոնցից մի քանիսի ներսի մակերեսին առկա են գործվածքի հետքեր. դա ցույց է տալիս ամանի ձևավորման ժամանակ ավազով լցված տոպրակի կիրառումը:

Ինչպես նախորդ փուլերի հուշարձաններում, այստեղ ևս առկա են գունազարդ ամաններ: Վերջիններիս կարմրա-վարդագույն կամ դեղնավուն մակերեսը զարդարված է սև կամ կարմիր գույնով կատարված երկրաչափական պատկերներով (հորիզոնական և ուղղահայաց ալիքաձև գծեր, բեկյալներ, շեղանկյունիներ և այլն): Հալաֆյանից տարբեր (հալաֆում բացակայում են ուղղահայաց ալիքները և այլ զարդեր) այս նյութերը մերձենում են, այսպես կոչված, հյուսիս-միջագետքյան ուբեյդյան մշակույթին, որը հալաֆյանի և հարավ-միջագետքյան ուբեյդյան մշակույթի սիմբիոզն է հանդիսանում: Դրանց շարքում կան և անզարդ նմուշներ, որոնք պատրաստման նրբությամբ առանձնանում են տեղական խեցեղենից (աղ.VI$_{48-52}$): Առկա նյութերն, այսպիսով, ցույց են տալիս, որ հարավային Միջագետքում ձևավորված ուբեյդյան մշակույթը, որի վաղ փուլը հիմնականում ընդգրկում է մ.թ.ա. V հազ. II կես, բայց առավելապես վերջին քառորդն ընկած ժամանակաշրջանը, մ.թ.ա. IV հազ. արդեն, Տիգրիս-Եփրատով տարածվում է հյուսիս, հասնում Տավրոսից հյուսիս ընկած Մալաթիա-Էլյազիգ-Պալու, իսկ հյուսիս-արևելքում՝ Ուրմիայի, արևելքում՝ Խուզիստանի սահմանները: Հարավային Միջագետքից (Քիշ-Էրիդու տարածքում) սկիզբ առած այս տեղաշարժերի արդյունքում հալաֆյան մշակույթը դադարում է գոյություն ունենալուց: Մշակույթների այդ փոփոխությունը, որն ամենևին էլ խաղաղ ճանապարհով չի կատարվել, իր արտացոլումն է գտել և Թեղուտի նյութերում: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ ուբեյդյան մշակույթը ստեղծողները, եթե չեն էլ թափանցել Անդրկովկասի հարավային մատույցները, ապա զգալի ազդեցություն են թողել տարածաշրջանում: Դրա ապացույցը կարող են հանդիսանալ և Ուրմիայի շրջակա հուշարձաններից (օր. Սոլդուզի հովտի Պիջիլի-թեփե բնակավայրը) հայտնաբերված նյութերը, որոնք համարվում են ուբեյդյան: Այս փոփոխություններն իրենց արտացոլումն են գտնում և Վանի մոտ գտնվող Թիլկի-թեփե, Շամիրամ-Ալթի և այլ հուշարձաններից հայտնաբերված նյութերում. Շամիրամ-Ալթիի ստորին շերտերի հալաֆյան խեցեղենը այստեղ ևս, վերին շերտերում փոխարինվում է հյուսիս-ուբեյդյան մշակույթին բնորոշ խեցեղենով: Ընդհանուր գծերով այսպիսին էր մ.թ.ա. IV հազ. III քառորդն ընկած ժամանակաշրջանի իրավիճակը, երբ Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների տարածքներն ընդգրկող հուշարձաններում հանդես է գալիս, այսպես կոչված, Կուր-Արաքսյան մշակույթը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՎԱՂ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

§ 1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՈՒՄՆ ՈՒ ՓՈՒԼԱԲԱԺԱՆՈՒՄԸ

Մասնագիտական գրականության մեջ սովորաբար կուրարաքսյան անվանվող վաղ բրոնզեդարյան մշակույթն ընդգրկում է մ.թ.ա. 34–25/24-րդ դդ. ընկած հազարամյա ժամանակաշրջանը: Այդ մշակույթը հյուսիսում ներառում է Դաղստանն ու Կովկասյան լեռնաշղթան, հյուսիս-արևմուտքում սահմանակցում «Մայկոպյան» կոչվող մշակույթին, ապա իջնում հարավ-արևմուտք՝ հասնելով Եփրատի վերին հոսանքներն ու Անտիտավրոս, իսկ հարավում և հարավ-արևելքում, առավելագույն տարածման ժամանակաշրջանում, ներառում է Վան և Ուրմիա լճերն օղակող, ընդհուպ Թավրիզն ընկած տարածքները: Ավելին, այդ մշակույթը ստեղծած բնակչության առանձին խմբեր մ.թ.ա. XXVIII/XXVII–XXIVդդ. թափանցում են Սիրիա ու Պաղեստին, հիմք դնում, այսպես կոչված, «Կիրբետ-Կերակյան» մշակույթին: Վերջինս իր անվանմամբ պարտական է Մեռյալ ծովից հյուսիս գտնվող համանուն փոքր բնակավայրին, որտեղ առաջին անգամ են այդ նյութերը հայտնաբերվել: Ակնհայտ է նաև, որ ծայրամասային, այդ թվում և հյուսիսային շրջանները, սահմանային, արվարձանային են հանդիսացել, որտեղ այդ մշակույթին պատկանող նյութերն ունեն զգալիորեն պարզեցված տեսք:

Հետևելով նշված սահմաններին, դժվար չէ համոզվել, որ «Կուր-Արաքսյան» անվանումը, որն անցյալ դարի 40-ական թվականներին առաջարկվել էր ականավոր հնագետ Բ.Ա. Կուֆտինի կողմից, չհամապատասխանելով մշակույթի տարածման սահմաններին, պայմանական է. վերջինս պայմանավորված էր այն ժամանակ նման նյութերի՝ հիմնականում Կուր-Արաքս միջագետքի հուշարձաններից հայտնաբերված լինելու հանգամանքով: Ավելին, Բ.Ա. Կուֆտինն այդ նյութերը, որոնք Ե.Բայբուրդյանի կողմից «Շենգավիթյան մշակույթ» էին անվանվել, էնեոլիթին էր վերագրում (վաղ-խումբը): Հետագա հետազոտությունները, ինչպես և նախկինում պղնձյա դիտվող մետաղե իրերի անալիզների արդյունքները, ցույց տվեցին, որ դրանք պատրաստված են պղնձամկնդեղաջին արհեստական համաձուլվածքից (հետևաբար սխալ է դրանք էնեոլիթին վերագրելը), իսկ այդ մշակույթի տարածման սահմանները չեն սահմանափակվում Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածքով: Արտասահմանյան մասնագիտական գրականության մեջ շրջանառվում են և այլ անվանումներ. շփոթություն չառաջացնելու և անհարկի մանրամասներից խուսափելու նպատակով, դրանց չենք անդրադառնա: Նշենք միայն, որ առաջարկված բոլոր անվանումները դուրս չեն գալիս հիմնական՝ այդ մշակույթի բնօրրան հանդիսացող Հայկական լեռնաշխարհի և նրա անմիջական հարևանությամբ գտնվող տարածքներից: Կուրարաքսյան մշակույթը այդ տարածքի՝ էնեոլիթից եկող ավանդույթները զարգացման նոր աստիճանի հասցրած բնակչության ստեղծագործությունն է, որը կատարելագործվել է հարևան մշակույթների հետ սերտ կապեր պահպանելով:

Շումերա-Աքքադական գրավոր աղբյուրները ցույց են տալիս, որ շումերները Եփրատի հոսանքով առևտրական սերտ կապեր են ունեցել Հայկական լեռնաշխարհի բնիկների հետ: Նրանցից շումերները ստացել են մետաղներ (պղինձ, ոսկի, արծաթ, կապար), տարբեր տեսակի քարեր, շինափայտ (Արղանա-Մադեն, Ամանոս), իսկ Սարգոն Աքքադացին և նրա հաջորդները, III հազ. II կեսում իրենց թշնամի երկրանունների թվում հիշատակում են և Արմանի երկիրը (Արմե-Շուպրիա, Աղձնիք):

Ամենաընդհանուր գծերով այսպիսին էր Միջագետք – Հայկական լեռնաշխարհ իրավիճակը մ.թ.ա. III հազ.: Միանգամայն բնական է, որ վաղ բրոնզեդարյան տարբեր նյութեր արտացոլում են հյուսիս-հարավ եղած այդ կապերը, ազդեցություններն ու փոխազդեցությունները: Մյուս կողմից, տեղական հիմքի վրա զարգացող Կուրարաքսյան մշակույթը երևան է բերում և նախորդ դարաշրջանից ժառանգած հատկանիշներ, որոնք զարգացման ընթացքում իրենց տեղը զիջում են միայն Կուրարաքսյան մշակույթին բնորոշ նորանոր գծերի: Վերջիններս ոչ միայն ինքնատիպ, ուրույն բնույթ են հաղորդում այդ մշակույթին, այլև թույլ են տալիս հետևելու նրա զարգացման ընթացքին, առանձնացնել այդ առաջընթացի ժամանակագրական հանգուցակետերն ու հաջորդականությունը: Զարգացման այդ ընթացքը ներկայանում է եռափուլ՝ վաղ, միջին և ուշ աստիճաններից կազմված սանդղակի տեսքով: Նշված փուլերից առաջինն ընդգրկում է 34-30/29-րդ դդ., երկրորդը՝ 29-26-րդ դդ., իսկ երրորդը՝ 26-24-րդ դդ.: Մ.թ.ա. XXIV-XXII/XXIդդ. թվագրվող համալիրները, իրրև վերապրուկ, պահպանելով հանդերձ վաղ բրոնզեդարյան որոշ հատկանիշներ, դրսևորում են միանգամայն նոր՝ միջին բրոնզի դարա-

շրջանի առաջին փուլին բնորոշ գծեր: Վերջիններս ժամանակաշրջանի նյութերին, որոնք մասնագիտական գրականության մեջ հայտնի են նաև «կուրգանային մշակույթ» պայմանական անվանմամբ, վաղ բրոնզից միջինին անցնելու բնույթ են հաղորդում: Միաժամանակ այդ նորահայտ հատկանիշները միջին բրոնզի դարաշրջանի սկիզբն են ազդարարում:

Առանձնացված փուլերում երևան եկող փոփոխություններն առավել ակնառու են դիտվում հատկապես խեցանոթների, դրանց զարդանախշերի, վերջիններիս ստացման եղանակների վրա: Հուշարձանների այլ տեսակներ ավելի դանդաղ են ձևափոխությունների ենթարկվել: Վերջիններիս շարքում են կացարաններն ու դամբարանները:

§ 2. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ, ՏԱՃԱՐ-ՍՐԲԱՐԱՆՆԵՐ

Ինչպես նախորդ, այնպես էլ վաղ բրոնզի դարաշրջանում, բնակավայրերը կառուցված են հարթավայրերում՝ ջրավազաններին մոտ, հաճախ՝ նախալեռնային գոտում, բարձրադիր վայրերում: Հիմնական այդ բնակավայրերին զուգահեռ առկա են և ժամանակավոր բնույթ ունեցողներ: Վերջիններս սովորաբար գտնվում են բարձր լեռնային գոտիներում. արոտավայրերով հարուստ այդ տարածքներում իջևանել են ամռան ամիսներին անասունների հոտերը սար բարձրացրած խաշնարածները: Սակավաթիվ կացարաններից կազմված նման բնակատեղիներում, ավելի ճիշտ՝ կայաններում, մշակութային շերտի հզորությունը մեծ չէ, իսկ հայտնաբերված նյութերը հիմնականում խեցանոթների բեկորներ են, քարից և ոսկրից պատրաստված գործիքներ: Այդպիսի կայաններ հայտնի են Եղեգնաձորի շրջանի Ելփին գյուղի մոտակա սարում գտնվող «Մոխրոտ» վայրում, Վրաստանում (Գրեմի), Հարավային Օսեթիայում (Կուլբակեթին Օսպրիսի գյուղի մոտ) և այլ վայրերում: Ինչ վերաբերում է մշտական բնակավայրերին, ապա դրանք տեղադրված են կիրճերով շրջափակված հրվանդանների վրա, բնական դժվարամատչելի տեղերում: Նման տեղադրությունը դժվարամատչելի է դարձրել դրանք: Ավելին, առանձին բնակավայրեր, բայց հատկապես խոշորները, ի տարբերություն նախորդ դարաշրջանի՝ սոսկ կացարանների խմբերը իրար միացնող կավաշեն պատերի, որոնք չէին փոխում բնակավայրի բաց, անպաշտպան բնույթը, շրջափակվում են ողջ բնակավայրը ներառող աղյուսաշեն կամ անմշակ քարերով ձևավորված, ավելի շուտ արգելապատնեշի նմանվող կիկլոպյան պարիսպներով. վերջիններիս լայնությունը երբեմն 4մ և ավելին է կազմում: Այս մանրամասները ցույց են տալիս, որ երկրագործության ու անասնապահության զարգացմամբ պայմանավորված, հաճախակի դարձած ընդհարումները բնակիչներին ստիպել են ամեն կերպ բարձրացնել բնակավայրի պաշտպանունակությունը: Այդ ընդհարումների հաճախակի բնույթն են փաստում և ժամանակաշրջանի բնակավայրերի տարբեր շերտերում դիտվող հրդեհների հետքերը: Առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով, բազմաթիվ օրինակներից ներկայացնենք համեմատաբար պարզ շերտագրություն և հստակ թվագրություն ունեցող հուշարձաններից մի քանիսը. դրանք հնարավորություն կընձեռեն որոշակի պատկերացում կազմելու շերտագրության, բնակարանաշինության առանձնահատկությունների, կենցաղի տարբեր կողմերի վերաբերյալ:

Շենգավիթ: Հրազդանի մակերևույթից մոտավորապես 30մ բարձրություն ունեցող բլրի հարթ գագաթամասը զբաղեցնող այս բազմաշերտ բնակատեղին գտնվում է Երևանյան լճի հարևանությամբ տեղակայված հիվանդանոցի մերձակա տարածքում: Հուշարձանը, որի մշակութային շերտերի ընդհանուր հզորությունը 3-3,5մ է, երեք կողմից, շնորհիվ բլրի զառիթափ լանջերի, դժվարամատչելի է եղել. բլուրը միայն հարավային կողմից է դյուրամատչելի: Բնակավայրի երրորդ շերտում (ստորին՝ առաջին շերտը պատկանում է էնեոլիթի դարաշրջանին, իսկ վերին շերտից՝ 1մ խորությունից վերցված ածխի անալիզը տվել է մ.թ.ա. 2020± 80թթ. արդյունքը) բացվել է վերին մասում աղյուսաշար, մոտավորապես 4մ լայնություն ունեցող քարե հիմքով պարիսպ: Վերջինիս տակ, հյուսիսային մասում, պատրաստված է գետն իջնող գետնուղի. այն ունի 1,5մ - բարձրություն և նույնչափ լայնություն: Գետնուղու պատերն ամրացված են քարաշարով, իսկ առաստաղը սալերով է ծածկված: Նման գետնուղիներ ունեն նաև Էլարի, Հառիճի և կիկլոպյան պարիսպներով շրջափակված, վաղ բրոնզեդարյան այլ բնակատեղիներ:

Շենգավիթի վաղ բրոնզեդարյան կացարանները հատակագծում շրջանաձև և ուղղանկյունաձև են, ունեն 6-8մ տրամագիծ: Դրանց կից կառուցված են տնտեսական նշանակություն ունեցող քառանկյուն շինություններ, հորեր: Վերջիններիս մեջ (դրանց չափերը տարբեր են. խորությունը տատանվում է 0,7-1,9մ, տրամագիծը՝ 0,7-1,5մ) հայտնաբերված են խեցանոթների բեկորներ, քարից, ոսկորից պատրաստված գործիքներ, տարբեր տեսակների պատկանող ցորենի և գարու հատիկներ: Ինչպես կացարանների, այնպես էլ տնտեսական կառույցների պատերը

շարված են հում աղյուսներով: Կացարաններում հայտնաբերված են կոնաձև կտուրը (օժանդակ կառույցներինը հարթ է եղել) պահող հենասյան տակ դրված քարե խարիսխներ, տնտեսական և ծիսական նշանակության օջախներ (աղ.VII$_{10}$), տարատեսակ պատվանդան- հենակներ, մարդկանց և կենդանիների կավակերտ արձանիկներ (աղ.VII$_{6-7}$), աղորիքներ, կացնի կաղապար, մետաղե իրեր, մանգաղների ներդիրներ, տարատեսակ խեցանոթների մասեր: Երկրորդ շերտի խեցանոթների գերակշռող մեծամասնությունն ունի ուռուցիկ-ներծկված զարդեր, որոնք երրորդ շերտի նյութերի վրա համալրված են անոթների ուսն ու վզի հիմքը գոտևորող երկրաչափական բնույթի նուրբ փորագիր պատկերներով:

Պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ բնակավայրը վաղ բրոնզի դարաշրջանում, իր ծաղկման փուլում (III հազ.1քառորդ) ընդարձակ է եղել. զբաղեցրել է և պարսպից դուրս գտնվող տարածքները, իսկ հետագայում (III հազ. II քառորդ), երբ քաղաքը անկում է ապրել, պարփակվել է պարսպապատ տարածքում: Այդ շրջանում լքված թաղամասերը փոխարկվում են դամբարանադաշտի: Այդտեղ բացված են ինչպես հիմնահողային, այնպես էլ քարաշար պատերով, հատակագծում ուղղանկյունաձև դամբարաններ: Դրանց մեջ կատարվել են ինչպես սովորական՝ կողքի պառկեցված, կծկված վերջույթներով թաղումներ, այնպես էլ ինքնատիպ՝ դիամասնատման և գլխատման հատուկ ծեսերով կատարվածներ: Դամբարաններում հայտնաբերված են ոչ միայն մանր ու խոշոր եղջերավոր կենդանիների, այլև ձիու ոսկորներ:

Քյուլ-թեփե: Նախիջևանից մոտավորապես 8կմ հեռավորության վրա գտնվող այս բազմաշերտ հուշարձանում (շերտերի ընդհանուր հզորությունը մոտավորապես 21մ է), երկրորդ՝ վաղ բրոնզեդարյան շերտը, որը ստորին՝ էնեոլիթյան շերտից անջատված է 15-40սմ հաստություն ունեցող «մաքուր» հողանստվածքով, ունի 8,5-9մ հզորություն և կազմված է 14 շինարարական հորիզոններից: Վերջիններս իրար են հաջորդում յուրաքանչյուր 35-50սմ խորության վրա: Ստորին երկու հորիզոնների (I-II) կացարանները հատակագծում շրջանաձև են (ներքին տրամագիծը տատանվում է 3–5մ միջև), իսկ երրորդ հորիզոնից սկսած, դրանց կից հանդես են գալիս տնտեսական նշանակության ուղղանկյուն փոքր կառույցներ (աղ.VII$_1$): Վերջիններս 12-րդ հորիզոնում (խոր. 8,5մ., այդտեղից վերցված ածխի անալիզը տվել է մ.թ.ա. 2920± 90թթ. արդյունքը) լրացվում են շրջանաձև կացարանների հետ մուտքով հաղորդակցվող խոշոր շինությունների: Ավելին, շրջանաձև կացարանների ներսում նեղ միջնապատով առանձնացվում են խոհանոցի դեր կատարող փոքր

հատվածներ: Նման բաժիններ ունեն և այլ հուշարձաններում պեղված, հատակագծում ուղղանկյունաձև կացարանները. նմանները Քյուլ-թեփեում երևան են գալիս 14-րդ հորիզոնում:

Տարբեր հորիզոններից հայտնաբերված նյութերը, այդ թվում և կացնի կաղապար, մանգաղ և այլն, բացառությամբ հիմնականում անզարդ խեցեղենի և դեպի վեր լայնացող կողերով հարթահատակ ծիսական օջախների (աղ.VII$_9$), կրկնում են Շենգավթի 2-րդ շերտից գտնվածներին, որոնք դարաշրջանի միջին փուլին են պատկանում: Վերջիններիս նուրբ կավերիզով ստացված ուռուցիկ զարդի պարզ ձևերից մեկը (երկպարույր պատկեր) առկա է Քյուլ - թեփեից գտնված կճուճներից մեկի կիսագնդաձև բռնակի տակ (աղ.VIII$_{37}$): Նման փաստերը, որոնց պետք է ավելացնել և առաջին փուլում հայտնի ուղղանկյունաձև կացարանները, ցույց են տալիս մշակույթի զարգացման ընթացքը, որը դիտվում է և այլ հուշարձաններից հայտնաբերված նյութերի վրա: Դրա օրինակներից մեկը կարող է հանդիսանալ Գեղարոտի բնակավայրը:

Գեղարոտ: Արագածոտնի մարզի համանուն գյուղի արևելյան կողմում բարձրացող բլրի վրա գտնվող այս հուշարձանը բազմաշերտ է: Վաղ բրոնզեդարյան կացարանները տեղադրված են բլրի գագաթին և արևմտյան ու հյուսիսարևմտյան լանջերի ստորոտում: Պեղումների ընթացքում բացվել են նաև դարավանդների հենապատեր: Բլրի գագաթին բացված են ուղղանկյուն կցակառույցներով շրջանաձև շինության մնացորդներ և առանձնացած, հատակագծում ուղղանկյուն, քարաշար պատերով երկմասանի կացարան: Վերջինիս հատակը, ինչպես և վերը ներկայացված հուշարձաններում բացվածներինը, հարթեցված է 2-3սմ հաստություն ունեցող կավացեխով: Կացարաններում գտնված են ծիսական օջախներ, տարատեսակ պատվանդաններ, հենակներ, նիզակ, ոսկրե նետեր, խեցանոթներ, սկավառակաձև կափարիչներ: Համանման անզարդ խեցանոթներ են հայտնաբերված և հուշարձանի տարածքում գտնվող սալարկղից, որի հարավային պատի վրա բացված մուտքը ծածկված է եղել սալաքարով (աղ.VII$_{3,3ա}$): Բնակավայրի հաջորդ շերտից գտնված նյութերը վաղ բրոնզի դարաշրջանի վերջին փուլին են պատկանում: Բնակավայրի ստորին շերտից վերցված ածխի անալիզները տվել են 34–31/30դդ., իսկ վերինը՝ 29–25-րդ դդ. արդյունքները:

Շիրակավան: Ծովի մակերևույթից 1460մ բարձրության վրա գտնվող այս բազմաշերտ հուշարձանը զբաղեցնում է Հին Շիրակավան գյուղի հարևանությամբ ձգվող բարձունքի գագաթային հարթությունը

(ներկայումս այդտեղ Նոր Շիրակավանն է կառուցված), արևմտյան լանջն ու ստորոտը: Վաղ բրոնզեդարյան կացարանները տեղադրված են ստորոտում և լանջի վրա պատրաստված հարթակներում: Աստիճանաձև բարձրացող այդ հարթակները ստացվել են բլրի լանջից անհրաժեշտ չափերի տարածք զբաղեցնող հող հանելով: Հատակագծում ուղղանկյունաձև, անկյուններից մեկ-երկուսում կլորացող տեսք ունեցող վաղ բրոնզեդարյան կացարանների քարաշար պատերից մեկ-երկուսը հենված են մայր հողի մեջ խորացող հողաշերտի կտրվածքին:

Բլրալանջերի հանվածքներում պատրաստված, հատակագծում ուղղանկյունաձև և կլորացող անկյուններ ունեցող կացարանները, վաղ բրոնզի դարաշրջանում եզակի չեն: Ճարտարապետական երկու լուծումների (շրջանաձև և ուղղանկյուն) մեկտեղմամբ պատրաստված նմանատիպ կացարաններ բացված են և Կվացխելեբիում, այն տարբերությամբ, որ առավել վաղ տարիք ունեցող (C շերտի կառույցները թվագրվում են մ.թ.ա. 2810 ± 90թթ.) այդ բնակարանների բոլոր անկյունները կլորացող են, իսկ B շերտում բացվածների անկյուններից միայն երկուսն են կլորացող: Ուղղանկյունաձև կացարաններ են բացված նաև Արծն/Կարազում և այլ հուշարձաններում:

Առանձին ընտանիքների պատկանող, մեկ սենյակից կազմված այդ բնակարանները (դրանց բակերում հորեր են պատրաստված) բարակ միջնապատով բաժանված են երկու անհավասար մասերի: Դրանցից մեծը բնակելին է, իսկ փոքրը տնտեսական նշանակություն է ունեցել: Առանձին կացարաններում, ինչպես և շրջանաձև հատակագիծ ունեցողների դեպքում, պատերի տակ պատրաստված տնտեսական օջախներին զուգահեռ, սենյակի կենտրոնում տեղադրված են ծիսական նշանակության կավակերտ շրջանաձև կրակարաններ: Վերջիններիս մոտ գտնված են ծիսական իրեր (պատվանդաններ, հենակներ աղ.VII$_{5-7,1}$ արձանիկներ), աղորիքներ: Կացարանների ներքին հարդարանքը լրացնում են պատերից մեկ-երկուսի տակ պատրաստված ոչ բարձր (0,5մ), կավացեխով երեսապատված, քարակերտ մահիճ-նստարանները: Բնակարաններից մեկում դրանցից մեկի վրա շարված կարասները փշրվել էին հրդեհից փլված տանիքի ծանրությունից: Ինչպես նախորդ հուշարձաններում, այստեղ ևս սենյակների հատակները հարթեցված են կավաշաղախի շերտով: Հայտնաբերված նյութերը պատկանում են վաղ բրոնզի դարաշրջանի երրորդ փուլին:

Աստիճանաձև բարձրացող բնակարանների միջև առաջացած ազատ տարածությունները ոչ միայն բակեր, այլև անցում-արահետներ են

հանդիսացել: Դրանց զուգահեռ, առանձին հուշարձաններում առկա են հատուկ թողնված նեղ փողոցներ: Այդպիսիք առկա են, օրինակ, Ագարակի բնակավայրում, ուր փողոցի լայնությունը կազմում է 1,9–2,2մ, իսկ Մասիսի ենթաշրջանի Ջրահովիտ հուշարձանում բացված բնակավայրում, փողոցի երկարությունը մոտավորապես100մ է կազմում (աղ.VII$_4$): Տարբեր դարաշրջանների պատկանող մշակութային շերտերից կազմված Ջրահովտի բնակավայրում, որտեղ վաղ բրոնզի դարաշրջանին է պատկանում 15 շինարարական հորիզոն, բացված է նաև տաճարական համալիր, որը գործել է դարաշրջանի բոլոր փուլերում: Այդ սրբարանը կազմված է իրար մեջ ներառնված երեք միանման կառույցներից: Ամբողջության մեջ 7-8մ տրամագիծ ունեցող այդ շրջանաձև շինության կենտրոնում հում աղյուսներից պատրաստված, գլանաձև տեսք ունեցող զանգվածեղ կառույցի (տրամագիծը 3մ) հարթ գագաթին շրջանաձև ծիսական օջախ է տեղադրված (աղ.VII$_8$): Սրբարանում գտնված են արձանիկներ, պաշտամունքային այլ իրեր, ինչպես և կացնի կաղապար, հնոցի մնացորդներ, մետաղագործության հետ կապված այլ նյութեր: Վերջիններիս առկայությունը տաճարում ցույց է տալիս մետաղագործության ծիսական բնույթ ունենալը. այդ երևույթը դիտվում է և հետագա դարաշրջաններում:

Կարևոր է ևս մեկ հանգամանք. պայմանավորված պաշտամունքի բնույթով՝ տաճար-սրբարանները և դրանց զոհասեղանները տարբեր կերպ են ձևավորվել: Այսպես, եթե Ջրահովտի տաճարում ուշադրության կենտրոնում գլանաձև կառույցն ու օջախն են եղել, ապա Էջմիածնի մոտ գտնվող Մոխրաբլուր բնակավայրի սրբարանում հիմնական դերը հատկացված է եղել տուֆով ու բազալտե սալերով երեսապատված, 7,4x5,5մ չափերի պատվանդան-զոհասեղանին ու սյունաձև քարակոթողին:

Այլ տեսք ունի Ախալցխայից ոչ հեռու գտնվող Ամիրանիս-Գորա կոչվող բնակավայրի սրբարանը: Մոտավորապես 3հա տարածք զբաղեցնող բնակավայրից առանձնացված այդ համալիրը, որը քարաշար պատով է շրջափակվել, ունի ժայռի մեջ խորացող միջանցք: Այդտեղ գտնվել են օջախներ, կրկնվող նշաններով (լուսին, թռչուն, զոհարան) զարդարված խեցանոթ, ծիսական այլ իրեր:

Ներկայացված սրբարանների հակիրճ նկարագրությունից իսկ նկատելի է, որ վաղ բրոնզեդարյան հավատալիքները և դրանց հետ կապված ծիսական արարողությունները բարդ են եղել: Դրանց վերաբերյալ զգալի տեղեկություններ են պարունակում նաև դարաշրջանի դամբարանները:

1

2

3

3ա

4

5

6


7

8

9

10


11

12

§ 3. ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ

Վաղ բրոնզեդարյան բնակավայրերի պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ բնակավայրերում կամ կացարանների հատակների տակ թաղումներ հազվադեպ են կատարվել: Առանձին դեպքերում դրանք ծիսական բնույթ են ունեցել: Վաղ բրոնզի դարաշրջանում հայտնի են և քարայրներում կատարված թաղումներ: Օրինակի համար կարելի է հիշատակել Կապանի շրջանի Տանձավեր գյուղի մոտակայքում գտնվող քարայրում կատարված թաղումը: Այդպիսիները, սակայն, եզակի լինելով, որևէ դարաշրջանի համար բնորոշ չեն. քարայրներում կատարված թաղումներ հանդիպում են և հետագա դարաշրջաններում:

Վաղ բրոնզի դարաշրջանում թաղումները կատարվել են հիմնականում բնակավայրից դուրս գտնվող առանձին՝ հատուկ այդ նպատակի համար նախատեսված տարածքներում: Այդ դամբարանադաշտերում առկա են ինչպես հիմնահողային, այնպես էլ քարարկղային դամբարաններ: Անխաթար պահպանված վայրերում այդ դամբարանները գետնի մակերեսին առանձնանում են մանր քարերի փռվածքով (Լճաշեն, Կարճաղբյուր, Ծաղկալանջ և այլն, աղ.VII$_2$): Առանձին դամբարանադաշտերում (օրինակ՝ Էլար) դամբարանների նշված տեսակների շերտագրական դասավորությունը ցույց է տալիս, որ հիմնահողային դամբարանները ավելի վաղ են: Ինչպես հիմնահողային, այնպես էլ քարարկղային դամբարանները հատակագծում տարբեր ձևեր ունեն. առկա են ուղղանկյուն, ձվաձիր, առանձին դեպքերում՝ պայտաձև տեսք ունեցողներ: Վերջիններիս մեկ պատն ուղիղ է, իսկ մյուսները կամար ձևավորելով դրան են միանում: Առավել տարածված են հատակագծում ուղղանկյունաձև քարարկղները: Առանձին հուշարձաններում դրանց պատերից մեի վրա (սովորաբար հարավակողմի. դամբարանների ուղղվածությունը յուսիս-հարավ է, արևելք-արևմուտք թեքևակի շեղումով) մուտք է բացված: Վերջինս արտաքին կողմից ծածկվել է մեկ-երկու սալաքարով (աղ.VII$_{3,3ա}$): Նման դամբարաններ հայտնի են Քեթիում, Գեղարոտում, Հառիճում, Կարճաղբյուրում և այլն: Քեթիում, Ծաղկալանջում և այլ վայրերում բացված այդօրինակ դամբարաններից մի քանիսի մուտքի առջևում միջանցք է պատրաստված: Այդ դամբարաններում հաջորդաբար թաղվել են ընտանիքի անդամները: Նոր հանգուցյալի համար տեղ ազատելու նպատակով, նախորդների ոսկորները հավաքվել և կուտակվել են հյուսիսային՝ մուտքի հակադիր կողմի պատի տակ, իսկ վերջինը մուտքի մոտ է տեղադրվել (բաց համալիր): Խմբակային նման թաղում-

ները չպետք է շփոթել տիրոջն ուղեկցող սպանված ծառաների համաժամանակյա թաղումների հետ, որից հետո դամբարանը այլևս չի բացվել (փակ համալիր):

Դամբարանների նշված տեսակներից բացի վաղ բրոնզի դարաշրջանում հանդիպում են և սալարկղներ: Վերջիններիս պատերը կազմված են հողի կտրվածքին հենած, կողք-կողքի դասավորված խոշոր սալերից. դրանց վրա, ինչպես և նախորդ դեպքերում, սալաքարեր են դրվել: Այդ դամբարանները ևս, պարունակում են ինչպես անհատական, այնպես էլ խմբակային կամ զույգային թաղումներ:

Անկախ դամբարանի տեսակից, թաղման դիրքը հիմնականում աջ կամ ձախ կողքի, կծկած վերջույթներով պառկեցված վիճակն է: Ակնհայտ է, որ թաղվածների դեմքը (խոսքը վերաբերում է անհատական թաղումներին, բայց ոչ անկանոն հավաքված մնացորդներին) հիմնականում արևելք է դարձված. առանձին դեպքերում միայն (օրինակ՝ Էլարում), դեմքը վեր է ուղղված:

Ինչպես էնեոլիթում, այնպես էլ վաղ բրոնզի դարաշրջանում, թաղման ժամանակ օխրա է գործածվել. փոշիացված օխրան ցանվել է հանգուցյալի վրա, բայց դա համատարած բնույթ չի կրում: Թաղվածների հետ դրվել են տարբեր տեսակի իրեր, հիմնականում՝ խեցանոթներ, որոնց մեջ երբեմն կենդանիների (հիմնականում մանր ու խոշոր եղջերավոր) ոսկորներ՝ մսեղեն սննդի մնացորդներ են լինում: Դամբարաններում հայտնաբերվում են նաև զոհաբերված կենդանու առանձին մասերի ոսկորներ: Սակավ չեն այն դեպքերը, երբ խեցանոթները դամբարանախուց են դրվել մասնակի վիճակով՝ նախապես կոտրելուց հետո: Նման դեպքերում խեցանոթների մասերը հայտնաբերվում են դամբարանի տարբեր հատվածներում, երբեմն գտնվում են դրանց առանձին բեկորներ:

§ 4. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

Դարաշրջանի հուշարձաններից հայտնաբերված հսկայական նյութը ներկայացված է տարբեր մետաղներից, համաձուլվածքներից, տարատեսակ քարերից, ոսկրից, փայտից պատրաստված գործիքներով, զենքերով, սպասքի առարկաներով, փոխադրամիջոցների մանրակերտերով, արձանիկներով, խեցեղենի և կենցաղային իրերի այլևայլ տեսակներով: Առկա տեսականին ցույց է տալիս վաղ բրոնզի դարաշրջանում, տնտեսության բոլոր բնագավառներում կատարված հսկայա-

սն առաջընթացը: Զարգացման այդ ընթացքին հետևելուն մեծապես նպաստում են բազմաշերտ բնակատեղիներից հայտնաբերված նյութերը, որոնք ցույց են տալիս ոչ միայն նյութերի այս կամ այն տեսակի զարգացման ուղղությունը, այլև հնարավորություն են ստեղծում հետևել այդ փոփոխությունների ժամանակագրական սահմաններին, կատարել ներքին փուլաբաժանում: Այս տեսակետից առավել կարևոր է խեցեղեն արտադրանքը. զանգվածաբար հայտնաբերվող այդ նյութն ավելի արագ է փոփոխությունների ենթարկվել: Ինչ վերաբերում է մետաղե նյութերին, կաղապարներին, ապա դրանք դեռևս բավարար չեն մետաղե առարկաների փուլաբաժանումը մանրամասն կերպով կատարելու համար, մանավանդ դրանց մի զգալի մասը պատահական գյուտեր են: Այդուհանդերձ, որոշ պատկերացում, տեղական մշակույթի զարգացման, հարևան երկրների հետ եղած կապերի վերաբերյալ, դրանք, այնուամենայնիվ, տալիս են:

Մետաղե նյութեր: Ներկայացված են տարատեսակ գործիքներով, զենքերով, պերճանքի առարկաներով: Դասերի նման բաժանումը նյութերի առանձին տեսակների համար որոշ չափով պայմանական է, որովհետև նույն իրը կարող էր կիրառվել և իբրև զենք, և գործիք: Նման նյութերից են կացինները: Վերջիններս ըստ ձևի երկու խմբի են բաժանվում: Դրանցից առաջինները նման են քարից պատրաստված նմուշներին որոնցից մեկը Քեթիից է գտնված (աղ.VIII$_6$): Ինչպես քարից պատրաստվածները, սրանք ևս ուղղանկյունաձև կամ ճակատային մասում թեթևակի ուռուցիկ տեսքով աշխատաբերան ունեն: Նման կացիններ և այդպիսիք պատրաստելու համար քարից ու կավից պատրաստված կաղապարներ հայտնի են Գյումրիից, Բրդաձորից, Շենգավթից, Գառնիից, մերձերևանյան գանձից, Նախիջևանի Քյուլ-թեփե բնակավայրի II շերտի ստորին հորիզոնից և այլ հուշարձաններից (աղ.VIII$_{7,9}$): Հետագա զարգացման ընթացքում այս կացինների կոթառը թեթևակի ետ թեքվող տեսք է ընդունում, բայց աշխատաբերանի ուղղանկյուն տեսքը մնում է նույնը: Նման կացիններ մ.թ.ա. III հազ. կեսերով թվագրվող նյութերի միջավայրում հայտնի են Էջմիածնից, Կարազից (աղ.VIII$_8$): Դրանցից չեն տարբերվում Արարատյան դաշտից, Ջողազ գյուղի մոտ գտնվող Շահլամա 2-րդ ամրոցից, Վրաստանի, Հարավային Օսեթիայի, Աբխազիայի տարբեր հուշարձաններից, III հազ. 1-ին կեսով և վերջով թվագրվող հուշարձաններից հայտնաբերվածները: Այդուհանդերձ, նյութերի այս տեսակը սակավ է հանդիպում:



Եզակի օրինակներով է ներկայացված նաև կացինների երկրորդ տեսակը: «Կտցավոր կացին» անվամբ հայտնի այս տեսակը, որ նման է ժամանակակից քլունգներին, հարմարեցված է տարբեր աշխատանքներ կատարելու համար: Իրոք, Հայաստանի տարածքից դեռևս սակավ օրինակներով հայտնի այդ կացիններից Գյումրիի թանգարանում պահպանվող նմուշը, որի հայտնաբերման ստույգ հանգամանքները պարզ չեն, կացնից և հողուրագից կազմված գործիքների միասնություն է ներկայացնում: Օրինակներից երկրորդը, որը գտնված է Ալավերդուց, սեպաձև ելուստից և կացնից կազմված իր է (աղ.VIII$_{10}$): Կացինների այս տեսակը, մետաղե այլ նյութերի հետ, հայտնի է և մերձերևանյան գանձից: Կարևոր է այն հանգամանքը, որ նման կացիններ հայտնաբերված են և Ալավերդու մետաղագործական օջախին մոտ գտնվող այլ վայրերից (Դմանիսիի շրջանի Փինեզաուրի գյուղ, Կախեթում՝ Թիանետիի շրջան), որոնք ցույց են տալիս Հայկական լեռնաշխարհի մետաղագործական կենտրոնների շարքում իր տեղն ու դերը ունեցող Ալավերդու օջախի նշանակությունը: Վերջինս, ինչպես և Կապանի ու Գետաբեկի պղնձահանքերը, ինչպես ցույց են տալիս մետաղագրական անալիզների արդյունքները, մեծ նշանակություն է ունեցել Արևելյան Եվրոպայի հարավային շրջանների մետաղագործության զարգացման համար (հետազոտությունները կատարված են Ե.Ն. Չերնիխի կողմից): Այս տեսակետից ուշադրություն է գրավում և Դնեպրի ափից (Վերեմյե գյուղ) գտնված կտցավոր կացինը. մ.թ.ա. IV հազ. վերջով (3150±50թթ.) թվագրվող այդ նմուշը ներմուծված լինելով Անդրկովկասից, նման է Ալավերդուց հայտնաբերվածին:

Հայաստանի և հարևան երկրների հետ ունեցած կապերը վեր հանելու տեսակետից կարևոր նշանակություն ունեն և նիզակները, որոնց սակավաթիվ նմուշներն առանձին տարբերակներ են ներկայացնում: Առաջին տարբերակին պատկանողները կենտրոնական մասում թեթևակի ուռուցիկ տեսք ունեցող, փետրաձև մարտական սայրով զենքեր են, որոնց մի մասի ցողունաձև կոթը, ինչպիսին է օրինակ Գավառից հայտնաբերվածը, գնդաձև ելուստ ունի (աղ.VIII$_2$): Այլ նմուշների վրա այդ գնդիկը փոխարինված է շուրջանակի լայնացող ելուստով: Նման նիզակներ վաղ բրոնզի դարաշրջանի առաջին փուլին պատկանող հուշարձաններից հայտնի են Գեղարոտից (աղ.VIII$_1$), Մալաթիայի մոտ գտնվող Արսլան-թեփե կոչվող հուշարձանի VIA շերտից, Ցարցիս-Գորայից և այլ հնավայրերից: Ցողունաձև կոթի վրա նման ելուստ ունեն և Խաչբուլաղից, Քյոլ թեփեից, Կվացխելերիից, Ցարցիս-Գորայից և այլ հուշար-

ձաններից հայտնաբերվածները: Վերջիններիս մարտական սայրը, սակայն, բազմանիստ սվինի կամ ձգված սեպի տեսք ունի: Նկարագրված տարբերակների զուգահեռները լայն տարածված զենքերից են: Այդպիսիք հայտնի են Ուրից, Կարքեմիշից, Շոշից և բազմաթիվ այլ վայրերից: Դրանք վկայում են ոչ միայն հարավ-հյուսիս սերտ կապերի առկայությունը, այլև ցողունաձև կոթունով նիզակների՝ վաղ բրոնզի դարաշրջանին բնորոշ զինատեսակ լինելը:

Վաղ բրոնզի դարաշրջանում հաճախ հանդիպող զինատեսակներից են և տերևաձև, ձգված շեղբ ու դաստակի ամրացման համար կարճ լեզվակ ունեցող պարզունակ դաշույնները: Դրանց բազմաթիվ օրինակներից են Էլարից (աղ.VIII$_{4,5}$), Գյումրիից, վաղ բրոնզի դարաշրջանի առաջին փուլի այլ հուշարձաններից հայտնաբերվածները: Նման դաշույններ, գրեթե անփոփոխ ձևով, հանդիպում են և հետագա դարաշրջաններում: Այս պարզունակ դաշույնների շարքում առանձնանում են Հարավային Օսեթիայից (Կորետի, Ցարցիս-Գորա) հայտնաբերվածները. դրանց բրոնզաձույլ, զարդարուն դաստակները մոմե մոդելով են պատրաստված: Այս փաստերը ցույց են տալիս մետաղագործության արագ զարգացումը:

Վաղ բրոնզեդարյան մետաղե նյութերի շարքում փոքր խումբ են կազմում բրոնզաձույլ, դեպի վեր աստիճանաբար նեղացող տեսք ունեցող հարթ տապարիկները: Մերձերևանյան գանձից (աղ.VIII$_{11}$), Արծն/Կարազից, Թռեղքից, Դիդոմիից և այլ հուշարձաններից հայտնաբերված այդ գործիքները հարմարեցված են տարբեր աշխատանքներ կատարելու համար. անհրաժեշտության դեպքում դրանք կարող էին ուրազի, դուրի, կացնի և այլ գործիքների դեր կատարել: Պատահական չէ, որ նման աշխատանքներ կատարելու համար նախատեսված քարե գործիքներն ավելի քան հազվադեպ են հանդիպում. դրանք դուրս էին մղվում բրոնզաձույլ գործիքների կողմից: Վերջիններս աստիճանաբար փոխարինում էին և տնտեսության այլ բնագավառներում օգտագործվող քարից պատրաստվածներին: Գործիքների այդ խմբին են պատկանում մանգաղները: Դրանք ներկայացված են ինչպես լայնաշեղբ (Գառնի, Քյուլթեփե, Ամիրանիս-Գորա), այնպես էլ նեղ, բավականին կորացած տեսք ունեցող նմուշներով (Կարազ, Բլուր, Խիզանաանտ-Գորա): Կարևոր է այն հանգամանքը, որ Գառնիի (աղ.VIII$_{15}$), Նախիջևանի օրինակները և ընդհանրապես Հայաստանի ու հարակից տարածքների մետաղե նյութերը պատրաստված են մկնդեղային բրոնզից. այդ համաձուլվածքից պատրաստված նման իրեր հայտնաբերված են և Մայկոպի վաղ բրոնզեդարյան մշակույթում, որը ցույց է տալիս Հայաստանի նշանակությունը Հյուսիսային Կովկաս և ավելի հեռուներն ընկած տարածքները մետաղագործական գիտելիքներ փոխանցելու գործում (Ե.Ն. Չերնիխի հետազոտությունների արդյունքները):

Մետաղե իրերի վերջին խումբն են ներկայացնում պերճանքի առարկաները: Դրանց շարքում են Էլարի դամբարաններից մեկում (№ 11) գտնված պարուրագալար ապարանջանները (աղ.VIII$_{16}$), երկպարույր օղերը, շքասեղ-քորոցները (աղ.VIII$_{28,29}$), սակրաձև, կաթիլաձև, խողովակաձև և այլ տեսք ունեցող ուլունքներն ու կախիկները (աղ.VIII$_{26,27}$): Նշված նյութերի շարքում առանձնակի տեղ է գրավում Շենգավթի դամբարաններից մեկում (№.1) հայտնաբերված, ոսկու նուրբ թիթեղից պատրաստված, սկավառակաձև կախիկը, որը կախելու համար գլանաձև ծալված պոչիկ ունի: Իրի մակերեսը զարդարված է սեղմամբ ստացված շրջագծերով, եռանկյունիներով ու դրանց մեջ փորագրությամբ արված գծիկներով:

Քարից և ոսկորից պատրաստված իրեր: Այս նյութերից պատրաստված իրերի տեսականին են կազմում այնպիսիները, որոնց համար քարը և ոսկորը անհրաժեշտ հումք էին հանդիսանում, ինչպես և գործիքներ ու զենքեր, որոնց մետաղից պատրաստելը խիստ անհրաժեշտ չլինելով, տվյալ ժամանակաշրջանում, դեռևս ձեռնտու չէր լայն սպառողների համար: Այլ կերպ ասած՝ քարին կամ ոսկորին նախապատվություն տալը պայմանավորված է եղել մետաղի թանկությամբ ու տվյալ տեսակի գործիքի և զենքի կիրառության բնագավառով: Օրինակ, կարելի է մատնանշել ոսկորից (աղ.VIII$_{20}$) և վանակատից պատրաստված նետասլաքները (աղ.VIII$_{21-23}$), որոնք հաճախ են հանդիպում վաղ բրոնզեդարյան հուշարձաններում: Նետն արձակվելուց հետո կարող էր կորչել և բրոնզյա նմուշների օգտագործումը մետաղի թանկության պատճառով, ձեռնտու չէր: Հակառակ նետասլաքների, քարից պատրաստված տեգի կամ նիզակի խոցող ծայրակալները հազվադեպ հանդիպող նյութերից են: Նմանները հայտնի են Գեղարոտից (աղ.VIII$_{19}$), Քեթիից և այլ հուշարձաններից, բայց դրանց սակավությունը ցույց է տալիս, որ վերջիններս դուրս էին մղվում բրոնզյա օրինակների կողմից:

Մետաղի թանկությունը, ինչպես և աշխատանքի արտադրողականության ոչ մեծ տարբերությունն էր այն հիմնական պատճառը, որ բնակչության գերակշռող մեծամասնությունը շարունակում էր օգտագործել վանակատե և կայծքարե ներդիրներով պահանգավոր մանգաղ-

ները (աղ.VIII$_{17,18}$), շեղբերը (աղ.VIII$_{30,31}$). դրանց արտադրողականությունը, ինչպես ցույց են տալիս կատարված փորձերի արդյունքները, ոչնչով չէր զիջում մետաղե գործիքներին: Նույնը կարելի է ասել և քերիչների համար, որոնք շատ հարմար էին մաշկափառը, կաշվին կպած ճարպակտորները հեռացնելու համար: Կաշեգործության և ջուլհակության բնագավառում լայնորեն օգտագործվել են և ոսկրից պատրաստված գործիքները: Դրա լավագույն ապացույցը տարատեսակ հերուններն են, իլիկների գլուխները, ասեղները:

Վանակատին և կայծքարին զուգահեռ, տարբեր գործիքներ պատրաստելու համար, մարդը լայնորեն է օգտագործել նաև բազալտն ու գլաքարը: Դրանք անփոխարինելի հումք են հանդիսացել սանդեր ու վարսանդներ (աղ.VIII$_{25}$), աղորիքներ (աղ.VIII$_{24}$) պատրաստելու համար, ինչպես և իբրև կոկիչ ու տրորիչ օգտագործելու: Փոքր կացիններին (աղ.VIII$_{6}$) և գնդաձև ու տանձաձև գուրզերին զուգահեռ (աղ.VIII$_{13,14}$), մարդը քարից (բազալտ) պատրաստել է և ծանր կացին-մուրճեր (աղ.VIII$_{12}$), որոնք նախատեսվել են ամուր ապարները մանրատելու համար:

Խեցեղեն արտադրանք: Ներկայացված է բավականին հարուստ տեսականիով: Դրանք ոչ միայն կճուճներ, քրեղաններ, սափորներ, գավաթներ, գլանաձև անոթներ և փոքր չափերի այլ տեսակներ են, այլև մթերքի, հացահատիկի ամբարման ու պահպանման համար նախատեսված խոշոր կարասներ, ծիսական նշանակության խեցանոթներ: Ծիսական իրերից են նաև պայտաձև ու եղջյուրավոր պատվանդանները, գլանաձև ու եռոտանի հենակները, փոքրիկ կավակերտ կուռքերն ու կենդանիների արձանիկները (աղ.VII$_{6-8}$):

Խեցանոթներն ըստ պատրաստման եղանակի բաժանվում են երկու խմբի: Դրանցից մեկն ակնհայտորեն անվարժ ձեռքի աշխատանքի արտադրանք է: Դրանք կոպիտ, վատ թրծումով, անորակ ամաններ են, որոնց կավախմորում սովորական են մանրախիճն ու մանր կոտրատված խեցանոթների բեկորները: Դիտվում են կտորե հիմքի վրա պատրաստված լինելու հետքեր և այլն:

Խեցանոթների երկրորդ խումբն առանձնանում է մասերի համաչափությամբ, լավ թրծմամբ, կավախմորի հավասար հունցմամբ: Դրանց դարչնագույնի տարբեր երանգավորումներ կամ սև ու կարմիր գույն ունեցող մակերեսը փայլեցված է. առկա են և այլ հատկանիշներ, որոնք ցույց են տալիս այդ խեցանոթների մասնագետ արհեստավորի կողմից պատրաստված լինելը:

Ակնհայտ է և այն, որ դարաշրջանի խեցանոթների տեսականին, չնայած հիմնական ձևերի պահպանմանը, զարգացման ընթացքում որոշակի առանձնահատկություններ է դրսևորում, որոնք ժամանակագրական տարբեր փուլերի են բնորոշ: Այդ են ցույց տալիս և բնակավայրերի շերտագրական տվյալները:

Վաղ խմբի խեցանոթները բաց ու մուգ շագանակագույն, երբեմն սև ու դեղնակարմրավուն մակերես ունեն: Անկախ երանգից, դրանք լոսած ու փայլեցված են: Բնորոշ տեսակներից են գլանաձև բարձր վիզ, ձվաձև կամ սահուն կլորացող, ինչպես և անցումներ ձևավորող իրանով կճուճներն ու գավաթները: Այդ խեցանոթներն ավարտվում են համեմատաբար փոքր չափերի հարթ կամ թեթևակի գոգավորվող հատակով: Անոթների շուրթերն ունեն սրվող կամ կտրվածքում ռելսաձև տեսք: Սովորական են նաև զանգվածեղ, կիսագնդաձև տեսք ունեցող, միջանցիկ անցքով բռնակները. դրանք անոթների ուսին են ամրացված: Առկա են նաև կլորացող լայն կանթեր (աղ.VIII$_{34,36}$): Վզի և շրթի ձևով այս անոթներին են կրկնում կարասները. դրանք առանձնանում են իրանի ձգված, ձվաձիր տեսքով (աղ.VIII$_{33,34}$):

Բնորոշ նյութերի մյուս խումբն են կազմում դուրս թեքվող, սրվող, կլորացող կամ երկթեք տեսք ունեցող շուրթով, կլորացող իրանով քրեղանները (աղ.VIII$_{38,43}$), դեպի դուրս լայնացող կողերով թասերը (աղ.VIII$_{42}$), գլանաձև իրանով անոթները (աղ.VIII$_{39-41}$), որոնց նախաձևերը էնեոլիթից են հայտնի: Առկա են և բաժակաձև անոթներ (աղ.VIII$_{46}$): Եզակի գտածոներից են հանդիսանում եռոտանի ամանները: Հակառակ դրանց, կիսագնդաձև բռնակով սկավառակաձև կափարիչները սովորական նյութերից են: Կճուճ-գավաթների ու քրեղանների մակերեսները սովորաբար զարդարված են փոքրիկ շրջանաձև փոսիկով ու դրա երկու կողմերից թեք տարված, սեղմմամբ ստացված կարճ ակոսիկներով: Սրանց զուգահեռ, սակայն, տեսնում ենք և, սովորաբար թրծումից հետո փորագրմամբ ստացված երկրաչափական քնույթի զարդեր (աղ.VIII$_{35}$), ինչպես և նուրբ կավաժապավենով ստացված պատկերներ (աղ.VIII$_{37}$). վերջիններս առավել հարստացած մանրամասներով, բնորոշ են դառնում երկրորդ փուլի խեցանոթների համար:

Դարաշրջանի երկրորդ փուլի խեցեղենը կրկնում է վերը նկարագրված տեսակներին, բայց առանձնանում է մի շարք բնորոշ հատկանիշներով: Առաջին հերթին ընդգծվում է իրանի՝ շեշտված անցումներ ունեցող եռամաս կառուցվածքը, իսկ փոսիկազարդը, երկու կողմից տարված լայն ակոսներով, իր տեղը սկսում է զիջել ուռուցիկ-ներծկված բուսական

ու կենդանական ոճավորված զարդերին: Հանդիպում են նաև թռչնաձև պատկերներ և այլն: Նշված զարդատեսակները ստացված են նաև նուրբ կավերիզը խեցանոթի մակերեսին կպցնելու եղանակով. վերջիններս դյուրությամբ են անջատվում հարթ մակերեսից (աղ.VIII$_{44,45}$): Այս զարդերը Կուր գետից հյուսիս ընկած տարածքների արտադրանքին բնորոշ չեն. այնտեղ գերակշռողը նախորդ փուլից եկող ակնոցաձև երկպարույր զարդերն են, որոնք հանդես են գալիս և Հյուսիսային Կովկասի խեցանոթների վրա: Ինչ վերաբերում է Հայաստանի նմուշներին, ապա դրանց վրա նշված զարդերը գոտևորում են ոչ թե ողջ ամանի մակերեսը, այլ տսկ դրա մեկ՝ դիտվող կողմը: Այս փուլի սև փայլեցրած մակերեսով խեցեղենն ունի կարմիր աստառ, որի հետևանքով ամանի կոտրվածքում երկու՝ սև ու կարմիր երանգներ են դիտվում: Որոշակի փոփոխություն է նկատվում և զանգվածեղ բռնակի ձևում. նախկինին բնորոշ կիսագնդաձև բռնակը, այս դեպքում, սովորաբար շրթից սկսվելով, շրթի ուղղությամբ եռանկյունաձև հարթակ է ձևավորում, իսկ բռնակը երկթեք տեսք է ընդունում, որի հետևանքով այն կտրվածքում եռանկյունաձև է:

Դարաշրջանի վերջին՝ երրորդ փուլի խեցանոթներին նույնպես բնորոշ է մակերեսի սև կամ կարմիր փայլեցրած գույնը: Սովորական են նաև եռամաս և ուռուցիկ-ներծկված զարդ ունեցողները: Այդ զարդերը, սակայն, զգալիորեն պարզեցված տեսք են ընդունում, երբեմն կատարվում են և փորագրման եղանակով, որի նմուշներից մեկը հայտնի է Քեթիից գտնված նյութերի շարքում (աղ.VIII$_{49}$): Այս շրջանին, սակայն, առավել բնորոշը վզի հիմքը կամ ուսը գոտևորող, փորագրմամբ ստացված երկրաչափական պատկերներով լցված լայն ժապավեններն են (աղ. VIII$_{47,48}$): Եզակի նմուշների վրա հանդես է գալիս փայլեցմամբ ստացված զարդը (Հառիճ, Շիրակավան և այլն), իսկ առանձին խեցանոթների իրաններ ծալքավոր մակերես ունեն (Շենգավիթ III–IV շերտեր): Վերջիններս բնորոշ հատկանիշներ չեն և դիպվածային բնույթ են կրում. այդ զարդերը հետագայում են լայն տարածում ստանում: Վաղ բրոնզի երրորդ փուլին ավելի հատկանշական են աղեղնաձև կանթերը, խոշոր, ձվածիր տեսքով փոսիկները: Նկատելի է նաև, որ եռամաս իրան ունեցող անոթները իրենց տեղը աստիճանաբար զիջում են սահուն անցում ունեցողներին. դրանց վրա հաճախ են հանդիպում և կոնաձև, փոքրիկ ելուստներ: Նշված հատկանիշներով խեցանոթները սովորական են վաղ բրոնզեդարյան բնակավայրերի վերին շերտերում, ավելի ճիշտ՝ XXV/XXIV-XXIIդդ. թվագրվող հուշարձաններում:

§ 5. ՄԵՋՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆ

Պայմանականորեն «դամբարանաթմբային կամ կուրգանային» մշակույթ անվամբ հայտնի այս շրջափուլը, ինչպես նշվեց վերևում, ընդգրկում է XXIV-XXII/XXIդդ. ընկած ժամանակահատվածը, որը միաժամանակ միջին բրոնզի դարաշրջանի նախնական շրջանն է հանդիսանում: Ինչպես ցույց է տալիս առանձնացված ժամանակաշրջանի անվանումը, շրջափուլի դամբարանների բնորոշ գիծը դամբարանաթմբերի առկայությունն է դամբարանախցերի վրա, որոնք, ինչպես և նախորդ շրջանին պատկանողները, սալածածկ են: Դրանց զուգահեռ հանդիպում են նաև գերանածածկ դամբարանախցեր, որոնց չափերը բավական խոշոր են: Դրանց լավագույն նմուշներից են Բեդենի գյուղի մերձակա դամբարանադաշտում պեղվածները, որոնցից մի քանիսի պատերը հենասյուներով են ամրացվել: Վերջիններիս վրա գերանածածկն է ամրացված: Դրա վրա տարբեր չափերի քարերից կազմված զրահն է փռված, որն իր հերթին ծածկված է հողի լիցքով: Նկատելի է, որ այս փուլում գերակշռողը հիմնահողային դամբարանախցերն են եղել: Առանձին դեպքերում դիտվում են և անմիջապես հողի մակերեսին կատարված թաղումներ, որոնք երբեմն ամփոփված են սալերից կազմված շինություններում (Բերքաբեր, Ստեփանակերտ և այլն): Բոլոր դեպքերում ակնհայտ է սոցիալական խոր շերտավորման փաստը: Հարուստ, արքայավայել կերպով կատարված թաղումներ պարունակող դամբարանախցերում հայտնաբերվում են սայլեր, դիապատգարակներ, բրոնզից պատրաստված տարատեսակ զենքեր ու զարդիքներ, ոսկե և արծաթե նուրբ զարդեր (աղ.IX$_{8}$), բազմաթիվ խեցանոթներ: Նման դամբարանները եզակի են. հիմնականը շարքային համայնականներին պատկանող, հիմնականում մի քանի խեցանոթներ պարունակող դամբարաններն են, որոնք ծածկված են ցածր դամբարանաթմբերով:

Անցումային փուլին պատկանող նման դամբարաններ պեղված են Մայիսյանում, Բերքաբերում, Խաչենագետում, Ստեփանակերտում, Բեդենիում, Թռեղքում (հնագույն խումբ) և այլ վայրերում: Այդ ժամանակաշրջանի հուշարձաններից հայտնաբերված նյութերը բնորոշվում են մի կողմից վաղ բրոնզեդարյան որոշ հատկանիշների պահպանմամբ, որոնք, սակայն, զուգակցվում են նոր, մինչ այդ անհայտ գծերի երևան գալով, որոնք բնորոշ են դառնում ու լայն տարածում ստանում միջին բրոնզի դարաշրջանում: Իրոք, վաղ և ուշ շրջաններ ունեցող անցումային փուլին պատկանող հուշարձաններից (վերը թվարկվածներից բացի կարելի է հիշատակել և Վերին Նավերի առանձին դամբարաններ, Այգևանի և Ջրահովտի բնակավայրի խառը շերտերը և այլն) հայտնաբերված են վերը

նկարագրվածներից չտարբերվող հարթ տապարիկներ, տերևաձև հարթ շեղբով և պոչուկով դաշույններ, ոսկրե և վանակատե նետասալաքներ, իլիկների գլուխներ (աղ.IX$_{4-7}$), լայնաշեղբ դանակ, բայց միաժամանակ և խողովակակոթառ կացին (աղ.IX$_{1-3}$): Վերջինս նախորդներից տարբերվում է ոչ միայն խողովակի տեսք ունեցող երկար կոթառով, այլև դեպի կոթառը նեղացող, ավելի ձգված ու թեթևակի կորացող աշխատաբերանի ձևով: Նման կացիններ հայտնի են Լոռուտից, Գյումրիից, Մարտունուց: Նմանները հայտնաբերված են նաև Վրաստանից, Հարավային Օսեթիայի, Աբխազիայի տարբեր հուշարձաններից (Սաչխերի, Էշերի, Գուֆտա, Ճիատուրի և այլն), Հյուսիսային Կովկասից (Ֆասկաու, Կումբուլտա): Դրանց աշխատաբերանը, սակայն, ինչպես և Արևմտյան Վրաստանից ու Օսեթիայից գտնվածները, ավելի նեղ, ձգված ու մանգաղաձև կորացող տեսք ունի. Հայաստանի նմուշներին այդ ձևն անծանոթ է: Այդ և այլ առանձնահատկություններ ցույց են տալիս տեղական խոշոր օջախների ձևավորումը և առանձին մշակույթների առանձնանալը:

Այս նյութերի շարքում երևան են գալիս և մրճիկաձև գլխիկ ունեցող շքասեղներ, ինչպես և յուրաձև ոլորանախշ (մեանդր) ու պարուրաձև զարդեր ունեցող երկպարույր և կամ սկավառակաձև ու անվակաձև գլխազարդ ունեցողներ, որոնք անծանոթ էին վաղ բրոնզի դարաշրջանում: Էական է և այն հանգամանքը, որ այդ նյութերի զգալի մասը պատրաստված է անագաբրոնզից. այդ համաձուլվածքը նույնպես խորթ էր նախորդ դարաշրջանին:

Որոշակի փոփոխություններ են դիտվում և խեցանոթների ձևերում: Ժամանակի համալիրներից հայտնաբերված նյութերը վաղ բրոնզեդարյան ավանդույթները պահպանող խեցեղենի հետ (փորագիր գծազարդեր և երկրաչափական պատկերներ, շրջանաձև փոսիկներ, հազվադեպ՝ գոգավոր հատակներ, կտորե հիմքի վրա պատրաստվածներ, սև փայլեցրած մակերես, գլանաձև անոթներ, լայնացող կողերով թասեր, երկու եզրերից ճկվածքներ ունեցող, այսպես կոչված, «հնդկական ընկույզի» տեսքով ամաններ և այլն, (աղ. IX$_{10,13,18,23,28}$) հանդես են գալիս նոր հատկանիշներ: Այդ նոր գծերից են կետազարդով ստացված անկյունաձև ու գծերով լցված լայն բեկյալները, սափորների դեպի վեր նեղացող ու թեթևակի գոգավորվող վզի ձևը, ուռուցիկ գոտեզարդը (աղ.IX$_{9,12,16,25}$): Հաճախ են հանդիպում ինչպես տանձաձև և երկկոնիկ իրանով, լայն հարթ հատակով, պտկիկաձև ելուստներով զարդարված կճուճներ (աղ.IX$_{17,19,21,26}$): Վաղ բրոնզեդարյան խեցեգործությանը բնորոշ հատկանիշներն ու ձևերը անցումային շրջանում պարզեցված տեսք են ընդունում, անփույթ են կատարվում և ակնհայտորեն վերապրուկային են հանդիսանում:



ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Հայաստանում և ընդհանրապես Անդրկովկասում ու հարակից տարածքներում կատարված պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ միջին բրոնզի դարաշրջանում, որն ընդգրկում է մ.թ.ա. III հազ. վերջ – II հազ. կեսերն ընկած ժամանակաշրջանը, տեղ են գտնում մի շարք արմատական փոփոխություններ: Դրանք պայմանավորված էին ոչ միայն հասարակության ներքին զարգացմամբ, այլև՝ ժամանակաշրջանի բուռն իրադարձություններով, որոնք խոր հետք թողեցին կյանքի բոլոր կողմերի վրա: Իրոք, մ.թ.ա. III հազ. վերջին քառորդում տեղ գտած ամորեացիների, ինչպես և խուրրիների ակտիվ տեղաշարժերը, Մարիի և Աշշուրի բարձրացումը, II հազ. I կեսում Միտաննիի և Խեթական պետությունների կազմավորումն ու հզորացումը, նրանց պայքարը տարածաշրջանում գերիշխանություն ձեռք բերելու համար, որի մեջ էին ներքաշվում և այդ պետությունների միջև ընկած տարածքների բնակիչները, չէին կարող չանդրադառնալ Հայկական լեռնաշխարհի, բայց առաջին հերթին թարձրավանդակի արևմտյան և հարավային շրջանների բնիկների վրա: Վերջիններս, շարունակելով զարգանալ իրենց ներքին օրինաչափություններով, բայց միաժամանակ և անմիջականորեն շփվելով այդ պետությունների հետ, նրանց հասարակական կյանքի առանձին կողմերի ընդօրինակման քայլեր էին կատարում: Այդ երևույթներն իրենց արտացոլումը գտան նաև Անդրկովկասում, ինչը փաստվում է տարատեսակ հուշարձաններով, հնագիտական հարուստ նյութերով: Մասնավորապես երևան են գալիս ոչ միայն տարբեր մշակույթների պատկանող նյութեր, այլև արքայավայել կերպով կատարված, առաջնորդների ու ցեղային ավագանու ներկայացուցիչներին պատկանող թաղումներ, որոնք փաստում են սոցիալական խոր շերտավորումը, հասարակական կյանքում տեղ գտած արմատական փոփոխությունները: Սոցիալական այդ խոր շերտավորումը ընդգծելու են գալիս շարքային համայնականներին պատկանող անշուք, աղքատիկ նյութեր պարունակող դամբարանները որոնք սփված են ողջ տարածաշրջանում:

§ 1. ԲՆԱԿԱՏԵՂԻՆԵՐ

Միջին բրոնզեդարյան բնակավայրերը ներկայումս դեռևս բավարար չափով հետազոտված չեն, ինչը զգալիորեն խոչընդոտում է վերջիններիս զարգացման ընթացքը, կրած փոփոխությունները ամբողջությամբ վեր հանելուն: Առկա տվյալները սոսկ ընդհանուր պատկերացում են տալիս դրանց վերաբերյալ:

Միջին բրոնզեդարյան բնակատեղիները կառուցված են մի դեպքում դժվարամատչելի, տեղանքի վրա իշխող բարձրադիր վայրերում, մյուսում՝ գետափերին, մեկ կողմից պարսպապատված հրվանդանների վրա, իսկ երրորդները զբաղեցնում են հարթավայրերում գտնվող ցածր բլուրները. դրանց վրա տեղադրված բնակավայրերը բոլոր կողմերից շրջափակված են պարիսպներով: Դրանցից մեկն է Երևանի կայարանամերձ տարածքում, մինչև 30-ական թվականները այս կամ այն չափով պահպանված Մուխաննաթ-թափա բնակատեղին: Այն զբաղեցրել է 3,5 հա. տարածություն: Բլրի հարթ գագաթը (5600մ^2) շրջափակված է եղել կիկլոպյան շարվածք ունեցող պարիսպներով: Այդ եռաշերտ բնակավայրում կատարված հետախուզական պեղումների ընթացքում, ստորին շերտից հայտնաբերվել են ինչպես վաղ բրոնզի դարաշրջանի վերջին պատկանող սև փայլեցրած, այնպես էլ միջին բրոնզի գունազարդ խեցանոթների բեկորներ, աղորիքներ, սանդեր և այլ նյութեր:

Համանման արդյունքներ են տվել և Քյուլ-թեփե բնակավայրի վերին՝ միջինում 2մ հզորություն ունեցող, միջին բրոնզեդարյան շերտի պեղումները: Դրանք ցույց են տալիս, որ բնակարանները կառուցվել են բլրի գագաթը գետաքարերով սալապատելուց և ամրացնելուց հետո: Այդ զրահաշերտի հզորությունը 0,5–0,6մ է: Շերտում բացված կացարանների հատակը սալապատված է տարբեր չափեր ունեցող սալերով (միջինում՝ 0,5/0,6×1/1,4մ), որոնք ամրացվել են սպիտակ նյութով (գաջ): Կացարաններից մնացած քարե հիմքամասերի վրա պահպանվել են 0,6–1մ լայնություն ունեցող մուտք-բացվածքներ: Առանձին դեպքերում մի քանի քառանկյունի սենյակներ միանալով, ամբողջական համալիր են կազմել: Այս հուշարձանը ևս շրջափակված է եղել պարսպապատով:

Առանձին կարևորություն է ներկայացնում Աղդամի մոտ գտնվող Ուզերլիկ-թեփե կոչվող բնակատեղին: Աղյուսաշար, 2մ լայնություն ունեցող պարսպապատով շրջափակված այս բնակավայրում մշակութային շերտի հզորությունը կազմում է 3մ, որը գոյացել է միջին բրոնզի դարաշր-

ջանի տարբեր փուլերի նստվածքներից: Այդ են վկայում բնակավայրի երեք շերտերից հայտնաբերված նյութերը (աղ.X), որոնք անընդմեջ հաջորդելով իրար, ցույց են տալիս միջին բրոնզեդարյան մշակույթի զարգացման փուլային հաջորդական պատկերը: Մասնավորապես ուշադրություն է գրավում խեցեղենի զարդերի ստացման եղանակը. ստորին շերտում այն ստացված է փորագրման, կտրելու միջոցով, իսկ վերին երկու շերտերում դրանք ստացվել են, այսպես կոչված, «քայլող դրոշմիչով»: Այդ բնակավայրում հայտնաբերվել են 70 հոր. դրանց մի մասում աղբ է հավաքված, մյուսները տնտեսական նշանակություն են ունեցել: Վերջիններիս մեջ հացահատիկ է պահպանվել: Հայտնաբերված հարդի և հացահատիկի մնացորդները ցույց են տալիս, որ ցանքը կատարվել է ինչպես խառը, այնպես էլ մաքուր վիճակում: Գտնված են նաև ցուլի, ձիու, այծի, խոզի և շան ոսկորներ:

Կացարանների ծածկը եղել է գերանակապ, իսկ հատակներին պահպանվել են եղեգից հյուսված խսիրների դրոշմներ: Խսիրներով են ծածկվել և առանձին դամբարանների հատակները, փռվել հանգուցյալների տակ և այլն: Ուզերլիկի կացարաններից գտնված են մեծ քանակությամբ ամաններ, գլաքարերից պատրաստված սանդկոթեր, տրորիչներ, վանակատե շեղբեր, մանգաղների ներդիրներ, ոսկրե հերուններ, նետասլաքներ: Բնակավայրի տարածքում գտնված են նաև հալոց, խարամ, ինչը և ցույց է տալիս մետաղագործական արհեստանոցի առկայությունը: Առանձնանում է ձեռքի տեսք ունեցող ոսկրե գործիքը, որն օգտագործվել է ջուլհակության բնագավառում: Գտնված են նաև աղորիքներ, գուրզ, դաշույն, ասեղ և այլն:

Ներկայացնելով միջին բրոնզեդարյան բնակատեղիների պեղումների արդյունքները, կարելի է փստահորեն ասել, որ ուրվագծված պատկերը ամբողջական համարվել չի կարող: Միջին բրոնզեդարյան բնակատեղիների շարքում եղել են և շատ մեծերը, որի լավագույն օրինակներից մեկն է Ստեփանավանի մոտ գտնվող Լոռի-Բերդ գյուղի բնակատեղին: Շուրջ 200հա տարածք զբաղեցնող այդ բնակավայրից, որը տեղ-տեղ 500մ լայնությամբ պահպանված գոտու շերտով ձգվում է գետի երկայնքով, ներկայումս մնացել են կիկլոպյան շարվածքով և հզոր որմնահեցեր ունեցող պարսպի առանձին հատվածներ, խոշոր կացարանների ավերակներ: Պեղված կացարաններում մշակութային շերտը հզոր չէ. այն տատանվում է 15-60սմ միջև, իսկ հայտնաբերված նյութերը համապատասխանում են Ուզերլիկի II-III շերտերից գտնվածներին:

Աղյուսակ X



Ամենայն հավանականությամբ բնակավայրի ավելի վաղ կացարանները պետք է մոտակայքում լինեն, քանի որ Լոռի-Բերդում պեղված են միջին բրոնզի ավելի վաղ փուլին պատկանող դամբարաններ: Դրանց մի մասը սփռված է այս ուշ շրջանի բնակավայրի տարածքում: Պեղված կացարանները, որոնք հատակագծում ուղղանկյունաձև են և բավական ընդարձակ (պատերի լայնությունը տատանվում է 1,7–2,7մ միջև), միջնապատով բաժանված են առանձին հատվածների, իսկ խճաքարով հարթեցված հատակները տոփանված են: Սենյակներում բացված են քարաշար նստարաններ:

Հայտնաբերված նյութերը հիմնականում դրոշմազարդ բեկյալներով, ալիքներով, կետագծային եղանակով ստացված տարբեր զարդեր (եռանկյունի, կամար, ոլորանախշ և այլն) ունեցող թասերի, քրեղանների, այլ տեսակ խեցանոթների բեկորներ են: Դրանցից բացի գտնվել են աղորիքներ, գլաքարից պատրաստված ծեծիչ-տրորիչներ, սրոցաքարեր, կոկիչներ, կրնկաքար, պահանգավոր մանգաղների կայծքարե ներդիրներ, վանակատե նետասլաք, քերիչ, ոսկրե ծակիչ, քամիչ-տաշտակ և այլն: Այս բնակավայրը քաղաքային բնույթի խոշոր կենտրոն է եղել, որի հետագա պեղումները նոր մանրամասներ կբացահայտեն: Այս տեսակետից հետաքրքիր է տներից մեկում գտնված խեցու բեկորը, որի վրա թագակիր մարդու դեմք է պատկերված. այն արվել է նախքան ամանի թրծվելը (աղ.XI$_{20}$): Հայտնաբերված նյութերը թվագրվում են մ.թ.ա. XVIIIդ. երկրորդ կես – XVIդ.: Ուզերլիկ-թեփեի II-III շերտերին ժամանակակից այս բնակավայրը դրանից տարբերվում է ոչ միայն իր ընդգրկած տարածքով, այլև՝ մի քանի սենյակից բաղկացած քարաշեն մեծ տներով. դրանք հակապատկերն են Ուզերլիկի աղյուսաշեն կացարանների:

§ 2. ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ

Միջին բրոնզի դարաշրջանում դամբարանների առավել տարածված և հաճախ հանդիպող տեսակը հիմնահողայինն է: Դրանց զուգահեռ, առանձին շրջաններում առկա են և այլ տեսակներ: Մասնավորապես Լոռի-Բերդի դամբարանադաշտում հիմնականում քար ու հողով լցված քարարկղներ են, սալարկղներ և հազվադեպ՝ հիմնահողային դամբարանախցեր: Փոքրաթիվ խոշոր դամբարանախցեր արևելյան կողմում մուտք ունեն, որը թաղման արարողությունից հետո փակվել է

համեմատաբար փոքր չափերի քարերով: Դամբարանախցերից մեկի հարավային, արևմտյան և հյուսիսային պատերի (արևելյանը մուտքն է) ստորին հատվածներում բացված որմնախցերում գտնվել են խեցանոթներ: Այլ դամբարանների կավածեփ հատակներին պահպանվել են խսիրների դրոշմներ. առկա են և հատակի մեջ փորված ձագարաձև խոռոչներ, որոնց մեջ ածխի կտորներ և մոխիր է հայտնաբերված:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում մեկ այլ դամբարան, որը հողի կտրվածքին հենած և դրանց վրա լայնակի դրված գերանների ծածկի կառուցվածքով նման է անցումային շրջանի առաջնորդների դամբարաններին: Պատերի գերանները ծածկող սև մակերեսով նյութի վրա, որը կարող էր կաշի կամ գործվածք լինել, դեղին, նարնջագույն և կանաչ գույներով նկարվել են եղջերուներ, օձեր, մարդ, ձուկ, ցուլեր և թռչուններ: Պեղող հնագետի (Ս. Դևեջյան) վկայությամբ, այդ ներկը ունեցել է խնկի բույր, որը հատկապես սուր է զգացվել արևոտ օրերին: Անալիզների արդյունքները ցույց են տվել, որ այդտեղ առկա է ասեղնատերև ծառերի (սոճի, եղևնի, կենի) խեժ:

Մասնակի չափով կողոպտված այս դամբարանախցից գտնվել են, հավանաբար երկանիվ դիակառքի թափքից պահպանված տախտակների դաջվածքներ. դրանք զարդարված են եղել շրջանաձև, եռանկյունաձև փորագիր պատկերներով, որոնք ընդելուզվել են կարմիր, սև, սպիտակ գույնի մածուկներով: Նշանավոր անձի (քուրմ, առաջնորդ) պատկանող այս դամբարանից գտնվել են տարատեսակ խեցանոթներ, բրոնզե իրեր, զենքեր, ոսկուց և արծաթից պատրաստված նուրբ զարդեր: Դիակառքով կատարված հարուստ թաղում է և Վանաձորի համաժամանակյա դամբարանը. վերջինիս գույքը նույնական է Լոռի-Բերդի, Քարաշամբի, Թրիալեթիի «արքայական դամբարաններից» գտնվածների հետ: Այդ դամբարաններում հաճախ է դիտվում դիակիզմամբ կատարված թաղման ծեսը: Այս տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում Քարաշամբի (Նախիրի շրջան) խոշոր դամբարանաթումբը: Դամբարանախցից զուրկ դամբարանաթումբը ծածկել է անմիջապես գետնի մակերեսին, դիակիզմամբ կատարված թաղումը, որը շրջափակվել է շրջանաձև տեղադրված քարերով: Շրջանի ներսում հայտնաբերված են զոհաբերված կենդանիների ոսկորներ, տարատեսակ խեցանոթներ, զենքեր, իշխանության խորհրդանիշներ, թանկարժեք մետաղներից պատրաստված անոթներ (աղ.XI$_{19}$): Այդ նյութերը թվագրվում են մ.թ.ա. II հազ. սկզբով: Պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ հարուստ թաղումները միշտ չէ, որ մեծ խցերում են կատարվել:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Լոռի-Բերդի մեկ այլ դամբարան. այդտեղ կմախքը և ուղեկցող նյութերը կավացեխով են ծածկվել. այդ երևույթը տեսնում ենք և անցումային շրջանում, այլ դամբարանադաշտերում: Լոռի-Բերդում հանդիպում են թե դիակիզման, թե դիամասնատման, թե կողքի պառկեցված (աջ կամ ձախ) թաղումներ: Դամբարանախցերը լցվել են քար ու հողով և ծածկվել խոշոր սալերով: Վերջիններիս վրա այնուհետև ոչ բարձր քարազրահ է բարձրացվել, որը շրջափակվել է կրամլեխով: Դամբարաններում հայտնաբերված են տարբեր կենդանիների ոսկորներ (ձի, մուֆլոն, աղվես, փորսուղ, կզաքիս, նապաստակ, ոչխար, եղջերու, կով և այլն):

Առանձին տարածքներում (Սյունիք, Արարատյան դաշտ, Շիրակ և այլն) դամբարանախցերի հիմնական տեսակը հիմնահողայինն է. դրանք հատակագծում ուղղանկյունաձև կամ ձվածիր տեսք ունեն: Հանդիպում են և դամբարանախցեր, որոնց պատերի մեջ փոքր խորշեր են փորված, իսկ առանձին դեպքերում պատին կպած նստարանի ձևով հողաշերտ է թողնված (Վերին Նավեր): Կան և երկու դամբարանախուց ծածկող դամբարանաթմբեր. որոնցից մեկը ծիսական բնույթի է. այն չափերով զիջում է հիմնական դամբարանին: Ծիսական խցերում նյութերը ավելի քիչ են (հաճախ մեկ խեցանոթ), իսկ հիմնական խցերում, որտեղ ննջեցյալն է դրվել, նյութերը առատ են: Այդ դամբարաններում ևս կմախքն ու ուղեկցող նյութերը ամբողջությամբ ծածկված են կավաշաղախի կարծրացած շերտով, որի վրա, մինչև դամբարանախցի ծածկասալերը, հող է լցված: Այդ հողաշերտում հանդիպում են մանր քարեր, այրված ճյուղերի մնացորդներ, խեցանոթների մասեր: Այդ դամբարանները պատկանել են որոշակի սոցիալական խավի. դրա վկայությունը նաև գույքի առատությունն է:

§ 3. ՆՁՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ՈՒ ՓՈՒԼԱԲԱԺԱՆՈՒՄԸ

Ինչպես վաղ, այնպես էլ միջին բրոնզեդարյան մշակույթը, դրսևորում է տարածքա-ժամանակագրական առանձնահատկություններ, որոնց հիման վրա այն ստորաբաժանվում է տարբեր անվանումներ (Թոնդրա-վանաձորյան, Սևան-արցախյան կամ Սյունիքի, Կարմիր-բերդյան, Կարմիր-վանքյան, Վան-Ուրմիական) կրող վաղ, միջին և ուշ փուլերի: Դրանք համապատասխանաբար ընդգրկում են XXII/XXI-XIX, XIX/XVIII, XVIII/XVII-XVIդդ.: Հաջորդ՝ XVI-XVդդ պատկանող հուշարձաններից հայտնաբերված նյութերը դրսևորում են ինչպես միջին, այնպես էլ ուշ բրոնզի դարաշրջանին բնորոշ հատկանիշներ, որոնք ցույց են տալիս այդ ժամանակաշրջանի մշակույթի անցումային բնույթը: Ինչո՞վ են առանձնանում նշված փուլերը միմյանցից, ի՞նչ առանձնահատկություններ ու բնորոշ գծեր ունեն դրանք:

Առաջին փուլ: Միջին բրոնզի վաղ շրջանի հուշարձաններից հայտնաբերված նյութերը ոչ մի կերպ չեն կարող շփոթվել Կուր-Արաքսյան մշակույթին պատկանողների հետ: Այստեղ նախորդ դարաշրջանին բնորոշ իրեր չեն հանդիպում. խոսքը կարող է վերաբերել միայն նախկինից եկող առանձին հատկանիշների հարատևմանը, իբրև վերապրուկ հանդես գալուն, որը կարող էր պայմանավորված լինել տեխնիկական պատճառներով, հավատալիքներին առնչվող պատկերացումներով և այդ կարգի այլ գործոններով, որոնք առնչություն չունեն ժամանակաշրջանին բնորոշ հատկանիշների հետ: Դա վերաբերում է թե՛ մետաղե և, թե՛ խեցեղեն արտադրանքին: Այսպես, նախորդ դարաշրջանին բնորոշ կացինների տեսակները միջին բրոնզում բացակայում են. դրանք փոխարինվում են սակրերով ու դրանց տարբերակներով: Նման նմուշներից մեկն է Քարաշամբից հայտնաբերված, արծաթից պատրաստված, խարսխաձև սակրը (աղ.XI_{11}): Նույն ձևն ունեն Իջևանից, Վրաստանի ու Ադրբեջանի հուշարձաններից գտնված բրոնզաձույլ օրինակները: Նմանները հայտնի են Շումերից, Լուրիստանից և այլ վայրերից:

Նորույթ են և լայն, տերևաձև կամ նեղ, ձգված սայրով խողովակաթաթ նիզակները, որոնք փոխարինելու են գալիս ցողունաձև պոչուկով օրինակներին (աղ.$XI_{7,8}$): Վաղ բրոնզեդարյան նմուշներից տարբերվում են և անագապղնձից պատրաստված, կտրվածքում ձվածիր կամ շեղանկյունաձև տեսք ունեցող շեղբով դաշույնները: Դրանց կենտրոնով հաճախ ընդերկայնական ողեր են տարված (աղ. XI_3): Այս դաշույնները ևս ավարտվում են հարթ լեզվակով, բայց ընդհանուր ձևով ամբողջապես տարբերվում են նախորդ շրջանի պարզունակ տեսք ունեցող զենքերից:

Նորույթ են և սուսերները (աղ.XI_1): Այդպիսիք հայտնի են Հայաստանի (Զորագես, Լոռի-բերդ, Որոտնաբերդ, Նոյեմբերյան և այլն), Վրաստանի, Անդրկովկասի այլ հնավայրերից, Էգեյան աշխարհից: Վերջիններս, սակայն, ավելի երիտասարդ տարիք ունեն. այդ նյութերը կարող էին Անդրկովկաս հասնել ասորեստանյան առևտրական գաղութներից (Աշշուր, Կանիշ ևն):



Առանձին կարևորություն են ներկայացնում և ոսկուց, արծաթից, էլեկտրումից (ոսկու և արծաթի համաձուլվածք) պատրաստված պերճանքի և սպասքի առարկաները: Քարաշամբի, Լոռի-Բերդի, Թռեղքի և այլ վայրերի հարուստ դամբարաններից հայտնաբերված, նուրբ աշխատանքի արդյունք հանդիսացող այդ իրերը (աղ.$XI_{18,19}$), տարբեր տեսակների ուլունքներ են, շքասեղներ, այլ մանր իրեր: Շքասեղները ունեն սնամեջ գնդաձև գլխիկներ, որոնք զարդարված են հատիկով ստացված պատկերներով, ակերի մեջ ամրացված կիսաթանկարժեք քարերով: Հատիկազարդը Եգիպտոսում երևացել է միջին թագավորության շրջանում (XXI-XVIIդդ) իբրև տարածքին ոչ բնորոշ եղանակ. այն հատկանշական է եղել Սիրիա-Պաղեստինին: Հայաստանի նյութերը, որոնք թվագրվում են III հազ.վերջ-II հազ. սկզբով, իրենց վրա կրում են Առաջավոր Ասիայի, Սիրիայի ու Միջագետքի դպրոցների ազդեցությունները: Նշված նյութերի համադրությունները ցույց են տալիս տարանցիկ աշխուժ առևտրի առկայությունը, որի արդյունքում տարբեր տարածքների մշակութային ձեռքբերումները շատ արագ են տարածվել: Դրա լավագույն ապացույցն են հանդիսանում և թանկարժեք մետաղներից պատրաստված բաժակները, գավաթները ու թասերը. մետաղաթերթից պատրաստված այդ նյութերը զարդարված են դրոշմելու և փորագրելու եղանակով ստացված հարուստ պատկերներով: Գլանման, ծեծելու եղանակով են պատրաստված և բրոնզյա կաթսաները (աղ.XI_{16}). դրանց հետ գտնված են և խողովակաձև կոթառով բրոնզյա կեռեր (աղ.XI_{13}):

Մետաղե արտադրանքի այս կտրուկ փոփոխությունները նշանավորում են միջին բրոնզի դարաշրջանի սկիզբը: Միանգամայն փոփոխված տեսքով է ներկայացված և խեցեղեն արտադրանքը: Վերջինիս վաղ փուլին բնորոշ նյութերից են բարձր ու նեղ, թեթևակի գոգավորվող վիզ, ուսամասում փքուն, ձգված ու տանձաձև իրանով սափորները (աղ.XI_{21-25}): Այդ անոթների ճկված շրթի վրա թույլ ակոս է հանված: Ինչպես խոշոր անոթները, սափորները ևս զարդարված են կարճ փորագիր գծիկներով լցված կամարաձև, բեկյալ պատկերներով և նման այլ զարդերով. դրանք ստացված են և «եղևնաշար» գծիկներով: Այդ զարդերին զուգահեռ հանդես են գալիս և մեկ-երկու շարքով տարված, գծիկներով լցված փորագիր բեկյալներ, ալիքաձև գոտիներ, ուղղահայաց իջնող և կամ իրանը գոտևորող ժապավեններ և այլն:

Զգալի փոփոխություններ են դիտվում և քրեղանների ձևերում: Դրանք ունեն ինչպես դուրս թեքված, կլորացող (աղ.XI_{32}), այնպես էլ ուղիղ և թեք կտրած շուրթեր, որոնք իրանից անջատված են ակոսագո-

տիով (աղ.XI$_{33,34}$): Առկա են և կլորացող իրանով, ներս հակված շուրթով, ինչպես նաև գոգավորվող վիզ ունեցող քրեղաններ (աղ.XI$_{29}$), որոնց ձևն ու զարդն են կրկնում համեմատաբար փոքր չափերի թաս-գավաթները. դրանց հատակները երբեմն առանձնանում են նստուկի ընդգծված տեսքով: Բնորոշ են և կարճ, ուղիղ վիզ ունեցող ամանները: Խեցանոթների վրա հանդես են գալիս և կետերով ստացված զարդեր: Հպանցիկ ներկայացված խեցեղենի տեսակներն ու նշված եղանակներով ստացված զարդերն ունեցող նյութերը բազմաթիվ օրինակներով են հայտնաբերված առաջին փուլի հուշարձաններից, այդ թվում և Ուզերլիկ-թեփեի ստորին՝ 0,6–0,7մ հզորություն ունեցող շերտում, որտեղից հայտնաբերված խեցեղենի զարդերի ստացման բնորոշ գիծը փորագրման եղանակն է: Այս և հաջորդ դարերի (ընդհուպ մինչև միջին բրոնզի դարաշրջանի վերջը) դամբարաններում հաճախ են հանդիպում և տուֆից պատրաստված սկավառակաձև կափարիչներ: Դրանց մեկ երեսը գոգավոր, իսկ մյուսը կլորացող տեսք ունի: Կափարիչների այս տեսակը փոխարինելու է գալիս վաղ բրոնզեդարյան՝ կիսագնդաձև բռնակ ունեցող սկավառակաձև նմուշներին, որոնք միջին բրոնզի դարաշրջանի սկզբից դուրս են գալիս գործածությունից:

Խեցանոթների նշված տեսակներին զուգահեռ, ժամանակաշրջանի համալիրներում հաճախ են հանդիպում և գունազարդ մակերես ունեցողներ: Վերջիններիս կարմիր գույնի մակերեսը զարդարված է սևի տարբեր երանգավորումներով ստացված, իրար զուգահեռ տարված ալիքաձև գոտիներով, սանրատամ շեղանկյունիներով, S-ձև պատկերներով, անոթների ոչ բարձր վիզն ու իրանը գոտևորող, խումբ-խումբ իջնող և խաչվող գծափնջերով, այլ գծազարդերով (աղ.XI$_{23,27}$):

Միջին փուլ: Այս շրջանի մետաղե և խեցեղեն արտադրանքը ձևերով ու զարդերով առանձնապես չի տարբերվում նախորդ փուլի համանման նյութերից: Դրանք հիմնականում նույն խողովակակոթառ նիզակներն են ու ձգված շեղբով, տափակ, կարճ լեզվակով դաշույնները, որոնց հետ հանդիպում են և հիմքում կլորացող, եզակի դեպքերում գոգավորվող կողեր ունեցող նմուշներ (աղ.XI$_{4,5}$): Երևան են գալիս և շրջանակավոր դաստակ ունեցող դաշույններ (աղ.XI$_{6}$): Մետաղե նյութերի շարքում առանձին հետաքրքրություն է ներկայացնում Սիսիանի դամբարաններից մեկում հայտնաբերված, բռնակի ամրացման համար նախատեսված կարճ պոչիկ ունեցող, բրոնզյա սկավառակաձև հայելին, որի հարթ մակերեսին, տեղ-տեղ նշմարվող փշուրները ցույց են տալիս, որ այն երեսապատված է եղել ոսկու շատ նուրբ թիթեղով (աղ.XI$_{17}$): Նման նյութերը եզակի գտածոներ են:

Ներկայումս եզակի օրինակներով են ներկայացված և անհամաչափ համամասնություններով սակրերը: Դրանցից մեկը աշխատաբերանից զգալիորեն ետ թեքված բավական երկար կոթառի ձևով հիշեցնում է նախորդ փուլի կացինները, բայց լայն աշխատաբերանի կլորացող տեսքը նորույթ է, որը ցույց է տալիս ոչ միայն կացնի զարգացման, այլև՝ ուշ բրոնզի դարաշրջանում լայն տարածված «անդրկովկասյան»՝ դասական սակրերի ձևավորման հաջորդական փուլերը: Այս տեսակետից կարևորվում են Շամշադինից գտնվածները, որոնք Գյումրիի օրինակից տարբերվում են գրեթե քառորդ շրջան կազմող աշխատաբերանի ձևով, իսկ Վանաձորի առաջնորդի դամբարանից գտնվածը, կրկնելով դրանց կոթառի ձևով, կիսաշրջանաձև աշխատաբերան ունի (աղ.XI$_{9,10}$): Վանաձորի նույն դամբարանից հայտնաբերված են և խողովակաձև կոթառով բրոնզյա դուր ու թեթևակի գոգավորվող իրան և կարճ, տափակ լեզվակ ունեցող, հարթ տապարիկ (աղ.XI$_{14,15}$): Այդ նյութերի հետ հայտնաբերված է և փոքր նստուկ ու կիսագնդաձև իրան ունեցող ոսկյա թաս, որը զարդարված է դեմ-դիմաց կանգնած առյուծների պատկերներով: Ցեղային առաջնորդի պատկանող այս հարուստ դամբարանից հայտնաբերված են և արծաթից պատրաստված դույլիկ, այլ իրեր, որոնց նմանությունը, հետևաբար և ժամանակագրական մերձակցությունը նախորդ փուլի համալիրներին, կասկած չի հարուցում: Միաժամանակ դրանք կապվում են և միջին փուլի արտադրանքի հետ: Այս տեսակետից առանձնանում է առյուծազարդ թասը, որի նմանությունը Ուզերլիկի II շերտից հայտնաբերված խեցանոթին, ավելի քան ակնհայտ է: Վերջիններիս զուգահեռ, սակայն, նույն կամ համաժամանակյա համալիրներում երևան են գալիս նախկինում անհայտ նոր տարրեր, տեխնիկական նոր հնարքներով ստացված զարդեր: Մասնավորապես կարելի է նշել, այսպես կոչված, «քայլող դրոշմիչով» ստացված, կլորացող կամ սրվող գագաթներով կամարաձև, բեկյալ և համակենտրոն կիսաշրջաններով, նուրբ ժանյակի տեսք ունեցող գեղեցիկ զարդերը, որոնք առանձին դեպքերում լրացված են կեռանման պատկերներով (աղ.XI$_{30}$): Սրանց զուգահեռ առկա են և համեմատաբար կոպիտ տեսք ունեցող «բջջաշար» ալիքներ, կամարներ, բայց միաժամանակ և նուրբ կետազարդով և կամ «սանրատամ» այլ զարդեր, որոնք երբեմն լցված են լինում սպիտակ մածուկով: Այդ զարդերի շարքում առկա են և փայլեցմամբ ստացված գծափնջեր,

որոնք զուգորդվելով այլ զարդաձևերի հետ, բնորոշ են դառնում հետագայում, չնայած որ զարդի ստացման այդ եղանակը, ինչպես ասվեց, հազվադեպ հանդիպում է դեռևս վաղ բրոնզի դարաշրջանում:

Որոշակի փոփոխություններ են դիտվում և գունազարդ խեցանոթների զարդաձևերում: Կուր գետից հյուսիս եզակի օրինակներով հայտնի այս նյութերի վրա, նախկինից հայտնի, մի քանի զուգահեռ շարքերով, հորիզոնական տարված և ուղղահայաց իջնող ալիքաձև ու բեկյալ ժապավենները, դրանցով ստացված եռանկյունիները, սանրաձև շեղանկյունիները և այլ պատկերներ (աղ.XI$_{34}$) լրացվում են համակենտրոն կիսաշրջաններով, կեռիկներով, թռչուններով, ալիքաձև գծերով լցված շեղանկյունիների և կամ բեկյալների կողերի միջև պատկերված շրջաններով, այլ զարդերով: Սովորական է դառնում և անոթների վիզը ալիքներով, ուղիղ գծերով և բեկյալներով զարդարելը, որը նախորդ փուլում նման հաճախականություն չուներ: Կարճ գծիկներով են զարդարվում և անոթների շուրթերը: Այդ փոփոխությունները ցույց են տալիս ներկայացված նյութերի համեմատաբար երիտասարդ տարիք ունենալը:

Ուշ փուլ: Ժամանակափուլի համալիրներից հայտնաբերված նյութերը, բայց հատկապես խեցեղենը, շարունակելով հանդերձ նախկինից եկող ձևերն ու զարդերը, երևան է բերում նոր հատկանիշներ: Այս փուլի խեցանոթները ևս, զարդարված են համակենտրոն կիսաշրջաններով, ալիքներով, բեկյալներով, բջջալից եռանկյունիներով, ներկով ստացված կրկնասակր կամ թիթեռնիկաձև, թռչնապատկեր զարդերով, այլ նախշերով: Դրանք, սակայն, առավել անփույթ են կատարված կամ պարզեցված տեսքով են հանդես գալիս: Սրանց զուգահեռ առկա են և նույն զարդերով, այլ նախշերի համադրությամբ հանդես եկող խեցանոթներ, որոնց գերակշռող մեծամասնությունը ներկայանում է գնդաձև իրան ունեցող կճուճների տեսքով և կամ դեպի վեր նեղացող բարձրավիզ սափորներով: Այդ խեցանոթների հետ երևում են և փայլեցմամբ ստացված երկրաչափական բնույթի զարդեր ունեցողներ: Վերջիններիս շարքում առկա են և այնպիսի խեցանոթներ, որոնց զարդը ստացված է անոթի մակերեսի սև փայլեցրած շերտը հեռացնելու միջոցով: Այս եղանակին զուգահեռ, հատկապես փուլի վերջում, հանդիպում են և սպիտակ ու կարմիր ներկով, շուտ մաքրվող զարդեր ունեցող անոթներ (աղ. XI$_{31}$): Այդ զարդերը սովորաբար մեանդրներ են, հատվող գծեր, երբեմն՝ կեռխաչեր: Դրանց զուգահեռ հանդես են գալիս և փորագրմամբ ստացված, անոթների ուսամասը զուտևորող ալիքներ, «եղունգանախշ» և «հատիկաշար» զարդեր: Հաճախ են հանդիպում և հատակներին հատվածք-գծիկներ ունեցող անոթներ: Այս համալիրներում տեսնում ենք և խոշոր բջջաշարով (աղ.XI$_{26}$) լցված և գագաթներով ցած ուղղված ձգված եռանկյունիներ, իրանը զուտևորող ելունդագոտիներ, որոնք առանձին դեպքերում զարդարված են կտրվածքով արված խաչազարդերով:

Պարզեցման, ետաճի միտում դրսևորող այս զարդերի մի մասը, հաջորդ՝ անցման փուլում, չի հանդիպում, իսկ մյուսները հետագա զարգացում են ապրում և իբրև բնորոշ հատկանիշ, հանդես են գալիս ուշ բրոնզի դարաշրջանում: Նույն երևույթը դիտվում է և իրանների ձևերում: Նախկինից եկող, ուսամասում փքուն տեսք ունեցող իրանով կճուճներին զուգահեռ, հաճախ են հանդիպում գնդաձև իրանով անոթներ, որոնց վերին մասը զարդարված է ակոսագոտիներով և կամ ծալքավորված տեսք ունի: Երևան են գալիս և աղեղնաձև, բարձր կանթեր ունեցող սկահակներ՝ կիլիկներ (աղ.XI$_{28}$):

§ 4. ԱՆՑՈՒՄԱՑԻՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Ինչպես վաղ բրոնզից միջինին, այնպես էլ միջինից ուշ բրոնզի դարաշրջանին անցնելու միջև, հանդես են գալիս համալիրներ, որոնցից հայտնաբերված նյութերը դրսևորում են երկու դարաշրջաններին բնորոշ հատկանիշների ու ձևերի մեկտեղում: Մշակույթի այդ երկվությունը պարզ դիտվում է XVI դ. վերջ – XV դ. թվագրվող համալիրներից հայտնաբերված նյութերի ձևերում, զարդերում, դրանց ստացման եղանակներում:

Մ.թ.ա. II հազ. կեսերով թվագրվող դամբարանները նախկինից հայտնի, սալաքարերով ծածկված հիմնահողային և քարարկղային կառույցներն են, որոնք ծածկված են հող ու քարից կամ քարերից կազմված դամբարանաթմբերով: Այլ դեպքերում դրանք կրոմլեխով են շրջափակված, հանդիպում են և հուշադամբարաններ (կենոտաֆ), դամբարանաթմբերով ծածկված վերգետնյա քարարկղներ: Բոլոր դեպքերում, սակայն, կմախքների դիրքը նույնն է. այն հիմնականում աջ կամ ձախ կողքի պառկեցված վիճակն է: Հիմնական այս ձևին զուգահեռ հանդիպում են և դիամասնատման ծեսով կատարված թաղումներ: Նման դեպքերում կմախքի առանձին մասերի հեռավորությունը ցույց է տալիս ոչ թե հանգուցյալի, այլ մկանային ծածկույթից ազատված ոսկորների թաղված լինելը:



Շարքային համայնականների դամբարաններում մետաղե իրերը սակավաթիվ են. դրանք առատ են հարուստ դամբարաններում: Վերջիններիս շարքում առանձնակի տեղ են գրավում Լճաշենի դամբարանները: Մետաղե նյութերի առատությունը և բազմազանությունը ցույց է տալիս, որ մետաղագործությունը զգալի առաջընթաց է ապրել: Նախորդ փուլերից եկող ձևերին զուգահեռ հանդես են գալիս նոր տեսակներ, որոնք լայն տարածում են ստանում հաջորդ՝ ուշ բրոնզի դարաշրջանում: Նման նյութերից են կիսաշրջանաձև աշխատաբերանով, վերջնականապես ձևավորված «անդրկովկասյան սակրերը», շրջանակավոր և սովորական՝ տափակ լեզվակ ունեցող շեղբերին զուգահեռ երևան եկող գլանաձև դաստակով դաշույնները, կատարյալ՝ գոգավորված իրան և կարճ, նեղ ու տափակ բռնակ ունեցող հարթ տապարիկները (աղ.XII$_{1-3}$), անվակաձև երախակալ ունեցող սանձերը, այլ նյութեր: Վերջիններս նշանավորում են բրոնզե արտադրանքի զարգացման նոր շրջանի սկիզբը, որն ամբողջությամբ տարբերվում է նախորդներից:

Զգալի փոփոխություններ են դիտվում և խեցեղեն արտադրանքի ձևերում, զարդերում, ստացման եղանակներում: Այս ժամանակաշրջանի խեցեղենի բնորոշ գծերից են թրծումից հետո սպիտակ ու կարմիր ներկերով (աղ.XII$_{12,15}$) նախշազարդերը (մեանդր, ձևավոր կեռխաչ, երկրաչափական զարդեր և այլն): Սպիտակ, շուտ ջնջվող ներկով, ինչպես և կետերով ստացված տարբեր ձևերի զարդերը, որոնք խորթ չեն և այս փուլի ամաններին (աղ.XII$_{5,14,17,19}$), առկա էին և նախորդ՝ միջին բրոնզի ավարտական փուլին պատկանող խեցանոթների վրա: Նույնը կարելի է ասել և սպիտակ, մածուկանման նյութով ընդելուզված և կամ դրանցից զուրկ ատամնավոր կեռաձև, ինչպես և եղևնաշար, եղունգանախշ, հատիկազարդ, հատակի եզրով կտրվածքով արված գծիկներով զարդարված ամանների վերաբերյալ: Նախորդ դարաշրջանին բնորոշ այս գծերին զուգահեռ, սակայն, անցման շրջանում երևան են գալիս ու լայն տարածում ստանում փայլեցման եղանակով ստացված (աղ.XII$_{13,16,20}$) տարբեր զարդեր (ցանցեր, անկյունաձև հատվող գծափնջեր և այլն). զարդերի ստացման այս եղանակը ուշ բրոնզի առաջին փուլում դուրս է մղում մյուս եղանակները: Անցումային շրջանի բնորոշ գծերից է և ավազախառն կավախմորից պատրաստված, անբավարար թրծման հետևանքով փխրուն խեցին: Ինչ վերաբերում է անոթների ձևին, ապա դրանց իրանի հատկանշական տեսքը, ուսամասում կամ գոտկամասում յուրատեսակ փքված կամ կլորացող ձևն է, որը բնորոշ է ուշ բրոնզի առաջին փուլի կճուճներին, սափորներին:

Անցման փուլում հաճախ են հանդիպում և փոքրիկ, բարձրավիզ սափորաձև անոթներ (աղ.XII$_{12,13}$). դրանք նախորդ շրջանում անհայտ են, բայց տարածվում և կատարելագործվում են հաջորդ դարաշրջանում: Հարուստ դամբարաններից հայտնի են և արկղաձև, պատերի վրա ուղղանկյունաձև, կիսաշրջանաձև, ձվաձիր տեսքով անցքեր ունեցող (աղ.XII$_{10}$), կոնաձև իրանով ու սկավառակաձև, լայն պատվանդանով, ինչպես և «հնդկական ընկույզի» տեսքով (աղ. XII$_{5,7}$) ծիսական անոթներ, ցածր ոտքերի վրա նստած քրեղանաձև սկահակներ, որոնց իրանը զարդարված է ատամնավոր գլանիկով ստացված ալիքաձև զարդերով: Նշված տեսակներին զուգահեռ հաճախ են հանդիպում և ներս հակվող շուրթով, ինչպես և ուղիղ բարձրացող կարճ վզով քրեղաններ (աղ.XII$_{18,21}$), որոնք բնորոշ են միջին բրոնզի դարաշրջանին: Անցման փուլում, սակայն, կտրուկ նվազում են նախորդ դարաշրջանին բնորոշ գունազարդ խեցանոթները: Նման նյութեր պարունակող համալիրների երիտասարդ տարիքն են փաստում և XVI–X1Vդդ.թվագրվող միտանիական գլանաձև կնիքները, որոնք ստույգ թվագրող նյութերից հանդիսանալով, ներկայումս տարբեր հուշարձաններից են հայտնի (աղ.XII$_4$): Միտաննիական կնիքները ուշ բրոնզի դարաշրջանում, կապված պատմության թատերաբեմից այդ հզոր տերության հեռանալով, այլևս չեն հանդիպում:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Ուշ բրոնզի դարաշրջանը, որի ժամանակագրական ընդգրկումը մ.թ.ա. XV/XIV–XIIդդ է, միաժամանակ հանդիսանում է մետաղներից կարևորագույնի՝ երկաթի երևան գալու ժամանակաշրջանը: Ասվածը չի նշանակում, թե երկաթը ճանաչվել է մ.թ.ա. II հազ. կեսերից սկսած. երկաթը շատ ավելի վաղ ժամանակներից էր հայտնի: Գրավոր աղբյուրները վկայում են, որ Սարգոն Աքքադացու թոռ Նարամսինի (XXIդ.) կացինը երկաթից էր պատրաստված, Համմուրաբիի (XVIIIդ.) տեքստերում երկաթը թանկարժեք մետաղների շարքում է դասվել, Պուրուսխանդա քաղաքը Կուսսարայի թագավոր Անիտտային (XIX–XVIIIդդ.), իբրև հնազանդության նշան, երկաթե գահ է նվիրել և այլն: Այս փաստերը ցույց են տալիս, որ երկաթը օգտագործվել է III հազ., որը վաղ բրոնզի դարաշրջանն է, բայց ոչ երկաթի: Երկաթը III հազ. ծիսական նշանակություն ունեցող մետաղ է համարվել, որը գործածելու իրավունք թագավորն է ունեցել. այն տնտեսության մեջ չի կիրառվել: Երկաթը տնտեսության մեջ սկսել է աստիճանաբար մուտք գործել ուշ բրոնզի դարաշրջանում: Այդ ժամանակից բրոնզը դանդաղ, բայց և հաստատուն կերպով սկսեց իր տեղն աստիճանաբար երկաթին զիջել, որն անհամեմատ էժան էր բրոնզից, իսկ հանքավայրերը շատ են Հայկական լեռնաշխարհում:

§ 1. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ ԵՎ ԿԱՑԱՐԱՆՆԵՐ

Դարաշրջանի բնակավայրերը, որոնք սփռված են ողջ տարածաշրջանում, փաստելով հանդերձ տարածքի բավական խիտ բնակեցված լինելը, հնարավորություն են տալիս հետևել բնակարանաշինության և ընդհանրապես ճարտարապետության մեջ տեղի ունեցած փոփոխություններին, զարգացման ընթացքին:

Դարաշրջանի բնակավայրերի գերակշռող մեծամասնությունը, ինչպես և նախկինում, կառուցված է բարձունքների վրա ու շրջափակված է դրանց մակերևույթի առանձնահատկություններին համապատասխան տարված, հզոր որմնահեցեր և աշտարակներ ունեցող, մեկից երեք շարք,

կիկլոպյան շարվածք ունեցող պարիսպներով: Վերջիններիս շարվածքում, սակայն, դիտվում են արդեն որոշակի շարքեր, իսկ քարերը հարթ երեսներով դուրս են ուղղված: Հաճախ հանդիպում են նաև պարսպով շրջափակված միջնաբերդ ունեցող բնակավայրեր: Սակավ չեն և այնպիսիները, որոնցում կացարանների մի զգալի մասը, պայմանավորված բնակչության աճով, պարիսպներից դուրս կառուցված լինելով, զուրկ է պաշտպանական կառույցներից (Շիրակավան, Ծաղկահովիտ և այլն): Պաշտպանական կառույցներն իրենցից ներկայացնում են ոչ միայն պարիսպներ, այլև լայն ու խոր խրամատներ (օր.՝ Մեծամորը). դրանց մեջ հայտնված հակառակորդը անպաշտպան էր մնում պարիսպների վրա դիրքավորված պաշտպանների հարվածներից: Նման խրամատներ ունեն և Վրաստանի առանձին ամրոցներ (օր.՝ Մոչրիլի-գորան Կախեթում և այլն):

Ամրոցաշինության մեջ դիտվում է ևս մեկ մանրամասնություն. պարիսպների (դրանց լայնությունը տատանվում է 2-4մ միջև)՝ իրար չհամընկնող մուտքերի մոտ սովորաբար լրացուցիչ պատեր են շարված, որոնք «գրպանի» պես ծածկում են մուտքի առջևի տարածքը: Այս մանրամասնությունը, ավելի կատարելագործված ձևով, առկա է և Վանի թագավորության ամրոցաշինության մեջ. նման կառույցը խոչընդոտել է թշնամու մեծ ուժերին բնակավայր խուժել՝ միաժամանակ հնարավորություն տալով բնակիչներին ավելի լավ պաշտպանվել, ոչնչացնելով «գրպանի» մեջ հայտնված հակառակորդի փոքր ուժերը: Պաշտպանական նկատառումներով են թելադրված և մուտքերի ոչ թե ուղիղ՝ դեմ-դիմաց գծով, այլ տարբեր կողմերի վրա բացված լինելը. արտաքին մուտքից ներս խուժած հակառակորդը, նախքան երկրորդ պարսպի մուտքին հասնելը, իր վրա կընդուներ երկրորդ պարսպի պաշտպանների հարվածը: Առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով ընդհանուր գծերով ներկայացնենք բնակավայրերից մի քանիսը:

Լճաշեն: Մոտավորապես 55հա տարածք զբաղեցնող, հանգուցային նշանակություն ունեցող այս խոշոր բնակավայրը, որը փակել է Սևանի ավազանի մյուս տարածքները տանող ճանապարհները և ապահովել բնակիչների անվտանգությունը, տարածված է 50-100մ բարձրություն ունեցող 15 բլուրների վրա: Բնակավայրի արտաքին պարսպապատի երկարությունը մոտավորապես 5կմ է, իսկ լայնությունը տատանվում է 3,5–5մ միջև: Ամրոցն ունեցել է երկու միջնաբերդ, որոնք շրջափակվել են աշտարակներ և որմնահեցեր ունեցող պարիսպներով: Ամրոցի արևելյան մասում գտնվող՝ առաջին միջնաբերդը, որը շրջափակված է 4 մուտք ունեցող 3 շարք պարիսպներով, զբաղեցնում է մոտավորապես

1հա տարածություն: Այդտեղ կառուցված տարբեր դարաշրջանների պատկանող կացարաններից մի քանիսը պեղված են. ուշ բրոնզեդարյան կառույցներից մեկում, որը թվագրվում է XIII-XIIդդ., բացվել է հնոց: Վերջինիս մոտ հայտնաբերվել են երկաթի խարամ, կաղապար, մետաղագործության մեջ օգտագործված այլ նյութեր: Պեղված կացարանները կազմված են իրար կից 3–4 սենյակներից, որոնցում հայտնաբերվել են օջախներ, բուխարիկ, փայտե հենասյուների խարիսխներ: Կացարաններում ապրել են նույն գերդաստանին պատկանող ընտանիքներ:

Երկրորդ միջնաբերդը նախորդից հեռու է մոտ 300մ և զբաղեցնում է գրեթե նույնքան տարածություն, ինչ և առաջինը: Այն ունեցել է երկու պարիսպ որոնք կառուցվել են ժամանակի ընթացքում՝ բնակավայրի ընդլայնմանը զուգընթաց: Միջնաբերդն ունի երկու մուտք, որոնք պաշտպանվել են դրանց կողքերին կառուցված աշտարակներով: Միջնաբերդերի միջև ձգվող, բնական բարձունքներով պաշտպանված ծուռումուռ ընթացող ճանապարհների երկու կողմերից պահպանված են քառանկյուն կառույցների հիմքերն ու ստորին հատվածները: Պահպանված մասերի բարձրությունը տատանվում է 0,2–1,5մ միջև, իսկ կացարանների չափերը հիմնականում տատանվում են 2–3,7×3–6մ միջև: Կացարանների համար առանձին դեպքերում պատի դեր է կատարել բնական ժայռը, որը լրացվել է վերջինիս հետ ուղիղ անկյուն կազմող պատերով: Պեղված կացարանների մուտքերը հատակից բաձր են 0,5–1մ. դրանց մոտ գտնված փայտերի կտորները ցույց են տալիս, որ փայտե աստիճաններ են պատրաստված եղել, քանի որ աղյուսաշեն և քարաշեն աստիճանների հետքեր չկան: Մուտքերի առջևում բացված են 1-2մ երկարությամբ ձգվող պատեր (այդ մանրամասնը դիտված է նաև Շիրակավանի բնակավայրում), որոնք կացարանը պաշտպանել են քքից ու քամուց: Կացարանների լայնքով ձգված միջնորմները սենյակը բաժանել են տնտեսական և բնակելի տարածքների: Առանձին դեպքերում տնտեսական մասում պատրաստված են 0,8մ տրամագծով և 1,4մ խորությամբ հորեր: Ճյուղերով հյուսված միջնորմը ծեփվել է կավաշաղախով: Բնակելի հատվածի երկու պատերի տակ, հատակից 35–40սմ բարձրություն և 1,6–1,7մ երկարություն ունեցող քարաշար մահիճ-նստարաններ են պատրաստված, որոնց կավածեփով հարթեցված մակերեսին եղեգնի դրոշմներ են պահպանված: Սենյակներից մեկի պատի մեջ բացված օջախ-բուխարիկի ծխնելույզը պատի միջով է անցել: Լճաշենի բնակավայրի մոտակայքում հայտնաբերված Արգիշտի Ա պատկանող արձանագրությունը վկայում է, որ բնակատեղին Իշտիկունի է կոչվել, որի դե-

կավարը, ամենայն հավանականությամբ, հանդիսանալով շրջակա տարածքների ցեղամիությունների առաջնորդը, Արգիշտի Ա-ի կողմից «թագավոր» տիտղոսով է մեծարվել. այդ առաջնորդներին պատկանող դամբարաններում, որոնք բացվել են լճի ջրերից ազատված տարածքներում, իրոք որ արքայավայել թաղումներ են կատարված:

Գեղարոտ: Պեղված է XV/XIV-XIIIդդ. թվագրվող սրբարան: Արհեստական եղանակով հարթեցված դարավանդի վրա պատրաստված այդ քարաշեն կառույցն ունեցել է գերանածածկ հարթ տանիք, որը հրդեհից այրվելով, հատակին գոյացրել է 20 սմ շերտ, որն իր տակ է թողել կառույցում եղած նյութերը՝ հիմնականում ծիսական խեցանոթներ (մոտավորապես 40 անոթներից 12-ը խոշոր չափեր ունեն): Սրբարանի կենտրոնում տեղադրված է եղել թեթևակի ճվածիր տեսք ունեցող կավակերտ ավազան-զոհարան (տրամագիծը՝ 1,5–1,7մ), որի մեջ մոխիր է գտնվել, իսկ պատերին կրակի հետքեր կան: Ավազանի արևելյան մասում ուղղահայաց դիրքով կանգնեցված է կողքերից լայնացող սյունաձև կուռք, որի առջևում խորանարդաձև ցածր շինություն է պատրաստված: Զոհարանում գտնված են երկու կավակերտ կուռք-հենակներ, որոնք ձեռքերը կողքի պարզած մարդու տեսք ունեն: Այդ հատվածում գտնված են նաև սղոցված եղջյուրներ, խոշոր եղջերավոր կենդանիների ճաներ. դրանց վրա կտրվածքներ են արված: Սրբարանի հատակի մեջ հորեր են բացված. դրանցից մեկի տրամագիծը 1մ է, իսկ խորությունը՝ 64սմ: Մեծաթիվ ծիսական անոթների հետ գտնված է և 360լ տարողությամբ կարաս: Սրբարանի հարևանությամբ բացվել են մետաղագործական արհեստանոցի մնացորդներ, զարդեր ձուլելու կաղապար: Մետաղագործական նյութերի կապը սրբարանի հետ ցույց է տալիս մետաղագործության ծիսական բնույթ ունենալը:

Կարմիր բլուրի նախաուրարտական բնակատեղին: Թեյշեբաինի քաղաքի փլատակների տակ՝ Հրազդանի ձախափնյա դարավանդի գետային նստվածքների, վրա տարածվող այս բնակատեղին զբաղեցրել է 40-50հա տարածություն: Այն իրենից ներկայացրել է շինությունների համալիրներից բաղկացած կիկլոպյան ամրոց՝ իրեն կից դամբարանադաշտով: Վերջինիս դամբարանները, բնակավայրի սահմաններից դուրս գտնվելով, հետագայում ընկել են Թեյշեբաինի քաղաքի կենտրոնական և արևմտյան հատվածների կառույցների տակ, որոնք զգալիորեն ավերել են վաղ շրջանի բնակավայրի առանձին մասերը: Պեղումների ընթացքում բացվել են երկու բնակելի համալիրներ՝ կից կացարաններով ու տնտեսական կառույցների միակտուր հատվածներով: Համալիրները ունեն շրջանաձև, քառանկյուն և բազմանկյուն հատակագիծ, որոնք կացարանների ու տնտեսական կառույցների ամբողջություն են ներկայացնում: Այդ համալիրներում կլոր կամ բազմանկյուն գլխավոր կացարաններից յուրաքանչյուրի տարբեր կողմերից կցաշինված են քառանկյունի սենյակներ. դրանց կտուրները հարթ են եղել, իսկ շրջանաձև կամ բազմանկյուն հատակագիծ ունեցող գլխավոր կացարաններինը՝ գմբեթաձև: Կացարանների պատերը, որոնցից պահպանվել են քարե հատվածները, վերին մասում շարվել են հում աղյուսով:

Կացարանների պատերի տակ պատրաստված են կավածեփ մահիճներ, նստարաններ: Բացված են նաև տնտեսական հորեր, որոնց մոտ սովորաբար քարե կուռքեր են գտնվում: Բացվել են և օջախներ: Այդ կացարաններում ապրել են նահապետական մեծ համայնքի՝ գերդաստանի կազմի մեջ մտնող ընտանիքները: Նման գերդաստանները ժամանակաշրջանի հիմնական տնտեսական միավորներն են հանդիսացել:

Բնակավայրի շերտագրությունը ցույց է տալիս, որ կյանքն այստեղ հարատևել է մոտավորապես 400 տարի, որի ապացույցը իրար հաջորդող չորս շերտերն են՝ իրենց բնորոշ նյութերով: Ստորին շերտում՝ 4մ խորության վրա, հայտնաբերվել են մետաղագործի արհեստանոցի մնացորդներ, հնոցներ, կաղապարի մասեր, երկաթի պատրաստուկներ, մ.թ.ա. XIIIդ. թվագրվող այլևայլ նյութեր: Այդ կացարանների հատակի տակ բացվել են դամբարաններ, որոնք վկայում են բնակավայրի՝ հետագայում ընդարձակված լինելու մասին:

§ 2. ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ

Ներկայացված են հող ու քարից կամ սոսկ քարե լիցքից կազմված և սովորաբար կրոմլեխներով շրջափակված, տարբեր չափերի դամբարանաթմբերով: Այդ վերգետնյա կառույցները ծածկում են հիմնականում քարակղային կամ սալակղային, մի քանի սալաքարերով ծածկված դամբարանախցերը: Առանձին տարածքներում առկա են և յուրատեսակ դամբարանախցեր, որոնք այլ վայրերում չեն հանդիպում: Այդպիսիներից են, օրինակ, Արթիկի դամբարանադաշտին բնորոշ, տուֆի շերտի մեջ բարձրաճիտ կոշիկի տեսքով փորված դամբարանախցերը. դրանց «ճիտքը» խցանված է այլ գույնի տուֆաքարով: Վերջինիս լրացուցիչ ամրություն տալու համար տակը քարեր են շարվել: Այդ դամբարանախցերին կից թաքստոցներ են փորված:

հանդիպում են և վերգետնյա կառուցվածք ունեցող դամբարանախցեր: Դրանք ծածկված են ինչպես հող ու քարից, այնպես և տարբեր չափերի քարերից կազմված դամբարանաթմբերով: Ուշ բրոնզի դարաշրջանում հիմնահողային դամբարանները, որոնք այնքան բնորոշ էին միջին բրոնզի դարաշրջանին, Հայաստանում սակավ են հանդիպում. դրանք առանձին հուշարձաններում են գերակշռող մնում (օր.՝Շիրակավան): Վրաստանում հակառակ երևույթն է դիտվում. այդտեղ հիմնահողային դամբարանները հիմնական տեսակն են հանդիսանում, իսկ քարարկղները հազվադեպ են հանդիպում և հիմնականում տարածված են Հայաստանին բնորոշ մշակույթի տարածման սահմանամերձ տարածքներում (հայտնի են Ալգեթի գետի հոսանքում և Թրիալեթի լեռնաշղթայի փեշերին): Վրաստանի այլ վայրերում դրանք եզակի են:

Ինչ վերաբերում է թաղումների ձևերին, ապա դրանք նույն՝ կծկած վերջույթնորով, աջ կամ ձախ կողքի պառկեցված դիրքն է. նստեցված վիճակով կատարված թաղումները հազվադեպ են հանդիպում: Հակառակ դրան՝ ոսկորներ թաղելը (երկրորդական թաղում), որը պարզ դիտվում է կմախքի անատոմիական վիճակից, տարածված է եղել: Հաճախ են հանդիպում և հուշադամբարանները. դրանց մեջ կմախքներ չեն հայտնաբերվում: Անհատական, զույգային թաղումներին զուգահեռ՝ առկա են և խմբակային թաղումներ ու մարդկային զոհաբերություններ: Վերջին դեպքում դժվար չէ տարբերել տիրոջն ուղեկցող ծառաների կամ ստրուկների և դրանցից զանազանվող ընտանիքի անդամների հաջորդաբար կատարված թաղումները: Բազմաթիվ օրինակներից կարելի է հիշատակել Ներքին Գետաշեն գյուղում բացված դամբարանաթմբերից մեկը. այդտեղ անմիջապես գետնի մակերեսին կատարված հիմնական թաղումներից առանձնացված մասում երեք գանգ էր տեղադրված: Վերջիններիս մոտ նյութեր չեն հայտնաբերվել: Հիմնական՝ ընտանիքի անդամների հաջորդաբար կատարված թաղումների հետ դրված էին բազմաթիվ խեցանոթներ, բրոնզե իրեր և այլն: Նման օրինակները բազմաթիվ են. դրանք կարող էին լինել անազատ մարդիկ կամ ռազմագերիներ: Ակնհայտ է և այն, որ բարձր խավի դամբարաններում կատարվել են թագավորավայել թաղումներ: Օրինակի համար կարելի է նշել Լճաշենում բացված, մայր հողում պատրաստված խոշոր սրահները. դրանց երկարությունը տատանվում է 5–8մ, լայնությունը՝ 2,5–3,5մ, իսկ խորությունը 3մ է հասնում: Այդ դամբարանախցերի պատերը շարված են 3-5տոն կշիռ ունեցող ժայռակտորներով: Խցերը ծածկվել են կրկնակի գերանածածկով և կեղծ կամարի ձևով շարված սալաքարերով: Այդ դամբարաններում հայտնաբերված են

սայլեր, դիապատգարակներ, զենքեր, գործիքներ, պերճանքի առարկաներ, բազմաթիվ խեցանոթներ, տիրոջն անդրաշխարհում ուղեկցող զոհաբերված ծառաների կմախքներ: Թաղումն ավարտելուց հետո դամբարանախցերը ծածկվել են 18–25մ տրամագիծ ունեցող դամբարանաթմբերով, որոնց նախնական բարձրությունը պահպանված չէ: Ակնհայտ է այն հանգամանքը, որ ցեղային ավագանուն պատկանող այդ դամբարանները զբաղեցնում են դամբարանադաշտերի՝ շարքային համայնականների դամբարաններից առանձնացված հատվածները: Այդ երևույթը դիտված է և այլ դամբարանադաշտերում:

§ 3. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Դարաշրջանի մշակույթն իրեն բնորոշ ձևերով ու հատկանիշներով զարգացման նոր աստիճան է ներկայացնում: Գեղարոտի, Արթիկի, Լոռի-Բերդի, Հառիճի, Շիրակավանի, Լճաշենի և բազմաթիվ այլ վայրերի դամբարաններից ու բնակավայրերից հայտնաբերված նյութերը բնորոշվում են նոր գծերով, որոնք անհայտ էին նախորդ դարաշրջանում և կամ հազվադեպ էին հանդիպում իբրև ոչ հատկանշական մանրամասնություն: Նախկին դարաշրջանին բնորոշ հատկանիշներն ու տեսակները հիմնականում անհետանում են, իրենց տեղը զիջելով այլ հատկանիշներով բնորոշվող նոր տեսականու՝ ուշ բրոնզի դարաշրջանին հատկանշական ձևերի: Դա հավասարապես վերաբերում է թե՛ մետաղե և թե՛ խեցեղեն արտադրանքին, ինչպես և ծիսական նշանակություն ունեցող առարկաներին, որոնք հանդես են գալիս նոր մանրամասներով ու ձևերով:

Ա. Մետաղե արտադրանք – Սրանց շարքում բավական մեծ խումբ են կազմում սակրերը, որոնց մեջ առանձնանում են ծիսական նշանակության և կամ իշխանության խորհրդանիշ հանդիսացածները: Վերջիններիս շարքում են ոչ միայն նախորդ դարաշրջանից հայտնի սեպաձև ելուստներով կոթառ ունեցողները, այլև՝ զարդարուն մակերես և շրջանաձև աշխատաբերանով նմուշները. այդպիսիները հայտնի են Արթիկի, Լճաշենի դամբարաններից (աղ.XIII$_{13,15}$), իսկ կաղապարները՝ Կարմիր բլուրի նախաուրարտական բնակավայրից ու Գեղարոտից: Առավել կարևորը, սակայն, համաչափ կոթառով և կիսաշրջանաձև աշխատաբերանով սակրերն են. ուշ բրոնզի դարաշրջանի վաղ փուլից լայն տարածում ստացած այդ իրերը, որոնց կոթառը զարգացման ընթացքում համալրվում է եզրային և կենտրոնական ելունդագոտիներով (աղ.XIII$_{16}$),

փոխարինելու են գալիս նախորդ դարաշրջանին բնորոշ, անհամաչափ համամասնություններ ունեցող նմուշներին: Դրանց հետ հաճախ են հանդիպում և երկու եզերից գոգավորվող իրան և տափակ, ուղղանկյուն բռնակ ունեցող հարթ տապարիկներ, որոնց վաղ նմուշները կրկնում են անցումային փուլից հայտնի օրինակների ձևերը. զարգացման ընթացքում դրանց թևիկները փոքր-ինչ վեր բարձրացող, իսկ աշխատաբերանը կլորացող տեսք է ձեռք բերում (աղ.XIII$_{22}$):

Գործիքների այլ խումբ են ներկայացնում նուրբ աշխատանքների համար նախատեսված բրոնզաձույլ դրերը: Կտրվածքում շրջանաձև կամ քառանկյուն բրոնզե ձողերից պատրաստված այդ գործիքների ծայրերը մի դեպքում տափակեցված և սրված են, մյուսում՝ ծայրերից մեկը բրգաձև է (աղ.XIII$_{25}$): Այդ գործիքները, ինչպես և Արթիկի դամբարանադաշտից հայտնաբերված փոքր սղոցը, հազվադեպ են հանդիպում ժամանակաշրջանի հուշարձաններում: Հակառակ դրանց, ասեղները, տարբեր ձևերի շքասեղները, օղերը, ապարանջանները հաճախ հանդիպող իրեր են: Սակավ են կորացող, լայն աշխատաբերան և ցած թեքված սուր քթով ավարտվող դանակները (աղ.XIII$_{21}$): Հետագա զարգացման ընթացքում դանակները «ածելիաձև» տեսք են ստանում: Գրեթե անփոփոխ տեսքով են հանդես գալիս մանգաղները (աղ.XIII$_{24}$):

Ուշ բրոնզի հուշարձաններում նախկինից հայտնի տերևաձև շեղբով և դաստակի ամրացման համար կարճ, փոքրիկ լեզվակ կամ թե կլորացող ուսերով, ինչպես և «շրջանակավոր դաստակով» դաշույնատեսակներին (աղ.XIII$_{2,5}$) զուգահեռ լայն տարածում են ստանում զանգակաձև գլխիկով ավարտվող խողովակաձև դաստակ ունեցողները: Սրանց վաղ շրջանի նմուշներին հատկանշական է շեղբի լայն, եռանկյունաձև տեսքը, իսկ խողովակաձև դաստակները վերին և ստորին մասերում եռանկյունաձև անցքեր ունեն (աղ.XIII$_3$): Զարգացման ընթացքում շեղբերը նեղանում և, միջնամասում երկու եզրերից գոգավորվելով, ձգված տեսք են ընդունում: Փոփոխությունների է ենթարկվում և դաստակը. վերջինիս գլանի ձևը ստացվում է դաստակի կենտրոնով անցնող բրոնզյա միջնապատի երկու եզրերից ձվածիր տեսք ունեցող թևիկները ծալելու միջոցով: Ծալված թևիկների և միջնապատի միջև ստեղծված ազատ տարածքում փայտե ներդիրներ են դրվել (աղ.XIII$_4$): Հաճախ այս դաշույները հայտնաբերվում են բրոնզյա զարդարուն պատյանների հետ, որոնք, ինչպես և նկարագրված դաշույնատեսակը, նախորդ դարաշրջանում անհայտ էին: Դաստակի և զանգակաձև գլխիկի տեսքով այս դաշույններին են կրկնում դարաշրջանի երկրորդ փուլում հանդես եկած թրերը, որոնց միակ տարբերությունը շեղբի չափերում է (աղ.XIII$_1$):

Աղյուսակ XIII



Որոշակի նորամուծություններ են դիտվում և նետ-աղեղների մանրամասներում. վանակատից և կայծքարից պատրաստված, հիմքում ուղղանկյունաձև հանվածքով, նշաձև (աղ.XIII$_2$), ինչպես և ցած կախված թևիկներով ու ձողաձև պոչիկով բրոնզաձույլ նետասլաքների շարքում հանդես են գալիս և եռանկյունաձև սլաք, բայց լայնացող հիմքում «ծիծեռնակապոչ» հանվածք ունեցող ելուստով ավարտվող նմուշներ (աղ.XIII$_{9,11}$): Նախկինում անծանոթ ձևի այս նետասլաքները ուշ բրոնզի դարաշրջանի առաջին փուլի հուշարձաններում (Շիրակավան, Լոռի-Բերդ, Արթիկ և այլն) հաճախ են հանդիպում: Այդ նետասլաքները երբեմն ուղեկցվում են ոսկրից պատրաստված, կենտրոնում ճեղքվածք ունեցող մաքոքաձև իրերով, որոնց ճեղքում սլաքն է տեղադրվել (աղ. XIII$_{7,10}$): Դարաշրջանի վերջում, աստիճանաբար կատարելագործված նետասլաքները ձևավոր՝ կենտրոնում գոգավորվող և ցած իջնող թևիկներով ավարտվող, տեսք են ստանում: Ինչ վերաբերում է աղեղներին, որոնց ամբողջական նմուշները հայտնաբերված են Շիրակավանի դամբարաններից (դրանցից մեկի թևերի բացվածքը 1,68մ է, իսկ մյուսինը՝ 1,72մ), ապա դրանց փայտե իրանները, որոնք կենտրոնական մասում ճկվող տեսք ունեն (ճկվածքի երկու կողմերում Ճ-ձև բրոնզյա հավելվածներ են ամրացված), երեսապատված են բրոնզյա գլանիկներով: Աղեղների թևիկների ծայրերին աղեղալարի ամրացման համար, կոնաձև ու կոշկաձև բրոնզաձույլ ամրակալներ են դրվել: Նման Ճ-ձև հավելվածներ հայտնի են և այլ հուշարձաններից, ինչը և ցույց է տալիս, թե այդպիսիները հաճախ են դրվել աղեղների վրա, որոնք մեզ չեն հասել: Հայտնաբերված են և նուրբ տախտակներից ու կաշվից պատրաստված կապարճների բրոնզաձույլ ամրակապեր: Այդ կապարճների ամբողջական տեսքի վերաբերյալ պատկերացում է տալիս Շիրակավանից գտնված, արվեստի եզակի նմուշ հանդիսացող, զինավառ մարդու թևատակում տեղադրված ուղղանկյունաձև կապարճը:

Առանձին խումբ են կազմում բրոնզյա գուրզերը: Գնդաձև կամ տանձաձև, զարդարուն կամ անզարդ, հարթ և կամ ելունդավոր մակերեսով այս զենքերի կոթառի միջանցիկ անցքերում, առանձին դեպքերում, կաշեփոկի մնացորդներ են հայտնաբերվում. դրանց մի ծայրը հանգուցված է, ինչը և ցույց է տալիս այդ զենքատեսակի գործածության եղանակը. երկար կաշեփոկը մեծացրել է դրանց գործողության շառավիղը: Հաճախ հանդիպող զենքերից են և խողովակաձև կոթառ ու նեղ, փետրաձև ձգված, ինչպես և լայն, դափնատերև սայր ունեցող բրոնզաձույլ նիզակները: Դրանց կոթառի վրա երկարուկ եռանկյունաձև բացվածք կա, իսկ

մարտական սայրը ընդերկայնական ող ունի, որը բարձրացրել է զենքի ամրությունը (աղ.XIII$_{6,7}$):

Նախկինից եկող, բայց կատարելագործված, նոր հատկանիշներով լրացված այս նյութերի շարքում առկա են և այնպիսիները, որոնք, հանդես գալով ուշ բրոնզի դարաշրջանի առաջին փուլում, հետագայում հազվադեպ են հանդիպում: Նման նյութերից են անվակաձև երախակալներով բրոնզաձույլ սանձերը, որոնց երկու մասից կազմված լկամի օղակաձև ծայրերը իրար մեջ են ամրացված (աղ.XIII$_{17}$):

Ուշ բրոնզեդարյան հուշարձաններում հաճախ են հանդիպում տարբեր չափերի վահանիկներ. դրանք կաշվե հիմքի վրա ամրացված լանջապանի մասեր են: Պաշտպանության այդ միջոցները համալրվել են փայտից ու կաշվից պատրաստված, ուղղանկյունաձև ու շրջանաձև վահաններով, սաղավարտներով, կաշվե լայն գոտիներով. վերջիններիս առանձին հատվածներ հայտնաբերված են Շիրակավանում, այլ հուշարձաններում, իսկ վահանները և սաղավարտները, որոնք տեսնում ենք նաև բրոնզաձույլ արձանիկների վրա, մեզ չեն հասել:

Ուշ բրոնզեդարյան դամբարաններում հանդիպող բրոնզաձույլ իրերի այս տեսականին լրացնում են նախորդ դարաշրջանից հայտնի կաթսաները, թասերը, շերեփները (աղ.XIII$_{18-20}$), այլ իրեր, որոնք, սակայն, ձևերով տարբերվում են միջին բրոնզեդարյան նույնատեսակ նմուշներից: Երևան են գալիս և նախկինում անհայտ նյութեր. եռաժանիներ (աղ. XIII$_{23}$), թռչունների, ցուլերի, քարայծերի, եղջերուների՝ ծիսական նշանակություն ունեցող արձանիկներ ու արձանախմբեր, տարբեր աստվածությունների մարդակերպ արձանիկներ, որոնց հրաշալի նմուշներից (առայժմ՝ եզակի) է Շիրակավանից հայտնաբերված, մարդու, առյուծի և թռչունների արձանիկներից կազմված, խարսխաձև պատվանդանի վրա ձևավորված արձանախումբը: Նախնադարյան արվեստի կատարյալ նմուշներ հանդիսացող այս նյութերի խմբում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում մարտակառքերի վրա կանգնած զինվորների և կամ որսի եռած երևելիների արձանախմբերը (Լճաշեն, Լոռի-Բերդ ևն), որոնք, ինչպես և նախորդները, պատրաստված են մոմե նախօրինակի միջոցով: Այդ եղանակով են պատրաստված և սնամեջ իրանների մեջ բրոնզե գնդիկ ունեցող գնդաձև բոժոժները: Բարձր վարպետությամբ և նուրբ ճաշակով պատրաստված այս իրերի շարքում առանձին խումբ են ներկայացնում պերճանքի առարկաներն ու թանկարժեք մետաղներից ստացված զարդերը: Դրանք տարբեր ձևերի ուլունքներ են, կախիկներ, բաժանարարներ, շղթաներ և այլն, որոնք պատրաստված են ձուլման,

լարածգման, փորագրման, ընդելուզման, մանրարուքի և այլ եղանակների միջոցով: Բազմաթիվ օրինակներից կարելի է հիշատակել Լճաշենի հարուստ դամբարանաթմբերից մեկում հայտնաբերված գորտի արձանիկը. ոսկերիչ վարպետը երկկենցաղի աչքերը ընդելուզել է շաղախով կամ թանկարժեք քարերով, իսկ մեջքի ուռուցիկությունները արտահայտել է հատիկներով:

Բ. Խեցեղեն արտադրանք: Հազարավոր օրինակներով հայտնաբերված խեցեղեն արտադրանքը ներկայացված է ինչպես խոհանոցային պարզ, այնպես էլ սպասքի գեղեցիկ ամաններով: Առանձին խումբ են կազմում մթերքների պահեստավորման ու կաթնամթերքներ պատրաստելու համար նախատեսված տարատեսակ անոթները: Այլ խումբ են ներկայացնում ծիսական խեցանոթները:

Նշված խմբերից յուրաքանչյուրի տեսականին հիմնականում ներկայացված է մասնագետ-արհեստավորի կողմից պատրաստված նմուշներով. տնայնագործական եղանակով պատրաստված խեցանոթներ սակավ են հանդիպում և որակ չեն կազմում: Ինչպես մետաղագործության, այնպես էլ խեցեգործության բնագավառում նկատելի են երկու պահ. մեկ դեպքում ուշ բրոնզեդարյան խեցեղենի առանձին տեսակների և զարդերի վրա ակնհայտ է նախկինից եկող որոշ ավանդույթների պահպանումը, մյուսում՝ ժամանակաշրջանի խեցեգործությանը բնորոշ ձևերի ու հատկանիշների երևան գալը: Դարաշրջանի արտադրանքի բնորոշ գիծը, անկախ նրանից, թե ինչ խմբի է պատկանում (խոհանոցային, սպասքի ևն), եթե անտեսենք որակ չկազմող առանձին կոպիտ անոթներ, անիվով պատրաստված լինելն է: Հատկանշական գծերից մյուսը՝ գերազանց, համաչափ թրծումով խեցին է, որով այս՝ նույն սև, փայլեցրած մակերեսով խեցանոթներն առանձնանում են անցումային շրջանի նույնագույն մակերես, բայց վատ թրծման հետևանքով փուխր խեցի ունեցող նույնաձև անոթներից: Ակնհայտ է և նախկին դարաշրջանին բնորոշ այլ հատկանիշների անհետացում: Մասնավորապես չեն հանդիպում սանրատամ կամ «քայլող դրոշմիչով», ինչպես և գագաթներով ցած ուղղված բջջաշար եռանկյունիները, ալիքաձև ու բեկյալ կետազարդ գոտիները և այլն: Ուշ բրոնզեդարյան խոհանոցային խեցանոթները, որոնք իրանի՝ ուսամասում փքուն տեսքով, լայն բերանի և շրթի վրա տարված ակոսաձև հանվածքով բավական նման են նախորդ փուլի կարասաձև անոթներին, սովորաբար զարդարված են պարանաձև ուռուցիկ ելունդագոտիով, թեք կտրված կարճ գծիկներով, եղունգանախշով ու հատիկազարդով, սովորաբար ուսը գոտևորող զուգահեռ ակոսներով (աղ.XIII$_{29,30}$): Առանձին դեպքերում դրանք լրացվում են նախորդ շրջանից եկող փորագիր ալիքագոտիով, որի վրա, սակայն, խաչաձև կտրվածքներով զարդերը չկան:

Հատկանիշների այս երկվությունը դիտվում է և սպասքի շքեղ խեցանոթների վրա, որոնք ձևերի բազմազանությամբ առանձնապես չեն առանձնանում: Դրանք հիմնականում սև, ագաթափայլ մակերեսով սափորներ են, կճուճներ, քրեղաններ և դրանց ձևը կրկնող քամիչներ (աղ.XIII$_{33}$): Սափորները գլանաձև, բարձր վզով, դեպի դուրս կլորացող և վերին մասում հարթ կտրած շուրթով, ուսամասում փքուն տեսքով անոթներ են: Դրանց մի մասը շրթից սկսվող և ուսն իջնող կանթ ունի, որը շրթին միացման հատվածում եռանկյունաձև հարթակ է ձևավորում (աղ.XIII$_{26}$):

Իրանի ձևով ու համամասնություններով սափորներին են կրկնում նույն՝ սև (աղ.XIII$_{28}$), փայլեցրած մակերեսով կճուճները, որոնց տարբերիչ գիծը լայն բերանն է և կարճ վիզը, որն այլ օրինակների վրա հաճախ բացակայում է: Մնացած մանրամասներում այս երկու տեսակները իրար են կրկնում, ընդհուպ զարդաձևերն ու դրանց ստացման եղանակները. դրանք փայլեցմամբ ստացված ուղղահայաց և հորիզոնական տարված ժապավեններ են, ցանցկեն պատկերներ, անկյունաձև միացող գծախմբեր: Այս զարդերը և դրանց ստացման եղանակը հաճախ հանդիպելով անցումային շրջանում, ուշ բրոնզի դարաշրջանում բնորոշ են դառնում: Այդ զարդերը ուշ բրոնզի դարաշրջանում լրացվում են նաև եռանկյունաձև, շրջանաձև ու անվակաձև դրոշմազարդերով, որոնք անհայտ լինելով նախորդ դարաշրջանում, ուշ բրոնզի առաջին փուլում հաճախ են հանդիպում (դրանք չպետք է շփոթել I հազ. սկզբի համալիրներում հանդիպող, կլորացող անկյուններ ունեցող եռանկյունաձև զարդերի հետ) և անհետանում են ուշ բրոնզի դարաշրջանի II փուլում: Նույն երևույթը դիտվում է և Արևելյան Վրաստանում, որտեղ երկրորդ փուլից սկսած, զարդերի պարզեցման, խոհանոցային խեցեղենին բնորոշ ակոսագծերի և այլ պարզ նախշերի գերակշռության միտում է դիտվում: Պարզեցման, աշխատատար գործողություններից խուսափելու, արտադրանքի թողարկումը արագացնելու այդ ձգտումը նկատվում է և Հայաստանի ուշ բրոնզի դարաշրջանի II փուլին բնորոշ խեցեղեն արտադրանքի վրա: Այս դեպքում, սակայն, զարգացումն այլ ուղղությամբ է ընթանում. փայլեցմամբ ստացված զարդերը իրենց տեղը զիջում են սեղմմամբ ստացված նույնաձև զարդերին, իսկ անոթների մակերեսի սև փայ-

լեցրած գույնը խամրած երանգ է ընդունում: Երկրորդ փուլում հաճախակի են երևում ակոսագծերն ու մատնեքազարդը, նկատելիորեն նվազում են և ուսամասում փքուն իրան ունեցողները. բնորոշ են դառնում փորի հատվածում կլորացող և ձգված իրանով անոթները:

Մակերեսի գույնի, զարդերի ձևի ու դրանց ստացման եղանակների հետ կապված նշված փոփոխությունները նույնությամբ դիտվում են և քրեղանների վրա, որոնք իրանի և շուրթի ձևով առանձին տարբերակներ են ներկայացնում: Դրանց մի մասի կլորացող իրանն ավարտվում է դուրս ճկված կլորացող շուրթով, մյուսների իրանն առանձնանում է վերին մասում ուղիղ կամ թեթևակի գոգավորվող կողերի ձևով (աղ.XIII$_{31,32}$), այլ նրբին մանրամասներով, որոնց վրա ծանրանալը իմաստ չունի. դրանք նեղ մասնագիտական բնույթ ունեն: Այստեղ կարելի է սոսկ նշել, որ հաճախ են հանդիպում կիսագնդաձև իրան ունեցող թասերը (աղ.XIII$_{35}$), փոված թասի ու քրեղանի տեսքով եռոտանի ամանները, երկու կողերից սեղմված տեսք ունեցող նավակաձև կամ «հնդկական ընկույզի» տեսքով ծիսական ամանները (աղ.XIII$_{34}$), որոնց արմատները վաղ բրոնզի դարաշրջանում են: Ծիսական անոթների այլ խումբ են ներկայացնում արկղաձև, գլանաձև, ձագարաձև տեսք ունեցողները: Ծիսական անոթների այս տեսակները հետագա զարգացման ընթացքում կատարելագործված տեսք են ընդունում, մյուսները, կապված հավատալիքների բարդացման հետ, դուրս են գալիս գործածությունից:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

§ 1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Երկաթի դարաշրջանը, որը ստորաբաժանվում է վաղ երկաթի (XII/XI-IX/VIII դդ.) և երկաթի լայն տարածման (VIII-VI դդ.) ժամանակաշրջանների, հայ ժողովրդի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում: Շրջադարձային նշանակություն ունեցող այս դարաշրջանն առանձնանում է Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքն իրենց ոլորապտույտի մեջ ներառած պատմական բուռն իրադարձություններով, որոնք, արագացնելով հայ ժողովրդի միավորման ու կազմավորման գործընթացը, ուղի հարթեցին Վանի թագավորության անկումից անմիջապես հետո հայկական միասնական պետության երևան գալու համար:

Միտանիի և Խեթական պետության՝ պատմության թատերաբեմից հեռանալուց հետո Ասորեստանը, որը ձգտում էր ինքնուրույն քաղաքական միավորումներ հանդիսացող Նաիրի երկրների թագավորների, այդ թվում և խուրրի-ուրարտական ու զագրո-էլամական ցեղամիությունների վրա իր իշխանությունը տարածել, մ.թ.ա. IX դ. սկսած հարկադրված եղավ երկարատև պայքարի մեջ մտնել նորածին Վանի թագավորության դեմ՝ աշխատելով միաժամանակ շարունակել Նաիրի երկրների հանդեպ իր որդեգրած քաղաքականությունը: Տիգրիս-Եփրատի վերին հոսանքներն ընդգրկող տարածքների ինքնիշխան և բավական ուժեղ թագավորություններին չէին անտեսում և բիայնացիները: Վերջիններս Ասորեստանի նվաճողական նկրտումները չափավորելու, իրենց սահմաններն ընդլայնելու և ամրապնդելու, ինչպես և բանակի զինական ուժը համալրելու և այն պահելու համար հաճախ էին զենքն ուղղում դեպի նշված տարածքները: Ավելին, եթե Ասորեստանը իր արշավանքներից հետո ամայացնում էր դիմադրություն ցույց տված երկրները, ապա Վանի թագավորները տեղահանում և վերաբնակեցնում էին բնակչությանը, հզոր ամրոցներ կառուցում նվաճված տարածքներում՝ աշխատելով վեջնականապես հիմնավորվել ու ամրապնդվել տերության սահմանների մեջ ներառված տարածքներում: Այդ քաղաքականությունն էին նրանք վարում և անդրարաքսյան տարածքներում, որտեղ և հայտնվեցին մ.թ.ա.

VIIIդ.: Վանի թագավորության հզորացմանն ու ամրապնդմանն ուղղված այդ քաղաքականությունը, սակայն, նպաստում էր և Հայկական ողջ լեռնաշխարհի բնակչության լեզվական համահարթեցմանը, միավորմանը. հետագայում հաղթանակում էր տարածքում մեծամասնություն կազմող բնակչության լեզուն, քանի որ խուրրի-ուրարտերենը փոքրամասնության մեջ էր: Փաստորեն ստեղծվում էր հայախոս բնակչություն ունեցող հսկայական պետություն, որի գլուխ կանգնած էին վանյան արքայատոհմի թագավորները: Պատմական այս իրադարձություններն են արտացոլում և Հայաստանի տարածքում գտնվող հուշարձանները: Վերջիններս ավելի լավ ուսումնասիրված լինելով, հնարավորություն են տալիս հետևել երկաթեղարյան մշակույթի փոփոխություններին, զարգացմանը, որի ուշ շրջանում երևում է և սկյութական տարրը: Անշուշտ, պատկերն առավել ամբողջական և հարուստ կլիներ Արևմտյան Հայաստանի համաժամանակյա հուշարձանների բավարար և համաչափ հետազոտված լինելու դեպքում. այդ բացը լրացվում է գրավոր աղբյուրների միջոցով:

§ 2. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

Երկաթեղարյան բնակավայրերը տարբեր իրավիճակներ են պատկերում: Պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ ուրարտական արշավանքներից հետո ավերված բնակավայրերի մի մասը, բնակչության տարագրվելուց հետո, երկար ժամանակ անբնակ է մնում: Նման բնակավայրերից, ինչպիսիք են, օրինակ, Դվինը, Էլարը, Շամիրամը և այլն, հայտնաբերված նյութերը (ուշ շրջանին պատկանողները) թվագրվում են մ.թ.ա. VIIIդ.: Այդ նյութերը, այլ հուշարձաններից հայտնաբերված համանման իրերի թվագրության համար, կայուն կռվան են հանդիսանում: Բնակավայրերից մյուսները, որոնց բնակչությունն, ըստ երևույթին, անձնատուր լինելով պարտավորվել է կանոնավոր կերպով հարկ տալ և հաղթողների պահանջները կատարել, առանձնապես ավերածությունների չեն ենթարկվել, բայց կյանքը դրանցում ակնհայտորեն ծանրացել է: Այդ են վկայում ոչ միայն բնակարանների կառուցվածքում երևան եկած մանրամասները, այլև դամբարանային գույքի նկատելի աղքատացումը: Օրինակի համար կարելի է նշել Շիրակավանի VIII/VII-VIդդ. թվագրվող այն դամբարանները, որոնք, պարունակելով հանդերձ ձիերի կմախքներ և որոշակիորեն առանձնանալով համաժամանակյա

մյուս դամբարաններից, պարունակած գույքով, համեմատության եզր չեն գտնում նույն դամբարանադաշտի, մ.թ.ա. IX–VIIIդդ. թվագրվող ավագանու ներկայացուցիչներին պատկանող դամբարաններից գտնված նյութերի հետ:

Այլ պատկեր են ուրվագծում ուրարտական զենքի հասանելության սահմաններից դուրս մնացած բնակավայրերը: Դրանք ջրավազանների հարևանությամբ գտնվող բարձունքների վրա կառուցված, միջնաբերդի շուրջը տարածվող կացարաններից կազմված, երկու-երեք շարք պարիսպներով շրջափակված բնակավայր-ամրոցներ են: Կիկլոպյան շարվածքով այդ պարիսպները բավական հզոր են. ունեն աշտարակներ, 4–7մ երկարությամբ որմնահեցեր, որոնք պարսպից առաջացած են 1–2մ: Ամրոցների մուտքերը, որոնք փաստորեն ամենախոցելի և թույլ մասերն են հանդիսանում, այս դեպքում ևս, իրար հաջորդող պարիսպների վրա, տարբեր ուղղություններով են բացված: Դրանց մոտ, ինչպես և նախորդ դարաշրջանում, «գրպաններ» են պատրաստված: Դիտվում է ևս մեկ մանրամասն. միջնաբերդում ձգվող պատերը երկու մասի բաժանելով բնակավայրի կենտրոնական մասը, ոչ միայն ավագանու կացարաններն ու սրբավայրը անջատել են մյուս մասերից, այլև՝ ինչ-որ չափով ամրացրել են միջնաբերդի այդ հատվածները: Առանձին ամրոցներում առկա են մոտակա ջրավազանը տանող գետնուղիներ (Հայրավանք, Թերդի-գլուխ, Էլար և այլն). Եռոքավան գյուղի մոտ գտնվող Աստղիբլուր ամրոցի գետնուղին, օրինակ, որն ունի 1,5–2կմ երկարություն, տեղտեղ 3մ խորությամբ խրամատ է, որի պատերն ու առաստաղը սալապատվելուց հետո հողով են ծածկվել:

Պարիսպների միջև կառուցված կացարանները, որոնք բնակչության աճին համապատասխան տարածվել են բլուրների լանջերով, պատրաստված են աստիճանաձև հարթակների՝ դարավանդների վրա: Դրանք կառուցելու համար, լանջի թեքության մեջ, ինչպես վաղ բրոնզի դարաշրջանում, հողը հանվել է և կտրվածքում շարվել են 1–3 պատ. դրանց քարերը ամրացվել ու ծեփվել են կավաշաղախով: Հատակագծում ուղղանկյունաձև այդ կացարանները կիսագետնափոր են և բաղկացած են մի քանի սենյակից (Քաղսիում, օրինակ, դրանց թիվը 4–8 է և այլն). դրանք հաղորդակցվել են 0,8–0,9մ լայնություն ունեցող մուտքերով: Վերջիններիս մոտ սովորաբար դռների տեղադրման համար կրնկաքարեր են դրվել: Կացարանների հատակները հարթեցված են տոփանված կավաշերտով, իսկ առանձին հատվածներում սալապատվել են: Սենյակներում հայտնաբերվում են 1–4 քարե խարիսխներ հենասյու-

ները պահելու համար: Կացարանների անկյուններում հացահատիկի հորեր են պատրաստված, որոնց մոտ հաճախ քարակերտ կուռքեր են տեղադրված: Սենյակների ներքին հարդարանքի պարտադիր մասն են կազմում պատերից մեկի կամ երկուսի երկայնքով ձգվող նստարան-մահիճները, որոնց բարձրությունը մոտավորապես 40–45սմ է: Դրանք հարթեցված են կավածեփով: Ամենայն հավանականությամբ կացարանների աղյուսաշար պատերի մեջ խորշեր են պատրաստվել ճրագների տեղադրման համար: Այդպիսին, օրինակ, բացված է Խոտ գյուղի VII–VIդդ. թվագրվող կացարաններից մեկի քարաշար պատի մեջ. պահպանված է և այդ սենյակի դռան սալաքարե բարավորը: Ընդհանուր բնույթ կրող այս պատկերը հարստացնելու և ամբողջացնելու նպատակով ստորև կներկայացվեն բնակատեղիներից մի քանիսը. դրանք հնարավորություն կտան ավելի լավ պատկերացնել նախաուրարտական և ուրարտական շրջանի բնակատեղիների առանձնահատկությունները:

Մեծամոր. տեղադրված է համանուն գետի ձախ կողմում, մոտավորապես 28մ բարձրություն ունեցող բլրի վրա՝ ներառնելով նաև վերջինիս լանջերը: Բնակավայրն ընդգրկում է շուրջ 30հա տարածություն: Ջրից ու ճահճուտներից ազատ մնացած դյուրամատչելի հատվածները պաշտպանվել են կիկլոպյան շարվածք ունեցող պարիսպներով և արհեստական ջրախրամատով: Առանձին հատվածներում պարիսպները պահպանված են 2մ բարձրությամբ և 2,6մ լայնությամբ: Բնակավայրն ունեցել է 3 շարք պարիսպ, որոնցից առաջինը շրջափակում է բլրի գագաթը, իսկ երկրորդը և երրորդը՝ ողջ բնակավայրը: Պարիսպների միջև բացված են մետաղագործական աշխատանքների հետ կապված արտադրական համալիրներ: Դրանք ձուլարաններ են, հանքաքարի հարստացման համար նախատեսված կառույցներ, արհեստավորների բնակարաններ: Արտադրական կառույցներ կան և բլրի գագաթին, որտեղ տեղադրված են և տաճարական համալիրները: Վերջիններս, ինչպես և ձուլարանները, շրջափակված են պարսպով: Արտադրական կառույցներում բացված են 23 ձուլարան: Դրանք ունեն 10սմ տրամագծով բացվածքներ, որոնցում տեղադրվել են կավակերտ օդամուղ խողովակների ծայրերը: Համալիրներում հայտնաբերված են գործիքներ ու պերճանքի առարկաներ պատրաստելու համար նախատեսված կաղապարներ: Գտնված են և մարդակերպ կուռքեր:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում բնակավայրի մոտ գտնվող ժայռերին փորագրված պատկերները, որոնք արված են ինչպես Մեծ, այնպես էլ Փոքր բլուրների վրա: Մեծ բլրի վրայի ժայռապատկերները, որոնց մեջ առանձնանում են ալիքաձև գծերը, ակնհայտորեն առնչվում են ջրի պաշտամունքին, իսկ Փոքր բլրի վրայի նշանները «երկնային» բնույթի են: Դրանց մեջ առանձին նշաններ կրկնվում են, մյուսները ներառնված են շրջանների մեջ. դրանցից են աստղանշանները, «Т» և «պ» տեսքն ունեցողները և այլն, իսկ նշաններից 17-ը նման են հայ միջնադարյան ձեռագրերում հանդիպողներին: Այդ պատկերների մեջ մեծ խումբ են կազմում 7 և 12 փոսիկներով արտահայտված շրջանաձև պատկերները: Այդ բոլոր «զարդերը» ցույց են տալիս Փոքր բլրի աստղագիտական նշանակությունը, որի մասին են խոսում և վերջինիս վրա եղած կառույցները:

Միջնաբերդից մոտավորապես 200մ հյուսիս գտնվող ժայռերի այս խմբի վրա երեք հարթակ են պատրաստված. դրանցից վերինին հասնելու համար ժայռերի վրա 7 աստիճան են փորված: Այդ հարթակներից վերինի վրա կողմնորոշիչն է, որն արվել է աստղագիտական դիտումների համար: Չափումներից պարզված է, որ ուշադրության կենտրոնում Սիրիուսն է եղել, որը III հազ. ամռան ամիսներին պայծառ կերպով է երևացել: Ինչ վերաբերում է Մեծ բլրին, ապա այդտեղ գտնվող ժայռակտորների վրա անցքեր են բացված զոհաբերվող կենդանիներին կապելու համար: Նման անցքեր են բացված և Շիրակավանի «տաճարական» համալիրի մոտ գտնվող ժայռակտորների վրա: Մեծամորի Մեծ բլուրում արված են և փորվածքներ, ժայռափոր հորեր, օջախ և այլ կառույցներ, որոնք կապված են մետաղագործության, մասնավորապես հանքաքարի հարստացման հետ. դրա նպատակը հանքաքարը դատարկ ապարներից ազատելն է եղել: Մեծ բլրի հյուսիսային լանջին բացված են 40-ից ավելի հորեր, առվակներ, խոշոր ավազան: Առվակներն ունեն 3մ երկարություն, 20սմ խորություն և 30–40սմ լայնություն, ոչ հանքային նյութերի զտման համար: Այդ ողջ համալիրը միանում է ժայռի մեջ բացված սենյակի նկուղային հարկին, որտեղ, ինչպես և II–I հազ. սկզբով թվագրվող շերտում, հայտնաբերված է կավճանման նյութի սպիտակ շերտ ու սպիտակաղեղնավուն նյութից պատրաստված աղյուսաձև նախապատրաստուկների կույտ: Դրանց անալիզները ցույց են տվել, որ այդ նախապատրաստուկների բաղադրության մեջ, որտեղ շատ են մանրացված ոսկորների կտորները, մեծ տոկոս են կազմում ֆոսֆորը, բարիումը և ստրոնցիումը. նախապատրաստուկների համար իբրև կապակցող նյութ, կավահող է օգտագործվել: Մանրացված ոսկորը խառնվել է կավահողի խառնուրդին, որից և ավազանում լուծույթ են պատրաստել: Այդ լուծույթի մանրահատիկ մասը առվակներով հոսել է հորերի մեջ ու պահեստա-

վորվել նկուղում, ուր և օրգանական նյութերից մաքրվելուց և ջրազրկվելուց հետո պատրաստուկներ են սարքվել: Դրանք չորանալուց հետո տարվել են ձուլարան և օգտագործվել ձուլման ընթացքում. կրանյութը հալեցումը դյուրացնող հալանյութի (ֆլյուս) դեր է կատարել: Այս կառույցների զգալի մասը թվագրվում է մ.թ.ա. X-IXդդ.:

Երկաթեդարյան, ավելի ստույգ՝ մ.թ.ա. VIII–VIդդ բնակարանաշինության վերաբերյալ հետաքրքիր մանրամասներ բացահայտեցին և Շիրակավանի ամրոցի պեղումները: Դարավանդի գագաթին տեղադրված այս ամրոցում, որի անպաշտպան կողմերում հզոր որմնահեցերով պարիսպների մնացորդներ են բացվել, պեղվել են երկու համալիր կառույցներ: Դրանք միանման՝ գլխատնից և դրան կից փոքր սրահից կազմված կացարաններ են եղել, որոնք միացել են 0,7մ լայնություն ունեցող մուտքով: Դրանցից մեկի մոտ հայտնաբերված է ուղղանկյունաձև փոսորակ ունեցող քար. նախապես պատի մեջ տեղադրված այդ քարը սողնակի դեր է կատարել: Գլխատներից մեկում մսուր է պատրաստված, որի կողքը ամբարն է ու նստարան-մահիճը: Գլխատներից մյուսը, որն իր սրահի հետ, ինչպես և նախորդը, կիսագետնափոր կառուցվածք է ունեցել, նեղ միջնապատով երկու մասի է բաժանված. դրանցից փոքրը տնտեսական նպատակներին է ծառայել: Այդ մասում տուֆակերտ ավազան է հայտնաբերված. ավազանները կարևոր նշանակություն են ունեցել ջրասակավ տարածքներում: Այս համալիրներում ևս (գլխատներում) բացված են 4-ական խարիսխներ հենասյուների համար, իսկ պատերի տակ նստարան-մահիճներ են պատրաստված: Այս կառույցները զգալիորեն տարբերվում են այլ վայրերի 3-4 հաղորդակից սենյակներից կազմված ընդարձակ կացարաններից: Նշանակալից է, որ ամբարն ընդամենը 6մ - քառ. տարածք է զբաղեցնում: Խոշոր, մշակված քարերով պատրաստված ուրարտական ընդարձակ բնակարանների հակապատկերը ներկայացնող այս կացարաններն ավելի շատ նման են Թեյշեբաինիում բացված բնիկների անշուք հյուղակներին, որոնք համեմատության եզր չեն գտնում ավելի վաղ շրջանի կառույցների հետ:

§ 3. ՏԱՃԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ

Երկաթի դարաշրջանի տաճարների կառուցվածքի, դրանց առանձնահատկությունների վերաբերյալ պատկերացում են տալիս Դվինում և Մեծամորում պեղված համալիրները:

Դվինի համալիրը. քարե հիմքի վրա բարձրացող աղյուսաշար պատերով ընդարձակ կառույց է եղել, որի հարթ տանիքը պահվել է խոշոր խարիսխների վրա կանգնեցված հենասյուներով: Կառույցների պատերն ու հատակը կավածեփ են: Պատերի մեջ բացված խորշերում ծիսական իրեր են դրվել: Սրբարաններում բացված են հատակագծում կիսաշրջանաձև, ցածր պատով առանձնացված կրակարաններ, որոնց մեջ մոխրի և ածուխի մնացորդներ են հայտնաբերված: Կրակարանների ետևում պատրաստված է 1,8 մ երկարություն և 25 սմ բարձրություն ունեցող զոհասեղան, որի մոտ կավակերտ հարթ տախտակներ կան: Վերջիններիս վրա կավե նուրբ գոտիներով ու կավազանգվածով արտահայտված են բարձրաքանդ (ռելիեֆ) տեսք ունեցող մարդադեմ և ցլագլուխ քանդակներ, կամարաձև գոտիներ, օձապատկերներ, արև խորհրդանշող նկարներ: Տախտակներից (դրանց չափերը 55×55×5սմ և 62×51×5սմ են) մեկի ետևում, որն ավելի վաղ լինելով՝ հետագայում կավով է ծածկվել, ծառերի պատկերներ են արված: Այդ մանրամասնը ցույց է տալիս, որ նշված կավակերտ տախտակները, «սրբացված» համարվելով, չեն նետվել, այլ կապված հավատալիքների բարդացման և նոր ծեսերի հետ՝ վերափոխվել են, վերաիմաստավորվել նոր պատկերներով: Դվինի սրբարաններից մեկում հայտնաբերված են մայր աստվածուհու կուռք, այրված ցորենի ու գարու հատիկներով լի կարաս: Սրբարաններում հայտնաբերված են ևս մի քանի ծիսական նշանակության կարասներ: Դրանք զարդարված են օձերի ու խոյերի բարձրաքանդակներով: Բացված են նաև հորեր, որոնցից մեկում գտնվել են խաղողի այրված վազեր, աղորիք և փոքր կուռք:

Առանձին կարևորություն է ներկայացնում Դվինի I և II սրբարանների միջև գտնվող տարածքում մետաղագործի արհեստանոցի հայտնաբերումը: Այդտեղից գտնված նյութերը ցույց են տալիս, որ այն համաժամանակյա է սրբարաններին: Այդտեղ բացված է 0,7մ տրամագիծ ունեցող քարաշար հնոց, որի ստորին մասը լցված է մոխրով, փայտածուխով ու ֆլյուսի դեր կատարող այրված ոսկորներով: Հնոցի մոտ գտնվել են կավից պատրաստված փքսափող, մետաղի խարամ, բրոնզից և երկաթից պատրաստված՝ կոտրտված, գործածությունից դուրս եկած և վերահալելու համար նախատեսված իրեր, զարդեր, նետեր ու տապար պատրաստելու կաղապարներ, սանդղոքեր: Սրբարաններին կից գործող մետաղագործական արհեստանոցների առկայությունը, ինչպես նշվեց վերևում, կրկին ցույց է տալիս այս արհեստաճյուղի ծիսական բնույթ ունենալը, ինչը հաստատվում է և ազգագրական տվյալներով:



Առաջին սրբարան

Երկրորդ սրբարան

Մեծամոր. միջնաբերդում կառուցված տաճարական համալիրը բաղկացած է օժանդակ կառույցներից և երկու աղոթարան-սրբարաններից, որոնք կառուցելու համար կտրվել է ժայռի մի հատվածը: Սրբարանների մոտ տեղադրված են երեք օժանդակ կառույցներ: Դրանք 8մ երկարությամբ և 2–2,5մ լայնությամբ շինություններ են, որոնք միմյանցից անջատված են 2մ լայնություն ունեցող պատով. այն իր վրա է կրել երկու սրբարանների ծածկերի ծանրությունը: Սրբարանները, որոնց պատերն ու հատակը կավածեփով հարթեցված են, հաղորդակից չեն. դրանք արևմտյան կողմում իրենց առանձին մուտքերն ունեն, որոնցից ներս մտնողը դեմքով հայտնվել է արևելյան կողմում տեղադրված զոհասեղանի դիմաց: Սրբարանների կենտրոնական մասում տեղադրված են զոհասեղաններ, այլ կառույցներ: Զոհասեղանները կավակերտ բոլորաձև կառույցներ են, որտեղ կրակն է վառվել: Զոհասեղաններն իրենց կրակարաններով լրացված են պատվանդաններով ու կուռքերով, որոնց մի խումբը իրար ետև կանգնեցված, թևերը վեր պարզած մարդկանց է հիշեցնում: Դրանց սյունաձև թևերի և նույնատեսք գլխի վրա թասանման գոգավորություններ են արված: Զոհասեղանի աջ և ձախ կողմերում օժանդակ կառույցներ են պատրաստված: Դրանցից մեկը երկմասանի ցածր ավազան է՝ հեղման արարողությունների համար և եզրերին թասաձև հինգ գոգավորություն ունի: Զոհասեղանի մյուս կողմում երկմասանի, պայտաձև տեսք ունեցող, կամարաձև ծածկ և կավակերտ ծխնելույզ ունեցող վառարան է տեղադրված (աղ.XIV$_1$):

Փոքր-ինչ այլ տեսք ունի երկրորդ սրբարանի զոհասեղանը: Այստեղ ևս, մոխրով լի երկու պայտաձև կրակարաններ են բացված, բայց դրանց ետևում բարձրացող երկու կոթողները ոչ թե մարդակերպ են, այլ աստիճանաձև բարձրացող բուրգի տեսք ունեն: Այդ զոհասեղանի մի կողմում կամարաձև ծածկով վառարան է պատրաստված, որի մեջ սաջ է գտնված, իսկ մյուս կողմում երեք բաժանմունքից կազմված կավակերտ գոգավորություններ են արված: Այս սրբարանում ևս ավազան է պատրաստված, որի եզրերին թասաձև գոգավորություններ կան (աղ.XIV$_2$): Բացված երկու սրբարաններում, որոնցից ոչ հեռու մետաղագործի արհեստանոցն է գտնվում, հայտնաբերված են արկղաձև շարժական օջախներ, մ.թ.ա. II հազ. վերջ. – I հազ. սկզբով թվագրվող ծիսական անոթներ, խեցանոթների բեկորներ:

Մեծամորում շարունակվող լայնածավալ պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ այն վաղ երկաթի դարաշրջանում Ազա երկրի քաղաքային խոշոր կենտրոններից է եղել, որն ունեցել է կառավարման,

վարչական, պաշտամունքային գործառույթներ իրականացնող բարդ համակարգ: Դրա ապացույցը պարսպապատ միջնաբերդի սահմաններում բացվող պալատական համալիրն է:

§ 4. ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ

Կրկնում են նախորդ դարաշրջաններից հայտնի տեսակները. դրանք քարալիցք կամ հող ու քարից կազմված դամբարանաթումբ ունեցող, կրոմլեխով շրջափակված և կամ առանց դամբարանաթմբի, սոսկ կրոմլեխով շրջափակված, հիմնահողային, քարարկղային կամ սալարկղային կառուցվածք ունեցող, նախկինից հայտնի նույն հուշարձաններն են: Վերջիններիս շարքում, Շիրակում (Արթիկ, Ոսկեհասկ) տեսնում ենք և կոշկաձև կատակոմբներ, որոնք վաղ տարիք ունեցողներից, թերևս, տարբերվում են նրանով, որ սովորաբար պարունակում են ոչ թե մեկ, այլ զույգ կամ խմբակային թաղումներ:

Խմբակային թաղումները միշտ չէ, որ պայմանավորված են տիրոջ ու ծառաների (ստրուկ) կարգավիճակներով: Դարաշրջանի դամբարաններում հաճախ դիտվող այս երևույթի պատճառը նաև հաջորդաբար կատարված թաղումներն են, որը տարբեր դամբարանադաշտերում է դիտված. նախկինում թաղվածների ոսկորները խառը կերպով մեկ տեղ են հավաքվել նոր հանգուցյալի համար տեղ ազատելու նպատակով: Դրանով է բացատրվում առանձին դամբարանների՝ մասնակի կերպով սալաքարերով ծածկված լինելը: Նման դեպքերում դամբարանի ծածկասալերը հաճախ քարալիցքի բարակ շերտով են ծածկված լինում, իսկ երբեմն և ծածկասալերի հատվածները երևում են գետնի մակերեսին: Այս երևույթը տարբեր դամբարանադաշտերում տարբեր կերպ է դրսևորվում. եթե դամբարանների մի մասում ընտանիքի կամ գերդաստանի անդամները նույն դամբարանախցում են թաղվել (նման դեպքերում կարևորվում է և նյութի տեսականին. խմբակային թաղումներ պարունակող դամբարանները միշտ չէ, որ առանձնանում են գույքի հարստությամբ), ապա այլ դեպքերում առանձին դամբարաններում կատարված անհատական թաղումները, սկզբնապես ծածկվելով փոքր դամբարանաթմբերով, ժամանակի ընթացքում անկանոն ձևերի, ընդարձակ տարածք զբաղեցնող դամբարանաթմբեր են ձևավորել: Այդպես են կազմվել, օրինակ, Մոզի, Եղեգնաձորի և այլ հուշարձանների շարքային համայնականների պատկանող, 3–8 վերգետնյա քարարկղներ ծածկող, քարալիցքից կազմ-

ված դամբարանաթմբերը. մ.թ.ա. IX–VIIIդդ. թվագրվող այդ դամբարաններից սակավաթիվ նյութեր, հաճախ՝ սոսկ խեցանոթների մասեր են հայտնաբերված: Պատկերը նույնն է նաև Անգեղակոթի և համաժամանակյա այլ դամբարանադաշտերի դամբարաններում, այն տարբերությամբ, որ այդ թաղումները կատարված են նույն դամբարանախցում: Բերված օրինակները, որոնք ամենևին էլ նշվածներով չեն սպառվում, ցույց են տալիս, որ խմբակային թաղումները միշտ չէ, որ հասարակական կարգավիճակով են պայմանավորված եղել:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Այգեշատ գյուղի հյուսիս-արևմտյան մասում գտնվող «Աղթամիր» կոչված դամբարանադաշտի մ.թ.ա. X–IXդդ. թվագրվող դամբարանները: Բավական խիտ դասավորված այդ կրոմլեխներում, որոնցով շրջափակված են հիմնահողային, քարալիցքի բարակ շերտով ծածկված դամբարանախցերը, առկա են տարբեր չափերի մարդակերպ կամ սյունաձև կուռքեր: Այդ դամբարանադաշտի բնորոշ գծերից մյուսը՝ կմախքների ոսկորների և ուղեկցող նյութերի կավացեխով պատված լինելն է: Այդ երևույթը, ինչպես նշվեց, դիտված է և ավելի վաղ տարիքի (միջին բրոնզ), հատուկ կարգավիճակ ունեցող հանգուցյալների պատկանող դամբարաններում: Այստեղ, սակայն, այդ ծեսը գրեթե համատարած բնույթ է կրում:

Դարաշրջանի դամբարանների բնորոշ գիծը, որը դիտվում է ամենուր, ինչպես տեսնում ենք, դամբարանների չափերի փոքրացումն է՝ անկախ նրանց տեսակից և պարունակած գույքի տեսականու հարստությունից: Ուշ բրոնզի դարաշրջանի հատկապես վաղ փուլին բնորոշ, առաջնորդների արքայավայել թաղումներ պարունակող խոշոր դամբարանասրահները անհետանում են:

§ 5. ՎԱՂ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Վաղ շրջանի երկաթեդարյան բնակավայրերի տարբեր շերտերից և ժամանակագրորեն դրանց համապատասխանող դամբարաններից հայտնաբերված տարատեսակ նյութերը ցույց են տալիս ոչ միայն դարաշրջանի մշակույթի զարգացման ընթացքը, այլև կապը ուշ բրոնզեդարյան մշակույթի հետ, ինչն ակնհայտ կերպով խոսում է ժառանգականության մասին: Դա հստակ դիտվում է վաղ երկաթի դարաշրջանի նյութերի տեսականու առանձնահատկություններին, բնորոշ գծերին

հետևելու ընթացքում: Առաջին հերթին ուշադրություն է գրավում նախորդ դարաշրջանում լայն տարածված և ժամանակաշրջանին բնորոշ, ձևավոր և բարդ տեսք ունեցող բրոնզե զենքերի և այլ իրերի պարզեցումը, դրանք երկաթե նմուշներով փոխարինելու ձգտումը, որն ընդգծված դրսևորվում է մ.թ.ա. I հազ. սկզբից: Ժամանակաշրջանի համալիրներում բրոնզյա սակրերը, ծալված թևիկներով դաստակներ ունեցող թրերն ու նման դաշույնները, անվակաձև այտուցաններով սանձերը և այլ նյութեր գրեթե չեն հանդիպում: Ճիշտ է, այս դեպքում կարող էր դեր խաղալ և բրոնզի թանկացումը: Գրավոր աղբյուրները վկայում են, որ մ.թ.ա. VIդ. արդեն, բրոնզը երկու անգամ երկաթից թանկ էր: Բրոնզի թանկացման վկայություն կարող է հանդիսանալ և Դվինի մետաղագործի արհեստանոցից վերածուլման ենթակա այլ իրերի հետ հայտնաբերված բրոնզյա սակրի ու թրի մասերը (մ.թ.ա.IX-VIIIդդ), Գանթիադիից գտնված համանման իրեր պատրաստելու համար նախատեսված կաղապարները, Մեխչիս-Ցիխեի (Վրաստան) գանձի նյութերը. դրանք ցույց են տալիս, թե նման իրեր պատրաստվել են և մ.թ.ա. I հազ.I քառորդում: Վերջիններս, սակայն, այլևս որակ չեն կազմում, դադարում են դարաշրջանի բնորոշ նյութ հանդիսանալուց:

Փոփոխություններից հաջորդը՝ նախկինում հազվադեպ հանդես եկող, դեռևս ոչ բնորոշ տեխնիկական եղանակների, ձևերի և առանձին զարդատեսակների հատկանշական դառնալն է, ավելորդ մանրամասներից, աշխատատար գործողություններից խուսափելու, ժամանակը խնայելու, այն առավել արդյունավետ օգտագործելու միտումն է: Ժամանակաշրջանի երրորդ գիծը տվյալ ժամանակին բնորոշ նոր ձևերի հանդես գալն է: Եռաբնույթ այս հիմնական փոփոխություններին զուգահեռ, հաճախ են հանդիպում և այնպիսի նյութեր, որոնք, գալով նախկին դարաշրջանից, անփոփոխ կերպով գործածվում են և երկաթի դարաշրջանում: Դրանք հիմնականում քարից և ոսկրից պատրաստված, առօրյա կիրառություն ունեցող այն իրերն են, որոնց նախկին ձևերով օգտագործվելը առանձնապես չի ազդել աշխատանքի արտադրողականության վրա: Խոսքը վերաբերում է նավակաձև աղորիքներին, սանդ-սանդկոթերին, իլիկների գլուխներին և համանման այլ իրերի, որոնք կամ չէին կարող մետաղից պատրաստվել և կամ դրանց մետաղե նմուշներով փոխարինելը առաջին անհրաժեշտություն չէր հանդիսանում: Նման երևույթը, հասարակության խոր շերտավորման պայմաններում, օրինաչափ երևույթ էր: Տվյալ դեպքում էականը այն իրերն են, որոնց նախկին նյութերով ու ձևերով պատրաստելը արդյունավետ չէր: Վերջիններիս

շարքում, առավել ակնառու փոփոխությունը, նախորդ դարաշրջանին բնորոշ՝ բրոնզաձույլ, աշխատատար գործողություններ պահանջող իրերի գործածությունից դուրս գալն է, պարզեցումը, հնարավորության դեպքում՝ դրանց փոխարինումը երկաթյա համանման օրինակներով: Դրա ապացույցը մետաղյա իրերն են:

Մետաղե արտադրանք: Վաղ երկաթեդարյան դաշույնների բնորոշ տեսակը, այսպես կոչված, «սևանյանն» է, որը հանդես է գալիս ինչպես բրոնզից (աղ.XV_3), այնպես և երկաթից պատրաստված օրինակներով: Սրանք նախորդ դարաշրջանում լայն տարածված և հաճախ հանդիպող, դաստակի ամրացման համար տափակ լեզվակով և եռանկյունաձև կամ ձգված շեղբով, նույն պարզ զենքերն են (աղ.XV_4): Այս նոր դաշույնատեսակը, սակայն, նախորդ դարաշրջանների համանման օրինակներից տարբերվում է բրոնզե գոտեկապի և զանգակաձև գլխիկի առկայությամբ, շեղբի առանձին մանրամասներով: Բրոնզաձույլ դաշույնների այս տեսակը, որին զուգահեռ հանդես են գալիս և բրոնզե գոտեկապ ու զանգակաձև գլխիկ ունեցող երկաթյա նմուշներ (հանդիպում են նաև մահիկաձև գլխամաս, ինչպես և շրջանակավոր դաստակ ունեցողներ), գործածությունից դուրս են մղում ծալած թևիկներով դաստակ ունեցող տեսակը՝ պահպանելով սոսկ վերջինիս բնորոշ բրոնզաձույլ գլխիկը և ավելացնելով դրան բրոնզե գոտեկապ՝ դաստակի ամրացման համար: Ծալած թևիկներով դաստակ ունեցող դաշույնները վաղ երկաթի դարաշրջանում հազվադեպ են հանդիպում: Դարաշրջանի հուշարձաններում չեն հանդիպում և նույն ձևն ունեցող բրոնզաձույլ թրերը. դրանք փոխարինվում են երկաթից պատրաստված օրինակներով, որոնց սակավ հանդիպող նմուշներն ավարտվում են կարճ, տափակ լեզվակով (աղ.$XV_{1,2}$), շրջանակավոր դաստակով:

Որոշակի փոփոխություններ են դիտվում և նիզակների ձևերում. պարզ փետրաձև ու տերևաձև սայրով բրոնզյա նմուշները ուշ բրոնզի վերջում աստիճանաբար դուրս են մղվում, սկզբում՝ ավելի ձգված, կենտրոնական ողի երկու կողմերից հանվածքներ ունեցող և սրվող սայրով ավարտվող նիզակների կողմից, որոնք իրենց հերթին փոխարինվում են երկաթյա օրինակներով (աղ.$XV_{5,6}$): Նույնը դիտվում է և նետասլաքների դեպքում. վերջիններիս պարզունակ նմուշները սկզբում փոխարինվում են կենտրոնական մասում թեթևակի գոգավորվող և կլորացող թևիկներով ավարտվող իրան ունեցող «ճանկավոր» նետերով (աղ.XV_7): Դրանց զուգահեռ՝ մ.թ.ա. I հազ. սկզբից սկսած, առավել հաճախ են հանդիպում երկաթից պատրաստվածները (աղ.$XV_{8,9}$):



Վաղ երկաթեդարյան հուշարձաններում խիստ հազվադեպ են հանդիպում և անվակաձև երախակալներով ավարտվող բրոնզաձույլ սանձերը (Շիրակավանի նմուշը թվագրվում է IX-VIII դդ.). դրանք իրենց տեղը զիջում են բրոնզից պատրաստված ձողաձև վերջավորություններ ունեցող օրինակներին՝ մյուս մանրամասներում կրկնելով նախորդին (աղ.XV_{10}): Հանդիպում են և ավելի պարզեցված, սոսկ օղակաձև հավելված ունեցող սանձեր:

Դարաշրջանի հուշարձաններում սովորական նյութերից են և ատամնավոր մակերեսով բրոնզաձույլ ապարանջանները (աղ.XV_{11}), օղերը. դրանց շարքում առաջին անգամ երևան են գալիս ներճկված մեջք ունեցողները (Շիրակավան, Թալին): Այդպիսիները բնորոշ են դառնում երկաթի լայն տարածման դարաշրջանում (աղ.XV_{12}): Սովորական են և օձագլուխ ծայրերով ավարտվող ապարանջանները, իսկ հարստությամբ առանձնացող դամբարաններում գտնվում են և բրոնզյա երկժանիներ, գավազանների տարատեսակ գլխակալներ ու ծայրակալներ (աղ. $XV_{13,14}$): Վերջիններիս շարքում կան և գլագլուխ կամ գլանաձև տեսք ունեցողներ:

Ժամանակաշրջանի դամբարաններում հայտնաբերված բրոնզաձույլ նյութերի շարքում տեսնում ենք նաև զարդարուն ու անզարդ բրոնզե գոտիներ (աղ.XV_{15}), ածելիաձև դանակներ (աղ.XV_{16}), մանգաղներ (աղ.XV_{17}), տապարիկներ (աղ.XV_{18}), առանձին հետաքրքրություն են ներկայացնում և համակենտրոն եռաշրջան կախիկներն ու անկյուններում՝ թևերը արմունկներից ծալված ու վեր պարզած, ինչպես և աստղաձև ելուստազարդեր ունեցող շքասեղները. ելուստազարդերի քանակը կապվում է անզեն աչքով երևացող 7 մոլորակների հետ: Լուսատուների և երկնային տարատեսակ երևույթների հետ կապվող պատկերացումները իրենց արտացոլումն են գտնում և բրոնզյա գոտիների զարդաձևերում:

Վաղ երկաթեդարյան հուշարձաններում տեսնում ենք և կամարաձև իրանի վրա գնդիկաձև ելուստ ունեցող շիգղեր, «գեորգիևյան խաչի» և «գոմինոյի» խաղաքարի տեսքով, ինչպես և եռանիստ ուլունքներ, մարդակերպ կախիկներ, խխունջներ (աղ.XV_{19-21}), այլ զարդեր:

Խեցեղեն արտադրանք. ներկայացված է բավական հարուստ տեսականիով, որը ձևերով, զարդերով ու դրանց ստացման եղանակներով, ինչպես և դարաշրջանում երևան եկած առանձին մանրամասներով, մակերեսի գունեռանգներով որոշակիորեն առանձնանում է ուշ բրոնզեդարյան նմուշներից: Այդ առանձնահատկությունները օգնում են թվագրության հստակեցմանը: Դա կարևոր է. զանգվածաբար հանդիպող խեցեղենը, հաճախ դամբարան դրված միակ նյութն է հանդիսանում: Դրանք

սափորներ են, կճուճներ, քրեղաններ, գավաթներ, բաժակներ, խնոցիներ և այլ անոթներ, որոնց վրա դիտվող առանձին մանրամասներ բնորոշ են դառնում վաղ երկաթի դարաշրջանի համար: Դա ավելի հստակ է դիտվում սպասքի խեցանոթների վրա, բայց ոչ խոհանոցային նշանակություն ունեցողների: Վերջիններս հիմնականում նույն՝ սև, մրապատ, գորշավուն, դեղնա-դարչնագույն կամ կարմրավուն մակերեսով, դուրս ճկված շուրթով և ուռուցիկ իրանով, նախկինից հայտնի կճուճներն են, որոնք զարդարված են եղունգազարդով ու հորիզոնական ակոսներով, իսկ հատակը՝ թեք կտրած գծերով: Մանրամասներից վերջինը հետագա զարգացման ընթացքում սակավ է հանդիպում: Լայնաբերան այս անոթների վրա, սակայն, հաճախ են երևում շուրթից սկսվող և ուսն իջնող լայն և կամ գոտկամասում ամրացված օղակաձև կանթերը. դրանք բնորոշ չէին նախորդ դարաշրջանին (աղ.$XV_{24,25}$): Այս անոթների ձևն են կրկնում և ծորակ ունեցողները: Մ.թ.ա.I հազ. սկզբից հաճախ հանդիպող, կճուճի տեսքով այս խեցանոթների վրա երբեմն ձևավոր կանթեր են ամրացված լինում (աղ.XV_{27}):

Ուշ բրոնզի դարաշրջանի համանման խեցանոթներին են զգալիորեն նմանվում և կլորացող իրանով խոր քրեղանները, որոնք, հաճախ հանդիպելով վաղ շրջանի համալիրներում (աղ.XV_{35}), զարգացման ընթացքում իրենց տեղն աստիճանաբար զիջում են երկկոնիկ, կիսագնդաձև կամ վերին հատվածում զոգավորվող, ինչպես և դեպի դուրս փռված, կտրվածքում կտցաձև շուրթ ունեցող օրինակներին (աղ.$XV_{34,36,37}$): Բնորոշ գծերից մյուսը՝ քրեղանների և ընդհանրապես սպասքի խեցեղենի վրա հաճախ դիտվող ծալքագոտիներն են, որոնք դարաշրջանի լայն տարածված մանրամասներից են: Խեցեղենի բնորոշ տեսակներից են և ստորին մասում փոքրինչ երկկոնիկ տեսք ունեցող և դեպի վեր աստիճանաբար նեղացող ու ձգվող իրան ձևավորող բաժակները (աղ. XV_{33}), որոնք ակնհայտորեն տարբերվում են ուշ բրոնզում հանդիպող, կլորացող իրան ունեցող օրինակներից: Ավելին, վաղ երկաթեղարյան առանձին նմուշներ օղակաձև կանթ ունեն, որն անծանոթ էր վաղ շրջանի կլորացող իրան ունեցողներին:

Որոշակի փոփոխություններ են դիտվում և սափորների ձևերում; Դրանց մի մասն անկանթ է, մյուսները միականթ. հանդիպում են և երկկանթ ու եռականթ նմուշներ: Այս խեցանոթների բնորոշ գծերից մեկը, անկախ նրանից՝ դրանք անկանթ են, թե կանթավոր, բարձր, փողաձև լայնացող վիզն է, որն ավարտվում է դեպի դուրս կլորացող շուրթով: Անոթների այս տեսակը ուշ բրոնզեդարյան՝ ուսամասում փքուն իրան ունեցող նմուշներից տարբերվում է նաև իրանի ձգված, թեթևակի երկկոնիկ և կամ գնդաձև տեսքով: Հատկանշական մանրամասներ են դիտվում և կանթերի ձևերում. դրանք ծնկաձև, ձևավորված կամ սապատավոր երկգագաթ տեսք ունեն (աղ.$XV_{26,28,30,31}$), իսկ առանձին նմուշների շրթի միացման հատվածում թեթևակի բարձրացող ելուստ են ձևավորում: Կանթերի այս ձևերը ուշ բրոնզեդարյան օրինակների վրա անհայտ են: Նույնը վերաբերում է և անոթների սև կամ գորշ, թույլ փայլեցրած մակերեսին փորագրմամբ ստացված եռանկյունիների մեջ տարված ուղղահայաց կամ հորիզոնական ալիքներին (աղ.XV_{29}): Վերջիններս, ինչպես և երկգագաթ կամ «սապատավոր» կանթերը, թվագրող նշանակություն ունեն. դրանք առավել բնորոշ են մ.թ.ա. IX–VIIIդդ. թվագրվող խեցանոթներին:

§ 6. ԵՐԿԱԹԻ ԼԱՅՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ (II ՓՈՒԼ)

Մ.թ.ա. VIII – VIդդ. I քառորդն ընդգրկող ժամանակաշրջանի հուշարձաններից հայտնաբերված տարատեսակ նյութերը երեք խումբ են ներկայացնում: Դրանք են՝ ա) նախկինից հայտնի, գրեթե անփոփոխ տեսքով հանդես եկող տեսակներ ու ձևեր, բ) նոր հատկանիշներ դրսևորող՝ ժամանակաշրջանին բնորոշ նյութեր և գ) խառը՝ տեղական և բիայնական մշակույթներին հատկանշական գծերով տեսակներ:

Առանձնացված խմբերից առաջինը, որը ներկայացված է գոտիներով (աղ.XVI_{11}), բրոնզե խողովակներով (աղ.XVI_{29}), տարատեսակ ապարանջաններով (հիմնականում պարզ տեսակներ), օղերով, թռչնաձև կախիկներով (աղ.XVI_{18}), տարբեր ձևերի ուլունքներով (գնդաձև, տակառաձև, գլանաձև, եռանիստ, երկկոնիկ և այլն, աղ.XVI_{26-28}), կենտրոնում կիսագնդաձև և հարթ եզրեր ունեցող վահանիկներով (աղ.$XVI_{23,24}$), «սևանյան» տեսակի և լեզվակավոր պարզ դաշույններով (աղ.$XVI_{3,4}$), երբեմն և սրերով ու դրանց պատյաններով (աղ.$XVI_{1,2}$) սրվող քթիկ ունեցող դանակներով (դրանց շարքում հաճախ են հանդիպում և ուրարտական նմուշներին կրկնող, ժամանակաշրջանին բնորոշ, կեռշեղը դանակներ (աղ.$XVI_{7,8}$), բրոնզից և երկաթից պատրաստված այլ իրերով, ինչպես և տարբեր ձևեր ու զարդեր ունեցող խեցանոթներով (աղ.$XVI_{31,32,40-43}$), ժամանակաշրջանի համալիրների թվագրման համար առանձին նշանակություն չունեն: Այդ նյութերը կարևորվում են նախորդ դարաշրջանների մշակույթների հետ եղած ժառանգական կապերին հետևելու համար:



Աղյուսակ XVI



Թվագրության և մշակույթի զարգացման հիմնական գծերը վեր հանելու համար կարևորը երկրորդ և երրորդ խմբերի նյութերն են: Այսպես՝ հիմքում կլորացող կամ անկյունաձև անցում ձևավորող, ձգված, երկար մարտական սայր և դրա համեմատ ավելի կարճ կոթառ ունեցող երկաթյա նիզակներ, խողովակաձև կոթառի և խոցող մասի համամասնություններով, բնորոշ են բիայնական նմուշներին, բայց փետրաձև սայրի նեղ, ձգված տեսքը տեղական նիզակներին է հատկանշական (աղ.XVI$_{5,6}$): Այս երևույթը խոսում է երկու՝ տեղական և բիայնական մշակույթների փոխազդեցության մասին, որը դիտվում է և այլ նյութերի վրա:

Ուշագրավ են և մի քանի տարբերակով հանդիպող սանձերը: Դրանց մի մասի կլորացող կամ քառակող ձողի տեսք ունեցող այտաճանների վրա, որոնք զուրկ են նախորդ շրջանին հատկանշական կոնաձև կամ սկավառակաձև գլխիկներից, առկա են կողքից օղակաձև առանձնացող ելուստներ. (աղ.XVI$_{9ա,9բ}$) այդ սանձերը փոխարինելու են գալիս այտաճանի մեջ անցքեր ունեցող նմուշներին: Այլ տարբերակ են ներկայացնում ասորեստանյան օրինակները հիշեցնող, կլորացող այտաճանով սանձերը և միանգամայն տարբեր տեսք ունեցող, ուղղանկյունաձև, տափակ այտաճանի եզրին օղակներ ունեցողները. վերջիններիս վրա, ամենայն հավանականությամբ, ուժեղ, վայրի ձիեր վարժեցնելու նպատակով ատամնավոր սկավառակներ են հագցված (աղ.XVI$_{9}$): Նշված տեսակներից միանգամայն տարբեր են ոսկրից պատրաստված, թեթևակի կորացող տեսքով այտաճան ունեցող սանձերը, որոնց վրա անցքեր են բացված: Մկյութական նմուշները հիշեցնող սանձերի այս տեսակը ժամանակաշրջանի հուշարձաններում, եթե չանտեսենք սկյութական տարրի առկայությունը տարածաշրջանում, որի ապացույցն են և հաճախ հանդիպող, խողովակաձև կոթառ և եռաթև տեսք ունեցող սկյութական բրոնզյա նետասլաքները, միանգամայն օրինաչափ է:

Ժամանակաշրջանի հուշարձաններում սովորական նյութերից են դոմինոյաձև, եռանկյունաձև ու եռանիստ տեսք ունեցող ուլունքները (աղ.XVI$_{26-28}$), ինչպես և բիայնական նմուշներին նմանակող կեռշեղբ դանակները: Վերջիններիս դաստակները մի դեպքում գլանաձև են, մյուսում՝ շրջանակավոր (աղ.XVI$_{7,8}$), իսկ երրորդները տափակ են. դրանց վրա փայտե մասեր են ամրացվել: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Շիրակավանից գտնված դանակներից մեկը, որի շեղբը ամրացված է դաստակի հիմքում բացված ճեղքի մեջ. այս մանրամասնությունը բնորոշ է Ասորեստանի զինագործությանը (աղ.XVI$_{8ա}$):

Բիայնական մշակույթի հետ են կապվում կոնաձև ու կլորացող իրանով զանգակներն (աղ.XVI$_{17}$) ու սկավառակաձև, փոքր-ինչ ուռուցիկ տեսքով, կենտրոնում բրգաձև ելուստ ունեցող վահանիկները, որոնք կաշվե հիմքին են ամրացվել վահանիկի ետին մասում արված կամրջակի միջոցով (աղ.XVI$_{10}$):

Ժամանակաշրջանի համալիրներում առաջին անգամ են երևում գնդիկներից կազմված ապարանջանները (աղ.XVI$_{20}$), օղերն ու կախիկները: Վերջիններս փոքրիկ օղակ ունեն կախելու համար: Նախկինում հայտնի տարբերակներին (աղ.XVI$_{22}$) զուգահեռ հանդես են գալիս ինչպես տափակեցված ուղղանկյուն, այնպես էլ սկավառակաձև մեջքով շիգերը. առկա են և իրանը բարակեցնելու եղանակով ասեղ ձևավորած օրինակներ: Հաճախ հանդիպող նյութերից են և օձագլուխ ապարանջանները (աղ.XVI$_{19}$), ոլորուն ու հարթ մակերեսներով, կլորացող ծայրերով մանյակները, տարբեր ձևերի (գնդիկավոր, մարդանման, եռատամ և այլն) կախիկները (աղ.XVI$_{13-16}$), որոնք նախորդ փուլի հուշարձաններում (եռատամը) խիստ հազվադեպ էին հանդիպում: Սակավ հանդիպող նյութերից են և բրոնզյա մազխիլները, որոնց մակերեսները սովորաբար զարդարված են տարբեր ձևերի փորագիր պատկերներով (աղ.XVI$_{12}$):

Պերճանքի առարկաների շարքում փոքր խումբ են կազմում ոսկյա իրերը (դրանց մեջ ոսկու քանակը սովորաբար 25-32% է, հազվադեպ՝ 50%): Ժամանակաշրջանի ոսկերչության բարձր մակարդակը փաստող այդ նյութերը ներկայացված են ապարանջաններով, կախիկներով, ուլունքներով, եզակի դեպքերում՝ ճակատակալներով: Վերջիններս պատրաստված են ամբողջական թիթեղից (դանակով կտրված թերթիկի եզրերի անհարթությունը դրա վկայությունն է): Դրա վրա երևակայական կենդանիների շարք է պատկերված և սաղավարտին եղջյուրներ կրող մարդակերպ աստվածություն: Այդ պատկերները ստացված են թերթիկի ետևից դրոշմիչով սեղմելու եղանակով, որից հետո պատկերը լրացուցիչ մշակման է ենթարկվել: Գեղեցիկ են և եռանկյունաձև թիթեղից պատրաստված ականջօղերը: Վերջիններիս մակերեսի վրա պատրաստված փոքրիկ բների մեջ տեղադրվել են կիսաթանկարժեք քարեր, արվել տարբեր ձևերի զարդեր: Ինչ վերաբերում է ագաթից պատրաստված ուլունքներին, ապա դրանց եզրերը զարդարված են երկրաչափական պատկերներ կազմող նուրբ հատիկազարդով: Լոռի-Բերդից հայտնաբերված այս զարդերի խմբում առկա են և ոսկուց ու արծաթից պատրաստված օղեր, զարդակոճակներ: Հազվադեպ հանդիպող նման նյութերը թվագրության համար առանձին նշանակություն չունեն: Այս տեսակետից առավել էական են խեցանոթները:

Խեցեղեն արտադրանք: Զգալի մասը ներկայացված է նախկինում հայտնի ձևերով, զարդերի ստացման եղանակներով: Այդուհանդերձ, մի շարք նոր հատկանիշների երևան գալը ցույց է տալիս, որ ժամանակաշրջանի խեցեղեն արտադրանքում որոշակի փոփոխություններ են կատարվել: Այդ նորահայտ հատկանիշներից են իրանի փողաձև լայնացող վզի՝ դուրս ճկվող շրթից սկսվող և ուսին միացող կանթի կենտրոնական մասում առկա բրգաձև ելուստը (աղ.XVI$_{36-37}$). այն փոխարինելու է գալիս երկսապատ կանթերին, որոնք սակավ են հանդիպում (աղ.XVI$_{35}$): Այլ դեպքերում կանթի կենտրոնով անցնող ընդերկայնական ճեղք է տարված, որը զարդարված է դրոշմմամբ ստացված եռանկյունիներով, ատամնավոր հանվածքներով: Դարաշրջանին բնորոշ այս գծերին զուգահեռ՝ տեղական օջախներում երևան են գալիս և այլ նրբին մանրամասներ: Այսպես՝ Սյունիք-Արցախի օջախին հատկանշական են կանթի վերին մասում արված պարուրազարդեր (աղ.XVI$_{39,44}$), կանթի երկու կողմերում արված ուռուցիկ՝ խոյի գլխի տպավորություն ստեղծող շրջանակներ: Առանձին դեպքերում դրանք ուղեկցվում են կանթի կենտրոնում արված բրգաձև ելուստով, որը որոշ օրինակների վրա իրական արտահայտված խոյագլուխ տեսք ունի:

Հայաստանի հյուսիսային շրջաններում սիրված զարդ է սափորի վերին կեսն ընդգրկող ուռուցիկ կամարը մեջն արված արևապատկերներով (աղ.XVI$_{37,38}$): Այդ կամարների միջև ընկած տարածությունները զարդարված են ցանցապատկերներով, թեք գծերով և այլն: Որոշ առանձնահատկություններ ունեն և կանթերը. սկսվելով շրթից՝ դրանք հաճախ, յուրատեսակ օղակ ձևավորելով, միանում են վզի հիմքին: Առկա են և այլ մանրամասներ, առանձնահատկություններ, որոնց վրա ծանրանալը ավելորդ է. դրանք ցույց են տալիս, որ յուրաքանչյուր տեղական օջախ, ամբողջի բաղադրյալ մասը հանդիսանալով, իրեն բնորոշ առանձնահատկություններն է ունեցել:

Որոշակի փոփոխություններ են դիտվում և քրեղանների ձևերում. փոված տեսք ստացած այս ամանների մի մասը վերին հատվածում գոգավոր ձև ունի, մյուսներն ավարտվում են դուրս ճկվող շուրթով, երրորդների մոտ այն սրվում է և այլն: Դրանց զուգահեռ՝ Սյունիքում հաճախ են հանդիպում ներս հակվող շուրթ (աղ.XVI$_{47}$) և կամ վերին հատվածում ուղիղ կողեր ունեցողներ: Վերջիններիս մի զգալի մասի իրանի կենտրոնում տափակ, աղեղնաձև, փոքր-ինչ վեր թեքված բռնակ է ամրացված (աղ.XVI$_{46}$): Առանձին կարևորություն են ներկայացնում թաս-փիալաների ձևերում դիտվող որոշ հատկանիշներ: Դրանց շարքում հարկ է ա-

ռանձնացնել ոչ միայն այդ թասերի ընդհանուր տեսքը (աղ.XVI$_{49}$), այլև հատակի գոգավորությունը, որը հանդես է գալիս ինչպես բիայնական, այնպես և վաղ հայկական նման ամանների վրա: Նույնը կարելի է ասել և երկկանթ, փքուն իրանով և բարձր վզով սափորիկների վերաբերյալ (աղ.XVI$_{44}$), որոնք, առկա լինելով թե՛ բիայնական և թե՛ տեղական մշակույթում, շարունակում են հանդիպել նաև հետագայում: Կարևոր է և տափաշիշը, որն առաջին անգամ երևան գալով ժամանակաշրջանի հուշարձաններում, լայն տարածում է ստանում հետագայում:

Առանձին խումբ են կազմում ծիսական նշանակություն ունեցող անոթները (աղ.XVI$_{50-52}$) և կենդանակերպ (ձի, եղջերու, թռչուն) այլ տեսակներ: Այս տեսակետից հետաքրքիր են և սև, ագաթափայլ մակերեսով փոքրածավալ անոթները (հիմնականում սափորներ, գավաթներ), որոնց իրանը զարդարված է նուրբ ծալքագոտիներով: Իրար հաջորդող, կողերով միմյանց հպվող, մատնեքով ստացված այդ զարդերը, ամանների մակերեսին ալիքաձև տեսք են հաղորդում:

Ժամանակաշրջանի նյութերի բնորոշ հատկանիշները թվարկվածներով չեն սպառվում: Նշենք միայն, որ հակիրճ նկարագրված նյութերից բացի, առկա են և այլ տեսակներ (խնոցիներ, կարասներ, բաժակներ, և այլն. (աղ.XVI$_{30,34,51}$), որոնք նույնությամբ կամ փոքր ձևափոխություններով հանդես են գալիս և հետագայում, ինչը հստակ կերպով ցույց է տալիս, թե ինչ հիմքի վրա է զարգացել ետբիայնական ժամանակաշրջանի՝ մասնագիտական գրականության մեջ սովորաբար վաղ հայկական անվանվող տեղական մշակույթը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԲՐՈՆԶԻ, ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Ա. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Տնտեսության առաջատար ճյուղերի՝երկրագործության և անասնապահության զարգացման համար աշխարհագրական միջավայրը առաջնային նշանակություն ունի: Հայկական լեռնաշխարհը, որն առանձնանում է ուղղահայաց գոտիականության օրինաչափությամբ պայմանավորված բնակլիմայական պայմանների, հետևաբար՝ բուսական ու կենդանական աշխարհների բազմազանությամբ, հանդիսանում է մեկն այն սակավաթիվ տարածքներից, որոնք իրավամբ դասվում են երկրագործության ու անասնապահության առաջացման նախնական օջախների շարքում:

Հայկական լեռնաշխարհը հարուստ է ոչ միայն վայրի հացաբույսերով, այլև տարբեր տեսակի պտուղներով (հոն, տանձ, խնձոր, սալոր, դեղձ, շագանակ և այլն) ու բույսերով, որոնք ներկայումս էլ լայնորեն օգտագործվում են սննդի մեջ: Ինչ վերաբերում է կենդանական աշխարհին, որի ներկայացուցիչներից մի քանիսը, չնայած արդեն անհետացել կամ ներառնվել են «Կարմիր գրքի» մեջ, հարուստ է եղել: Բուսական ու կենդանական աշխարհների նման բազմազանությունը մեծապես նպաստել է նախնադարյան որսորդ-հավաքիչների աստիճանական վերափոխմանը երկրագործ-անասնապահների: Անցումը յուրացնող տնտեսաձևից արտադրողի, ինչպես տեսանք համապատասխան գլխում, կատարվել է նեոլիթի դարաշրջանում: Դրա ապացույցն են հայտնաբերված գործիքները, բուսական մնացորդները, ոսկրաբանական նյութերը, բնակատեղիների տեղադրությունը, ժայռապատկերները և այլն:

§ 1. ԱՆՑՈՒՄ ԱՐՏԱԴՐՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Նեոլիթյան բնակավայրերը Հայաստանի ներկա տարածքում դեռևս բավարար չափով չեն հետազոտված: Դա հնարավորություն չի

տալիս ամբողջությամբ վեր հանել, հետևել տնտեսության նշված ճյուղերի զարգացման ընթացքին: Այդուհանդերձ, առկա տվյալները, եթե ոչ բոլոր մանրամասներով, ապա ընդհանուր պատկերացում, այնուամենայնիվ, տալիս են: Այս դեպքում առաջին հերթին կարևորվում է նախախեցեղենային նեոլիթյան բնակավայրերի տեղադրությունը. վաղ շրջանին պատկանողները գտնվում են նախալեռնային և լեռնային շրջաններում, որոնք առանձնանում են բուսական ու կենդանական աշխարհների առավել բազմազանությամբ: Նման բնակատեղիներ, ինչպես նշվեց, ներկայումս հայտնի են Բյուրակնում (Քինգյոլ), Մալաթիայում, Հաքյարի լեռներում և այլուր: Ասվածից չի հետևում, թե նախախեցեղենային նեոլիթի բնակավայրերի տեղադրությունը նախալեռնային ու լեռնային գոտիներում, սոսկ բուսական ու կենդանական աշխարհների բազմազանությամբ էր պայմանավորված. հոլոցենում սկսված կլիմայի տաքացման դերը, ինչպես նշվեց, մեծ էր: Ջերմաստիճանի զգալի բարձրացման հետևանքով սկսված հալոցքը հարթավայրերում ընդարձակեց ջրային տարածքներն ու ճահճուտները, իսկ նախալեռնային և լեռնային գոտիներում ընդարձակ տարածքներ զբաղեցրին անտառները: Բարձրադիր գոտիների պայմանները նպաստավոր էին բնակության համար. այդտեղ կատարվեցին արտադրող տնտեսությանն անցնելու առաջին քայլերը:

Առկա նյութերը ցույց են տալիս, որ նախախեցեղենային նեոլիթը երկու՝ Ա և Բ փուլերի է բաժանվում, որոնցից երկրորդն իր հերթին ստորաբաժանվում է վաղ, միջին և ուշ ենթափուլերի. կենդանիների ընտելացման և հողի մշակման հիմնական քայլերը կատարվում են ուշ նախախեցեղենային նեոլիթում, մասամբ՝ վերջին փուլում (մոտավորապես 7000-6500թթ.), որին և հաջորդում են խեցեղենային նեոլիթի Ա (մոտավորապես 6500-6000թթ.) և Բ (կամ վաղ էնեոլիթ 6000-5000թթ.) փուլերը: Նախախեցեղենային նեոլիթում սկսված «նեոլիթյան հեղափոխությունը» հաղթանակում է VII–V հազ.: Մի շարք հուշարձանների ուսումնասիրությունները (Արուճ, Աղավնատուն, Գեղարոտ-1, Ծաղկահովիտ, Աղթամիր, բայց հատկապես՝ Շանիդար, Չայոնյու-թեփեսին Ամիդ/Դիարբեքիրի մոտ, Նևալի-Չորին Աթաթուրքի ջրամբարի հարևանությամբ, Գյոբեկլի-թեփեն Խառանի դաշտում և այլն) ցույց են տալիս աստիճանական, բայց միաժամանակ և անհամաչափ զարգացման այդ ընթացքն ու կատարված փոփոխությունները: Դրանք իրենց արտացոլումն են գտնում ոչ միայն գործիքների ու զենքերի փոփոխված տեսականիում ու կավածեփ բնակարանների ճարտարապետության, այլև որսված կենդանիներին պատկանող ոսկրաբանական նյութերի տոկոսային հարաբերութ-

յան մեջ: Բավական է ասել, որ միայն Քմլո-2 քարայրում, որն ընդամենը 30մ. քառ. մակերես ունի, հայտնաբերվել են մոտավորապես 18000 ոսկոր, 9000 ավելի քարե գործիք և այլն: Որսված կենդանիները հաճախ պատկերվել են ժայռանկարներում: Այս և այլ փաստեր ցույց են տալիս, որ նեոլիթի սկզբնական շրջանում որսն ու հավաքչությունը շարունակել են պահպանել իրենց առաջնային նշանակությունը, իսկ կենդանիների ընտելացման և բույսերի մշակման ուղղությամբ կատարվող աշխատանքները, դեռ մեզոլիթում թափառող կենսաձև վարող այդ որսորդ-հավաքիչների մոտ, նախնական փուլում են գտնվել (Քմլո-2 քարայրում ընտելացվող ոչխարի ոսկորներ են գտնված): Ժամանակի ընթացքում միայն այդ հարաբերակցությունը փոխվել սկսեց երկրագործության ու անասնապահության օգտին, որի ընթացքում քիչ դեր չկատարեց նաև ճահճուտների չորացումը, ջրատարածքների նվազումը, որը հնարավորություն տվեց մարդուն աստիճանաբար զբաղեցնել նաև հարթավայրային շրջանները:

Խեցեղենային նեոլիթին պատկանող հուշարձաններն արդեն տեղակայված են գետահովիտներում, որտեղ կլիման, ջրային համակարգը և հարուստ հողածածկույթը բարենպաստ պայմաններ էին ստեղծել երկրագործության զարգացման համար: Ինչպես ցույց են տալիս պեղումների արդյունքները, դեռևս նախախեցեղենային նեոլիթի ուշ շրջանում, հարթավայրերում հայտնված մարդիկ երկրագործական աշխատանքների բավականաչափ փորձ են ունեցել: Առատաշենի բնակավայրի երկրորդ շերտում, ինչպես նշվեց վերը, հայտնաբերված են ցորենի, գարու, ոսպի, սորուկի, վառվռուկի, թելուկի մնացորդներ, ինչը և ցույց է տալիս, թե զարգացող երկրագործությանը (այդ է վկայում և տեսականու բազմազանությունը) զուգահեռ՝ բնակչությունը զբաղվել է և հավաքչությամբ: Համանման պատկեր է դիտվում և անասնապահության բնագավառում: Հայկական լեռնաշխարհին սահմանակից Զագրոսի լեռներում գտնվող Ջարմո, Թել-Շիմշարա և այլ հուշարձաններում կատարված պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ նեոլիթում ընտելացված են եղել այծը, ոչխարը, խոզը: Որսը կորցնում էր նախկինում ունեցած առաջատար դերը: Ծաղկունքում, օրինակ, հայտնաբերված ոսկրաբանական նյութերում որսված կենդանիների ոսկորները 43% են կազմում: Ուշ նեոլիթում ուրվագծվող այս պատկերը ավելի որոշակի տեսք է ընդունում էնեոլիթի դարաշրջանում:

§ 2. ՎԱՂ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Էնեոլիթի դարաշրջանի բնակավայրերի ամենաբնորոշ գծերից մեկը, որն անմիջապես աչքի է զարնում, ինչպես տեսանք դարաշրջանի հուշարձանները ներկայացնելու ժամանակ, վերջիններիս խումբ-խումբ, իրարից ոչ հեռու, գետահովիտներում տեղադրված լինելն է և մշակութային շերտերի զգալի հզորությունը, ինչը և ցույց է տալիս բնակչության նստակյաց կյանք վարելը: Հուշարձաններից հայտնաբերված նյութերը փաստում են, որ բնակչությունը հիմնականում զբաղվել է երկրագործությամբ և անասնապահությամբ, որոնք տնտեսության հիմքն են կազմել: Մարդիկ մշակել են բնակավայրերին մերձակա հողատարածությունները, կատարել պարզունակ ոռոգման փորձեր: Հուշարձաններից հայտնաբերված հացահատիկների մնացորդները ցույց են տալիս, որ մարդը ճանաչել է ոչ միայն ցորենի և գարու մի քանի տեսակներ, մշակել կորեկ ու հաճար, ենթարկել դրանք երկարատև բարելավման, այլև՝ սիսեռ ու ոսպ: Գտնված են նաև խաղողի կորիզներ (Շուլավեր), ինչը և ցույց է տալիս, թե քայլեր են կատարվել և խաղողագործության բնագավառում:

Բնորոշ գծերից մյուսը՝ ցորենի և գարու մնացորդների համատեղ հայտնաբերումն է հուշարձաններում: Այս երևույթը առաջին հայացքից թվում է, թե հակասում է երկարատև նպատակասլաց ընտրման (սելեկցիա), հացահատիկը բարելավելու ուղղությամբ տարված աշխատանքների տվյալներին: Իրականում հակասություն չկա. համատեղ, խառը ցանքի նպատակը եղել է երաշտի հետևանքները նվազագույնի հասցնելու ձգտումը, ինչը ցույց է տալիս նաև, որ մարդը շատ լավ է ճանաչել ցորենի և գարու հատկությունները, հասունացման ժամանակների տարբերությունները: Նա շատ լավ է իմացել, որ գարին շուտ հասունանալով կկասեցնի ցորենի բնականոն հասունացումը, բայց նա դիմել է այդ քայլին՝ աշխատելով չզրկվել ողջ բերքից, վատթարագույն դեպքում՝ հավաքել դրա մի մասը: Պատահական չէ, որ նա պարզունակ ոռոգման նախնական քայլեր է կատարել, որի վկայությունը Արուխլոյում, Միլ-Ղարաբաղի հարթավայրում գտնվող «ջրանցքներն» են:

Երկրագործության նկատելի վերելքն են փաստում և տնտեսության այդ բնագավառում կիրառված գործիքները: Բրիչներից բացի, որոնց լրացուցիչ ծանրություն է տրվել ծանրոց-կախիչի դեր կատարող քարերով, օգտագործվել են նաև անասունների թիակոսկրից պատրաստված «քահեր», որոնց մեծությունը եբեմն 25սմ է հասնում: Հայտնաբերված են

նաև քարից, ոսկրից, եղջյուրից պատրաստված հողուրագներ. դրանք կոթի ամրացման համար անցք ունեն: Այդ գործիքներով նրանք հողն են փխրեցրել: Բնական է, որ նման գործիքներով մարդը չէր կարող ընդարձակ տարածություններ մշակել. կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ վաղ երկրագործության շրջանում, առավելագույնը 30-40 բնակարանից կազմված այդ փոքր բնակավայրերում, որտեղ 120-150 մարդ է ապրել, մշակվել է 20-30 հա տարածություն: Այդ տարածքները 2-3 տարին մեկ հանգստանալու են թողնվել, որովհետև նման գործիքներով հողի վերին շերտերի փխրեցումը այն շատ արագ էր աղքատացնում: Այդուհանդերձ, սկզբնական շրջանում բնակավայրերի շուրջը գտնվող հողատարածությունները բավարարել են. հնարավոր է, որ դրանք նաև գոմաղբով պարարտացված լինեն:

Հունձը կատարվել է ոսկրե և փայտե պահանգավոր մանգաղներով. դրանք թեթևակի կորացած տեսք են ունեցել: Այդ հիմքի մեջ ամրացվել են վանակատից կամ կայծքարից պատրաստված, ատամնավոր կամ սղոցաձև տեսք ունեցող 3-5 խոշոր ներդիրներ: Ավելի նախնական են ատամնավոր հանվածքներով մեկ երկարուկ շեղբ ունեցող մանգաղները: Այդպիսիք հայտնաբերված են Ակնաշենից, Քյուլ-թեփեից և այլ հուշարձաններից: Կատարված փորձերի արդյունքները (Գ.Ֆ. Կորոբկովա) ցույց են տալիս, որ կայծքարե ուղիղ ներդիրով մանգաղի արտադրողականությունը 0,5մ.քառ.վրկ. է, ատամնավոր ներդիր ունեցողինը՝ 0,9–1,1մ.քառ.վրկ, բրոնզե մանգաղինը՝ 1,3–1,4մ.քառ.վրկ, իսկ ժամանակակից պողպատյա մանգաղինը՝ 1,7մ. քառ.վրկ., ինչից և հետևում է, թե 5 հոգին ատամնավոր կայծքարե և բրոնզե մանգաղով կարող էին 1 օրում հնձել 1600-2000 մ/քառ. տարածություն:

Բերքը հավաքվել և պահեստավորվել է հորերում՝ խոշոր կարասներում, որի ապացույցը, առանձին դեպքերում, խրձերից պահպանված մնացորդներն են: Դա ցույց է տալիս, որ մարդիկ հատիկն անջատել են ըստ անհրաժեշտության: Էնեոլիթյան բնակավայրերում, ինչպես նշվեց, սովորական են շրջանաձև, համեմատաբար փոքր, ապա և երկարուկ՝ նավակաձև, մեկ երեսից երկար աշխատված աղորիքները: Փորձերի արդյունքները (Գ.Ֆ.Կորոբկովա) ցույց են տվել, որ կինը 1ժ ընթացքում, նման աղորիքով կարող էր ստանալ 500գ բարձրորակ ալյուր: Սննդի մեջ լայնորեն է օգտագործվել և ձավարեղենը, որի ապացույցը սանդերն ու վարսանդներն են:

Երկրագործության զարգացումը բարենպաստ պայմաններ ստեղծեց անասնապահության համար, ինչը և իր հերթին երկրորդ պլան մղեց

որսորդությունը: Վերջինս փոխարկվեց օժանդակ, լրացուցիչ սնունդ մատակարարող աղբյուրի: Դրա լավագույն ապացույցը ոսկրաբանական նյութերն են: Դրանք վկայում են, որ էնեոլիթում ընտելացված են եղել ցուլը, կովը, այծը, ոչխարը, խոզը, իսկ ուշ փուլում՝ նաև ձին:

Կարևոր է խոշոր և մանր եղջերավոր կենդանիների հարաբերակցությունը հոտում: Ակնաշենի բնակավայրի ստորին շերտից (VI հազ.) հայտնաբերված նյութերի շարքում բացակայում են խոշոր եղջերավոր անասունների ոսկորները. գտնված են մանր եղջերավոր և որսի կենդանիների (բեզոարյան այծ, ջեյրան, վարազ և այլն) ոսկորներ, իսկ վերին շերտում մանր և խոշոր եղջերավոր անասունների ոսկորների տոկոսային հարաբերությունը գրեթե հավասար է (45% և 52%): Նույն երևույթն է դիտվում և Ծաղկունքի էնեոլիթյան շերտից հայտնաբերված ոսկրաբանական նյութերի հարաբերակցության մեջ. այդտեղ խոշորը 37% է, իսկ մանրը՝ 47%: Գտնված են և ձիու ոսկորներ, իսկ որսի կենդանիներից առկա են եղնիկը, բեզոարյան այծը, արջը, վարազը: Նման արդյունքներ են ստացված և Թեղուտից: Էնեոլիթի ուշ փուլին պատկանող այդ բնակավայրից գտնվել են 14 խոշոր, 20 մանր եղջերավոր անասունների, 13 խոզի, 19 ձիու ոսկորներ, իսկ որսի կենդանիները ներկայացված են եղջերուներով (2), բեզոարյան այծով (3), արջի (3) և վարազի (2) ոսկորներով: Այլ հուշարձաններում խոշոր և մանր եղջերավոր անասունների տոկոսային հարաբերակցությունը գրեթե 1:2 է կազմում, խոզը՝ 5–5,5%, իսկ որսի կենդանիները առավելագույնը կազմել են 9,5%: Առանձին բնակավայրերում, որոնք գտնվել են որսով հարուստ տարածքներում, ընտանի և որսի կենդանիների տոկոսային հարաբերությունը որոշ տարբերություններ է դրսևորում: Օրինակ՝ Մառնեուլի շրջանի Ցոփի հնավայրում որսի կենդանիները 26% են կազմում, բայց դա անասնապահության ընդհանուր զարգացման պատկերը չի փոխում: Որսի կենդանիների տեսակային ամենուր գրեթե նույնն է. դրանք են եղջերուն, բեզոարյան այծը, արջն ու վարազը, երբեմն՝ աղվեսը, կուղբը, տարբեր թռչուններ:

Ոսկրաբանական նյութերի տոկոսային հարաբերակցությունը ցույց է տալիս, որ անասունները բարձրացրել են բնակավայրերին մոտ գտնվող արոտավայրերը: Դրա ապացույցն են և խոզերի ոսկորները. խոզերին բնակավայրերում են պահել: Հեռագնա անասնապահություն էնեոլիթում չի դիտվում. բնակավայրերին մոտ գտնվող արոտավայրերը լիովին բավարարել են առկա հոտերի պահանջները: Այդ հոտերում խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը գրեթե հավասար է:

§ 3. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Սկսած վաղ բրոնզի դարաշրջանից, երկրագործության և անասնապահության բնագավառներում դիտվում են արմատական փոփոխություններ: Առաջին հերթին ուշադրություն է գրավում ոսկրից կամ քարից պատրաստված, էնեոլիթին բնորոշ բրիչների սակավությունը, ինչը և ցույց է տալիս, թե դրանք, նախկինի պես լայն կիրառություն չունենալով, աստիճանաբար սկսել են դուրս գալ գործածությունից: Հակառակ դրանց՝ բնակավայրերում երևան են գալիս եզների կավակերտ արձանիկներ, որոնց վզի վրա անցք է բացված: Այդ մանրամասնությունը ցույց է տալիս, որ նշված կենդանին օգտագործվել է իբրև քաշող ուժ, որի կարիքը սուր է զգացվել: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է արորների և կամերի օգտագործմանը, որոնք երկրագործության զարգացման մակարդակի իրական ցուցիչն են հանդիսանում: Արորը վաղ բրոնզեդարյան գյուտերից ամենանշանակալին էր. այն ցույց է տալիս, թե մարդը որոնումների ճանապարհին գտել էր ընդարձակ տարածություններ մշակելու եղանակը: Պատրաստված լինելով փայտից, այդ գործիքը մեզ չի հասել, բայց որ դրանք կիրառվել են վաղ բրոնզի դարաշրջանում, վեր է կասկածից: Այս տեսակետից առանձնահատուկ կարևորություն ունի Կվացխելեբիից հայտնաբերված եղջյուրե գործիքը, որի սրված և մաշված ծայրը ցույց է տալիս, թե այն հողագործական աշխատանքում է օգտագործվել. ամենայն հավանականությամբ՝ ծիսական ակոս բացելու համար («առատության եղջյուր» արտահայտությունը պատահական չէ), քանի որ նման գործիքը երկարատև աշխատանքի համար պիտանի չէր:

Պարզունակ փայտե արորներով, սոսկ վերին շերտում փխրեցված հողը լրացուցիչ մշակվել է հողուրագներով: Հողամշակման այդ եղանակը, ինչպես և էնեոլիթում, հանգեցնում էր հողաշերտի փոշիացմանը և արագ աղքատացմանը, տարբերությամբ, որ այս դեպքում արդեն, մեծ հողատարածություններ էին արագ որակազրկվում և անհրաժեշտություն էր առաջանում նոր հողատարածություններ իրացնել: Դրան նպաստում էր և բնակչության աճը: Այդ հողատարածքները ձեռք էին բերվում ինչպես անտառների ոչնչացման, այնպես էլ լեռնային գոտիների իրացման հաշվին: Պատահական չէ, որ վաղ բրոնզի դարաշրջանում բնակավայրերի ցանցը ընդլայնվում է, հանդես են գալիս բազմաթիվ նոր բնակավայրեր, այդ թվում և լեռնային գոտիներում տեղակայվածներ:

Վաղ բրոնզեդարյան երկրագործության վերելքն են փաստում և այլ հնագիտական տվյալներ: Մասնավորապես պահանգավոր մանգաղներին զուգահեռ բրոնզյա նմուշների երևան գալը (Գառնի, Կարագ, Ամիրանիս-գորա և այլն), խոսում է այն մասին, որ մարդն աշխատել է շուտ բթացող և աշխատանքի ժամանակ հաճախ հիմքից ընկնող ու կորչող ներդիրները, որոնք փոխարինելու համար ժամանակ կպահանջվեր (միայն Սինգեչաուրում 370 ներդիր է հայտնաբերված), փոխարինել մետաղե մանգաղով, որի արտադրողականությունը բարձր էր: Ինչ վերաբերում է բրոնզյա մանգաղների գյուտերի սակավությանը, ապա դրա պատճառներից մեկը, հավանաբար, վերջիններիս բարձր արժեքն էր. բոլորը չէ, որ կարող էին այդպիսին ձեռք բերել: Բացի այդ, բրոնզե մանգաղի կարիքը նրանք, դեռևս սրությամբ չզգալով, աշխատել են նախկին գործիքով: Չպետք է անտեսել և կոտրված գործիքը վերաձուլելու պահը, որը պայմանավորված էր բրոնզի թանկությամբ:

Արմատավորվող նորին զուգահեռ, ակնհայտ է, որ վաղ բրոնզի դարաշրջանում շարունակում են պահպանվել էնեոլիթից եկող որոշ ավանդույթներ: Մասնավորապես այդ են ցույց տալիս կացարանների մոտ գտնվող հորերից հայտնաբերված հացահատիկների մնացորդները, որոնք կրկին խառը ցանքի կիրառությունն են փաստում: Շենգավթից, օրինակ, հայտնաբերված են հաճարի, տարբեր տեսակների ցորենի և գարու հատիկներ, ինչը ցույց է տալիս, թե վաղ բրոնզի դարաշրջանում, ոռոգման հարցը դեռևս վերջնականապես կարգավորված չի եղել: Այդ հորերին զուգահեռ առանձին բնակավայրերում, ինչպիսին է օրինակ Յանիկ-թեփեն Ուրմիա (Կապուտան) լճի մոտ, բացվել են մասերի բաժանված խոշոր կառույցներ, որոնց մեջ հացահատիկների տարբեր տեսակներ են հավաքվել և կամ առանձին ընտանիքների, տոհմերի մասնաբաժինն է ամբարվել:

Վարելահողերի ընդարձակումը, համապատասխանաբար բերքի ու անասնակերի առատությունը նոր խթան հանդիսացան անասնապահության հետագա զարգացման համար: Այդ են ապացուցում և ոսկրաբանական նյութերը. դրանք ցույց են տալիս անասունների գլխաքանակի՝ էնեոլիթի դարաշրջանի տվյալների հետ համեմատության եզրեր չգտնող, հսկայական աճ: Այսպես, Շենգավթից հայտնաբերված վաղ բրոնզեդարյան նյութերում խոշոր եղջերավոր անասունների ոսկորները կազմել են 720, իսկ մանրը՝ 1573: Դրանցից բացի, գտնված են ձիերի (472), խոզերի (117), շների (137), ինչպես և որսված կենդանիների (բեզոարյան այծ, ջեյրան, եղնիկ, աղվես, կուղբ) սակավաթիվ ոսկորներ,

ձկների փշեր. դրանք ցույց են տալիս, թե որսին և ձկնորսությանը առանձնապես մեծ ժամանակ չի հատկացվել: Նման տվյալներ են ստացված և Մեծամորի համաժամանակյա շերտից հայտնաբերված նյութերի քննությունից: Այդտեղ խոշոր եղջերավորը ներկայացված է 502, մանրը՝ 1104 կենդանիների ոսկորներով: Դրանցից բացի գտնված են ձիերի (310), խոզերի (107), եղնիկների (9), բեզոարյան այծերի (7) ոսկորներ: Համանման տվյալներ են ստացված և այլ բնակավայրերի (Արևիկ, Գառնի, Թագավորանիստ և այլն) պեղումներից: Այդ տվյալները խոսում են խոշոր հոտերի առկայության մասին: Անասունների գլխաքանակի նման փոփոխությունը, նվազագույն չափով իսկ չխաթարելով նստակյաց-երկրագործական տնտեսության (հոտում խոշոր և մանր եղջերավոր անասունների 1:2 հարաբերակցությունը այդ է փաստում) եղանակը, հարկադրում էր, որ բնակչության փոքր խմբերը ամռան ամիսներին սարերը բարձրանային, որտեղից նրանք ուշ աշնանն էին իջնում: Դրա ապացույցն է և բարձր լեռնային շրջաններում գտնվող ամառային արոտավայրերում ժամանակավոր բնույթի կացարանների երևան գալը: Այդպիսիներից մեկն է հանդիսանում Եղեգնաձորի շրջանի Ելփին գյուղի մոտ գտնվող «Մոխրոտ» կոչվող կայանը:

Ձմռան ամիսներին անասունները մնացել են մեծ գոմերում: Նման մի կառույց է բացված Շենգավթում: Բավական խոշոր չափեր ունեցող (109մ.քառ.) այդ շինության մեջ նյութեր չեն հայտնաբերված: Համանման կառույց է բացված և Ամիրանիս-գորայում: Այդտեղ ևս, եթե անտեսենք հատակի տակ գտնված երեխայի կմախքը, որն, ըստ երևույթին, զոհաբերվել է, այլ նյութեր չեն հայտնաբերված: Այդ շինությունը տեղադրված է բնակավայրի կենտրոնում, ինչը ցույց է տալիս անասունները պահպանելու անհրաժեշտությունը հաճախակի բնույթ կրող ընդհարումների ժամանակ: Հարստություն ձեռք բերելու, ինչպես և գերիշխանություն հաստատելու նպատակով սովորական դարձած այդ ընդհարումներն էին, որ հարկադրեցին բնակչությանը բնակավայրերը շրջափակել կիկլոպյան պարիսպներով, ստեղծել պաշտպանական այլ կառույցներ:

Տնտեսության զարգացման այս ընդհանուր միտումներն ու օրինաչափությունները պահպանվում են և միջին բրոնզի դարաշրջանում: Դրա ապացույցը ոչ միայն նախկին բնակավայրերի մի զգալի մասում կյանքի շարունակումն է (Մեծամոր, Գառնի, Ջրահովիտ, Շիրակավան, Լոռիբերդ և այլն), այլև՝ նորերի երևան գալը: Վերջիններիս շարքում լավ է ուսումնասիրված Ուզերլիկ-թեփեն: Աղդամի մոտ գտնվող այդ փոքր բնակավայրում բացված 70 հորերից մի մասում հայտնաբերված են տարբեր

տեսակների հացահատիկների մնացորդներ, խաղողի կորիզներ: Հացահատիկների քննությունը ցույց է տալիս, որ կիրառվել է ոռոգելի երկրագործությունը: Այս տեսակետից առանձին կարևորություն է ներկայացնում Արագածի հարավային լանջերը գոտևորող, իրար հետ շղթայաձև կապված արհեստական լճակ-ջրավազաններից, ջրանցքներից ու առուներից կազմված համակարգը, որի վերին թևերը հասնում են մշտական ձյան սահմանները: Այդ ողջ համակարգը սնվել է հալված ձյան ջրերով. դրանք հավաքվել են միջանկյալ ավազաններում, որտեղից և ցած են հոսել ու ոռոգել անջրդի հողերը՝ ծաղկուն դաշտերի փոխարկելով դրանք: Այդ ավազանների մոտ հայտնաբերվել են 20-ից ավելի «վիշապաքարեր», որոնց երևան գալը հետազոտողների գերակշռող մեծամասնությունը մ.թ.ա. II հազ.I քառորդին է վերագրում: Նույն պատկերն ենք տեսնում և Աղմաղանի լեռնային զանգվածում: Բնականաբար ջրային համակարգերի այդ ցանցերը կանոնավոր կերպով մաքրվել են, ամրացվել ու վերակառուցվել. այդ աշխատանքները իրագործվել են մարդկանց մեծ խմբերի կողմից՝ կազմակերպված ձևով, ինչը և ցույց է տալիս հասարակության բարդացած հարաբերությունները, և այս տեսակետից «արքայավայել» կատարված թաղումների երևան գալը օրինաչափ երևույթ էր:

Երկրագործության առաջընթացն են փաստում և Գորիսից ոչ հեռու գտնվող Շաքարաջուր կոչվող վայրից ու Լճաշենի մ.թ.ա. XIV–XIII դդ. թվագրվող դամբարաններից մեկի դամբարանաթմբի լիցքում հայտնաբերված, սալաքարերից պատրաստված կամերը: Շաքարաջրի նմուշը եռանկյունաձև է և ստորին մասում ունի հարթ մակերես (60×40սմ). գործիքի առջևի մասում երկու կողմից հանվածքներ են արված կապելու համար: Ինչ վերաբերում է Լճաշենի օրինակին, ապա այն նույնպես եռանկյունաձև է, բայց առջևի մասում անցք ունի: Ավելի կատարյալ է Լճաշենից հայտնաբերված մեկ այլ կամ. վերջինիս ստորին մասում հատվող ակոսները ուղղանկյունաձև ելուստներ են ձևավորում. դրանք արագացրել են հացահատիկի անջատումը: Գործիքի առջևի մասում ելուստ է թողնված պարանը կապելու համար: Նման ելուստ ունի և Խանլարի դամբարաններից մեկում, մ.թ.ա. II հազ. վերջին պատկանող նյութերի հետ հայտնաբերված, կաղնու տախտակներից պատրաստված կամը. վերջինիս ստորին մակերեսին բացված ուղղանկյունաձև անցքերում քարեր են տեղադրվել: Փայտից պատրաստված կամերի մնացորդներ հայտնաբերված են Ալավերդու և Ախթալայի մերձակայքում գտնվող դամբարաններից: Այդպիսիք հայտնի են Սամքավորոյից, Բեշտաշենից, Հարավային Օսեթիայի հուշարձաններից և այլ վայրերից:

Առանձին կարևորություն է ներկայացնում և Խոջալիի ուշ բրոնզեդարյան դամբարաններից մեկում հայտնաբերված խեցանոթի բեկորը. դրա վրա անվարժ նկարիչը պատկերել է արոր քաշող եզ: Նկարից պարզ երևում է, որ այդ արորը բավական կատարելագործված է եղել. այն կազմված է ստորին մասում սուր ծայրով ավարտվող թրից, որի վերին հատվածում մաճն է ամրացված: Անշուշտ, նման արորներոյ հետ գործածվել են և ամբողջական ճյուղից պատրաստված ավելի պարզունակ և թեթև նմուշները, իսկ մ.թ.ա. I հազ. սկզբից գործածության մեջ են մտել գութանները. դրանց երկաթե ծայրակալները հայտնաբերված են Թուփրակ-Կալեից և Կարմիր-բլուրից: Երկրագործական աշխատանքների կատարելագործման մասին են խոսում և կեռացած, նեղ շեղբով մանգաղները (Գավառ, Վանաձոր, Գյումրի, Նոյեմբերյան և այլն), որոնց զուգահեռ գործածվել են և բավական մեծ չափեր ունեցողները. Եռոքավանից հայտնաբերվածների երկարությունը, օրինակ, 0,7մ. է կազմում: Այդպիսիները կարող էի և գերանդու դեր կատարել:

Հնագիտական նյութերն, այսպիսով, ցույց են տալիս, որ հսկայական տարածություններ են մշակվել, որոնք գոտևորում էին բնակատեղիները: Դրանցից հայտնաբերված են նաև դեղձի, ծիրանի կորիզներ, իսկ Կարմիր-բլուրում գտնված են և կեռաս, սալոր, ընկույզ: Այդ բոլոր փաստերը ցույց են տալիս, որ զարգացած էին նաև այգեգործությունն ու խաղողագործությունը: Երկրագործության բուռն վերելքը, բնականաբար խթանում էր և անասնապահության զարգացումը, որի լավագույն ապացույցը ոչ միայն հայտնաբերված ոսկրաբանական հարուստ նյութերն են, այլև Վանի թագավորների վկայությունները: Չծանրանալով դրանց մանրամասների վրա, նշենք, որ ըստ ակադ. Բ.Բ. Պիոտրովսկու հաշվարկների՝ միայն Սարդուրի Բ-ն, Էրիախի (Շիրակ) կատարած արշավանքներից տանում է մոտավորապես 110000 խոշոր և 200000 մանր եղջերավոր անասուն, իսկ նրա հայր Արգիշտի Ա-ն իր թագավորության երկրորդ տարում միայն Էրիախիից և հարևան տարածքներից տանում է 1104 ձի, 35015 խոշոր, ավելի քան 100 հազ. (ամբողջական թիվը պահպանված չէ) մանր եղջերավոր կենդանի և այլն: Ավելին, Սարդուր Բ-ն վկայում է նաև, որ Էրիախի երկրում նա բացել է ավելի քան 150 գաղտնի պահեստարաններ, որոնք կառուցված են եղել բնակիչների նախնիների կողմից: Այս և այլ փաստեր ցույց են տալիս, թե երկրագործությունն ու անասնապահությունը զարգացման ինչպիսի մակարդակի էին հասել երկաթի դարաշրջանում:

Բ. ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԲՐՈՆԶԻ, ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Հայտնաբերված տարատեսակ նյութերի նշանակությունը սոսկ նյութական մշակույթի զարգացման օրինաչափությունների, տարբեր համալիրների թվագրման, մշակույթի և դրա տեղական օջախների ընդգրկած սահմանների, էթնիկ խմբերի տեղաշարժերի ու նրանց միջև եղած կապերի պարզաբանմամբ չի սպառվում: Տարբեր դարաշրջանների համալիրներից հայտնաբերված այդ նյութերը առաջնակարգ և անգնահատելի աղբյուր են արհեստաճյուղերի առաջացումը, դրանց աստիճանական զարգացման ընթացքը պարզաբանելու համար, ինչն իր հերթին նպաստում է սոցիալական բարդացող հարաբերությունները ընկալելուն: Ասվածը որոշակի ուրվագծեր է ձեռք բերում տարբեր արհեստաճյուղերը քննելու ընթացքում:

§ 1. ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՏԱՂԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Մետաղագործական աշխատանքների սկզբնական փուլի՝ հանքարի ձեռք բերման, դրա հարստացման և այլ գործողությունների վերաբերյալ ընդհանուր պատկերացում են տալիս մեզ հասած հնագույն հանքախորշերը, գործիքները, վերջնական արտադրանքի նմուշները, կաղապարները, մետաղե իրերի անալիզների արդյունքները:

Մետաղագործության նախնական շրջանում մարդն օգտագործել է պղնձահանքերի մակերեսային, մթնոլորտային ազդեցությունների հետևանքով օքսիդացված երևակումները: Այդ է պատճառը, որ հանքախորշերը սկզբնական շրջանում ունեցել են բաց բովերի տեսք: Դրանցից մետաղագործը ձեռք է բերել հարստացման կարիք չզգացող հանքար: Հետագայում, մակերեսային շերտերի նվազմանը զուգահեռ, հնագույն հանքափորներն սկսում են օգտագործել և խորքային, նախնական հարստացում պահանջող սուլֆիդային երակները. հանքափորը հանքարը ձեռք էր բերում հանքամարմնի ուրվագծերով ընթանալով, որի համար էլ հնագույն այդ հանքախորշերը ծռմռված տեսք ունեն: Նման մի բովանցք հայտնաբերված է Հայաստանի հյուսիս-արևելյան մասում (Անտոնովյան հանքավայր): Այն տարածության մեջ ձգված է հանքամարմնի ուղղությամբ: Բովանցքում պահպանվել են աստիճանաձև իջ-

նող հարթակներ (դրանց միջև եղած տարածությունը 1–1.5մ է եղել), որոնք մարդուն բարձրանալ-իջնելու հնարավորություն են տվել՝ ուսին ծանր պարկ ունենալով: Հանքաքարն անջատվել և մանրատվել է կացիններով, մուրճերով, քլունգներով: Այդպիսիք հայտնաբերված են Գյումրիում, Ալավերդում, Ջրաշենում, Կողբում և այլուր: Մութ խորշերում աշխատելու ժամանակ հանքափորն օգտագործել է ճրագ, ինչը վկայված է և գրավոր աղբյուրներով:

Ձեռք բերված հանքաքարը դատարկ ապարներից մաքրելու նպատակով որակավորվել է, որից հետո վնասակար միացություններից ազատելու համար հարստացվել է ջրով և կրակով: Հարստացված հանքաքարը հալվել է կավակերտ հնոցներում: Այդպիսիք հայտնաբերված են Գառնիում, Ամիրանիս- գորայում, Բաբա-դերվիշում և այլ հուշարձաններում. դրանց մոտ հայտնաբերված են և փքսափողեր: Նման հնոցներում հնարավոր է եղել ստանալ 1200–1250^0 Ց ջերմություն: Հալման ընթացքում, երբ հնոցի մեջ ջերմությունը սկսել է աստիճանաբար իջնել, պղնձի հանքաքարին խառնվել է մկնդեղ: Հալման ընթացքը արագացնելու, ինչպես նաև վնասակար միացություններից զերծ, մաքուր ձուլվածք ստանալու նպատակով, ինչպես ցույց են տալիս Մեծամորի պեղումների արդյունքները, ազգագրական տվյալներն ու գրավոր աղբյուրները, մետաղագործներն օգտագործել են մանրացված ոսկորի փոշի: Ոսկորը, ինչպես հայտնի է, պարունակում է ֆոսֆոր և կիր. ֆոսֆորը նպաստում է մետաղի հեղուկայնության բարձրացմանը, իսկ կիրը կլանում է ծծումբը, իջեցնում հալման ջերմաստիճանը:

Հայտնաբերված նյութերի տեսականին, ինչպես նաև կաղապարները, ցույց են տալիս, որ մետաղագործները տարբեր իրեր պատրաստելու համար օգտագործել են ինչպես միափեղկ, այնպես էլ երկփեղկ (բաց և փակ) քարե և կավե կաղապարներ, որոնք ոչ միայն արագացնում ու դյուրացնում էին արտադրանքի թողարկումը, այլև թույլ էին տալիս նվազ աշխատանք վատնելով ավելի արագ և առավել կատարյալ իրեր պատրաստել: Տարբեր իրերի պատրաստելու կաղապարներ հայտնաբերված են Շենգավթից, Գառնիից, Նախիջևանի Քյուլ-թեփեից և այլ վայրերից. դրանց մեջ հալված մետաղը լցվել է ճակատային մասի խոշոր բացվածքից (կացիններ պատրաստելու համար) կամ անմիջապես լցվել միափեղկ կաղապարի մեջ (օրինակ հարթ տապարիկ, մանգաղ, դաշույնի հարթ շեղբ և այլն): Հետագա զարգացման ընթացքում մետաղը լցվում է հատուկ այդ նպատակով թողնված անցքից, ինչը պարզ երևում է Լճաշենից և այլ վայրերից հայտնաբերված երկփեղկ կաղապարների վրա: Այս

հանգամանքը ցույց է տալիս, որ կաղապարները նախքան օգտագործելը տաքացրել են, որպեսզի հալված մետաղը հավասարապես լցնի կաղապարի բոլոր մասերը: Առկա են և կաղապարներ, որոնք գազերի դուրս գալու համար նեղ ակոսիկներ ունեն (օրինակ Գանթիադիից գտնված սակրի կաղապարը): Այդ մանրամասնի առկայությունը ցույց է տալիս, որ մետաղագործը աշխատել է վերացնել իրի մակերեսին գազաբշտիկներ առաջանալու հնարավորությունը, ինչպես և նվազագույնի հասցնել կաղապարը ճաքեցնելու սպառնալիքը: Այս նրբությունները վկայում են, որ հալված մետաղը կաղապարի մեջ է լցվել բարակ շիթով, հալոցների միջոցով: Այդպիսիք հայտնաբերված են բազմաթիվ վայրերից (Գառնի, Արթիկ, Խիզանաանտ–գորա և այլն): Ակնհայտ է և մեկ այլ երևույթ. գործիքների և զենքերի մեջ մկնդեղի պարունակությունը հիմնականում տատանվում է 3-5%, իսկ պերճանքի առարկաներում այն հասնում է նույնիսկ 22%-ի, ինչը և ցույց է տալիս, թե մետաղագործը փորձով նկատել է, որ մկնդեղի մեծ քանակությունը (7.58%-ից բարձր) իջեցնելով հալման ջերմաստիճանը, փչացնում է ձուլվածքի մեխանիկական հատկությունները (իրը փխրուն է դառնում), իսկ փոքր քանակության դեպքում բարձրանում է իրի ամրությունը և այն հնարավոր է կոել ինչպես տաք, այնպես էլ սառը վիճակներում: Հանդիպում են և տարբեր համաձուլվածքներից պատրաստված իրեր, որոնք վկայում են մետաղագործի՝ տարբեր համաձուլվածքների հատկություններին քաջատեղյակ լինելը:

Մետաղամշակության զարգացման, մետաղագործի ձեռք բերած գիտելիքների բարձր մակարդակն են փաստում և թանկարժեք մետաղներից պատրաստված իրերը, պերճանքի տարատեսակ առարկաները: Դրանց որոշ մասը պատրաստված է կոմամբ, որին զուգահեռ տեսնում ենք և փորագրման ու դրոշմման եղանակները, դրանք կիրառվել են նուրբ զարդանախշեր ստանալու համար: Լայնորեն օգտագործվել է և լարածգումը, որը թույլ է տվել նուրբ լարեր ստանալ աստիճանաբար փոքրացող անցքեր ունեցող գործիքի միջոցով. ոսկրից պատրաստված նման մի գործիք հայտնաբերված է Լճաշենից: Բրոնզեդարյան ոսկերիչը շատ լավ է տիրապետել նաև դրվագման, դուրգամելու, ագուցելու, մանրարուքի եղանակին: Սիրված զարդերից էր և հատիկանախշը: Հատիկներ ստանալու համար ոսկե թելը պահվել է ուժեղ կրակի վրա, որի մեջ ընկած կաթիլը, մասերի տրոհվելով, փոքր հատիկներ է ձևավորել, որոնք և հիմնական զարդին են ամրացվել լայն, ուժեղ բոց օգտագործելով:

Հայտնաբերված նյութերը և դրանց պատրաստման եղանակները, լավագույն կերպով փաստելով արհեստաճյուղի զարգացման բարձր

մակարդակը, ցույց են տալիս միաժամանակ, որ ոսկերչական իրերն ավագանու կողմից աճող պահանջարկ են ունեցել: Դրա ապացույցն են և նման զարդեր պատրաստելու համար նախատեսված փոքրիկ կաղապարները. այդպիսիները հայտնաբերված են Դվինից, Լոռի-Բերդից, Մեծամորից և այլ վայրերից: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում մոմե՝ «կորած կաղապարով» պատրաստված իրերը. այդպիսիք հաճախ են հանդիպում ուշ բրոնզեդարյան հուշարձաններում և հետագայում: Այդ եղանակով են պատրաստված բրոնզե արձանիկները, արձանախմբերը, սնամեջ զանգակները և այլն: Նման իրեր պատրաստելու համար վարպետը, եթե իրի ներսում հարկ է եղել գնդիկ տեղավորել ձայն արձակելու համար (օր՝ զանգակ, բոժոժ, արձանիկ), մետաղե գնդիկը ծեփել է գիպսատիպ նյութով, տալով դրան արձանիկի կոպիտ տեսքը: Այդ զանգվածը այնուհետև ամբողջությանմ ծածկվել է անհրաժեշտ իրի վերջնական տեսքն ունեցող մոմի շերտով և ապա նուրբ կավաշերտով, որը չորացվելուց և թրծվելուց հետո փոխարկվել է կաղապարի: Դրա մեջ լցված մետաղը զբաղեցրել է մոմից ազատված մասերը: Պատրաստի իրը հանելու համար կավածածկույթը և գիպսատիպ նյութը հեռացվել է: Մյուս եղանակի դեպքում մոմից ծեփված արձանիկը կավաշերտով է ծածկվել, որի վրա անցքեր են թողնվել մետաղը լցնելու և մոմը դուրս գալու համար: Իրը պատրաստվելուց հետո կավազանգվածը հեռացվել է: Պատրաստման այս եղանակները թույլ են տալիս իրը մեկ անգամ պատրաստել:

Տարբեր մետաղներից և համաձուլվածքներից ստացված իրերի պատրաստման հնարքները (ձուլում, կռում, մանրարուք), երկրորդական՝ հանքավայրերից հեռու գտնվող մետաղագործական արհեստանոցների առկայությունը (բերովի հումքով աշխատող), անհայտ սպառողների աճող պահանջները բավարարելուն և արտադրանքի թողարկումը մի քանի անգամ արագացնող կաղապարների գյուտերը և այլ փաստեր (օր. փոխանակության համար նախատեսված, գանձերի ձևով հայտնաբերված իրեր և այլն), ապացուցում են, որ վաղ բրոնզի դարաշրջանում արդեն, եղել են ինչպես պատվերով, այնպես էլ շուկայի, անհայտ սպառողի համար աշխատող մետաղագործներ: Այլ կերպ ասած՝ մետաղագործությունը դուրս էր եկել տնային արտադրության ոլորտից, փոխարկվել էր ինքնուրույն արտադրաճյուղի:

§ 2. ԽԵՑԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Կավանոթներ պատրաստելու համար անհրաժեշտ է կատարվել մի շարք գործողություններ: Դրանք են. ա) հումքի և վառելանյութի նախապատրաստում, բ) կավախմորի պատրաստում, գ) խեցանոթի պատրաստում, դ) արտադրանքի չորացում և զարդանախշում, ե) թրծում: Այս գործողություններից յուրաքանչյուրը պահանջում է որոշակի գիտելիքներ և հմտություն: Իրոք, կավահողի ձեռք բերումը, թվում է, թե առանձին բարդություն չի ներկայացնում, քանի որ կավերի մակերեսային երևակումների կարելի է ամենուր հանդիպել: Իրականում դա ամենևին էլ այդքան հասարակ չէ, որովհետև ոչ բոլոր կավատեսակներից կարելի է ամաններ կամ այլ իրեր պատրաստել: Կան կավերի մի քանի տեսակներ. դրանցից գերադասելին պարարտն է, որը չի կարելի անմիջապես օգտագործել, քանի որ դրա ճարպոտությունը և ճարպային մասերի անհամաչափ նստվածքները կարող են ճաքեր առաջացնել անոթի վրա այն չորացնելու և թրծելու ժամանակ: Կավի այդ բացասական կողմը վերացնելու համար բրուտն այն թուլացնում է գետավազ, շամոտ (խեցեղենի մանրացված մասեր), օրգանական նյութեր կավախմորի մեջ ավելացնելով: Այս փաստերը ցույց են տալիս, որ խեցեգործության արշալույսին արդեն (նեոլիթ) մարդը ճանաչել է պարարտ կավահողի բացասական հատկությունները, որոնք վերացնելու համար և թուլացնող նյութեր է օգտագործել: Նման խառնուրդով հագեցած կավը շուտ է չորանում, լավ տանում ջերմության փոփոխությունները և ամուր է լինում: Թուլացնող նյութերը միաժամանակ կարկասի դեր են կատարում: Թուլացնող նյութերով խառնված կավազանգվածի վրա ջուր է լցվում և թողնվում հագեցման համար: Աշխատանքի այս փուլն ակնհայտ է էնեոլիթ – վաղ բրոնզեդարյան խեցանոթների վրա. դրանք պատրաստված են գերազանց հունցված կավախմորից, ինչը և ցույց է տալիս, թե բրուտագործը, կավագուղձերը մանրացնելով, ճարպամասերը հավասար տեղաբաշխել է՝ դրանով իսկ արագացնելով ջրահագեցումը:

Համաչափորեն խառնված կավախմորը 3–4 օր թողնվում է հասունացման կամ թթվեցման համար: Այդ ընթացքում կավը, որի մեջ գտնվող օրգանական նյութերը սկսում են խմորվել ու թթու միացություններ տալ, առաձգական է դառնում: Ձևավորման համար պատրաստ այդ կավազանգվածից անհրաժեշտ մեծության գնդեր են առանձնացվել, որոնցից և պատրաստվել են ամանները: Այդ գործողությունն են վկայում Գառնիի կացարաններից մեկի պեղումների արդյունքները: Այդտեղ, ինչպես

ասվել է նախորդ գլուխներից մեկում, օջախի մոտ նման գնդեր են գտնվել, որոնցից 3-4մ հեռավորության վրա բացվել է հունցած կավով լի հոր, որտեղից և տարվել են այդ գնդերը:

Ծեփածո եղանակով ամաններ պատրաստելու համար այդ գնդերից գլանիկներ են պատրաստվել, որոնք տափակեցվել են և միացվել իրար: Ժապավենների միջև առաջացած ճեղքերը և անհարթությունները վերացվել են փայտյա շեղբերի բութ մասով և ապա հարթեցվել թանձր կավաջրով հագեցած լաթի կտորով ամանը կոկելով: Ամանների պատրաստման ժապավենային եղանակը նեոլիթից է հայտնի: Կավախմորի մեջ բազալտի, ավազի, սլյուդայի, իսկ սակավ դեպքերում. օրգանական նյութեր պարունակող այդ խեցեղենի վրա հստակ երևում են միացման ժամանակ մնացած մատների հետքերը: Նեոլիթյան դարաշրջանի խեցեղենի կավախմորը, սակայն, վատ է հունցած. հաճախ դրա մեջ առկա են կավագնդիկներ, իսկ թրծումը թույլ է և անհամաչափ:

Ժապավենային եղանակով պատրաստված այս խեցանոթներին զուգահեռ, վաղ բրոնզի դարաշրջանում, ինչպես նշվեց համապատասխան գլխում, կիրառվել է և խեցանոթների պատրաստման «տեքստիլային եղանակը», որը լայնորեն գործածվել է դեռևս էնեոլիթում: Բաց օդում, խարույկի մեջ արագ թրծված (ամանների միջուկի գորշ գույնը արագ թրծման հետևանք է, որի ընթացքում կավի թթվեցումը ամբողջությամբ չի ապահովվում) խեցանոթները, որոնց կավախմորում իբրև թուլացնող նյութեր օգտագործվել են մազ, հարդ, ավազ և կամ հարդն ու ավազը միասին, իրենց պատերին կրում են գործվածքից մնացած դաջվածքներ: Դրանք ցույց են տալիս, որ ավազով լցված պարկը ծեփվել է կավով, որից հետո ավազը թափվել է, իսկ կտորը հեռացվել: Մասնավորապես Թեղուտից հայտնաբերված նման ամաններից մեկի պատերին երևում է նույնիսկ տոպրակի բերանի կապի դաջվածքը: Պատրաստման այս եղանակի դեպքում խեցանոթը ստանում է տոպրակի տեսքը: Ամանը պատրաստվելուց հետո, ինչպես այդ երևում է պատերի ներսում մնացած հետքերից, ամանը քսուկապատվել է, հարթեցվել լաթի կամ գուղձի կտորով: Մեծ քանակ են կազմում լրացուցիչ հարդարման չենթարկված խեցանոթների բեկորները. դրանց մակերեսը փշփշոտ է և անհարթ: Հակառակ դրանց, վաղ բրոնզեդարյան խեցանոթները կոկված են և հարթեցված: Դրանց մակերեսները պատված են կավի մաքուր շերտով (քսուկապատում), որը ներծծվելով խեցու ծակոտիների մեջ. ամրություն է տվել, նվազեցրել ջրաթափանցիկությունը և գեղեցկացրել այն: Այդ աշխատանքներից հետո ամանները թողնվել են ստվերոտ վայրում, որի ընթացքում ջուրն աստիճանաբար գոլորշիանում է, իսկ իրը վերջնականապես ամրանում. բնական է, որ ջրի արագ գոլորշիացման դեպքում, այսինքն եթե ամանը արևոտ վայրում դրվի կամ առանց նախապես չորացնելու թրծվի, ապա գոլորշին, որի ծավալը մեծ է ջրից, դուրս գալու տեղ ոչնչանալով, կճաքեցնի իրը, քանի որ կավախմորի մոլեկուլների ֆիզիկական կապերի ձևավորման պրոցեսը անկատար է մնում:

Ամանը բավականաչափ չորանալուց հետո կոկվել է կոկչով ու զարդարվել նուրբ կավագոտի-զարդերով (դրանք հաճախ հեշտությամբ են պոկվում ամանից) և կամ սեղմմամբ արված նախշերով, փորագիր զարդերով, իսկ հետագայում՝ փայլեցմամբ ստացված գծանախշերով ու դրոշմապատկերներով: Նեոլիթում սկիզբ առած բրուտագործական այս աշխատանքների ընթացքում մարդը ձեռք բերեց բազմաթիվ գիտելիքներ, ծանոթացավ կավի հատկություններին (պլաստիկություն, ձևավորվելու հատկություն և այլն), ինչը և վերջին հաշվով հանգեցրեց դուրգնի հայտնագործմանը: Վերջինս սկզբնապես կիրառվել է իբրև անշարժ տակդիր, որի վրա խսիր է դրվել պատրաստ ամանը հեշտությամբ անջատելու համար (էնեոլիթյան ամանների հատակներին այդ հետքերը հաճախ են հանդիպում): Աշխատանքների ընթացքում, սակայն, մարդն այդ անիվ-տակդիրը շարժունակ, պտտվող դարձրեց ավելորդ շարժումներից խուսափելու համար (անիվով պատրաստված ամանները Հայաստանում հայտնի են արդեն վաղ բրոնզի դարաշրջանում), ինչը և աստիճանաբար նրա համար բացահայտեց, դեռևս անգիտակցաբար, կենտրոնաձիգ և կենտրոնախույս ուժերի դերը արտադրանքի պատրաստման ընթացքում, ինչպես և իներցիայի նշանակությունը: Անիվը, որով պատրաստված են միջին բրոնզեդարյան խեցանոթները, թույլ տվեց բրուտին ազատել ձեռքերը և ամանը պատրաստել կավի ամբողջական կտորից: Միջին բրոնզեդարյան խեցանոթների ներսի մակերեսին դիտվող համաչափ գծերը, պատերի հավասար հաստությունը, անալիզների և ռենտգեն ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ կավազանգվածի մասնիկները անշարժացել են արագ «սլացքի» պահին. Ք. Նավասարդյանի կողմից կատարված անալիզների արդյունքները ցույց են տալիս, որ վաղ բրոնզեդարյան (նույնը և ուրարտական) ամանների մակերեսի կարմիր գույնը հետևանք է երկաթի օքսիդով հարուստ (6-8%) կավեր օգտագործելու և թրծման ջերմաստիճանի (վաղ բրոնզի դարաշրջանում այն հիմնականում տատանվում է 650-750^{0}C միջև) տարբերություններով: Ընդ որում քսուկապատելու համար նման կավերը բովել են մինչև անհրաժեշտ գույնի ստացումը, որից հետո փոշիացրել են և ստացել քսուկապատվող զանգվածը:

Անիվը Շումերում հայտնի էր արդեն մ.թ.ա. IV–III հազ., Սիրիա-Պաղեստինում՝ մ.թ.ա. III հազ., Հայաստանի ներկայիս տարածքում դրա երևան գալը դիտվում է վաղ բրոնզի դարաշրջանում, իսկ արագ պտտվող անիվը համընկնում է գունազարդ խեցեղենի հանդես գալու ժամանակին: Անիվի հետագա զարգացումն ընթանում է իներցիայի ուժը մեծացնելու որոնումներով, ինչը և վերջնահաշվում հանգեցրեց ոտքի ուժով գործող թափանիվի հայտնագործմանը: Այն հնարավորություն տվեց ոչ միայն ձեռքերն ազատել աշխատանքի ընթացքում, այլև՝ չընդհատվող պտույտների միջոցով մեծացնել իներցիայի ուժը:

Բրուտագործության բնագավառում դիտվող փոփոխությունները երևան են գալիս և թրծման վառարանների կառուցվածքում: Նման վառարաններ հայտնի են և Մինգեչաուրի պեղումներից: Համեմատաբար լավ պահպանված այդ վառարանները կազմված են հնոցից, ամանները տեղադրելու համար նախատեսված հարթակից և ծխնելույզից: Սկզբնական շրջանում, սակայն, ամանները թրծվել են բաց վառարաններում, խարույկի վրա: Նման թրծման դեպքում թրծման ցածր ջերմաստիճանն իրագործում է, բայց չի ավարտում կավի ֆիզիկա-քիմիական փոփոխությունները: Այդ են փաստում և խեցեղենի կոտրվածքում դիտվող ածխացած օրգանական նյութերը, իսկ կատարված հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ թրծումն իրագործվել է 450–600°C ջերմության պայմաններում (ըստ վաղ բրոնզեդարյան նյութերի), որից հետո ծխահարված արտադրանքը սև գույն է ստացել: Ծխահարումը կատարվել է թրծումը ավարտելուց հետո՝ ցածր ջերմաստիճանում(մոտ 400°C), որի ընթացքում ամանի մակերեսը ծածկվել է մրով: Վերջինիս վրա այնուհետև կենդանական ճարպ է քսվել ու կոկվել մորթու կտորով: Այդ գործողության ընթացքում ամանի մակերեսը ձեռք է բերում հայելանման փայլուն գույն: Ինչ վերաբերում է կարմիր, դարչնագույն և նման երանգավորումներով փայլեցված մակերես ունեցող ամաններին, ապա դրանք, կրկին ցույց տալով փակ վառարանների առկայությունը դեռևս վաղ բրոնզի դարաշրջանում, չեն ծխահարվել:

Բրուտագործական աշխատանքների ողջ ընթացքը, անիվի, վառարանի կատարելագործման ուղղությամբ կատարված աշխատանքները, շքեղ և խոհանոցային խեցեղենի շեշտված տարբերությունները և այլ փաստեր կասկած չեն թողնում, որ վաղ բրոնզի դարաշրջանում գոյություն է ունեցել բրուտ արհեստավորը, որը, ինչպես և մետաղագործը, աշխատում էր շուկայի՝ անհայտ սպառողի համար:

§ 3. ՓԱՅՏԱՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Հնագույն ժամանակներից սկսած՝ փայտը լայնորեն օգտագործվել է տնտեսության բոլոր ճյուղերում, կենցաղում: Դրա լավագույն ապացույցները ոչ միայն մեզ հասած սակավաթիվ նյութերն են, այլև՝ տարատեսակ գործիքներն ու զենքերը, որոնք ունեցել են փայտից պատրաստված բաղադրյալ մասեր: Հարուստ տվյալներ են պարունակում և ժայռապատկերները, որոնք հազարներով սփռված են Գեղամա լեռներում, Սյունիքում, Արագածոտնում և այլուր: Դրանց թեմատիկան բազմազան է (որս, առօրյա աշխատանքներ, մարտի տեսարաններ և այլն): Այդ նկարներում մարդը զինված է մահակով, գուրզով, նիզակով, նետ-աղեղով, պաշտպանված է տարբեր ձևերի վահաններով: Փայտից պատրաստված նյութերը, ինչպես ցույց են տալիս պեղածները, տարբեր փայտատեսակներից են: Այսպես, Թեյշեբաինիից (Կարմիր բլուր) հայտնաբերված նետաձողերը պատրաստված են թխկենուց, հացենուց և կեչուց. ճաքոցներ չտալու համար դրանք նախապես թրջվել են, ուղղվել հատուկ հարթիչներով և ապա թրծվել ու հղկվել քարով և ավազով: Սրանք պատրաստման պարզագույն եղանակներն են, որոնք առանձին վարպետություն չեն պահանջել:

Ավելի քան բարդ աշխատանքի արդյունք են վաղ բրոնզի դարաշրջանից մեզ հասած առանձին պեղածներ: Դրանք պատրաստված են փայտագործ վարպետի կողմից: Վերջինս տարատեսակ իրեր է պատրաստել, որոնք մեծ վարպետություն, աշխատանքի փորձ, գիտելիքներ ու հմտություն են պահանջում: Այսպես, վաղ բրոնզեդարյան համալիրներից մեզ են հասել սայլեր, անիվների մանրակերտեր (Բեղենի, Գառնի, Շրեշ-բլուր, Հառիճ և այլն): Նման նյութեր հայտնաբերված են և ուշ բրոնզեդարյան հուշարձաններում (Լճաշեն, Ներքին Գետաշեն և այլն): Այդ սայլերը բարձր և ցածր կողեր ունեն, իսկ առանձին դեպքերում՝ կամարակապ ծածկ: Ուշ բրոնզի դարաշրջանում զանգվածեղ անիվ ունեցող սայլերին զուգահեռ տեսնում ենք և ճաղավոր անիվներով թեթև մարտակառքեր, որոնց թափքերը բավական փոքր են: Նման մարտակառքերի բրոնզաձույլ արձանախմբերը, մանրակերտերը ցույց են տալիս, որ դրանցում տեղավորվել են կառավարն ու մարտիկը: Տվյալ դեպքում, սակայն, կարևորը սայլերի պատրաստման եղանակն է, որն ավելի քան բարդ է: Զանգվածեղ անիվները պատրաստված են երեք կտոր հաստ տախտակներից, որոնք իրար են միացված հատուկ փորված անցքերում ամրացված փայտե գլանաձողերով: Անիվների կենտրոնական տախ-

տակի վրա երկու կողմերից արված են անվաթմբուկի հավելվածներ, որոնցում բացված անցքում սոնին է ամրացվել: Անվատախտակները պատրաստել են խոնավ փայտից՝ տաշելու, ճեղքելու և հատելու եղանակով, իսկ առանձին մասերն ամրացնող գլանաձողերը եղել են չոր ու թրծված գլաններ: Մասերը միացնելուց և ամբողջացնելուց հետո անիվը թրծվել է, որի ընթացքում և խոնավ տախտակը չորացնելով սեղմել է չոր գլանաձողը, որն իր ծավալը չի փոխել:

Սայլերի որոշ օրինակների թափքի տախտակները զարդանախշված են նուրբ փորագրման եղանակով ստացված հարուստ զարդերով. այդ աշխատանքները երկար ժամանակ են պահանջում: Ուշադրություն է գրավում և այն փաստը, որ սայլերի տարբեր մասերը, ինչպես ցույց են տալիս փայտի բնակազմական անալիզների արդյունքները, տարբեր փայտատեսակներից են պատրաստված. անիվը թեղու փայտից է, սոնին և առեղը պատրաստված են կաղնու, ծածկը կարմիր ծառի փայտից և այլն, ինչը և ցույց է տալիս, որ առանձին փայտատեսակներ Լճաշենի փայտագործները բերել են այլ վայրերից: Ավելին, այդ փաստը խոսում է նաև այն մասին, որ փայտագործը շատ լավ է ճանաչել տարբեր փայտատեսակների հատկությունները: Այդ են ապացուցում և այլ նյութերի փայտակազմական անալիզների արդյունքները: Այսպես, մի շարք դամբարանադաշտերում (Ախթալա, Շեյթան-դաղ, Խանլար, Բեշտաշեն և այլն) հայտնաբերվել են փայտե կամերից պահպանված քարերը, կամերի մնացորդներ և նույնիսկ ամբողջական կամեր: Պահպանված փայտի անալիզները ցույց են տալիս, որ դրանք կաղնեփայտից են պատրաստված: Ինչ վերաբերում է գործիքի ձևին, ապա այն ոչնչով չի տարբերվում ոչ հեռավոր անցյալում հայկական գյուղերում (այլ ժողովուրդների կողմից ևս) օգտագործվածներից: Այդ փաստը ցույց է տալիս, որ նշված գործիքն ավելի քան 3000 տարի ձևական ոչ մի փոփոխություն չի կրել:

Ազգագրական տվյալները վկայում են, որ կամի տախտակը առանձնացնելուց և այն գոմաղբով մշակելուց հետո (չծռմռվելու և չճաքելու համար) դրվում է մարագը չորանալու համար: Այնուհետև անցքեր են բացվում և քարեր տեղադրվում դրանց մեջ: Տախտակը մի քանի անգամ թրջվելու և չորանալու ընթացքում սեղմում է ամրացված քարաբեկորները: Այս և այլ փաստեր ցույց են տալիս, որ հյուսնը սայլերի մասեր, տարբեր գործիքներ ու սպասքի առարկաներ նախապես է պատրաստել, զարդարել և անհրաժեշտության դեպքում, կարճ ժամանակամիջոցում միացրել դրանք: Հյուսն-արհեստավորը, որի առկայությունը տեսնում

ենք արդեն վաղ բրոնզի դարաշրջանում, պատրաստել է նաև արոր, ցաքան, փոցխ, ամաններ, դույլեր, դիապատգարակներ և այլ իրեր, որոնց զգալի մասը մեզ չի հասել, բայց առկա նյութերն իսկ ցույց են տալիս, որ հյուսնը տարբեր իրեր պատրաստելու համար հաշվի է առել ոչ միայն փայտատեսակի ամրությունը, այլև համը, գույնը, հղկվելու հատկությունը և այլ հատկանիշներ:

§ 4. ՄԱՆԱԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՋՈՒԼՀԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս արհեստաճյուղին առնչվող նյութերը սակավ են, բայց առկա տվյալներն իսկ ցույց են տալիս, որ այն բավական զարգացած է եղել: Հյուսվածքի, խսիրի վաղագույն հետքերը, ինչպես ասվեց, հայտնի են դեռևս նեոլիթից, որոնք էնեոլիթի դարաշրջանում առավել շատ են: Այս արհեստաճյուղի զարգացած լինելն են փաստում և Թրիալեթիից գտնված անոթի վրա պատկերված մարդկանց հագուստները: Դրանք մինչև ծնկերն հասնող, ծոպազարդ փեշերով և զարդարուն եզրերով կապաներ են, կարճ թևքերով ու լայն բացվածք ունեցող կրծքամասով: Լճաշենից Ակներից, Արթիկից հայտնաբերված են և գործվածքների պատառիկներ, իսկ Թեյշեբաինիում՝ թելերի կծիկներ: Այս արհեստաճյուղի զարգացման բարձր մակարդակի մասին են խոսում և Ասորեստանի թագավորները, որոնք շեշտում են Հայկական լեռնաշխարհի բնիկներից ավարառած գործվածքներն ու գույնզգույն կտորները: Նյութերի մյուս խումբն են կազմում մանածագործական գործիքները: Դրանք հայտնաբերված են գրեթե յուրաքանչյուր բնակավայրում, մասամբ նաև դամբարաններում: Դրանք իլիկների գլուխներ են, ծանրոց կախիկներ, ասեղներ և այլն:

Գործվածքների պատառիկների վրա դիտվում են տարբեր գույների թելերից ստացված զարդեր: ամենայն հավանականությամբ թելերը ներկվել են ինչպես հանքային, այնպես էլ բուսական նյութերով (տորոն, կծոխուր, սոխի կեղև, ընկուզենու տերևն ու արմատը և այլն): Առանձնակծոխուր, սոխի կեղև, ընկուզենու տերևն ու արմատը և այլն): Առանձնակի կարևորություն են ներկայացնում ծանրոց-կախիկները, Ուզերլիկ-թեփեից, Լճաշենից գտնված ոսկրե սանրաձև գործիքները. դրանցով, հնարավոր է, ամրացրել են թեզանիքը կամ միջնաթելը, ինչը հուշում է պարզ դազգահի առկայությունը: Դատելով խեցեղենի դաջվածքներից, այդ գործիքը օգտագործվել է դեռևս էնեոլիթում: Հարկ է նշել, որ Հին Եգիպտոսում դազգահներին ծանոթացել են հիքսոսների միջոցով:

Գործվածքը պատրաստելուց հետո ծանրոց-կախիկները կտրել են, իսկ թելերը կապվելով ծոպեր են ձևավորել, որոնք և տեսնում ենք Թրիալեթիի ամանի վրա պատկերված մարդկանց հագուստներին: Հայտնաբերված նյութերը ցույց տալով հանդերձ ջուլհակության զարգացման բարձր մակարդակը թույլ չեն տալիս վստահաբար ասել, թե արդյոք այդ արհեստաճյուղը տնային արտադրության ոլորտում էր, թե անջատված էր իբրև ինքնուրույն արհեստաճյուղ:

§ 5. ԿԱՇԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հանրահայտ է, որ մորթին և կաշին անփոխարինելի նշանակություն են ունեցել մարդու համար՝ վաղնջական ժամանակներից սկսած: Կաշվից պատրաստված նյութեր, սակայն, պեղումներից սակավ նմուշներով են հայտնաբերված: Օրինակի համար կարելի է նշել Շիրակավանից հայտնաբերված գոտին, պատյանների և կապարճների մեջ պահպանված կաշվի ծվենները, փոկերի մնացորդները և այլն: Այս արհեստաճյուղի վերաբերյալ եղած գիտելիքները ավելի շուտ հիմնված են մեզ հասած գործիքների, ազգագրական տվյալների և այլ կողմնակի աղբյուրների վրա:

Հայտնաբերված գործիքներն են քերիչներ (վանակատ, կայծքար, հետագայում՝ բրոնզից պատրաստված մանգաղաձև գործիքներ, որոնք հարմար են մաշկափառը, մսակտորները, ճարպամասերը հեռացնելու համար), հերունները վերը հիշատակված սանրաձև իրերը, որոնք կարող էին գործածվել և մազածածկույթը հեռացնելու նպատակով: Հետագա գործողությունների վերաբերյալ կարելի է պատկերացում կազմել կաշվի հատկությունների իմացությամբ:

Կաշին օրգանական նյութ լինելով պարունակում է սոսնձող մարմիններ, որոնք և չորանալու ժամանակ անմշակ մորթին փոխարկում են կնճռապատ, տձև, գործածության համար ոչ պիտանի նյութի: Դրանից խուսափելու համար մորթին մշակվում է: Առաջին հերթին դրանից հեռացվում է մորթափառը՝ քերիչների միջոցով, որից հետո աղով կամ մոխրով թուլացվում են մազարմատները: Մոխիրը պարունակում է կրի, սոդայի և նատրիումական միացությունների փոքր տոկոս, որը բավարար է մազարմատները թուլացնելու համար: Այս տեսակետից առանձին կարևորություն է ներկայացնում Աստղի-բլուրի դամբարաններից մեկում գտնված կաշվի կտորը, որի հետազոտությունը ցույց է տվել, որ այն ա-

ղով է մշակվել: Մոխիրը և աղը քսվում են մազածածկույթին, որից հետո մորթին փաթաթվում է և 1-2 օր թողնվում ստվերոտ տեղում: Այնուհետև մազածածկույթը հեռացվում է սանրով կամ ձեռքով, որից հետո կաշին չորացվում է: Կարծրացած կաշին կրկին փափկեցվում է ճարպով ու պրկվում, դառնում հարթ և առաձգական: Այս գործողություններից հետո միայն, կաշվից պատրաստում են անհրաժեշտ իրեր՝ տիկեր, ծածկոցներ, գոտիներ, ոտնամաններ և այլն. ոտնամանների և բարձրաճիտ կոշիկների ձևն ունեցող ծիսական կավանոթներ շատ են հայտնաբերված: Դրանք ձևով չեն տարբերվում մինչև XXդ. կեսերը օգտագործված ոտնամաններից:

Կասկածից վեր է, որ կաշվից ու մորթուց պատրաստվել են տարբեր տեսակի հագուստներ, մուշտակներ գլխարկներ, որոնք, սակայն, մեզ չեն հասել: Կաշին օգտագործվել է նաև զրահաշապիկներ պատրաստելու համար, որոնց վրա տարբեր չափերի վահանիկներ են ամրացվել: Այդպիսիք հայտնաբերված են հարուստ դամբարաններից: Ունենալով հազարամյակների փորձ՝ նման իրերի մեծ մասը, հավանաբար, յուրաքանչյուր ընտանիք ինքնուրույն կերպով է պատրաստել:

§ 6. ՔԱՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Քարը լայնորեն կիրառվել է տնտեսության տարբեր ճյուղերում: Տարբեր տեսակների քարերից պատրաստվել են տարատեսակ գործիքներ, զենքեր, պերճանքի առարկաներ: Քարը լայնորեն է կիրառվել շինարարության մեջ:

Այդ իրերը տարբեր կերպ են մշակվել: Մեծաքանակ են հատկապես սեղմման, բոկոտման և հարդարման եղանակով պատրաստված նյութերը: Դրանք վանակատից և կայծքարից պատրաստված շեղբեր են, նետասլաքներ, մանգաղների ներդիրներ, քերիչներ և այլ գործիքների ու զենքերի բաղադրյալ մասեր, որոնք յուրաքանչյուր ընտանիք ինքնուրույն կերպով է պատրաստել:

Քարի հարդարումը կատարվել է տարբեր եղանակներով: Մի դեպքում ոսկրից պատրաստված սրածայր հարդարիչը սեղմվել է հարդարվող իրի եզրին, որը և հարդարվել է թեթևակի հասցվող հարվածների միջոցով: Հարվածների ընթացքում առաջացող իմպուլսային շարժումը նպաստել է քարից մանր կտորների հեռացմանը, անջատվելուն: Մեկ այլ դեպքում հարդարումը իրագործվել է հարդարվող իրը ափի մեջ պահելով

և դրա եզրերը հարդարիչով սեղմելով ու քարից ավելորդ մասերը հեռացնելով. այս դեպքում մկանային մեծ ուժ է անհրաժեշտ եղել: Զարգացման հետագա ընթացքում վանակատի և կայծքարի մշակման այս եղանակը կիրառվել է նվազ չափով, քանի որ այդ եղանակով պատրաստված գործիքներն ու զենքերը(մանգաղների ներդիրներ, շեղբեր, նետասլաքներ) իրենց տեղը սկսել են զիջել մետաղից պատրաստված համանման նյութերին: Նույնը չի կարելի ասել կետահարվածային եղանակի համար: Այս եղանակով են պատրաստվել վիշապաքարերը, աղորիքները, քարե կացիններն ու մուրճերը, ինչպես և բազալտից ու հատիկային ապարներից ձևավորված նման այլ իրեր: Հարվածի դեպքում նման կազմություն ունեցող քարի ամրությունը թուլանում է և քարի վրա ճաք է առաջանում: Վերջինիս ուղղությունը, կախված քարի երակներից, կազմությունից, հարվածի ուղղությունից և ուժգնությունից, տարբեր է լինում: Այդ աշխատանքները կատարվել են քարե ծանր մուրճերով, որից հետո հարդարվել են մետաղե դրերով: Վերջիններս օգտագործվել են փորագրություններ, նուրբ աշխատանքներ իրագործելու, իրը վերջնական հարդարման ենթարկելու ժամանակ, որը հստակ դիտվում է կուռքերի, քարից պատրաստված ամանների, կաղապարների և այլ նյութերի վրա: Առանձին կաղապարներ, որոնք կոտրվել են աշխատանքի ընթացքում, չեն նետվել. հանդիպակաց կողմերի վրա բացված անցքերը ցույց են տալիս, որ դրանք միացվել են իրար, վերանորոգվել:

Ավելի նուրբ՝ հղկման, սղոցման և շաղափման եղանակի արդյունք են սարդիոնից և ագաթից պատրաստված տարատեսակ ուլունքները, ինչպես նաև այլ քարատեսակներից պատրաստված գուրզերը, «մարտական կացինները», նմանօրինակ այլ իրեր: Դրանց մեջ անցքեր բացելու համար օգտագործվել են աղեղնաձև գործիքներ, որոնցում տեղադրվել են տարբեր չափերի մետաղե խողովակներ կամ խողովակաձև ոսկորներ: Աշխատանքի ընթացքում օգտագործվել է ավազ և ջուր: Այդ աշխատանքների ընթացքը պատկերում են եգիպտական բուրգերի պատերին արված նկարները: Շաղափման այս եղանակը երկար է կիրառվել: Նկարագրված աշխատանքները ցույց են տալիս, որ մեզ հասած տարատեսակ իրերի մի զգալի մասը պատրաստվել է մասնագետ արհեստավորի կողմից:

Տարբեր արհեստաճյուղերի զարգացման ընթացքը, այսպիսով, ցույց է տալիս, որ վաղ բրոնզի դարաշրջանում արդեն եղել են մետաղագործությամբ, խեցեգործությամբ, փայտագործությամբ զբաղվող արհեստավորներ: Արհեստների բաժանման նախադրյալները, պայմանավորված երկրագործության ու անասնապահության ընդհանուր վերելքով, էնեոլիթում էին ստեղծվել: Տնայնագործության ոլորտում են մնում այնպիսի արհեստաճյուղեր, որոնցով կարողացել են զբաղվել բոլորը և կամ այդ արտադրանքը վաղ բրոնզի դարաշրջանում դեռևս լայն պահանջարկ չի ունեցել՝ յուրաքանչյուր ընտանիքում ինքնուրույն զբաղվելու պատճառով(օրինակ՝ կաշեգործությունն ու մանածագործությունը, ջուլհակությունը): Հետևաբար արհեստների անջատումը, որն ինքնին երկարատև գործընթաց է, աստիճանաբար է կատարվել:

Արհեստավորների երևան գալը, արտադրանքի թողարկումը արագացնելու, ինչպես և որակը կատարելագործելու ակնհայտ ձգտումն էր: Արհեստավորը, ամենայն հավանականությամբ, բնամթերքով էր վարձատրվում: Էնեոլիթում արդեն սկիզբ էր դրվել հասարակության աստիճանաբար խորացող շերտավորմանը, որը հստակորեն արտահայտվեց վաղ բրոնզի դարաշրջանի վերջում: Այդ շերտավորման ապացույցն են առաջնորդներին և ավագանուն պատկանող դամբարանները, որոնք առանձնանում են գույքի տեսականու հարստությամբ, ընդգծված ճոխությամբ:

Գ. ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐ

Արհեստների անջատումը երկրագործությունից և անասնապահությունից ընդլայնեց ոչ միայն փոխանակվող ապրանքների տեսականին, այլև ժամանակի ընթացքում անհրաժեշտ դարձրեց մասնագետ փոխանակողների երևան գալը: Այդ գործընթացին նպաստում էին և բնական հարստությունները, որոնցով հարուստ էր Հայկական լեռնաշխարհը: Շումերա-աքքադական գրավոր աղբյուրները վկայում են, որ մ.թ.ա. 3-րդ հազ. սկզբում կային չափ ու կշռի միավորներ օգտագործող առևտրականներ, որոնք հսկայական տարածքներ էին կտրում ապրանքներ գնելու և վաճառելու համար: Նրանք ունեցել են նաև իրենց առևտրական գաղութները, որոնք կարգավորել են ապրանքների առքն ու վաճառքը, տեղի իշխանավորներին տրվող տուրքերի ճափերը և այլն: Նման գաղութներ կային նաև Եփրատի սիրիական հատվածում (Ջեբել-Արուդա, Հաբուբա-Քաբիրա). դրանց արտադրանքը հասնում էր Կեբանի ջրամբարի տարածքը, որն Արևմտյան Հայաստանում է (Նորշուն-թեփե և այլն): Հայկական լեռնաշխարհից նրանք պղինձ, թանկարժեք մետաղներ ու քարեր, ինչպես և շինափայտ են Միջագետք ներմուծել, արտահանելով տարբեր ապրանքներ, այդ թվում հացահատիկ, պտուղներ, թզի գինի և այլն:

Աղյուսակ XVII

1

2


3

4


5


6


7


8


9


10

Գրավոր աղբյուրների տվյալները, սակայն, ամբողջական պատկերը չեն արտացոլում: Հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհի բնակիչները դեռևս նախորդ դարաշրջանից, փոխանակային կապեր են ունեցել շրջակա երկրների հետ: Վերջիններս Հայաստանից վանակատ են ներմուծել: «Վանակատի ճանապարհները» տարբեր ուղղություններով են ձգվել: Դրանցից մեկը Վանից (Նեմրութ) անցել է Իրան (Ջարմո, Շանիդար) և Միջագետք գծով, մյուսը գրեթե Պարսկական ծոց է հասել (Թալի-Բակուն, Ալի –Կոշ), իսկ մեկ այլ ուղի Կասպիականն է ելել (Չեսմի-Ալի): Վանակատը հասել է և Միջերկրականի ափերը (Երիքով, Բեյդա): Մեծ պահանջարկ ունեցող այդ հումքի փոխարեն, որն ավելի մեծ քանակությամբ է երևում Իրան – Իրաքում (Թել–Շիմշարա, Թեփե–Գուրան և այլն), բնականաբար Հայաստան են ներկրվել տարբեր ապրանքներ, որոնք հնագիտական նյութերով փաստարկված չեն: Ներմուծված նյութերից Հայաստանում և հարևան տարածքներում հայտնի են էնեոլիթում մեծ պահանջարկ ունեցած հալաֆ – ուբեյդյան գեղեցիկ, նրբաճաշակ խեցանոթներ, որոնց տեղի բրուտագործները ընդօրինակելու փորձեր են կատարել: Գ.Չայլդի կարծիքով Թիլկի թեփեում գործել է հալաֆյան համայնք, որն արտահանության համար խեցանոթներ է պատրաստել:

Վաղ բրոնզի դարաշրջանում Հայաստանից արտահանվող ապրանքների շարքում առաջնային նշանակություն են ունեցել պղինձն ու մետաղյա նյութերը. դրանք տարվել են թե Միջագետք, թե հյուսիս: Մայկոպի մկնդեղային բրոնզից պատրաստված վաղ բրոնզեդարյան նյութերն օրինակ, պատրաստվել են Կապանի, Գետաբեկի և Բելոկանի պղնձահանքերից ստացված հումքով: Այդ հանքավայրերից ստացված պղնձից պատրաստված իրեր հայտնաբերված են նաև Ուկրաինայում, Մոլդավիայում և նույնիսկ հարավային Ուրալում: Փաստորեն Հայաստանը ոչ միայն մետաղ, այլև մետաղագործական գիտելիքներ է փոխանցել հյուսիս:

Վաղ բրոնզեդարյան աշխուժ փոխանակային կապերի ապացույցն են և գանձերի ձևով հայտնաբերված, հավանաբար թափառող վարպետների կամ փոխանակողների պատկանող, նյութերը: Հանքավայրերից հեռու գտնվող վայրերում գտնված նման գանձեր, ներկայումս Անդրկովկասում հայտնի են շուրջ հարյուր հուշարձանից: Դրանցից մեկը, ինչպես նշվեց, մերձերևանյանն է, որը բաղկացած է բոլորովին չօգտագործված 19 կացիններից, դուրերից ու քլունգներից: Ապրանքային հարաբերությունների արշալույսին փոխանակությունը իրագործվել է շղթայա-

կան փոխանցումներով, անցել է բազմաթիվ օղակներով: Վաղ բրոնզի դարաշրջանից սկսած այն կարգավորված բնույթ է ընդունում: Սարգոն Աքքադացու ժամանակ կային առևտրական գաղութներ, այսպես կոչված կարումներ, որոնք ունեին իրենց ղեկավարները, գնորդները, գրասենյակները, առևտրական գործառույթներ իրականացնող մասնագետներ, որոնք ոսկի էին բերում նաև Մուշ-Ամիդ/Դիարբեքիր-Բիթլիս եռանկյունուց:

Գաղութների գործունեությունը մանրամասն կերպով վեր են հանում Կանիշ/Քյուլ թեփեից հայտնաբերված կավե սալիկները. դրանք վկայում են, թե այն հանդիսացել է նաև պղնձի մշակման ու վաճառքի խոշոր կենտրոններից մեկը, որի արտադրանքը մեծ պահանջարկ ուներ: Այս տեսակետից ուշադրություն է գրավում միջին բրոնզի դարաշրջանի վաղ փուլում Հայաստանից հայտնաբերված մետաղե իրերի, ոսկե տարատեսակ զարդերի ու ամանների, ինչպես նաև սուսերների առատությունը (աղ.XVII): Ներմուծված այդ իրերի ժամանակաշրջանը համընկնում է փոքրասիական տարանցիկ, Հայկական լեռնաշխարհով անցնող, առևտրական ուղու ծաղկման շրջանին (XX–XVIIIդդ.): Այդ ճանապարհով էին անցնում արևելքում և արևմուտքում պատրաստված ապրանքները, և Հայաստանից ու շրջակա երկրներից հայտնաբերված, ակնհայտորեն արևմտյան ծագում ունեցող իրերի առկայությունը ամենևին պատահական չէ: Լոռի-Բերդի և այլ հուշարձանների դամբարաններից հայտնաբերված ուլունքներն, օրինակ, նման են Տրոյայի 2-րդ շերտից (մ.թ.ա.XXIIIդ.) գտնված նմուշներին, Վանաձորից հայտնաբերված արծաթե դույլի զուգահեռները կրկին Էգեյան աշխարհում են (Վաֆիո), իսկ «կիպրեա» կոչվող խխունջները, որոնք ամենևին էլ հազվադեպ չեն Հայաստանի և Անդրկովկասի հուշարձաններում, Միջերկրական-Էգեյից են ներմուծվել: Ինչ վերաբերում է Քարաշամբից և այլ վայրերից հայտնաբերված թանկարժեք մետաղներից պատրաստված ամաններին, զարդերին, ապա դրանք դրսևորում են տեղական, փոքրասիական և շումերաաքքադական արվեստներին բնորոշ առանձնահատկություններ: Այդ մանրամասները փաստում են դրանց տեղում, բայց այլ մշակույթների ազդեցությամբ, պատրաստված լինելը: Նման իրերը կտրուկ նվազում են մ.թ.ա. XVIII–XVIդդ., այսինքն այն ժամանակ, երբ Աշշուր – Կանիշ առևտրական ճանապարհը կորցնելով իր երբեմնի նշանակությունը, դուրս է մղվում:

Թանկարժեք մետաղներից պատրաստված զարդեր և ներմուծված այլ իրերի առատություն է նկատվում ուշ բրոնզի դարաշրջանում:

Դրանց շարքում խոշոր խումբ են կազմում միտաննիական կնիքները (Արթիկ, Լոռի-Բերդ, Հառիճ, Լճաշեն, Շամիրամ և այլն), որոնք, կապված այդ պետության հզորացման հետ, Հայաստան են թափանցում ժամանակագրական փոքր հատվածում (մ.թ.ա.XV–XIVդդ.): Վերջիններիս առանձնահատկությունները ցույց են տալիս, որ դրանք հիմնականում Սիրիա-պաղեստինյան աշխարհից՝ Միջերկրականի արևելյան ափերից են ներմուծվել Եփրատ – Վան ուղիով: Այդ նյութերի շարքում առանձին հետաքրքրություն են ներկայացնում Մեծամորից հայտնաբերված եգիպտական կոյաբզեզը, կնիքը: Վերջինիս վրա եգիպտական հիերոգլիֆներով գրված է «Մեծ Սանգար երկրի առաջնորդ Կուրիգալզու»: Ամենայն հավանականությամբ դա Ամենհոտեպ Գ նվերն է Բաբելոնի (Մեծ Սանգար) կասիտ թագավոր Կուրիգալզու Ա-ին (XVդ. II կես): Մեծամորից գտնված է նաև գորտ – կշռաքար, որի վրա գրված է «Մեկ սիկլ Ուլամ-Բուրարիաշի, որդին Բուրնա-Բուրիաշ թագավորի» (Բաբելոնի թագավոր՝ XV դար): Այս նյութերի հայտնաբերումը տարակուսանք հարուցել չի կարող, քանի որ Միտաննին, որի ազդեցությունը ուժեղ էր Հայկական լեռնաշխարհում, խնամիական կապերով էր կապված Եգիպտոսի, իսկ Բաբելոնի հետ ուներ բարի դրացիական հարաբերություններ:

Միտաննիական ծագում ունեցող նյութերին, կապված այդ պետության պատմության թատերաբեմից հեռանալու հետ, փոխարինելու եկան ասորեստանյան ծագում ունեցող ապրանքները: Դրանք հիմնականում ներկայացված են ջնարակված փոքր անոթներով (Լոռի-Բերդ, Շիրակավան և այլն): Հայտնաբերված են և ասորեստանյան նմուշների ձևը ընդօրինակող իրեր, ինչպես ասենք սանձերի որոշ տեսակներ: Ասորեստանյան նյութերի շարքում առանձին հետաքրքրություն է ներկայացնում Ադադնիրարի թագավորի անունը կրող ագաթե ուլունքը, որը գտնված է Խոջալուի դամբարաններից մեկում:

Հայաստանում ավելի քան սակավ են ներկայացված հյուսիսից ներմուծված իրերը: Վերջիններիս շարքում են Կոլխիդա-կոբանյան մշակույթին պատկանող կացինները, որոնք ներկայումս հայտնի են Գյումրիից և Փարաքարից, իսկ մեկ օրինակ պատահականորեն գտնվել է Ուրմիա լճի մերձակայքից: Ուշ բրոնզի ավարտական շրջանին պատկանող այդ նյութերին կարելի է ավելացնել Գոգարանից հայտնաբերված սակրը, որի աշխատաբերանը զարդարված է նշված մշակույթին բնորոշ երկրաչափական բնույթի խորագիր զարդերով: Այդ սակավաթիվ գտածոները ցույց են տալիս, որ հյուսիսային մշակույթի ազդեցությունը շատ թույլ է եղել Հայկական լեռնաշխարհի հյուսիսային տարածքնե-

ռում: Նման իրերի հայտնաբերումը Ախուրյանի հովտում և Արարատյան դաշտում, ցույց է տալիս, որ առևտրական ճանապարհներից մեկը այդ տարածքով անցնելով, Ուրմիա է ձգվել:

Փաստական նյութերն, այսպիսով, ցույց են տալիս, որ ճանապարհների խաչմերուկում գտնվող Հայաստանը զարգացել է առաջավոր երկրների ու քաղաքակրթությունների հետ սերտ կապեր պահպանելով, վերցնելով առաջավորն ու կատարելագործվածը և իր ներդրումը կատարելով ժամանակաշրջանի նվաճումներում, որոնք նա հյուսիս է փոխանցել: Այս պահը հատկապես ցայտուն է դիտվում մ.թ.ա. III հազ.:

Հնագիտական նյութերը փաստում են նաև, որ Հայաստանը սոսկ հումք մատակարարող և շարժափոկի դեր կատարող, որակյալ ապրանքների տեսականին հյուսիս փոխանցող երկիր չի հանդիսացել: Փաստական նյութը ցույց է տալիս, որ Հայաստանի արտադրանքը երևում է ոչ միայն մերձավոր, այլև հեռավոր երկրներում. վերջին դեպքում դրանք այդ տարածքներում կարող էին հայտնվել և այլ ճանապարհներով, քանի որ նման իրերը խիստ սակավաթիվ են: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Տաջիկստանի հարավային մասում գտնվող Ռամիտ գյուղից հայտնաբերված «սևանյան» դաշույնատեսակին, ինչպես և Չինաստանից պատահականորեն գտնված, ծալված թևիկներով դաստակ ունեցող դաշույնին, որի անդրկովկասյան ծագում ունենալը կասկած չի հարուցում: Այդ գյուտերը կարող են վկայել, որ առանձին անձինք ուշ բրոնզ-վաղ երկաթի դարաշրջանում, հնարավոր է, որ արևելք տեղաշարժված լինեն հետագա դարաշրջանների քաջ հայտնի «մետաքսի ճանապարհով». չի բացառվում, որ նման իրերը այդ հեռավոր երկրներում հայտնված լինեն և մեկ վայրից մյուսը փոխանցելու եղանակով, որի ապացույցները բազմաթիվ են ազգագրական նյութերում:

Ավելի կարևոր են Իրանի մի շարք հուշարձաններում (Հասանլու, Քերմանշահ, Լուրիստան և այլն) հայտնաբերված, Հայաստանի ուշ բրոնզ-երկաթի դարաշրջաններին բնորոշ այնպիսի նյութեր, ինչպիսիք են թռչնաձև կախիկները, «ճանկավոր» նետասլաքները, սևանյան դաշույնները և այլն, որոնք ցույց են տալիս Հայաստանի կապերը նշված տարածքների հետ Վանյան արշավանքների նախօրյակին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ ՈՒ ՊԱՀՏԱՄՈՒՆՔ

§ 1. ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Նախնադարյան հավատալիքների տարբեր կողմերի վերաբերյալ այս կամ այն չափով պատկերացում կազմելու, դրանց առաջացումը հասկանալու համար անգնահատելի նշանակություն ունեն քարանձավների պատերի նկարները, ժայռապատկերները, տաճարները, ծիսական իրերը, կուռքերը, դամբարանային համալիրները և այլն: Այդ սկզբնաղբյուրներից ստացված գիտելիքները հարստացնում են հնագույն գրավոր աղբյուրներն ու ազգագրական տվյալները: Նշված աղբյուրների համալիր և համադրական ուսումնասիրությունները թույլ են տալիս գաղափար կազմել շրջապատող աշխարհի, բնության երևույթների, անդրշիրիմյան կյանքի և ընդհանրապես օբյեկտիվ իրողության տարբեր կողմերի վերաբերյալ հների ունեցած պատկերացումների մասին:

Անկարող լինելով հասկանալ և բացատրել երևույթների բնական շրջապտույտի պատճառահետևանքային կապը, տարբեր մարմինների ու նյութերի որակական տարբերությունները՝ մարդը բնության մեջ պարբերաբար կրկնվող ու իրար հակասող երևույթներն ընկալում էր իբրև մշտական հակամարտության մեջ գտնվող բարի և չար ուժերի պայքար: Իր հատկությունները բնությանը վերագրող բնապաշտ մարդը, որի համար ողջ բնությունը շնչավորված էր, հավատում էր, որ այն ամենը ինչ կատարվում է իր հետ, նույնը տեղի է ունենում և բնության մեջ, բուսական ու կենդանական աշխարհում և հակառակը: Անշունչ նյութի մեջ (քար, փայտ և այլն) ոգի տեսնող մարդը հավատում էր, որ ինքնուրույն կյանքով ապրող այդ ոգին է պայմանավորում կյանքն ու շարժումը: Նա հավատացած էր, որ համապատասխան միջոցներով, հմայություններով ու զոհաբերություններով կարող է իր կողմը թեքել այդ ոգուն, առաջացնել ու իրագործել իրեն ցանկալի արդյունքների երևան գալը և հակառակը՝ կասեցնել դրանք: Այդ հավատը և ծնեց մոգությունը: Մարդն իր մոգական գործողությունների արդյունավետությունը կապում էր զանազան ծիսական արարողությունների հետ: Վերջիններս խարսխված էին կախարդանքի հիմքում ընկած երկու սկզբունքների վրա:

Սկզբունքներից առաջինը հիմնվում էր այն հավատքի վրա, որ նմանը կարող է առաջացնել նմանին: Անկախ տարբեր նյութերի և երևույթների որակական տարբերություններից, իրերի առանձին հատկություններից ու հատկանիշներից, մեկ-երկու նմանություն բավական էր, որ մարդը մնացած հատկություններն ու հատկանիշները տարածեր իրարից որակապես տարբեր իրերի վրա, դրանով իսկ խորհրդանշականն ընդունելով իբրև իրականին փոխարինող և դրա բոլոր գործառույթները իրականացնող համարժեք իրողություն:

Երկրորդ սկզբունքի դեպքում գործում էր այն հավատը, որ երկար ժամանակ անմիջական շփման մեջ գտնված նյութերը շարունակում են նույն կերպ ազդել միմյանց վրա այդ կապը կտրվելուց հետո էլ: Նախնադարյան հավատալիքների այդ պարզագույն ձևերը, որոնցից ծնվեցին տոտեմիզմը, ֆետիշիզմը և անիմիզմը[1], երևան են գալիս հավատալիքների բոլոր ոլորտներում. դրանց մի մասը սնահավատությունների ձևով նույնիսկ մեր օրերն է հասել (օրինակ «աչքի ուլունքը» և այլն):

Նախնադարյան այդ հավատալիքները որոշիչ դեր ու նշանակություն էին վերագրում որոշակի գաղափարի նյութականացում հանդիսացող իր-խորհրդանիշի ձևին, զարդին, գույնին և այլն: Մարդը հավատում էր, որ իր իսկ ստեղծածը կարող է նույն զորությունն ունենալ և նույն արդյունքը տալ, ինչ և իրականը, որի գաղափարակիրն էր այն հանդիսանում: Նման հավատը, նմանակմանը կամ ընդօրինակմանն առաջնային դեր վերագրող (հոմեոպատիկ մոգություն. նմանը ծնվում է նմանից) մարդու համար, բնական և պատճառաբանված էր դիտվում, որովհետև ստեղծված իրը, նկարը, կուռքը և այլն, հանդես գալով իբրև գաղափարի նյութականացված ձև ու սրբազան էություն, իրականի այլաբանությունն էր դիտվում: Ասվածն ավելի պարզ ու հստակ է երևան գալիս նախնադարյան հավատալիքների տարբեր կողմերին ծանոթանալու ընթացքում, որոնք միաժամանակ ցույց են տալիս վերջիններիս աստիճանական զարգացումն ու բարդացումը, համալրումը նորանոր մանրամասնություններով, որոնք հետագայում ընդհանրացվելով, կրոնական համակարգի հիմքը դրեցին իբրև ձևավորված և ամբողջական աշխարհընկալում:

[1] Տոտեմիզմ – հավատ, համաձայն որի մարդն ընդհանուր ծագում և արյունակցական կապ ունի նախնի համարվող և հովանավորող դիտվող որոշակի կենդանիների, բույսերի, առարկաների հետ:

Ֆետիշիզմ - անշունչ առարկային գերբնական ուժի վերագրում, որը պահպանում և օգնում է այդ առարկան կրողին:

Անիմիզմ – ոգեպաշտություն. հավատ, ըստ որի յուրաքանչյուր գոյ (շնչավոր, անշունչ), երևույթ և այլն, ունի իր սեփական, ինքնուրույն կյանքով ապրող և շրջակա միջավայրի վրա ազդող ու տվյալ գոյը պաշտպանող ոգի:

§ 2. ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ

Մարդկության զարգացման արշալույսին ձևավորվող հավատալիքների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցրել որսորդության հետ կապված պատկերացումներն ու ծիսահմայական արարողությունները, որոնց նպատակը միանգամայն իրական արդյունքներ (հաջող որս) ձեռք բերելու ակնկալությունն էր: Դրա պերճախոս վկայությունը քարանձավների պատերի գունանկարներն են, ժայռապատկերների որսորդական տեսարանները, կենդանիների ոսկորների հայտնաբերումը գաղտնարաններում, կենդանիների արձանիկները և այլն: Վաղնջական ժամանակների այդ քարայր-կացարաններում իրական տեսքով պատկերված են եղջերուներ, բիզոններ, զուբրեր, որսի տարբեր կենդանիներ: Դրանց կողքին երբեմն պատկերված են և դիմակավորված որսորդներ, կախարդներ: Նման մի տեսարան է ներկայացնում ֆրանսիական Պիրենեյներում գտնվող «Երեք եղբայրներ» կոչվող քարայրի պատին արված նկարը: Դրանում պատկերված են եղջերվի նմանությամբ դիմակավորված, գլուխներին եղջյուրներ դրած ու կենդանիների մորթիներն իրենց վրա ձգած երեք կախարդներ ծիսական պար կատարելու պահին: Քարանձավի հատակին դիտված են ոտքերի դրոշմներ. դրանք ցույց են տալիս, որ նկարների առջև, կախարդանքի հետ կապված արարողություններ, թերևս պարեր են կատարվել:

Հայաստանում, ինչպես ասվել է վերևում, Լուսակերտի քարայրի պատին եղջերու է պատկերված, Ազոխի քարայրում՝ պատի տակ պատրաստված գաղտնարանում, որոշակի դասավորությամբ դրվել են արջի գանգ, սղոցած ոսկորներ: Կենդանիների ու դրանց որսող որսորդների նկարները բազմաթիվ են Հայաստանի լեռներում (Գեղամա լեռներում, Սյունիքում, Արագածում և այլն) սփռված ժայռապատկերներում: Առանձին դեպքերում (Սյունիք) երևում է, որ դրանք արվել են ժայռակտորների հարթ երեսներին պատկերը նախապես քարով գծելուց հետո: Բծախնդիր և մանրակրկիտ կերպով կատարված նախնադարյան արվեստի այդ նմուշներն արվել են իրական արդյունքներ ստանալու նպատակով: Խորհրդանշական կերպով «սպանելով» իր իսկ կողմից պատկերված կենդանուն և որոշակի ծիսական արարողություններ կատարելով այդ նկարի առջև, մարդը համոզված է եղել, որ իրականում էլ սպանելու է դրան (կախարդանքի առաջին սկզբունքը): Այստեղ արտառոց ոչինչ չկա: Նույնիսկ միջնադարում (և հետագայում էլ) մարդիկ հավատում էին, որ եթե կախարդը ինչ-որ մեկի փոքրիկ արձանիկը պատրաստի և

համապատասխան ծիսահմայական գործողություններով կուրծքը (սիրտը) ասեղով ծակի կամ խորհրդանշական կերպով «ապանի», ապա իրական անձը, որի խորհրդանիշն է եղել արձանիկը, սիրահարվելու և կամ վնասվելու է «կախարդված» արձանիկին տիրողի կողմից:

Որսի՝ սկզբնապես մարդու գոյությունը պայմանավորող գործունեության ծիսական նշանակությունը (անտառում ապրող հովանավորող ոգի ունեցող կենդանուն սպանել, արյունը թափել) պահպանվեց նաև հետագայում: Դրա ապացույցն են նաև տաճարներին նվիրաբերվող բրոնզե գոտիների՝ պաշտամունքային նշանակության իրերի (գոտի/քամարկամար-երկնակամար) վրա արված որսորդական տեսարանները: Հայտնի են և նման տեսարաններ արտահայտող արձանախմբեր (Լոռի Բերդ և այլն), ծիսական խեցանոթներ:

§ 3. ԱՆԴՐԻՐԻՄՅԱՆ ԿՑԱՆՔ

Անդրշիրիմյան կյանքի հետ կապված պատկերացումներն ու հավատալիքները կարևոր տեղ են զբաղեցրել մարդու կյանքում: Դրա վկայությունն են տարատեսակ դամբարաններն ու դրանց վերգետնյա նշանները, կմախքների դիրքը և ընդհանրապես թաղման ժամանակ կատարված ծեսերը, որոնք ցույց են տալիս այդ հավատալիքների համալրումը նոր մանրամասնություններով: Այդուհանդերձ, հանդերձյալ կյանքի հետ կապված հիմնական գաղափարը՝ վերածննդի միտքը, մնում է նույնը:

Վաղագույն թաղումները, այսինքն՝ հանգուցյալին ոչ թե սանիտարահիգիենիկ նկատառումներով, այլ որոշակի ծիսական արարողություններով, գիտակցված կերպով կենդանի մարդկանցից անջատելը, փաստարկված է արդեն նեանդերթալցիների քարայր-կացարանների հատակների տակ: Նման թաղումներ, ինչպես տեսանք, հաճախ են հանդիպում նաև էնեոլիթյան բնակավայրերում (Շիկահող, Քյուլ թեփե, Արուխլո և այլն), սակավ դեպքերում՝ վաղ բրոնզի դարաշրջանում, երբ հիմնականը առանձնացված դամբարանադաշտերն են: Վաղ շրջանի թաղումներում սովորական է եղել և օխրայի գործածությունը, հանգուցյալի հետ իրեր դնելը: Բնորոշ գծերից է նաև հանգուցյալին կողքի պառկեցված, կծկված վերջույթներով թաղելը: Դիտված է նաև դիակը խսիրով կամ կոպիտ գործվածքով փաթաթելը:

Կացարանի հատակի տակ կատարված թաղումը ցույց է տալիս, որ նախնադարյան մարդը, ինչ-որ տեղ, նույնացնելով տուն-դամբարան

հասկացությունները, որոշակի կապ է տեսել դրանց միջև: Ավելին, նրա պատկերացումներում մահը ոչ թե կյանքի ավարտ, այլ շարունակություն է հանդիսացել, բայց միանգամայն այլ պայմաններում: Այդ շարունակությունը, երևույթներն իբրև պարբերաբար կրկնվող շրջապտույտ ընկալող մտածելակերպը, բնական և հասկանալի էր դարձնում այն հավատը, որ մահացածի հոգին ենթակա է վերածնվելու տվյալ բնակավայրում, կոլեկտիվում, ընտանիքում: Թաղելով հանգուցյալին տան ներսում կամ բնակավայրի տարածքում, նախնադարյան մարդը հավատացած է եղել, որ ապահովել է հանգուցյալի հոգու (այն ընկալվել է իբրև ինքնուրույն կյանքով ապրող, եթերային վիճակ ունեցող անտեսանելի գոյ) անմիջական կապը ողջերի հետ և միաժամանակ անկասելի է դարձրել նրա վերադարձը հարազատ միջավայր:

Վերածնության գաղափարն է արտահայտում և կմախքի կծկված դիրքը, որը սաղմի վիճակն է խորհրդանշում: Դա ցույց է տալիս, որ դամբարանն իր մեջ խտացրել է արգանդի՝ պտղի բնակարանի իմաստը և վերջինիս «զավակատուն» անվանումը պատահական չէ: Թաղումը (այստեղ մարդ էակի հոմանիշ «հողածին» բառը պատճառաբանված է) .ների կողմից դիտվել է իբրև վերադարձ մայր երկրի արգանդը՝ ընդերքը, իսկ պատանքը, որի դերը (խորհրդանիշ) կատարել են խսիրը, կոպիտ գործվածքը, խորհրդանշել է ընկերքը: Համաձայն հների պատկերացումների, որոնցում ամեն ինչ հանդես էր գալիս շնչավորված ձևով, հողն ընկալվել է իբրև իգական սկիզբ՝ մայր, ծնողական (անշունչ սերմին կյանք տվողը հողն է), որից և ծնվել է մարդը (մարդ-հողածին): Հետևաբար թաղումն իր մեջ խտացրել է նաև հողը բեղմնավորելու իմաստ, որն անմիջականորեն կապվում է վերածնության մտքին: Ասվածից հետևում է, որ ծնունդն ու մահը սերտորեն փոխկապակցված հասկացություններ են եղել, որտեղ կապող օղակի դերում հանդես է գալիս հոգին իր փոխակերպվելու հնարավորությամբ: Այդ կենդանի հոգու համար սննդարար կերակուր է հանդիսացել արյունը: Ազգագրական տվյալները, գրավոր աղբյուրները բազմաթիվ փաստեր են պարունակում թաղման ժամանակ կատարված մարդկային զոհաբերությունների, ինքնախոշտանգումների մասին: Օխրայի մեջ արյան իմաստն է խտացված, այն արյունն է խորհրդանշել, որով պետք է սնվեր հանգուցյալի հոգին: Սա կախարդանքի հիմքում ընկած սկզբունքներից առաջինն է, որի դեպքում անտեսելով նյութերի որակական տարբերությունները և էական նշանակություն վերագրելով տարբեր նյութերի հատկանիշներից մեկ կամ մի քանի սի նույնությանը (տվյալ դեպքում կարմիր գույնը), մարդը հավատացած

է եղել, որ մի նյութը կարող է փոխարինել մյուսին և առաջացնել ցանկալի երևույթ: Դա մերձենում է այն գործողությանը, երբ մարդը «սպանելով» նկարի կենդանուն, վստահ է եղել, որ իրականում էլ կսպանի այն:

Նման պատկերացումներ են ընկած և քարանձավում կատարված թաղումների դեպքում. հների պատկերացումներում քարանձավը կապվել է մայր հողի ընդերքը տանող մուտք-ելք գաղափարին: Քարանձավում կատարված թաղումը արտահայտում է բնական ճանապարհով մայր հողին վերադառնալու իմաստը: Համանման պատկերացումներով են պայմանավորված և հուշաղամբարանները: Թաղելով օտարության մեջ մահացած կամ անհետ կորած անձի իրերը, մարդը հավատացել է, որ այն ինչ կատարվում է դրանց հետ, անդրադառնում է նաև մեռնողի վրա: Այս դեպքում գործում է այն հավատը, որ երկար ժամանակ իրար հետ կապված իրերը շարունակում են իրար վրա ազդել նույն կերպ, երբ այդ շփումը դադարած է լինում (կախարդանքի երկրորդ սկզբունքը): Խոր նախնադարում ծնված այս հավատը նույնիսկ մեր օրերն է հասել: Բազմաթիվ օրինակներից կարելի է հիշատակել թեկուզ Հ.Թումանյանի համանուն երկի հերոսի՝ Չախորդ Փանոսի անձնական իրերը համապատասխան արարողություններով թաղելու դրվագը:

Տարատեսակ սկզբնաղբյուրների տվյալները, ինչպես տեսնում ենք, ցույց են տալիս, որ նախնադարյան մարդու պատկերացումներում յուրաքանչյուր տարր, երևույթ, իր և այլն, դիտվելով որոշակի գաղափարի նյութականացված ձև, դրա խորհրդանիշը, այդ էությանը համարժեք է համարվել: Այլ կերպ ասած, ձևը, դրան վերագրվող գաղափարին էական, որոշիչ նշանակություն է վերագրվել: Այս մտայնության արգասիքն են նաև դամբարանաթմբերն ու կրոմլեխները: Իրոք, թաղումը իբրև վերածննդի գործողություն պատկերող մարդը, որի համար թաղումը հողի բեղմնավորում էր նշանակում, հողին համապատասխան տեսք է տվել դամբարանաթումբ պատրաստելով, իսկ կրոմլեխը ունեցել է պաշտպանիչ, մոգական իմաստ. այն պիտի պաշտպաներ վերածնվող կյանքը արտաքին չար ուժերից: Պատահական չէ, որ Սյունիքում, Վասպուրականում, Մուշում և այլուր, ոչ վաղ անցյալում դեռ, ծննդկանի շուրջը այդ նպատակով պարան կամ գութանի շղթա են բոլորել կամ պարզապես շրջան գծել, ուղեկցելով այդ գործողությունը համապատասխան աղոթքներով: Այս պատկերացումներին համահունչ են պտղաբերության հետ կապված հավատալիքները:

§ 4. ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Արտադրող տնտեսության կայացումն ու զարգացումը նոր կողմերով հարստացրին նախնադարյան հավատալիքները: Դրանց մեջ առանցքային նշանակություն ձեռք բերեցին կյանքի վերարտադրության, բուսական ու կենդանական աշխարհների վերակենդանացման, արգասավորման ու պտղաբերության հետ կապված գաղափարներն ու պատկերացումները, որոնց արգասիքը հանդիսացավ «ապրող-մեռնող» աստվածությունը: Նախնադարյան հավատալիքներում այդ պատկերացումների նյութականացված արտահայտությունը հանդիսացան ծիսակատարությունների ժամանակ կարևոր դեր կատարող կենդանակերպ ու մարդակերպ արձանիկները. դրանք հաճախ են հանդիպում էնեոլիթյան և վաղ բրոնզեդարյան հուշարձաններում: Այդ արձանիկների շարքում առանձնանում են կնոջ, մոր, «մայր աստվածուհուն» պատկերողները (աղ.XVIII$_1$): Դրանց նախնական օրինակները, ինչպես նշվեց, ներկայացնում են մի դեպքում կանգնած, մյուսում նստած կնոջը: Բրոնզեդարյան հուշարձաններում դրանց փոխարեն հանդես են գալիս ձեռքերը արմունկներում ծալած և վեր պարզած, ոճավորված տեսք ունեցող կուռքերը. դրանց զուգահեռ առկա են և բավականին իրական տեսքով քանդակվածներ: Նման արձաններ սովորաբար դրված են լինում հացահատիկի հորերի և օջախների մոտ: Ավելին, դրանք հաճախ զարդարված են բուսական նախշերով, երբեմն՝ երկրաչափական պատկերներով: Նախնական նմուշների գերակշռող մեծամասնությունը, սակայն, անզարդ է. սակավ դեպքերում միայն դրանք զարդարված են բուսական (ծառ) նախշերով կամ փորագիր գծերով: Նման օրինակներից մեկն է Շուլավերից գտնվածը: Նշանակալից է այն հանգամանքը, որ բոլոր դեպքերում մերկ կնոջ պատկերող այդ արձանիկների առանձին նմուշների կավախմորում առկա են հացաբույսերի հատիկներ (Գուդաբերտկա), որն ընդգծում է դրանց կապը բուսականության, բերրիության հետ: Այդ իմաստն է ընդգծում և կուռքերի՝ հացահատիկի հորերի և օջախների մոտ գտնվելու հանգամանքը, ինչը ցույց է տալիս օջախների կապը պտղաբերության, ընտանիքի հարատևության ու շենության գաղափարի հետ:

Օջախ-կրակի պաշտամունքը: Վաղ բրոնզեդարյան կացարաններում և ընդհանրապես բրոնզ - երկաթեդարյան տաճարներում, սրբարաններում հայտնաբերվող կավակերտ ծիսական օջախները, սրբազան կրակին համահավասար պաշտվել են մարդու կողմից: Դրա ուղղակի

վկայությունը նման օջախների հայտնաբերման հանգամանքն է. վաղ բրոնզեդարյան կացարաններում ծիսական օջախները, ի հակադրություն տնտեսական նշանակություն ունեցողների, բոլոր բնակարաններում չէ, որ հայտնաբերվում են: Այս փաստն ինքնին ցույց է տալիս, որ ոչ միայն արևի հատկանիշները կրող (լույս, ջերմություն, կյանք) կրակն է պաշտվել, այլև՝ գերդաստանի նահապետի կացարանում տեղադրված ծիսական օջախը, որն իր մեջ խտացնում էր ընտանիքի կայունության և ամբողջության, տան շենության, սերնդաշարունակության, պտղաբերության, արևի, կյանքի, հավերժության գաղափարը: Այս դեպքում կրկին շեշտվում ու կարևորվում է նյութի, խորհրդանշանների, զարդերի ձևը, որոնք հանդես են գալիս իբրև որոշակի գաղափարի նյութականացված վիճակ: Օջախների ձևը (ոչ թե եռանկյունի, քառանկյունի և այլն, այլ՝ ամբողջի, պահպանիչի, չարահալածի իմաստակիր շրջանի տեսք), դրանց զարդերը, որոնք իրենցից ներկայացնում են խումբ-խումբ տարված, անկյուններ ձևավորող թեք գծեր, լուսատուներ, ոճավորված բույսեր ու կենդանիներ, խոյագլուխ ելուստներ և այլն, ակնհայտորեն կապվում են պտղաբերության, արևի, լույսի, ջերմության գաղափարին: Դիտվելով արևի հատկանիշներ կրող տարր, կրակը կապվել է վերածնության, պտղաբերության գաղափարին, ընկալվել իբրև նյութ, որն իր արտածած լույսով ու ջերմությամբ նպաստում է կյանքի արարմանը, զարթոնքին: Պատահական չէ, որ ազգագրական նյութերում հաճախ են հանդիպում կրակի, օջախի հետ կապված ծիսական արարողություններ (հարս գնացած աղջիկը ամուսնու տան թոնրի ակն է համբուրել, ամոլ կինը կրակով է ուզում երեխա ունենալ, կրակի վրայով են թռչում, աշխատելով փեշի ծայրը այրել և այլն):

§ 5. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Ասվեց, որ բնապաշտ մարդը բնության երևույթներն ընկալել է իբրև հակամարտ ուժերի պայքար: Այդ ուժերը նրա պատկերացումներում սկզբնապես կենդանակերպ են եղել: Հետագա զարգացման ընթացքում դրանք աստիճանաբար ձեռք բերեցին մարդկային գծեր՝ չկորցնելով սակայն, կապն այն կենդանիների հետ, որոնց դերը իրենք էին ստանձնել: Մարդկային էություն ձեռք բերող այդ աստվածներն ունեին իրենց անուններն ու իշխանության սեփական ոլորտները: Այսպես, Վանի թագավորության դիցարանը գլխավորող Խալդիի սրբազան կենդանին, օրինակ, առյուծն էր, Թեյշեբայինը՝ ցուլը և այլն: Այդ և այլ կենդանիների արձանիկներ հայտնի են բրոնզ-երկաթեդարյան հուշարձաններում: Դրանց շարքում առանձնանում է Շիրակավանի ուշ բրոնզեդարյան դամբարաններից մեկում հայտնաբերված բրոնզաձույլ արձանախումբը: Դրա խարսխաձև իրանի ստորին թևերին թռչունների արձանիկներ են տեղադրված, իսկ վերին թևերից մեկի վրա զինավառ աստվածություն, մյուսին՝ առյուծ է կանգնած: Խարսխի առանցքի մակերեսը հասկազարդ է (աղ.XVIII$_2$):

Իր տեսակի մեջ առայժմ եզակի այս արձանախումբը ցույց է տալիս, որ մարդն իրեն տեսանելի աշխարհը եռահորիզոն է պատկերացրել: Վերին հորիզոնը կամ երկինքը, նրա պատկերացումներում, գերագույն աստվածությանն է պատկանել, որը Խալդիի պես ոչ միայն կյանքի ու պտղաբերության (դրա խորհրդանիշը միջին հորիզոնի իմաստակիր հանդիսացող հասկազարդ միջուկն է) հովանավոր, այլև արարիչ է հանդիսացել: Վերջինս ընկալվել է երիտասարդական ավյունով լի երկսեռ զինվորի տեսքով, որը պատրաստ է եղել պայքարել հակադիր՝ ստորին աշխարհի ուժերի դեմ ու հաղթելով դրանց, ապահովել պտղաբերությունն ու սերնդաշարունակությունը: Այդ աստվածության մարտնչող էությունն են ցույց տալիս վահանը, ձախ թևատակում տեղադրված կապարճը (ըստ երևույթին աջում աղեղն է եղել, որը չի պահպանվել) և սաղավարտը: Մարդակերպ այս աստվածությունը վաղ շրջանի արձանիկների ու պատկերների շարքում բացակայում է: Օրինակի համար կարելի է նշել Վանաձորից հայտնաբերված ոսկե թասի վրա պատկերված, զույգ-զույգ իրար դեմ կանգնած առյուծները, Վրաստանի Ցնորի գյուղի (Կախեթ) դամբարանաթմբերից մեկում գտնված, ոսկուց պատրաստված առյուծի արձանիկը և այլն (նշվածները թվագրվում են մ.թ.ա. III հազ. վերջ – II հազ. սկզբով): Այս և այլ օրինակներ ցույց են տալիս, թե նախնիների պատկերացումներում ողջ տիեզերքը ազդեցության ոլորտների բաժանած, գերբնական զորությամբ օժտված կենդանակերպ այդ ուժերի մարդայնացման գործընթացը երկար ճանապարհ է անցել: Սկզբնապես դրանք կենդանիների, թռչունների, սողունների տեսքով են ընկալվել (հաշվի են առնվել դրանց ամենաբնորոշ հատկանիշները) և իբրև այդպիսիներ հավերժացվել են ժայռապատկերներում, գոտիների և ծիսական անոթների վրա, պատրաստվել ու ներկայացվել արձանիկների ու իշխանության խորհրդանիշ հանդիսացող իրերի (մական, գավազան և այլն) բաղկացուցիչ մասերի տեսքով և այլն: Այդ նյութերը մեծ խումբ են կազմում:

Աղյուսակ XVIII



Ա. Ցլակերպ արձանիկներ: Նախնադարյան արվեստի այս հիասքանչ նմուշների շարքում առանձին խումբ են կազմում Լճաշենից, Գավառից, Տոլորսից, Առաջաձորից և այլ հուշարձաններից հայտնաբերված եղջերվատեսք ու ցլակերպ արձանիկները, մականների գլխակալները (աղ.XVIII$_3$), նմանաձև ծիսական խեցանոթները և այլն: Արձանիկներից մի մասի փորատակում արված խողովակի մեջ մականի կամ գավազանի ծայրն է ամրացվել: Այլ օրինակների վրա, որոնք ցլի գլխի տեսք ունեն, խողովակի դերը կատարել է վզի շարունակությունը կազմող գլանիկը (աղ.XVIII$_4$): Արձանիկներից մյուսները զուրկ են նման հարմարանքներից. դրանք պատվանդանների վրա են գտնվում, որոնց մի մասը խարսխաձև է: Վերջիններիս ստորին թևերի վրա երբեմն քարայծերի արձանիկներ են տեղադրված (աղ.XVIII$_5$): Առանձին հետաքրքրություն են ներկայացնում ցուլերի և այլ կենդանիների առանձին մասերի միացմամբ ստացված երևակայական կենդանիների պատկերները: Օրինակի համար կարել է նշել Ուղտասարի (Սիսիան) ժայռապատկերներից մի քանիսը. դրանցում ցլակերպ (երբեմն՝ քարայծ) տեսք ունեցող կենդանին օձաձև մարմին ունի (աղ.XVIII$_6$) կամ օձապատկերը ոտքերից մեկի շարունակությունն է կազմում. մյուս ոտքերն ավարտվում են լուսնի կամ աքցանի տեսք ունեցող կճղակներով (աղ.XVIII$_7$): Այլ նկարի վրա դեմդիմաց կանգնած ցուլերի գլուխների միջև կայծակաձև բեկյալ է պատկերված (աղ.XVIII$_8$) և այլն: Այս մանրամասները ցույց են տալիս, որ ցուլը, այծը, քարայծը կապվել են ամպրոպի, անձրևի, որոտի, ջրային տարերքի հետ: Ջրային տարերքի հետ ունեցած այդ կապն են ցույց տալիս և վիշապաքարերի վրա քանդակված ցուլերի բերաններից հոսող ջրաշիթերը (աղ.XVIII$_9$):

Վաղնջական ժամանակներում ձևավորված այդ հավատալիքները, որոնց վկայությունները եզակի չեն հնագույն գրավոր աղբյուրներում, իրենց արտացոլումն են գտել նաև հայ ժողովրդի հանելուկներում: Օրինակի համար կարելի է հիշատակել «ինքը էծ, մեջքը պեծ» հանելուկը, որը ցույց է տալիս, թե այծը կայծակի հետ է համեմատվում, կապվում պտղաբերության գաղափարին: Այդ պաշտամունքի հետ են կապվում նաև Կապանից, Տանձավերից, Շիկահողից և այլ հուշարձաններից հայտնաբերված կենդանակերպ անոթները: Վերջիններիս սնամեջ իրանի մեջ հեղուկ կամ հատիկ է լցվել կենդանու մեջքի վրա տեղադրված գլանիկաձև շինության միջոցով (աղ.XVIII$_{10}$): Տեղին է նշել, որ խեթերը գարնանային «կիլամ» կոչվող տոնախմբության ժամանակ կենդանակերպ արձանիկներ էին տանում ցուլեր լծած կառքի առջևից: Գարնանային այդ տոների

ժամանակ նրանք բացել են կենդանակերպ անոթները, որոնք փակել են աշնանը, վերստին հեղուկ կամ հատիկ լցնելուց հետո: Անոթի բացումը խորհրդանշել է գարնանային եղանակի բացումը, անձրևների սկիզբը, որոնք գտնվել են ամպրոպի աստծու տնօրինության տակ:

Բ. Օձապատկերներ և օձագլուխ ապարանջաններ: Ժայռապատկերներից բացի օձերի նկարներ ենք տեսնում նաև գոտիների, ծիսական անոթների, դաշույնների վրա, իսկ I հազ. սկզբից սկսած սովորական են դառնում օձագլուխ ծայրերով ավարտվող ապարանջանները: Քրիստոնեության ընդունմամբ սատանա վերանվանված օձը, հների պատկերացումներում երկակի է ընկալվել: Այն մի կողմից անձնավորել է ստորգետնյա աշխարհը, ջրային քաոսը, իսկ մյուս կողմից հանդես եկել իբրև «երկիր պանդոկի» աստված, անմահության (այս դեպքում ընդգծված է կաշին փոխելու պահը), տան ունեցվածքի, լիության, ջրի, պտղաբերության խորհրդանիշ: Առասպելաբանության մեջ երկիրը վերստանում է պտղաբերելու իր կարողությունը ամպրոպային աստծուն օձի պարտվելուց հետո միայն: Ցուլ-օձ միասնությունը կամ դրանց պայքարը պատկերող ժայռապատկերներն այդ միտքն են արտահայտում: Հետևաբար օձագլուխ ապարանջանը, որը զարդարում է նաև ամպրոպայինի՝ Թեյշեբայի դաստակը, ընդգծում է ոչ միայն այդ աստծո հաղթող, օձասպան լինելը, այլև նրա անմիջական կապը վերածնության ու պտղաբերության, այլ կերպ ասած՝ գարնան հետ, որի սկիզբը ազդարարում էին ամպրոպն ու որոտը, կայծակը, անձրևը և սկսվող լավ եղանակները, որոնց երկրագործը անհամբերությամբ էր սպասում:

Նույն միտքն են արտահայտում նաև այն նկարները, որոնց մեջ ցուլի փոխարեն թռչունն է մենամարտում օձի հետ: Օրինակներից մեկը կարող է հանդիսանալ Շենգավթից հայտնաբերված, մ.թ.ա. III հազ. վերջով թվագրվող քրեղանի հատակի ներսի կողմից արված նկարը, որը պատկերում է օձերի հետ պայքարող երկարակտուց, ջայլամակերպ թռչուններին: Թռչունն արտահայտում է թռչելու՝ օդում տեղաշարժվելու, օդը շարժելու, քամու գաղափարը (տարբեր թռչուններ տարբեր իմաստ ունեն): Պատահական չէ, որ թռչնաձև արձանիկները երևան են գալիս արձանախմբերում ցուլի հետ, զբաղեցնելով արձանախմբի ստորին թևերի հարթակները՝ ստորին և վերին հորիզոնների միջև ընկած օդային տարածությունը: Թռչունն, այսպիսով, հանդես է գալիս իբրև կապող օղակ երկու հորիզոնների միջև: Պատահական չէ, որ խեթական ծեսերում թագավորն ու թագուհին ամպրոպի և արևի աստվածություններին դիմելու ժամանակ պատգամաբերի դերը արծվին են հատկացրել:

§ 6. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ

Ժայռապատկերներում, ծիսական անոթների վրա, գոտիների պատկերախմբերում, բրոնզ-երկաթեդարյան կուռքերի ձևերում ու դրանց «զարդերում» տեսնում ենք ծառապատկերներ որոնք ուղեկցվում են լուսատուների նկարներով, շրջաններով և այլն: Հայտնաբերված են նաև ծառաձև կախիկներ (Տանձավեր, Շիկահող, Կապան և այլն): Դրանք պատրաստված են բրոնզե լարից ու թերթ բրոնզից և ունեն մշտադալար եղևնու տեսք: Շիկահողից գտնված կախիկներից մեկի մակերեսը զարդարված է կետ-գծիկներից կազմված երկու շրջաններով (աղ.XVIII$_{11}$): Շրջաններ են պատկերված և առանձին խեցանոթների վրա նկարված ծառերի գագաթամասում, երբեմն՝ նաև հիմքի մոտ:

Ծառն արտահայտել է տիեզերքի եռահորիզոնության՝երկինք-երկիր-ստորգետնյա աշխարհ, գաղափարը: Այդ հորիզոններից վերինը շրջանների տեսքով պատկերված լուսատուների, աստղերի, այլ երկնային աստվածների ու նրանց կենդանիների տեղն էր, որոնց հակառակորդ օձը զբաղեցնում էր տիեզերական ծառի արմատային մասը: Տիեզերական ծառը նաև տարածքն է խորհրդանշել (ճյուղերը՝ հորիզոնական տարածվածություն, աշխարհագրական տարածք, որը մարդն է զբաղեցնում): Տիեզերքի այդ երեք հորիզոնները, սակայն, սկզբնապես միասնական են եղել, դրանք առաջացել են նախասկիզբ հանդիսացող տիեզերական օվկիանոսից, քաոսային վիճակում գտնվող ջրերից: Տիեզերական ծառի բունը խորհրդանշել է ուղղահայաց առանցքը, որը միավորելով վերին ու ստորին աշխարհները, միաժամանակ կայունացրել է դրանք, թույլ չտալով որպեսզի ամեն ինչ կրկին քաոսի փոխարկվի:

Տիեզերքի վերաբերյալ ձևավորված այս պատկերացումները արտացոլված են նաև շումերական հնագույն երգերից մեկում. ասվում է, որ սկզբնապես քաոսային ջրերն են եղել, որոնցից ծնվել են երկինքն ու երկիրը: Այնուհետև, երբ երկինքը հեռանում է երկրից ու ստեղծվում մարդկությունը, այդ ջրերից առաջացած աստվածները տիեզերքը միմյանց մեջ են բաժանում. Անը վերցնում է երկինքը, օդի աստված Էնլիլը՝ երկիրը կամ բնակվելու, շնչելու տարածքը, իսկ Էրեշկիգալը՝ ստորգետնյա աշխարհը: Էնլիլը, որը նաև Կուր-Գալ («Մեծ լեռ») է անվանվել, պատկերվում է իբրև հենարան երկնքի ու ստորին աշխարհների միջև, որպեսզի դրանք չմիավորվեն և ամեն ինչ կրկին քաոսի չփոխարկվի: Ուղղահայաց առանցքը, որի համարժեքը ծառն է (եղեգը, լեռը և այլն), խորհրդանշում է տիեզերքի եռահորիզոնության գաղափարը: Նույն մտքի արտա-

հայտության մեկ այլ տարբերակը կամ այլաձևությունն են Շիրակավանից, Սևանի ավազանի հուշարձաններից, Տոլորսից, Վարդաքարից և մ.թ.ա. 1 հազ. 1 քառորդով թվագրվող այլ հուշարձաններից հայտնաբերված, կենտրոնում հարթ տապարիկի տեսք ունեցող ելուստը համակենտրոն երեք շրջաններով շրջափակող բրոնզաձույլ կախիկները (աղ.XVIII$_{13}$): Նույն գաղափարը տարբեր ձևերով արտահայտելը պայմանավորված է տվյալ իրականության վերաբերյալ եղած պատկերացումների ու գիտելիքների խորացմամբ, տվյալ իրողությունն ավելի խոր ճանաչելու ձգտմամբ ու զարգացմամբ, որի ընթացքում նախկինում ձևավորված պատկերացումները, պահպանելով հիմնական միտքը, այլ ձևերով են արտահայտվել:

Երկնային լուսատուներ, մոլորակներ: Երկնային լուսատուները, մոլորակները, որոնց պաշտամունքի վկայությունները բազմաթիվ են տարբեր ժամանակների գրավոր աղբյուրներում, հնագիտական նյութերում տարբեր ձևերով են ներկայացված: Դրանց մի մասը միաձույլ երկանիվի տեսք ունեցող բրոնզաձույլ կախիկներ են, որոնց առանձին օրինակների վրա թռչունների փոքրիկ քանդակներ կան (Սևան, Մինգեչաուր և այլն). երկնային լուսատուների հետ դրանց ունեցած կապի մասին խոսվեց վերևում (աղ.XVIII$_{12}$): Այդ կապն է մատնանշում և կախիկների անվակավոր տեսքը. արևը նախնիների կողմից այդ ձևով էլ է ընկալվել: Այդ լուսատուին նրանք բարիքներ ստեղծող են համարել, առանց որի արարչական զորության, անհնար կլիներ բնության զարթոնքն ու պտղաբերությունը: Այդ միտքն են արտահայտում նաև առանձին կախիկների (Տանձավեր, Կապան և այլն) միացման հատվածում պատկերված հասկազարդերը: Արևը խորհրդանշող այլ պատկերներից են և կեռխաչերն ու խաչերը, ինչպես և երկնակամարի կիսաշրջանաձև գոտիով շրջափակված, իրական տեսքով պատկերվածները. դրանք բազմաթիվ են ժայռապատկերներում, խեցանոթների վրա: Այս դեպքում արևի տարբեր պատկերումները, հնարավոր է, որ արտահայտեն տարբեր եղանակների արևի ընկալումները:

Տիեզերքի վերաբերյալ ունեցած պատկերացումների հետ են կապվում և շեղանկյունաձև գլխազարդ ունեցող բրոնզաձույլ «շքասեղները»: Սևանի ավազանի հուշարձաններից, Արթիկից, Գյումրիից, Շիրակավանից և այլ հուշարձաններից հայտնաբերված նմանօրինակ իրերի մի մասի գլխազարդը կազմված է իրար մեջ ներառնված երեք համակենտրոն շեղանկյունիներից, որոնցից արտաքինի անկյունները ու կողերը «զարդարում» են հարթ տապարիկների ու արևի կամ աստղի ձև ունեցող ելուստները: «Շքասեղների» մյուս խմբի շեղանկյունաձև գլխամասը թերթ բրոնզից է պատրաստված: Այդ օրինակների վրա, անկյուններում տեղադրված աստղաձև կամ արևաձև ելուստները փոխարինված են եռաթև տեսք ունեցող խաչերով, իսկ դրանց միջև գտնվող «հարթ տապարիկները»՝ եռատամ ելուստներով, որոնք ձեռքերը արմունկներից ծալած և վեր պարզած կուռքերի ձևն ունեն (աղ.XVIII$_{15}$): Մեկ այլ տարբերակ է ներկայացնում Սևանից գտնվածը: Այն կազմված է շեղանկյունաձև գլխամասից ու շրջանաձև, կենտրոնում հարթ տապարիկի տեսք ունեցող ելուստից: Վերը նկարագրված կախիկների տեսք ունեցող այս հատվածը, սակայն, կազմված է ոչ թե երեք համակենտրոն շրջաններից, այլ՝ երկու (աղ.XVIII$_{14}$): Այս իրի վրա տիեզերքի երրորդ՝ վերին հորիզոնի միտքն է արտահայտում շեղանկյունաձև գլխամասը, որի վրա եղած յոթ ելուստազարդերը կապվում են արև-լուսին և հինգ մոլորակների գաղափարին, իսկ շեղանկյունիների չորս անկյունները՝ տարվա չորս եղանակներին:

Ընդհանուր գծերով ներկայացված հավատալիքներն ու պաշտամունքը ցույց են տալիս նախնիների աշխարհընկալման մանրամասները, որոնց մի մասը, սնահավատությունների ձևով մեր օրերն է հասել:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հին Արևելքի հզոր տերություններից մեկը՝ հայ ժողովրդի կազմավորման երկարատև գործընթացում իր ծանրակշիռ ավանդը ներդրած Վանի թագավորությունը, ինչպես հայտնի է, ասորեստանյան արձանագրություններում հանդես է գալիս Ուրարտու անվամբ: Դա հիմք հանդիսացավ մասնագիտական գրականության մեջ«ուրարտագիտություն» տերմինի երևան գալուն: Տերության արքաների թողած սեպագրերում, սակայն, երկիրն անվանվում է Բիայնիլի, որտեղից և բ>վ հնչյունափոխությամբ ստացվում է Վիայնիլի-Վան ձևը: Այդ անվանումը համապատասխանում է տերության կենտրոնական մասը կազմող Վանա լճի շրջակա տարածքներին, ուր և գտնվում էին նրանց Արզաշկու, Տուշպա, Ռուսախինիլի մայրաքաղաքները: Դրանցից վաղագույնը՝ Արզաշկուն (Արճեշ), հիշատակվում է իբրև համայն տերության գահակալ Արամե թագավորի նստավայր, որից հետո Սարդուրի Ա օրոք (832-822թթ.) մայրաքաղաք է դառնում պատմահայր Խորենացու կողմից գեղեցիկ կերպով նկարագրված Տուշպան, որպես վերջնականապես կազմավորված և հզորացող պետության կենտրոն:

Նպատակ ունենալով ամրապնդել երկրի հզորությունը, ապահովել նրա անվտանգությունը Ասորեստանի նվաճողական նկրտումներից, Վանի թագավորության գահակալներն աշխատում էին հզորացնել բանակը, բարձրացնել նրա մարտունակությունը ինչպես ներքին, այնպես էլ հարևան երկրների մարդկային ու նյութական միջոցների հաշվին, որը և վերջին հաշվով հանգեցրեց Հայկական լեռնաշխարհի մանր ու մեծ թագավորությունների՝ ուրարտական գերիշխանության տակ հայտնվելուն և նրա կողմից միավորելու իրողությանը, որի հիմքը դրեցին Մենուա Ա (810-786թթ.), Արգիշտի Ա (786-764թթ.), և Սարդուրի Բ (764-735թթ.) թագավորները: Նույն քաղաքականությունն են վարում և Ռուսա Ա (735-714թթ.), Արգիշտի Բ (713-685թթ.), Ռուսա Բ (685-645թթ.), որոնք չնայած երկրի ծանր իրավիճակին (Ռուսայի օրոք երևում են կիմմերները, Ասորեստանը պարտության է մատնում Ռուսային և այլն), այնուամենայիվ ոչ միայն հնազանդեցնում էին ապստամբած երկրները, կառուցում նո-

բանոր ամրոցներ ու քաղաքներ (Ռուսախինիլի, Թեյշեբաինի, Հոռոմի, Օշականի ամրոցները և այլն), այլև կարողացան հասնել Կասպիականի ափերը (Արգիշտի Բ): Այդ ընդհանուր գիծն են փաստում ոչ միայն գրավոր աղբյուրները, այլև Վանի թագավորության՝ Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքում սփռված տարատեսակ հուշարձանները, որոնք պերճախոս վկայությունն են հանդիսանում հազարամյակներ առաջ տեղի ունեցած բուռն իրադարձությունների:

Նվաճված տարածքների դիմադրողականությունը նվազեցնելու, բնակչությանը հնազանդ պահելու, բայց միաժամանակ և ծայրամասերի պաշտպանունակությունը բարձրացնելու նպատակով, Վանի թագավորության արքաները պարբերաբար իրագործում էին զանգվածային վերբնակեցումներ, որոնք իրենց հերթին նպաստում էին բնակչության միաձուլմանը: Այդ բնակչության մի զգալի մասը բնակեցվում էր նորակառույց քաղաքներում: Վերջիններիս կառուցողական մանրամասների, առանձնահատկությունների վերաբերյալ հարուստ տվյալներ են տվել Էրեբունիի, Արգիշտիխինիլիի, Թեյշեբաինիի պեղումները: Խոստումնալից արդյունքներ են ստացվել և Էջմիածնի մոտ գտնվող Արագած գյուղի ամրոցի պեղումներից: Աշխատանքներ են տարվում և Հայաստանի ներկա սահմաններից դուրս գտնվող հուշարձաններում, մասնավորապես Վանա լճի առափնյա տարածքներում գտնված քաղաքներում: Ստորև ժամանակագրական հաջորդականությամբ, ընդհանուր գծերով կներկայացվեն միայն Արարատյան դաշտի քաղաքները. դրանք հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու ոչ միայն քաղաքաշինության, այլև ցույց տալով տարածքի դերը թագավորության համար՝ վեր են հանում նաև պետության պատմության մանրամասները:

§ 1. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՐՈՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Էրեբունի. գտնվում է Երևանի հարավարևելյան մասում. այդտեղ կառուցված շենքերը, մասնավոր կառույցներն ու այգիները ծածկել և կամ ոչնչացրել են քաղաքի մեծ մասի շինությունները, որոնք ժամանակին օղակել են Նոր-Արեշ և Վարդաշեն թաղամասերի միջև, շուրջ 65 մետր բարձրություն ունեցող Արին-Բերդ կոչվող բարձունքի, մոտ 3 հա տարածք ունեցող գագաթի հարթության վրա կառուցված միջնաբերդը: Պեղումների ընթացքում հայտնաբերվել են տարբեր բովանդակություն

ունեցող 23 արձանագրություն, որոնց շարքում կարևոր է 1950թ. գտնված Մենուայի որդի Արգիշտի Ա (786-764թթ.) թագավորի արձանագրությունը: Դրանում թագավորը հայտնում է, որ Խալդի աստծո զորությամբ ինքը կառուցել է Էրեբունի քաղաքը Բիայնիլի երկրի հզորության և թշնամական երկրների հնազանդեցման համար: Երևանի անձնագիրը հանդիսացող այդ արձանագրության տվյալները լրացվում են Վանի նշանավոր Խորխորյան տարեգրության վկայությամբ, որից պարզվում է, թե հիմնադրելով քաղաքն իր թագավորության 5-րդ տարում (մ.թ.ա. 782թ.), այն բնակեցրել է Խաթե և Ծուպանի (Մալաթիա-Ծոփք) երկրներից բերած 6600 գերիներով և որ նույն տարում արշավել է ու հնազանդեցրել Կիեխունի (Սևանի հյուսիս-արևմուտք. Սևան-Լճաշեն) երկիրը:

Հայաստանի ԳԱ և Մոսկվայի Պուշկինի անվան Կերպարվեստի թանգարանի կողմից 1950թ. սկսված պեղումները (դրանք վերսկսվեցին 1998թ.) երևան հանեցին միջնաբերդի ողջ հզորությունն ու շքեղությունը: Նախաուրարտական ժամանակաշրջանին պատկանող բնակավայրի տեղում կառուցված միջնաբերդը շրջափակվել է հաջորդաբար պատրաստված 3 շարք՝ ստորին կեսում քարաշար, իսկ վերին մասում՝ աղյուսաշեն, հենապատեր և աշտարակներ ունեցող հզոր պարիսպներով: Դրանցից երկրորդը կառուցվել է անմիջապես Արգիշտիից հետո: Բլրի լանջով ձգվող այդ պարսպի մոտ ընդարձակ տարածության վրա երևան են եկել հրդեհի և ավերածությունների հետքեր, որոնք ցույց են տալիս, որ ընդհարումներ են եղել նախքան երկրորդ պարսպապատի կառուցումը: Հյուսիսային լանջին բացվել է և մեկ այլ պատ (2.4մ լայն.), որը պաշտպանական միջանցք է ստեղծել հյուսիսային մուտքի առջևում. այդտեղից նեղ ճանապարհ է ձգվում դեպի բլրի ստորոտով հոսող գետակը: Բլրի հյուսիսային լանջի վրա բացված են տնտեսական և բնակելի կառույցներ, որոնք պատրաստված են 25-30մ լայնություն ունեցող աստիճանաձև հարթակների վրա:

Միջնաբերդի մյուս մուտքը գտնվել է հարավային կողմում. այդ մասում բլրի լանջերը մեղմ թեքություն ունեն, որը հնարավորություն է տվել կառքով ամրոց մտնելու: Մուտքի քարի վրա փորագրված է Արգիշտի Ի տասներեք տողանոց արձանագրությունը: Այդտեղից ճանապարհը, որի երկու կողմերից բարձրացել են խոշոր կառույցներ, հրապարակ է տանում: Վերջինս շրջափակվել է պալատական կառույցներով, որտեղ արքայի տեղակալի նստավայրն է եղել: Այդտեղ է իջևանել և ինքը՝ արքան, իր այցելությունների ժամանակ: Հրապարակում են նաև տաճարական համալիրները: Այդ կառույցների պատերը զարդարված են տարատեսակ գունավոր նկարներով (արմավենիներ, առյուծներ, ցուլեր, աստվածություններ): Հրապարակի կենտրոնում զոհարանն է, սյուների խարիսխները. դրանց վրա դրված գերանները պահել են կտուրը: Պաշտամունքաշքերթային նշանակություն ունեցող այս մասը կապված է «Սուսի» տաճարի հետ, որի դիմաց գտնվող երեք կառույցներից մեկը խոշոր դահլիճ է: Վերջինիս երկու կողմերից սենյակներ են ձգվում: Այս դահլիճի պատերը նույնպես զարդարված են ծառերի, աշտարակների, առյուծների և ցուլերի նկարներով, որը ցույց է տալիս կառույցի սրբատեղի հանդիսանալու հանգամանքը: Դրա վկայությունն են զոհաբերությունից մնացած մոխրի և անասունների այրված ոսկորները, զոհարանը, ինչպես և «Սուսի» տաճարի պատի վրայի արձանագրությունը, որը հայտնում է, թե այն նվիրված է եղել Իվարշա աստծուն: Սա կարևոր փաստ է, քանի որ Իվարշա աստվածությունը բիայնական ծագում չունի: Այդ է փաստում նաև աստվածության «-շա» վերջածանցը, որը տարածված էր Փոքր Ասիայում: Դա ցույց է տալիս, որ Արգիշտին Խաթե և Ծուպանի երկրներից տեղահանված 2539 պատանիներից, 8698 տղամարդկանցից և 18047 կանանցից Էրեբունիում վերաբնակեցված 6600 զինվորներին սիրաշահելու նպատակով (զինվորների հետ եղած ընտանիքներն այդ թիվը հասցնում են շուրջ 29000 մարդու), կառուցել է տվել Իվարշա աստվածությանը նվիրված «Սուսին». Իվարշան գերեվարվածների համար Խալդիին համազոր է եղել և այն Արարատյան դաշտավայրում երկար ժամանակ պաշտվել է հոծ բնակչության կողմից. ամենայն հավանականությամբ դա խոսում է այդ բնակչության ազգակից լինելը Խաթե և Ծուպանի երկրներից տարագրվածներին: Կարևոր է այն հանգամանքը, որ **սուսի** բառը հայերենում պահպանվել է **սիս**՝ «ապարանք» նշանակությամբ:

Միջնաբերդի հյուսիսային մասում տեղադրված են եղել տնտեսական նշանակություն ունեցող կառույցներ: Դրանցում մի քանի հարյուր լիտր տարողությամբ խոշոր կարասներ են շարքերով տեղադրված. այդ կարասներում գինի է պահպանվել: Բացված են և հացահատիկի ամբարներ:

Միջնաբերդն օղակող քաղաքային կառույցները մեծ տարածք են ընդգրկել, որի ստույգ չափերի մասին դժվար է խոսել: Կարելի է ասել, որ ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող այդ քաղաքի դամբարանադաշտը, որը հայտնաբերվեց 1957թ. (բիայնացու դամբարան է հայտնաբերված նաև «Ավտոազրեգատ» գործարանի մոտ, 1984թ.), միջնաբերդից հեռու է գտնվում 2-3 կմ, իսկ միջակա տարածքներում առկա են քաղաքի բնակելի կառույցներից մնացած հետքեր: Ինչ վերաբերվում է դամբարաններին, ապա դրանք մայր հողի մեջ իջեցված խցեր են, ո-

ոնք պարունակել են փոքր քարերով շրջափակված կարմիր անգոբապատ աճյունասափորներ. դրանց մեջ դիակիզումից մնացած մոխիրն է: Աճյունասափորների հետ դրվել են նաև այլ խեցանոթներ ու նյութեր: «Ավտոագրեգատ» գործարանի բակում բացված քարարկղային խոշոր դամբարանում թաղումները նույնպես կատարվել են աճյունասափորներում: Դամբարանում, հարուստ նյութեր են հայտնաբերված: Աճյունասափորները դրվել են հատուկ պատրաստված խորշերում: Տուֆե սալերով շարված պատեր ունեցող այդ դամբարանն ունի մուտք և միջանցք:

Արգիշտիխինիլի. ռազմավարական և վարչատնտեսական խոշոր կենտրոն հանդիսացած այս քաղաքը, որն ընդգրկել է Արմավիր և Նոր Արմավիր գյուղերի միջև ընկած տարածքներն ու հարևան շրջանները, հետազոտողների ուշադրությունը գրավել է դեռևս 1869թ., երբ հայտնաբերվեց Արգիշտի Ա-ի արձանագրությունը: Ա.Ս. Ուվարովի, Ա.Դ. Երիցյանի (1880թ.), ինչպես և Ն.Յու. Մառի (1892թ.) կողմից կատարված հետախուզական բնույթի պեղումները, սակայն, շոշափելի արդյունքներ չտվեցին, չնայած որ քաղաքի ունեցած խոշոր նշանակությունը կասկածից վեր էր: Քաղաքի կարևորությունն էր փաստում նաև Խորխորյան տարեգրությունը, ուր ասվում է, թե Ասորեստանի և Մանայի դեմ հաղթանակ տանելուց հետո, Արգիշտի Ա-ն իր թագավորության XI տարում (մ.թ.ա. 776թ.) Ազա երկրում (Արաքս-Ախուրյան-Հրազդան-Քասախ գետերի միջնատարածքը) կառուցել է Արգիշտիխինիլին և ջրանցքներ անցկացրել: Ջրանցքի կառուցումն է փաստում նաև Արաքսի ձախակողմյան ժայռի վրա փորագրված արձանագրությունը, որտեղից և այն սկիզբ էր առնում:

Քաղաքի տարածքից հայտնաբերված են Սարդուր Բ, Ռուսա Ա և Ռուսա Գ պատկանող արձանագրություններ, որոնք ցույց են տալիս քաղաքի կարևոր կենտրոն լինելը: Արգիշտիխինիլիի կանոնավոր պեղումները, որոնք կատարվում էին երկու արշավախմբերի կողմից միաժամանակ, սկսվեցին 1963թ.: Խմբերից մեկը (ղեկ՝. Բ.Ն. Առաքելյան) պեղումները կենտրոնացրեց քաղաքի արևելյան (աղ. XIX_1), մյուսը՝ արևմտյան (աղ. XIX_2) միջնաբերդում (ղեկ՝. Հ.Ա. Մարտիրոսյան): Երկու բլուրների գագաթային մասերը զբաղեցնող միջնաբերդերն իրարից հեռու են մոտավորապես 2.5 կմ: Միջնաբերդերից դժվարամատչելին, ուր և հետագայում կառուցվեց Արմավիր մայրաքաղաքը, արևելյանն է (բլուրն ունի զառիկող լանջեր և բարձր է շուրջ 80մ), իսկ արևմտյան միջնաբերդը տեղադրված է մեղմ թեքություն ունեցող Սբ. Դավթի բլրի վրա:



1



2

Արգիշտիխինիլի. արևելյան (1) և արևմտյան (2) միջնաբերդերի հատակագծերը



Արգիշտիխինիլի. արևմտյան միջնաբերդի պալատի հատակագիծը



Առանձնատուն քաղաքային թաղամասում

Միջնաբերդերի միջև տարածված են բնակելի թաղամասերը, որոնք խումբ-խումբ դասավորված կառույցների ձևով ձգվում են «Գլխավոր փողոցի» երկու կողմերից: Այդ խոշոր առանձնատներում, որոնք ունեն և տնտեսական նշանակության կառույցներ (աղ. XX_2), ապրել են զինվորական ավագանու ներկայացուցիչներ, իսկ մեկը պատկանել է բուժակի: Այդ էին փաստում կառույցի սենյակներից հայտնաբերված զանազան փոքր ամանները, որոնցում գտնված են ոգնու, ջեյրանի, աղվեսի, նապաստակի, ձկների ու թռչունների ոսկորներ, դրանք օգտագործվել են դեղեր, քսուկներ պատրաստելու համար: Այդ կենդանիներն օգտագործվել են և հայ միջնադարյան դեղագործության մեջ:

Միջնաբերդերը շրջափակված են տեղանքի առանձնահատկություններին համապատասխան ձգվող, ուղղանկյուն հենապատեր և աշտարակներ ունեցող, 2-3 շարք պարիսպներով: Դրանք կառուցված են ուրարտական ճարտարապետությանը բնորոշ սկզբունքով. ստորին մասում՝ մոտավորապես 3մ բարձրությամբ, քարաշար են, իսկ վերին կեսը շարված է հում աղյուսներով: Մուտքերն ունեն 2,5-3,5մ լայնություն և պարսպապատից որոշ չափով ներս են ընկած: Նման կառուցվածքը արտաքին կողմից ստեղծում է երեք կողմից փակ տարածություն, որտեղ հայտնված հակառակորդն ընկնում էր խաչաձև հարվածի տակ: Մուտքի երկու կողմերում բարձրացել են պաշտպանական աշտարակներ:

Արևելյան բլրի զառիվեր լանջերին բացված կառույցները դարավանդաձև են ուր դիտվում են աստիճանների մնացորդներ, իսկ արևմտյան միջնաբերդի հարթ գագաթին բացված են միմյանց կից, ներքին բակերով իրարից բաժանված շինություններ, մեծ դահլիճով սյունազարդ պալատական շենք, որը զբաղեցնում է 4150մ^2 տարածք (աղ. XX_1): Պալատը երեք կողմից եզրագծված է պարսպով, որը միաժամանակ պալատի արտաքին պատն է հանդիսացել: Պալատն ունի ներքին բաժանմունքներով իրարից բաժանված 22 սենյակ, որոնք դասավորված են սյունազարդ դահլիճի երկայնքով: Սյունասրահը երկու շարքով տարված 20 սյուներով բաժանված է երեք մասի: Պատերից մեկի մոտ տեղակայված է 2x0.5x0.5մ չափերի աղյուսաշեն նստարան: Պալատն ունի նախասրահ, տնտեսական բաժին, որի մուտքն այնպես է պատրաստված, որ մթերքը կարող էր պահեստ հասցվել առանց պալատի պաշտոնական մասին հաղորդակցվելու: Այդ հատվածում բացված են 1000-1500լ տարողություն ունեցող, շարքով դասավորված կարասներ, որոնց միջև միջանցք է թողնված: Միջնաբերդի հարավային և հյուսիսային կողմերում պատրաստված են հացահատիկի խոշոր ամբարներ, իսկ պալատից

արևմուտք կառուցված է երկու սենյակից բաղկացած մոնումենտալ կառույց: Վերջինիս զանգվածեղ քարե դուռը պտտվել է կրկնաքարերի մեջ: Այս կառույցն ունեցել է պաշտամունքային նշանակություն, որի անձնակազմն իր կարիքները հոգալու համար օգտվել է տաճարի մոտ գտնվող չորս սենյակներից: Այդ համալիրի հարևանությամբ բացված է մոտավորապես 70000լ տարողություն ունեցող ջրավազան:

Ասորեստանից, Ռուսա Ա-ի (735-713թթ.) կրած պարտությունից հետո շինարարությունն Արգիշտիխինիլիում կանգ է առնում, իսկ երբ Ռուսա Բ (685-645թթ.), ձեռնամուխ լինելով Թեյշեբաինիի կառուցմանը, այնտեղ է տանում Էրեբունիի և Արգիշտիխինիլիի հարստությունն ու տեղափոխում ավագանուն, Արգիշտիխինիլին կորցնելով իր նշանակությունը, լցվում է փախստականներով, ուներզուրկ բնակիչներով, որոնք վերափոխելով կառույցները, հարմարեցնում են դրանք իրենց պահանջներին: Այս շրջանին են պատկանում պարիսպների տակ, առանց որոշակի հատակագծման կառուցված հյուղակները, անմիջապես նախասրահի մուտքի առջև գտնվող տարածքում բացված մետաղագործի արհեստանոցը, ուր հայտնաբերվել են հնոց, երկաթի հանքաքարի կտորներ, սեպերի և դրերի կաղապարներ, մետաղագործությանն առնչվող այլ նյութեր, ինչպես հանքաքարի հարստացման համար նախատեսված տաշտակը և այլն:

Համընդհանուր լքվածության, միաժամանակ միջնաբերդի կործանման պատկերը լրացնում են պալատական սենյակներից մեկում հայտնաբերված նետահարված կնոջ կմախքը և սարսափից կարասի մեջ պատսպարված ու այնտեղ իր վախճանը գտած, մոտ 12 տարեկան աղջնակի կմախքը: Կնոջ մոտ հայտնաբերվեցին սկյութական տեսակի նետասլաքներ: Թշնամիները հարձակվել են հյուսիսային կողմից, հրդեհել սակավաթիվ բնակիչների խրճիթները, որոնց ծածկի այրված գերաններ մնացորդները հայտնաբերված են այդ հյուղակներում: Այրված էին և ամրոցի ամբարում մնացած հացահատիկի շեղջերը: Հարձակումը տեղի է ունեցել օգոստոսի վերջ-սեպտեմբերի սկիզբն ընկած ժամանակահատվածում: Այդ են փաստում գտնված բույսերը, աղվեսի և գայլի ձագերի ոսկորները. դրանք պատկանում են 6 ամսական կենդանիների, որոնց ծննդի ժամանակը մարտ-ապրիլն է: Ավերվելուց հետո Արգիշտիխինիլիի արևմտյան միջնաբերդը երկար ժամանակ մնացել է անմարդաբնակ: Միայն միջնադարում (IX-XIVդդ.) այդտեղ կառուցվել են առանձին բնակարաններ, որոնցում հայտնաբերվել են ջնարակած ամաններ և այլ նյութեր:

Թեյշեբաինի. գտնվում է Հրազդանի ձախ ափին բարձրացող Կարմիր-բլուր կոչվող բարձունքի վրա, որտեղ հայտնաբերված (1936թ.) Արգիշտի Բ որդի Ռուսա Բ (մ.թ.ա. 685-645թթ) արձանագրությունը պեղումներ սկսելուն հիմք հանդիսացավ: Պեղումները սկսվեցին միաժամանակ երեք խմբով (1939-1941թթ., ղեկավարներ՝ Կ.Գ. Ղաֆադարյան, Բ.Բ. Պիոտրովսկի և Տեր-Ավետիսյան): Աշխատանքների ընթացքում պարզվեց, որ քաղաքը կառուցել է Ռուսա Բ-ը: Հանդիսանալով հզոր թագավորներից վերջինը, Ռուսա Բ-ը, ինչպես հայտնի է, աշխատել է բարելավել իր հարաբերությունները Ասորեստանի հետ (Ասարխադոն, Աշշուրբանապալ), ձգտելով միաժամանակ իր ձեռքում պահել Եփրատ-Արածանի-Տիգրիս միջնատարածքում գտնվող երկրները (Տապլանի, Մուշկինի, Ալզի, Կաղմուխի, Խաթե և այլն): Ռուսայի գործունեությունը ցույց է տալիս, որ նա ձգտել է ամրացնել ոչ միայն արևմտյան և արևելյան, այլև հյուսիսային տարածքները: Դրա վկայությունն են Մակուի շրջանում հիմնադրված «Ռուսայի փոքր քաղաքը», Թեյշեբաինին, Արագածի ամրոցը և այլն, որոնք նրա օրոք են կառուցվել: Այդ աշխատանքներից երևում է, որ նա այնքան էլ վստահ չի եղել հյուսիսից և արևելքից սպառնացող կիմմերների հետ ձեռք բերած բարեկամական հարաբերություններին: Վիճակը բարդացնում էին և սկյութները, որոնք սպառնում էին և Ասորեստանին: Ընդհանուր թշնամիների առկայությունը հարկադրում էր Վանի թագավորության և Ասորեստանի գահակալներին՝ դարավոր այդ հակառակորդներին, ջերմացնել իրենց հարաբերությունները և սահմաններն ամրացնել նոր ամրոցներով:

Թեյշեբաինին ժամանակի հզոր ամրոցներից էր. միայն միջնաբերդից արևմուտք ընկած կառույցները շուրջ 40 հա են զբաղեցրել, իսկ միասնական հատակագծով, առանձին թաղամասերով կառուցված քաղաքը, որի փողոցների լայնությունը 6մ է կազմում, տարածվել է նաև միջնաբերդից հարավ և հարավ-արևելք: Միջնաբերդն զբաղեցնում է բլրի 4 հա տարածություն ունեցող գագաթնամասը: Այն շրջափակված է աշտարակներ ու հենապատեր ունեցող հզոր պարիսպներով, որոնք այս դեպքում ևս ստորին մասում քարաշեն են, իսկ վերին կեսում՝ աղյուսաշար: Մեկ այլ պարիսպ ձգվում է միջնաբերդի հարավ-արևելյան մասում և առանձնացնում է այս մասի բնակարանները քաղաքի մյուս հատվածներից: Ակնհայտ է, որ քաղաքի տարբեր մասերում սոցիալական տարբեր խավեր են բնակվել:

Միասնական հատակագծով կառուցված քաղաքի թաղամասերն ունեն խաչվող փողոցներով իրարից անջատված ուղղանկյունիների

տեսք: Դրանք կազմված են մի քանի սենյակից բաղկացած տներից, որոնք խուլ պատով դեպի փողոց են ուղղված: «Գլխավոր փողոցի» հյուսիսային և հարավային թաղամասերի բնակիչների տները, որոնք կազմված են հաղորդակցվող երեքական սենյակներից, զուրկ են անասուններ պահելու համար նախատեսված կառույցներից: Դրանց մեջ չեն հայտնաբերված և հացահատիկի մշակման գործիքներ, մթերքի հորեր: Անձնական տնտեսությունից զուրկ, բայց միաժամանակ և բարեկեցիկ պայմաններում ապրող այդ կացարանների բնակիչները կայազորի զինվորներ են եղել, որոնք իրենց կենսամիջոցները ստացել են պետությունից: Զինվորներ են ապրել և քաղաքի մյուս մասերից պարսպով անջատված թաղամասերում, ինչը և ցույց է տալիս, թե միջնաբերդի մուտքերը բավական լավ են պաշտպանվել: Զինվորների հարևանությամբ, «գլխավոր փողոցի» հարավային մասում ապրել են ունևորները, զինվորական ու ծառայողական բարձր անձնակազմը, որոնց պատկանող առանձնատներում առկա են տարբեր նշանակություն ունեցող կառույցներ, շինություններ ու սենյակներ: Քաղաքը շրջափակված է եղել 3մ լայնություն ունեցող պարսպով:

Ավելի քան պատկառազդու տեսք է ունեցել հատակագծում պայտաձև միջնաբերդը, որը նույնպես հզոր պարսպով է շրջափակվել: Միջնաբերդը քաղաքին է միանում հարավային և հյուսիսարևմտյան հատվածներում բացված դարպասներով: Միջնաբերդում պեղված են տարբեր չափեր ու նշանակություն ունեցող 100-ից ավելի կառույցներ. դրանց պատերը տեղ-տեղ պահպանված են 7մ բարձրությամբ: Կացարանները ծածկվել են գերաններով, եղեգնով և ծեփվել կավով: Կառույցները, որոնց կտուրներն ամրացվել են հենասյուներով, հաղորդակցվում են իրար մեջ բացվող, 1մ լայնություն ունեցող մուտքերով: Այդ կառույցների մեծ մասն ունեցել է տնտեսական նշանակություն. դրանք պահեստներ են, հացահատիկի ամբարներ, որտեղ հայտնաբերված են ցորենի, գարու, հաճարի, կորեկի, քնջութի շեղջեր: Երկրագործության բարձր զարգացումը ապացուցող այս փաստերը լրացնում են Վանի թագավորության արքաների արձանագրությունները, որտեղ նրանք պարծենում են իրենց կառուցած ջրանցքներով ու տնկած այգիներով: Ռուսա Բ-ը հետ չի մնացել իր նախորդներից. Զվարթնոցի տաճարի պեղումներից հայտնաբերված արձանագրության մեջ նա ասում է, որ ինքը Իլդարունիա (Հրազդան) գետից ջրանցք է տարել, որի անունը Ումեշինի է (այն ներկայումս էլ գործող Էջմիածնի ջրանցքն է): Նա հայտնում է նաև, որ ջրանցքի շուրջը խաղողի և այլ այգիներ է տնկել ու քաղաք կառուցել: Հ.

Կարագյոզյանի վկայությամբ, և դա կարևոր է, Հրազդան քաղաքի մերձակայքում պահպանված է Իլդրունի կիրճ անվանումը, իսկ Իլդարունիա և Հրազդան անունները ծովագետ են նշանակում:

Միջնաբերդում բացվել են մառաններ, որոնցից մեկում հայտնաբերվել են 250-1250լ տարողությամբ 500 կարասներ, որոնց մեջ գինի է պահպանվել: Հայտաբերված են նաև սիգարաձև խոշոր անոթներ՝ գարեջրի պատրաստման համար: Այդ անոթների հատակին բացված անցքերը ծածկվել են զտիչի դեր կատարող ծղոտով (աղ. XXVII$_1$): Միջնաբերդի այլ կառույցներում գտնված են երկրագործական բազմաթիվ գործիքներ, իսկ սենյակներից մեկում՝ 1036 սափոր (աղ. XXVII$_4$): Առանձին կարևորություն է ներկայացնում 50-ից ավելի կնիքների (աղ. XXIX$_{1-4,10-12}$) հայտնաբերումը, ինչը ցույց է տալիս, թե յուրաքանչյուր սենյակ իր կնիքն է ունեցել: Սենյակներում գտնված են նաև ափսեաձև, նեղ միջնապատով երկու մասի բաժանված բազմաթիվ ճրագներ (աղ. XXVI$_6$). այդպիսիները հայտնաբերված են բոլոր հուշարձաններում:

Միջնաբերդի կենտրոնական մասը երկհարկանի է եղել: Այդտեղ են գտնվել պալատական ու բնակելի կառույցները, Խալդիի տաճարն ու «Սուսիի» պաշտամունքային կառույցը, որի մասին են խոսում հայտնաբերված արձանագրությունները: Երկրորդ հարկի տաճարական համալիրներում են պահպանվել Խալդիին և մյուս աստվածներին նվիրված տարատեսակ իրերը: Դրանք բրոնզե սաղավարտներ են (աղ. XXIII$_{1-3}$), վահաններ (աղ. XXIII$_4$), բրոնզից և արծաթից պատրաստված ամաններ, որոնց շարքում առանձին հետաքրքրություն է ներկայացնում 600լ. տարողություն ունեցող բրոնզե կաթսան: Նման կաթսա, ինչպես երևում է մեզ հասած նկարից, դրված է եղել և Մուսասիրի տաճարում: Թեյշեբաինիում գտնված են նաև Էրեբունիից ու Արգիշտիխինիլիից բերված, տարբեր թագավորների անուններ կրող (Մենուա, Արգիշտի, Սարդուր, Ռուսա Ա) իրեր, որոնք այդ թագավորները ժամանակին նվիրաբերել են տաճարներին: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում օտարերկրյա ծագում ունեցող իրերը (եգիպտական կոյաբզեզ, Պաղեստինից, Միրիայից, Փոքր Ասիայից, Ասորեստանից, Մանայից բերված տարատեսակ իրեր), որոնք խոսում են Վանի թագավորության առևտրական կապերի մասին: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Ռուսա Գ որդի Ռուսա Դ (610-585թթ.) անունը կրող դրոշմակնիքի գյուտը, որը ենթադրել է տվել, թե այդ թագավորն իր իշխանության վերջին շրջանը Թեյշեբաինիում է անցկացրել և ականատես եղել երբեմնի հզոր տերության կործանմանը (աղ. XXIX$_5$):

Թեյշեբաինին՝ տերության հյուսիսային վերջին պատվարը, ընկավ սկյութական նետասլաքներ գործածող ջոկատների հարվածների տակ, որոնց բազմաթիվ նետասլաքները հայտնաբերված են ամրոցում: Այդ հարձակման ընթացքում հրդեհված միջնաբերդի երկրորդ հարկը փլվելով ընկել է առաջին հարկի կառույցների մեջ, գոյացնելով աղյուսներից, այրված գերաններից և այլ իրերից կազմված, 4մ հզորություն ունեցող շերտ. ծածկելով առաջին հարկի սենյակների իրերը, այն թույլ չի տվել կողոպտիչներին թալանել դրանք: Նրանք բավարարվել են քաղաքի ու միջնաբերդի մյուս մասերի կողոպուտով ու տարբեր կողմեր փախչող խուճապահար բնակիչներին սպանելով, որոնց կմախքները անկանոն ընկած էին ավերակներում:

Արագածի ամրոցը. Էջմիածնից ոչ հեռու գտնվող Արագած գյուղի մոտ կառուցված այս ամրոցը ունեցել է ազդանշանային, զգուշացնող բնույթ (այն ազդանշաններով կարող էր Արգիշտիխինիլի, Էրեբունիի և Թեյշեբաինիի բնակիչներին զգուշացնել մոտեցող թշնամու մասին, նույն նշանակությունն են ունեցել նաև Օշականի, Ծորագետի, Դվինի, Արամուսի ամրոցները): Ամենայն հավանականությամբ, այս ամրոցը ևս, որն ունի նույն ձևը, ինչ Թեյշեբաինին, կառուցել է Ռուսա Բ-ը:

Ամրոցն առաջին անգամ գրչանկարել է ֆրանսիացի ճանապարհորդ Պուլեյ Լը-Կուզը 1647թ., որը և հետագայում արտանկարվել է Ղ. Ալիշանի կողմից: Ամրոցն առաջին անգամ չափագրել է Թ. Թորոմանյանը, այնուհետև՝ Ծ.Ազատյանը, իսկ սկզբնապես հետախուզական բնույթի պեղումներ է կատարել Կ. Հովհաննիսյանը 1950թ.: Վերսկսված պեղումները, որոնք շարունակվում են և ներկայումս (ղեկ.՝ Պ.Ս. Ավետիսյան և Հ.Գ. Ավետիսյան), հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմել ամրոցի վերաբերյալ:

Ապառաժի վրա կառուցված ամրոցի միջնաբերդը երկհարկանի է եղել, որի չորս անկյուններից մինչև կտուրն են բարձրացել մայր պարսպից դուրս ընկած չորս մեծ քառակուսի բուրգեր: Միջնաբերդի կացարանները միմյանցից բաժանված են երեք հաղորդակից համալիրներով: Ստորին հարկից վերին հարկ են բարձրացել աղյուսաշեն աստիճանով, որը հասել է առաջին հարկի առաստաղի մեջ բացված ելքին: Երկրորդ հարկի սենյակները զարդարված են եղել կարմիր-բալագույն, կապտաերկնագույն և ապիտակ գույներով կատարված պատկերներով (ապակվածություններ, բուսական զարդեր, կենդանիներ և այլն): Առաջին հարկի ծածկը պատրաստված է եղել մայրու, կաղնու, սոճու և հաճարի

գերաններից, որոնց վրա փռված ծղոտն ու եղեգը ծածկվել են հողով ու կավացեխով և տոփանվել: Առաջին հարկը, որն ունեցել է տնտեսական նշանակություն, լույսը ստացել է առաստաղի տակ բացված փոքր պատուհաններից: Երկրորդ հարկն ունեցել է պաշտոնական և պաշտամունքային բնույթ: Միջնաբերդը շրջափակված է ուրարտական չափանիշին համապատասխանող 2.6մ լայնություն ունեցող պարսպապատով, որի անկյուններից չորս աշտարակ են բարձրացել: Պարսպապատից 120-150մ հեռավորության վրա տարածվում է քաղաքային փոքր համալիրը, որը շրջափակվել է 1.6-2մ լայնություն ունեցող պարսպով:

Միջնաբերդում բացված 21 սենյակները տնտեսական նշանակություն են ունեցել. դրանք նկուղներ են, պահեստ-մթերանոցներ: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում որոշ կառույցներ, որոնց արևմտյան պատի տակ կամ կենտրոնում բացվել են մանր ու խոշոր եղջերավոր անասունների այրված ոսկորներով լի օջախներ: Դրանցից ոչ հեռու պատրաստված են հարթակներ, հայտնաբերվել են մարդադեմ այուն- կուռքերի բեկորներ, կարիճի և ձկան տեսք ունեցող աստվածների կավակերտ քանդակներ: Այս սենյակները կայազորի համար աղոթատեղիներ են հանդիսացել: Պեղումները ցույց են տվել, որ այստեղ ևս առկա են հրդեհի հետքեր. հայտնաբերվել են և սկյութական նետասլաքներ:

Վանի թագավորության քաղաքաշինության և ամրոցաշինության հպանցիկ անդրադարձից իսկ նկատելի է, որ ճարտարապետության բնորոշ գծերից են հանդիսացել նախապես հատակագծումը, այնուհետև խոշոր դահլիճները: Նրանց օտար չէին նաև երկհարկանի ու եռահարկ կառույցները, ինչպես և երկթեք տանիքը (այդպիսին է Մուսասիրի տաճարի կտուրը), այլ ճարտարապետական լուծումներ:

§ 2. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Պեղումներից ձեռք բերված նյութերի հարուստ տեսականին ներկայացված է գործիքներով, զենքերով, սպասքի առարկաներով, ծիսական իրերով, տարատեսակ զարդերով, խեցանոթների տարբեր տեսակներով: Այդ նյութերը ցույց են տալիս ոչ միայն դրանց կիրառության ձևերն ու բնագավառները, այլև՝ տարբեր արհեստների զարգացման բարձր մակարդակը:

Գործիքները պատրաստված են երկաթից, բրոնզից, քարից: Գտնված են երկաթից պատրաստված խոփ, ուրագ, բահ, սղոց, տարբեր

չափերի մանգաղներ (աղ. XXII$_{1-10}$), որոնց մի մասի ավելի քան խոշոր չափերը մատնանշում են վերջիններիս իբրև գերանդի գործածված լինելը: Մանգաղաձև, կեռացած շեղբ ունեն նաև դանակները: Հայտնաբերված են նաև երկաթյա երկժանիներ և եռաժանիներ, գութանի խոփ: Այդ գործիքները ցույց են տալիս հողամշակության, բերքի հավաքման եղանակները, իսկ քարից պատրաստված աղորիքների (աղ. XXII$_{12,13}$) և սանդերի հայտնաբերումը յուրաքանչյուր բնակավայրում, կացարաններում, ցույց է տալիս, որ ձավարը սննդամթերքի հիմնական տեսակներից է եղել: Հայտնաբերված են և հարթ տապարիկներ (աղ. XXII$_{14}$), բիզ ու հերուններ, շրջանաձև աշխատաբերանով և կարճ պոչով քերիչներ (աղ. XXII$_{11}$), ասեղներ, ծանրոց- կախիչներ, իլիկների գլուխներ, թելերի կծիկներ, ջուլհակությանն առնչվող այլ գործիքներ:

Գտածոների հաջորդ խումբն են զենքերն ու պաշտպանության միջոցները: Նյութերի այս խմբին են պատկանում երկսայր սրերն ու դաշույնները. դրանց մի մասի դաստակը շրջանակավոր տեսք ունի (աղ. XXV$_{4-6}$): Նշված զենքատեսակների առանձին նմուշներ գտնված են բրոնզե թիթեղներից պատրաստված պատյանների մեջ (աղ. XXV$_{15}$): Վերջիններիս մակերեսները հաճախ զարդարված են: Սովորական զենքերից են և երկաթից պատրաստված խողովակակոթառ նիզակները (աղ. XXV$_{9-10}$), նետասլաքները. վերջիններիս տերևաձև սայրերի հիմքում սովորաբար խնձորակի տեսքով գնդաձև ուռուցիկություն կա, որից և ձողաձև պոչուկն է սկսվում (աղ. XXV$_{1,2,11,12}$): Վանի թագավորությանը բնորոշ, առավել հաճախ հանդիպող այս նետասլաքների հետ հայտնաբերվում են և բրոնզից ու երկաթից պատրաստված այլ ձևեր ունեցողներ (երկթև, քառակող, բզաձև), բայց դրանք լայն կիրառություն չեն ունեցել (աղ. XXV$_{16,17}$): Հայտնաբերված են և բարակ տախտակներից պատրաստված կապարճների բրոնզե գոտեկապ-ամրակալներ: Գտնված են և թերթ բրոնզից պատրաստված կապարճներ (աղ. XXV$_{13,14}$): Վերջիններիս մակերեսները զարդարված են երկրաչափական և այլ բնույթի պատկերներով կամ սոսկ հորիզոնական ելունդագոտիներով: Կապարճների կողերից մեկի վրա օղակներ են ամրացված ուսափոկն ամրացնելու համար:

Զարդերի հարստությամբ ու բովանդակությամբ են առանձնանում բրոնզե լայն թիթեղներից պատրաստված գոտիները: Դրանց մի մասը ծիսական բնույթ է ունեցել: Վերջիններիս վրա պատկերված են երևակայական կենդանիներ ու դրանց վրա կանգնած սպառազեն աստվածություններ, բուսական և երկրաչափական բնույթի զարդեր, թռչուններ, առյուծներ, ցուլեր (աղ. XXIV$_{1}$):



Գահի մասեր և աշտանակ Ռուսախինիլիից

Աղյուսակ XXII

1

2


3


4

5

6

7

8

9

11

10

12

13

14

15

Աղյուսակ XXIII

1

2


3

4


5

6

7


8

9

10

11


12

Երկրորդ խմբի գոտիները, որոնք կարող էին նաև պաշտպանության միջոց հանդիսանալ, զարդարված են «աշխարհիկ» բնույթ ունեցող, իրական կյանքից վերցված տեսարաններով (որս և այլն): Այդ նկարներն ամենայն մանրամասնությամբ արտահայտում են ռազմիկի ողջ հանդերձանքը (աղ. XXIII$_{12}$). այն կազմված է սաղավարտից, ծնկամասը հասնող վերնազգեստից, գոտկամասը գրկող լայն գոտուց: Ռազմիկների ձեռքերում տեսնում ենք նիզակ, նետ և աղեղ, շրջանաձև վահան: Պեղումներից հայտաբերված բրոնզյա սաղավարտներն ու վահանները ճշտությամբ կրկնում են նկարներում պատկերված ձևերը: Շրջանաձև վահանները ուռուցիկ տեսք ունեն և զարդարված են ցուլերի, առյուծների պատկերներով, իսկ սաղավարտները, որոնք կենտրոնական մասում ավարտվում են ցցոնքով, ճակատային մասում զարդարված են վիշապների պատկերներով, այլ զարդերով: Այդպես են զարդարված տաճարներին նվիրաբերված պաշտպանության միջոցները: Վերջիններիս շարքում են և բրոնզյա դիմակները (աղ. XXIII$_5$): Հայտնաբերված են և զրահաշապիկին ամրացվող ուղղանկյունաձև (աղ. XXIII$_8$), ինչպես և շրջանաձև, բայց ավելի մեծ չափերի վահանակներ. դրանք պաշտպանել են ձիու գլխի առանձին հատվածներ (աղ. XXIII$_{6,11}$):

Հարուստ է ներկայացված նաև բրոնզից ու արծաթից պատրաստված սպասքի տեսականին: Դրանք կիսագնդաձև թասեր են, որոնց հատակներին պատկերված են մեկ ոտքը ծալած ցուլեր (աղ. XXVIII$_{2,5}$): Առանձին խումբ են կազմում զարդարուն կամ անզարդ մակերես ունեցող դույլերը (աղ. XXVIII$_1$). դրանց իրանի վերին մասում՝ շրթի մոտ, կանթի ամրացման համար, օղակներ ունեցող ձևավոր բրոնզյա թիթեղներ են դուրգամված, որոնց մի մասը կնոջ դեմք և թռչնի թևեր ունեցող արարածի տեսք ունի: Կանթերի ամրացման համար նույն հավելազարդն ունի և 600լ. տարողությամբ, ծիսական արարողությունների ժամանակ օգտագործված, կիսագնդաձև իրանով բրոնզյա կաթսան: Պեղումներից հայտնաբերված, մետաղից պատրաստված սպասքի առարկաների հաջորդ խումբն են կազմում սափորները (աղ. XXVIII$_4$): Ներկայացված նյութերը պատրաստելու համար վարպետները կիրառել են կռման, ձուլման, զոդման, փորագրման, դուրգամելու, դրոշմելու և այլ եղանակներ: Դրանց շարքում առանձնանում են մանրարուքը, ընդելուզումը, որոնք լայնորեն կիրառվել են տարատեսակ զարդեր պատրաստելու ընթացքում (աղ. XXVIII$_{7,9}$): Վերջիններս, բայց հատկապես տարբեր ձևերի արձանիկները (մարդակերպ, կենդանակերպ), նուրբ և ճշգրիտ աշխատանք պահանջող այլ իրեր, պատրաստված են մոմե նախօրինակի օգտագործմամբ, որը հնարավորություն էր տալիս արտահայտել ստացվող իրերի բոլոր մանրամասները: Նման նախօրինակներ են օգտագործվել և զահավորակի ոտքերի, գահի առանձին զարդարուն մասերը, բրոնզե աշտանակներ պատրաստելու համար (աղ. XXI$_{1-6}$): Հայտնաբերված են և երկաթից պատրաստված աշտանակներ:

Արվեստի կատարյալ նմուշներ հանդիսացող այս և այլ իրերի մի զգալի մասը արտադրվել է թագավորական արհեստանոցներում: Սեփական արհեստանոցներ են ունեցել նաև տաճարները: Մուսասիրի տաճարում, օրինակ, եղած բրոնզե իրերի և ձուլուկների ընդհանուր կշիռը 114 տոն է կազմել:

Զարգացման բարձր մակարդակի վրա է գտնվել նաև քարագործությունը: Դրա լավագույն ապացույցն են ոչ միայն շինարարական հնարքները, քանդակները, այլև սպասքի տարբեր առարկաները, կոտքերը, կիսաթանկարժեք քարերից (ագաթ, սարդիոն) պատրաստված ուլունքները, կնիքները, տուփերը և այլն (աղ. XXVII$_{11,12}$, աղ. XXIX$_{8,9}$, աղ. XXVIII$_6$):

Նյութերի հաջորդ և մեծագույն խումբ են կազմում տարատեսակ խեցանոթները, որոնք ըստ կիրառության բնագավառների, հիմնականում երեք խումբ են կազմում: Առաջին խմբում են մթերքների պատրաստման և պահպանման համար նախատեսվածները: Դրանք ներկայացված են մի քանի հարյուր լիտր տարողություն ունեցող կարասներով, սիգարաձև խոշոր անոթներով (աղ. XXVII$_{1-3}$), տաշտակաձև մեծ ամաններով (աղ. XXVII$_{13}$), խնոցիներով: Վերջիններս ներքին մակերեսի վրա ելուստներ ունեն. դրանք արագացրել են կարագի ստացումը, որի պատրաստ լինելը ստուգվել է այդ նպատակի համար պատրաստված անցքով: Հատակի վրա անցք ունեն սիգարաձև խոշոր անոթները. դրանք նախատեսվել են գարեջուր պատրաստելու համար, իսկ անցքի վրա դրված ծղոտը զտիչի դեր է կատարել: Այս անոթներն անզարդ են: Հակառակ դրանց, կարասները զարդարված են դրոշմազարդ խոշոր ուղղանկյունիներով, կիսաշրջանակներով, սեգմենտներով, սուր կամ կլորացող գագաթներ ունեցող եռանկյունիներով, հավելադիր պարանաձև գոտիներով: Հաճախ այդ խոշոր անոթների դուրս ճկված տեսք ունեցող զանգվածեղ շուրթի տակ հիերոգլիֆ նշաններ են արված, երբեմն և՝ տարողությունը մատնանշող սեպագրեր: Առանձին դեպքերում հանդիպում են տարբեր տեսակի փորագիր պատկերներ (ձի, ռազմակառք, բուսանախշ և այլն) ու կավածեփ քանդակներ (ցուլ, առյուծ և այլն): Կարասներում պահպանվել են գինիների տարբեր տեսակներ, ձեթ և այլ հեղուկ մթերքներ: Այս տեսակետից առանձին կարևորություն է ձեռք բերում Թեյշեբաինիում հայտնաբերված

երեք սենյակից կազմված խոշոր ձիթհան արհեստանոցը, որտեղ քնջութի ձեթ են ստացել: Կարասներն ախտահանել են ծծմբով ծխեցնելու միջոցով: Այդ են ապացուցում և Թեյշեբաինիում, կարասների հարևանությամբ գտնված ծծմբի կուտակումները: Ծխեցումը կատարվել է սնամեջ ոտիկ և կլորացող իրանի վրա տարբեր ձևերի ու չափերի անցքեր ունեցող սկահակաձև անոթների միջոցով (աղ. XXVI$_{4,7}$): Հայտնաբերված են և մեծ քանակությամբ չաներ-տաշտակներ. կոնաձև լայնաբերան այդ խոր ամանները հարմար են կաթնամթերքը հավաքելու և պահպանելու համար: Դրանց մեջ պատրաստել ու պահպանել են և այլ մթերքներ: Հայտնաբերված են և ձագարներ (աղ. XXVI$_3$):

Հարուստ տեսականիով է ներկայացված նաև սպասքի խեցեղենը: Դրանց շարքում իրենց միատեսակ ձևով առանձնանում են մուգ բալագույն, կարմրադարչնագույն մակերեսով անկանք, միականք, կլորացող իրանով և ուսի մոտ փոքր հարթակաձև ելուստ ձևավորող, բարձր վզով սափորները. դրանց շուրթերի գերակշռող մեծամասնությունը եռաթերթ տեսք ունի, իսկ հատակները՝ օղակաձև առանձնացված նստուկ (աղ. XXVII$_4$): Ավելի ուշ շրջանի (մ.թ.ա. VII-VIդդ.) սափորների մոտ գերակշռում է հարթ հատակը, մակերեսի խամրած գույնը, իսկ վզի հիմքի հարթակը գրեթե անհետանում է: Ինչպես վաղ (VIIIդ), այնպես էլ ուշ փուլի (VII-VIդդ) սափորների կանթի ձևն անփոփոխ է մնում. այն կենտրոնական մասում ճկվածք ունի, ինչը կանթի կտրվածքին լոբու տեսք է տալիս:

Սպասքի խեցեղենի հաջորդ մեծ խումբն են կազմում քրեղանները, թասերը: Սրանք նույն՝ կարմիր, կարմրա-դարչնագույն, երբեմն և դեղնա-կարմրավուն անգոբապատ մակերեսով ամաններն են, որոնց մի մասն ունի կլորացող կամ կիսագնդաձև իրան (աղ. XXVII$_{9,10}$), մյուսների մոտ, այն վերին մասում գոգավորվող է և շեշտված անցումով միանում է ստորին հատվածում կլորացող մասին (աղ. XXVII$_{7,8}$): Ինչպես սափորները, այնպես էլ քրեղանները, ավարտվում են մի դեպքում օղակաձև, շեշտված նստուկով, այլ դեպքում ձևավորվում են հարթ հատակներ: Սովորական են և փոված կողերով քրեղանները: Ամանների այս խումբը ևս, ինչպես և սափորները, հաճախ կրում են արհեստանոցի դրոշմը (նապաստակ, թռչուն, նետ և այլն): Սպասքի խեցանոթների շարքում սովորական են կերակուր պատրաստելու համար նախատեսված կճուճները, որոնց սև մակերեսը ծխապատ է (աղ. XXVII$_{16}$): Պեղումներից հայտնաբերված են և այլ տեսակներ. մասնավորապես թաս-փիալաները, երկկանք սափորները իրենց ձևերը գրեթե նույնությամբ պահպանում են և հաջորդ՝ վաղ հայկական դարաշրջանում (աղ. XXVII$_{5,6}$):

Պեղումներից հայտնաբերված են նաև մեծ քանակությամբ ճրագներ: Դրանք ձևով նման են փոքր թասերի, որոնք պատրույգի անցկացման համար նախատեսված անցք ունեն բարակ միջնապատի ստորին մասում. միջնապատը ամանը երկու մասի է բաժանում (աղ. XXVI$_6$):

Ձևերի բազմազանությամբ և պատրաստման նրբությամբ են առանձնանում ծիսական խեցանոթները: Դրանց թվում են բազմափող կեռնոսները, որոնք օգտագործվել են կրակով և սրբազան հեղուկով ծիսական արարողություններ կատարելու ժամանակ (աղ. XXVI$_8$): Առանձին ծիսական անոթներ զարդարված են ցլի, առյուծի, այլ կենդանիների ծավալային քանդակներով: Կեռնոսների այլ տեսակներ, իրաններին փոքրիկ կճուճներ ամրացված սկահակների տեսք ունեն: Ծիսական նշանակություն են ունեցել և բարձրավիզ կոշիկի տեսքով անոթները, ինչպես և առանձին ծորակավոր անոթներ (աղ. XXVI$_{1,5,9}$): Ծիսական անոթներից են և աճյունասափորները, որոնց վրա անցքեր են բացված: Հոգեպաշտական պատկերացումներին առնչվող այդ մանրամասնը, նպատակ է ունեցել հոգու ելքումուտքը ապահովելու:

§ 3. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հնագիտական հարուստ նյութերը՝ հայտնաբերված գործիքները, սեպագիր արձանագրությունների տվյալները, ցույց են տալիս, որ տնտեսության առաջատար ճյուղերը զարգացման բարձր մակարդակի վրա են գտնվել: Այդ են փաստում նաև իրենք՝ արքաները, որոնցից յուրաքանչյուրը իր կատարած մեծագործությունների շարքում, առաջին հերթին հիշատակում է ջրանցքների շինարարությունը, պարտադիր ընդգծելով, որ, «ժողն այնտեղ ամայի էր, ոչինչ չէր կառուցված, ես ջրանցք կառուցեցի, խաղողի և պտղատու այգիներ տնկեցի» և նույնիմաստ այլ նախադասություններ, որոնք ավարտվում են արձանագրությունը ոչնչացնողի և կամ այդ գործերը իրեն վերագրողի հասցեին ուղղված անեծքի բանաձևով:

Այդ աշխատանքները, իրոք որ մեծագործություններ են հանդիսացել, որոնք մինչև այժմ էլ չեն կորցրել իրենց նշանակությունը: Դրա լավագույն ապացույցը Սենուայի կառուցած ջրանցքն է, որի մասին պատմահայր Խորենացին հիացմունքով է խոսում: Վերին Մժնկերտ գյուղի մոտակա ակունքներից, Խոշաբ գետից հարավ ընկած տարածքից սկիզբ առնող այդ ջրանցքը, որի երկարությունն ուղիղ գծով մոտավորապես 70 կմ է, մինչև այժմ էլ ջրում է շրջակա գյուղերի դաշտերն ու այգի-

ները: Նույնը կարելի է ասել նաև Արգիշտի Ա կառուցած, Արգիշտիխինիլի այգիներն ու դաշտերը ջրելու համար պատրաստված ջրանցքի մասին, որը սկիզբ առնելով Արաքսից, չորս ճյուղի է բաժանվում: Նշանակալի դեր է կատարել և մինչև օրս գործող, Ռուսա Բ-ի կառուցած ջրանցքը, որը Հրազդանից է սկիզբ առնում, իսկ Ռուսա Ա-ը նորակառույց մայրաքաղաք Ռուսախինիլիի համար 25կմ երկարությամբ ջրանցք և «Ռուսայի ծով» անունը կրող արհեստական լիճ է կառուցել տալիս: Նման ջրանցքներ շատ են եղել. դրանք ոռոգել են քաղաքների և այլ բնակավայրերի այգիներն ու դաշտերը: Առանց նման ջրանցքների, առանց արհեստական ոռոգման, հնարավոր չէր զարգացնել գյուղատնտեսությունը և բերք ստանալ խոշոր տարածքներ զբաղեցնող դաշտերից, պտղատու և խաղողի այգիներից, որոնց մասին հիացմունքով է խոսում Սարգոնը: Այդ ջրանցքները, որոնք լայն ցանցով էին պատել երկիրը, փոխարկել այն ծաղկուն այգիների, բերքառատ դաշտերի, ապահովում էին հարուստ բերքը: Հացահատիկի շտեմարաններից հայտնաբերված հատիկների շեղջերը ցույց են տալիս, որ նրանք ցանել են ցորենի և գարու տարբեր տեսակներ, կորեկ, քնջութ, ոսպ. աճեցրել են ձմերուկ, խաղողի տարբեր տեսակներ: Այդ շտեմարաններում (Տուշպա, Էրեբունի, Արգիշտիխինիլի, Թեյշեբաինի և այլն), հսկայական քանակությամբ հացահատիկ էր ամբարվում: Այդ են փաստում և Ասորեստանի թագավորների արձանագրությունները, որոնցում նրանք պարծանքով են խոսում իրենց տարած ավարի քանակի մասին:

Լայն տարածքներ էին ընդգրկում պտղատու և խաղողի այգիները: Հայտնաբերված նյութերը ցույց են տալիս, որ նրանք աճեցրել են ալուչա-սալոր, ծիրան, նուռ, խնձոր, բալ, տնկել են ընկուզենիներ: Հարուստ են ներկայացված գինեգործությանն առնչվող նյութերը: Քաղաքների պահեստարաններում գտնված են Ոսկեհատ, Միսխալի, Արարատի (աչաբաշ), սև տեսակ խաղողների կորիզներ: Միայն Թեյշեբաինի քաղաքի պահեստներում ամբարվել է շուրջ 400000լ գինի: Մեծ քանակությամբ գինի է պահպանվել նաև Արգիշտիխինիլի, Էրեբունի քաղաքի ամբարներում գտնված կարասներում, որոնց տարողությունը նշվել է վերևում:

Հայտնաբերված ոսկրաբանական նյութերը, գրավոր աղբյուրները, ցույց են տալիս, որ զարգացած էր նաև անասնապահությունը: Ասորեստանի արքաների արձանագրությունները վկայում են ոչ միայն խոշոր ու մանր եղջերավոր անասունների, այլև ձիերի, ուղտերի, գոմեշների Ասորեստան տարվելը: Այդ արձանագրություններում հաշվապահական ճշտությամբ նշվում է տարված անասունների գլխաքանակը, բայց քիչ

չեն և այն արձանագրությունները, որոնց մեջ որոշակի թվերի փոխարեն գրված են «անթիվ, անհամար» բառերը: Սարգոն Բ-ը իր արձանագրություններից մեկում հպարտությամբ է հայտարարում, որ միայն Մուսասիրի տաճարից տարել է 100225 գլուխ անասուն (714թ.): Գրավոր աղբյուրները փաստում են, որ մանր եղջերավոր անասունները մի քանի անգամ գերազանցել են խոշոր եղջերավորին: Հասկանալի է, այդ անասունների մի զգալի մասը Վանի թագավորները իբրև ավար, ռազմատուգանք և կամ հարկերի ձևով ձեռք էին բերում հպատակված երկրներից. դրա վկայությունները բազմաթիվ են, ինչը և ցույց է տալիս, թե անասնապահությունը զարգացած է եղել ողջ Հայկական լեռնաշխարհում:

Զարգացած էր նաև ձիաբուծությունը, որը մեծ նշանակություն ուներ պարբերաբար կրկնվող արշավների, պատերազմների համար. բանակում հեծելազորը և երկանիվ թեթև մարտակառքերը հանդիսանում էին գլխավոր հարվածային ուժը: Պատահական չէ, որ առանձին շրջաններում (Խուբուշկիա, Մանա, Մելիտենե և այլն) հատուկ զբաղվում էին ձիաբուծությամբ: Արձանագրություններում մշտապես նշվում է տարբեր երկրներից տարված ձիերի քանակը, որը ոչ լրիվ տվյալներով կազմել է 33813 գլուխ:

Անասնապահության մյուս ճյուղերի վերաբերյալ եղած արձանագրությունների տվյալներն անբավարար են. Սարդուր Բ-ը իր տարեգրությունում նշում է, որ տարել է 132 գոմեշ, իսկ ջորիների մասին ընդհանրապես խոսք չկա, ինչը չի նշանակում, թե այդ կենդանին անծանոթ է եղել: Ջորիների ոսկորներ հայտնաբերված են Թեյշեբաինիում, իսկ Ասորեստանի թագավորներից Թիգլաթպալասար Գ-ն նշում է, որ Տավրոսի շրջանից տարել է 300 գոմեշ և 660 ջորի: Ավելի մեծ թիվ է մատնանշում Սարգոն Բ-ը. նա ասում է, թե միայն Մուսասիրից տարել է 692 գոմեշ ու ջորի: Արձանագրությունները փաստում են նաև, որ տերության առանձին տարածքներում, բայց հատկապես հարավ-արևելքում (Գիլզանի, Մանա, Բուշտու, Պարսուա և այլն) պահել են ուղտեր, որոնց գլխաքանակը, սակայն, փոքր է. տարված ուղտերի թիվը միշտ չէ, որ նշված է արձանագրություններում: Առկա տվյալներից հայտնի է, որ Իշպուինին և Մենուան Պարսուա երկրից տարել են 1065, իսկ Արգիշտի Ա-ը Մանայից 62 ուղտ է բշել: Այդուհանդերձ, ուղտերի փոքր գլխաքանակը չի նշանակում, թե Վանի թագավորները ուղտերին առանձնապես նշանակություն չեն տվել: Ընդհակառակը՝ ավարի մեջ ուղտերը հիշատակվում են ձիերից հետո և դրանց փոքր քանակությունը ցույց է տալիս, որ անասնապահության այդ ճյուղը առանձին շրջաններում է զարգացած եղել: Դրանց շարքում հիմնականը Ուրմիա լճի շրջակա տարածքներն են եղել:

Տնտեսության առաջատար ճյուղերի մասին բերված թվական տվյալները պերճախոս կերպով վկայում են մեծաթիվ գրագիրների առկայության մասին: Վերջիններիս գրագրություններում հիշատակվում են նաև տարբեր պաշտոններ ունեցող, ինչպես և այլ աշխատանքներ կատարող անձեր, որոնց մի զգալի մասը առնչվել է անասնապահությանը, այց հատկապես ձիաբուծությանը: Օրինակ՝ Ռուսա Ա-ը ունեցել է թագավորական գնդի համար ձիեր վարժեցնող հատուկ մարդիկ, իսկ բերված անասունների հոտերը պահելու համար հովիվներ են եղել: Թագավորական տնտեսությունը վարող անձնակազմի վերաբերյալ պատկերացում կազմելու համար մեծ նշանակություն ունի Թոփրակ -Կալեից գտնված արձանագրությունը, որտեղ խոսվում է Ռուսախինիլիի պալատական անձնակազմի մասին. այն կազմված է եղել 5507 մարդուց: Դրանցից 1000-ը կազմել են բարձրագույն դասի ներկայացուցիչները, իսկ շուրջ 3500 հոգի եղել են ներքինիներ, որոնց թվում էին նաև պատանի գրագիրները: Եղել են նաև արհեստավորներ, իսկ գինեգործները, անասնապահները և այլն, ընդգրկված են եղել ստորին դասում: Այդ դասում են եղել նաև ստրուկները:

Տերության մեջ մեծ դեր են ունեցել տաճարները: Դրանք վարում էին իրենց սեփական տնտեսությունը: Մուսասիրի տաճարն, օրինակի համար, ուներ իր սեփական խաղողի և պտղատու այգիները, անասունների հոտերը, որոնք Խալդիին էին նվիրաբերված. թագավորները այդ գերագույն աստծուն մեծաթիվ անասուններ էին նվիրում: Դրանց մի մասը, ինչպես վկայում է Քելյաշինի արձանագրությունը, քրմերը վաճառում էին: Այս տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում արձանագրություններում հանդիպող «զոհաբերության համար» նախատեսված և «ազատ անասուններ» ձևակերպումները: Ընդ որում ընդգծվում է, թե աստծու անեծքին կենթարկվեն զոհաբերության համար նախատեսված անասունները գողացող կամ վերցնող անձինք, այն դեպքում, երբ «ազատ կենդանին» կարելի էր վերցնել, դրա դիմաց տաճարին տալով համապատասխան արժեքի իրեր:

§ 4. ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԵՎ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐ

Վանի թագավորության պաշտոնական դիցարանի, պաշտամունքի, հավատալիքների վերաբերյալ սեպագիր արձանագրությունները, բայց հատկապես Վանի մոտ գտնվող «Միհերի դռան», ինչպես և Քելյաշինի

Աղյուսակ XXIV

1

2



3

Թոփուզավայի տեքստերը, արժեքավոր տեղեկություններ են պարունակում: Թվարկվածներից «Մհերի դռան» ընդարձակ արձանագրությունում, որը կազմված է Իշպուինիի և նրա որդի Մենուայի կողմից, թվարկված են ոչ միայն բուն Վանի թագավորության, այլև տերության կազմի մեջ ընդգրկված երկրների գլխավոր աստվածությունները: Այդտեղ ցույց է տրվում նաև, թե այս կամ այն աստվածությանն ու սրբությանն ինչ տեսակի և քանակի անասուններ են զոհաբերվել: Արձանագրության վերջում հրահանգվում է Խալդի աստծուն զոհեր մատուցել նաև խաղողի էտի, խշմարի ու խաղողաքաղի ժամանակ:

Վանի թագավորության դիցարանի աստվածները կազմում են 6 խումբ, որոնցից երեքը զբաղեցնում են արական, մյուս երեքը՝ իգական աստվածությունները: Ընդհանուր թվով 70 աստվածություններից յուրաքանչյուրն իր տեղն ունի իրեն հատկացված խմբում: Դրանցից բացի առկա են 9 խմբում դասավորված 28 սրբություն, որոնք կապված են Խալդիի և մյուս գլխավոր աստվածությունների կորովի հետ:

Դիցարանի առաջին եռյակը կազմում են Խալդին, Թեյշեբան և Շիվինին: Գերագույն աստվածը Խալդին էր, որի պաշտամունքի գլխավոր կենտրոնը Մուսասիրում էր գտնվում: Բնիկ բիայնական երևույթ հանդիսացող այս աստվածը հանդես էր գալիս իբրև թագավորական տան հովանավոր: Նրանից էին թագավորները ստանում իրենց իշխանությունը: Խալդին, ինչպես ցույց են տալիս գոտիների և այլ իրերի վրա արված պատկերները, հանդես էր գալիս առյուծի վրա կանգնած, նետ-աղեղով զինված: Խալդիի հետ է կապված և արծիվը: Խալդին պատկերվում էր երիտասարդ և հասուն տղամարդու կերպարով: Խալդիի իշխանությունն անսահմանափակ էր: Նա էր հաղթանակ պարգևում պատերազմի ժամանակ, նա աստվածների արքան էր և պատկերվում էր գահին բազմած. այս աստծուն զոհաբերվել է 6 ուլ, 17 ցուլ, 34 խոյ:

Դիցարանում թվարկված աստվածություններին զոհաբերվող կենդանիների թվարկումից երևում է, որ աստվածներին արու, իսկ աստվածուհիներին էգ անասուններ են զոհաբերվել: Ընդ որում Խալդիին, որին ամենաշատ զոհաբերություններն են կատարվել, բացառության կարգով, զոհաբերվել են նաև ուլեր: Մյուս աստվածներին ուլեր չեն զոհաբերվել: Ինչ վերաբերվում է աստվածուհիներին, ապա դրանց մատուցվող զոհերի քանակը փոքր է. Խալդիի կնոջ՝ Արուբանիին, որի կենտրոնը նույնպես Մուսասիրում էր, զոհաբերվել են ընդամենը 1 կով և 1 ոչխար: Պտղաբերության, արհեստների ու արվեստների հովանավոր այս աստվածուհին, պատկերվել է թե երիտասարդ և թե հասուն կնոջ կերպարով:

Աղյուսակ XXV



1


2

3

4

5

6

7

8


9

1


2


3

4

5

6

7

8

9

10

11

12

13

14

15

16

Աղյուսակ XXVIII


1


2

3

4


5

6



7

8

9

Աղյուսակ XIX

1

2

3

4

5

6

7


8

10

11

9

14

12

13

Մուսասիրում Բագմաշտու անվամբ հիշատակվող այս աստվածուհին պատկերվում է ինչպես Խալդիի հետ, այնպես էլ առանձին, ունենալով ձեռքում դրոշ և ճյուղ. նկարում երևում է, որ նա բռնել է և այծի եղջյուրներից:

Աստվածներից հաջորդը Թեյշեբան է, որը կապվել է ամպրոպի, փոթորիկի ու պատերազմի հետ: Կացնով, գուրզով, նետ-աղեղով զինված այս աստվածը պատկերվում էր ցլի վրա կանգնած. Կարմիր բլուրից գտնված այս աստծո արձանիկի ձեռքում կան կացին և գուրզ (աղ. XXIX$_6$): Թեյշեբային զոհաբերել են 6 ցուլ և 12 խոյ, իսկ նրա կնոջը՝ Խուբային, որը համարվում էր երկնքի տիրուհի և մայր աստվածուհի՝ ընդամենը 1կով և 1 ոչխար: Խուբայի նկարը տեսնում ենք Հայկաբերդից հայտնաբերված կնիքի վրա, որտեղ ձեռքերը վեր պարզած աստվածուհու կողքին պատկերված են ծառ և այծ:

Առաջին եռյակի վերջին աստվածը Շիվինին է: Այն կապվում էր արևի հետ և պատկերվում ձիու վրա կանգնած, որն ուղեկցվում է ձկան և արծվի տեսք ունեցող երևակայական, ավելի ճիշտ՝ միաձույլ կենդանիով, արևի սկավառակով և արևը խորհրդանշող կեռխաչով: Շիվինիին զոհաբերել են 4 ցուլ և 8 խոյ, իսկ նրա կնոջը՝ Տուշպուեային, ընդամենը 1 կով և 1 ոչխար: Տուշպուեան, որի կենտրոնը Տուշպա (Տոսպ-Վան) և Ուշինի քաղաքներն էին, պատկերվում էր կնոջ գլուխ և թռչնի մարմին ունեցող էակի տեսքով: Նա հանդես էր գալիս իբրև ցայգալույսի տիրուհի:

Աստվածների երկրորդ եռյակը ղեկավարում է Խուտուենին: Մարդկանց ճակատագիրը, բախտը տնօրինող այս աստծուն զոհաբերվել է 2 ցուլ և 4 խոյ, իսկ լուսնի աստված Շելարդիին՝ 1 ցուլ և 2 խոյ: Դիցարանի ցուցակից երևում է, որ ցածր դիրք ունեցող աստվածներին զոհաբերվող կենդանիների քանակը նվազում է: Աստվածներից 46-ին զոհաբերվել է 1 ցուլ և 2 խոյ: Վերջիններիս թվում է և վիշապակերպ պատկերվող, քաղցրահամ ջրերի Կուեռա աստվածը: Պատերի, գոտիների և այլ իրերի վրա արված նկարներից երևում է, որ եղել է նաև սրբազան ծառի պաշտամունքը. դրա պատկերները սովորական են տաճարների պատերին: Տաճարներում կատարվել են տարատեսակ ծեսեր, այդ թվում՝ թագադրության. այն թագադրվողի կողմից ուղեկցվել է տաճարի կառուցմամբ և տաճարներին բազմաթիվ նվերներ տալով: Այնուհետև տեղի է ունեցել թագադրման արարողությունը: Իշխանությունը դիտվում էր աստվածային - ծագում ունեցող, ընկալվում էր իբրև Խալդիի կողմից տրված, ինչը և արքայի անձն աստվածացնելու հիմք էր ստեղծում: Արքան իրավունք էր ստանում թագ կրել և գայիսոն բռնել այդ արարողություններից հետո

միայն: Այդ գործողությունը սրբագործում էր Խալդիի տաճարի քուրմը, թագավորի առջև՝ իբրև աստծո, զոհեր մատուցելով: Ասորական արձանագրություններից մեկում, ուր խոսվում է այդ ծիսակատարությունների մասին, ասվում է, թե նախորդ թագավորի որդիներից գահն ու հարստությունը ժառանգող արքայազնը Մուսասիր (այլ ընթերցմամբ՝ Մուծաիր), Խալդիի առջև է առաջնորդվել, որտեղ նա եզներ ու անհաշիվ ոչխարներ է նվիրաբերել: Այդտեղ, Խալդի աստծու առջև նա թագադրվել է և իրավունք ստացել թագավորական գայիսոնը կրելու և մարդիկ իբրև հաստատված թագավորի, նրա անունն են բացականչել: Այդ արարողությունների ժամանակ նորընծա թագավորը համայն քաղաքի համար խնջույք է կազմակերպել: Այնուհետև տաճարում արքայի արձանն է դրվել: Թագադրությունից հետո արքան իր առաջին արշավն է կատարել ծախսերն ու կարիքները հոգալու համար, նախապես հայցելով աստվածների գերագույն եռյակի հովանավորությունը: Արշավանքից հետո արքան հաշվետու էր լինում նրանց:

Արձանագրությունները վկայում են, որ եղել են նաև այլ ծեսեր: Մասնավորապես քաղաքների, տաճարների հիմնադրման ժամանակ, և դրանք ավարտելուց հետո, կատարվել են զոհաբերություններ, տեղի են ունեցել մարզական խաղեր, որոնց մասնակցում էր նաև արքան: Արձանագրություններից մեկում ասվում է, որ նման մրցումներից մեկի ժամանակ Մենուան իր Արծիբինի ձիով թռել է 11մ 22 սմ տարածություն, իսկ արձանագրություններից մյուսը, որը գտնված է Վանի Հայկաբերդ թաղամասում, փաստում է, որ Արգիշտի Բ-ի արձակած նետն անցել է 476 մ տարածություն: Հանդիսավոր իրադարձություններից հետո, ինչպես և Ասորեստանում, տեղի են ունեցել բազմանդամ ճոխ խնջույքներ: Կարելի է հիշատակել, օրինակ, Աշշուր-Նաձիր-Ապալ Բ-ի արձանագրությունը, որի մեջ Ասորեստանի արքան հայտնում է, թե պալատի բացման (մ.թ.ա. 879թ.) արարողության խնջույքին, որը շարունակվել է 10 օր, հրավիրված է եղել 69574 մարդ:

Անշուշտ, տարատեսակ ծեսեր են կատարվել և արքաների հուղարկավորության ժամանակ, բայց դրանց մասին գրավոր աղբյուրները լռում են: Ամենայն հավանականությամբ դրանց ժամանակ տեղի են ունեցել ինքնազոհաբերություններ, մարդկային զոհաբերություններ և, ինչպես գրում է պատմահայր Խորենացին Արտաշես արքայի հուղարկավորությունը նկարագրելիս՝ մասնակցել են նաև զորատեսակներ: Այս կապակցությամբ ավելորդ չէ նշել, որ Վանի ժայռափոր սենյակները, ուսումնասիրողների կարծիքով, արքայական դամբարաններ են հանդի-

սացել: Տեղին է ասել, որ Վանի թագավորության բնակիչներին ամենևին էլ օտար չեն եղել ինչպես արհեստական, այնպես էլ բնական ժայռերի խորշերում թաղումներ կատարելը: Ընդ որում այդ թաղումները (դիաթաղում) կատարվել են նաև սարկոֆագների մեջ: Դիաթաղմանը զուգահեռ, ինչպես նշվեց վերևում, եղել են նաև դիակիզումն (դրա ապացույցը բազմաթիվ աճյունասափորներն են) ու դիամասնատումը: Թաղման նման խայտաբղետությունը, Վանի թագավորության տարալեզու բնակչության համար, տարակուսանք առաջացնել չի կարող:

Ընդհանուր գծերով այսպիսին էր Երվանդունիների ստացած ժառանգությունը և պատահական չէ, որ վաղ հայկական միասնական պետության նյութական մշակույթի բազմաթիվ տեսակներ կրկնում են նախորդ դարաշրջաններից հայտնի ձևերն ու մանրամասները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ալեքսեև Վ.Պ., Պերշից Ա.Ի.,** Նախնադարյան հասարակության պատմություն (թարգմ. 5-րդ ուղղված հրատ.), Երևան, 2001
2. **Ավետիսյան Պ.Ա.,** Հայաստանի միջին բրոնզի ժամանակագրությունը և փուլաբաժանումը (պ.գ.թ. ատենախոսության սեղմագիր), Երևան, 2003
3. **Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս.,** Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI–V1 դդ., Երևան, 2006
4. **Ավետիսյան Պ., Բաղալյան Ռ., Հմայակյան Ս., Փիլիպոսյան Ա.,** Հայաստանի բրոնզ-երկաթի դարաշրջանների պարբերացման և ժամանակագրության հարցերի շուրջ (զեկ. թեզիսներ), Երևան., 1996
5. **Գասպարյան Բ.Զ.,** Հայկական լեռնաշխարհի քարի դարը (անտիպ)
6. **Գասպարյան Բ., Նահապետյան Ա.,** Մեզոլիթի տեղը Հայաստանի քարի դարի համակարգում, ՀԱԻ գիտաշրջանի թեզիսներ, Երևան, 1996
7. **Դևեջյան Ս.Հ.,** Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Ձորագետում, Երևան, 2001
8. **Դևեջյան Ս.Հ.,** Լոռի-Բերդ II (միջին բրոնզ), Երևան, 2006
9. **Եսայան Ս.Ա.,** Հայաստանի հնագիտություն, Երևան, 1992
10. **Թումանյան Գ.Ս.,** Ուշ բրոնզեդարյան թաղման ծեսը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (ըստ հնագիտական տվյալների), պ.գ.թ. ատենախոության սեղմագիր, Երևան, 1997
11. **Թորոմանյան Թ.,** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Հատոր I, Երևան, 1942
12. **Թորոսյան Ռ.Մ.,** Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը (մ.թ.ա. 4-րդ հազ.), Երևան, 1976
13. **Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ.,** Հին Շիրակավան, Երևան, 2002
14. **Իսրայելյան Մ.Ա.,** Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971
15. **Իսրայելյան Հ.Ռ.,** Պաշտամունքն ու հավատալիքները ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973
16. **Խանզադյան Է.Վ.,** Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա., III հազ., Երևան, 1976
17. **Խանզադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.,** Մեծամոր, Երևան, 1973

18. **Խանզադյան Է.Վ.**, Գառնի, հատ. 4, Երևան, 1969
19. **Խանզադյան Է.Վ.**, Էլառ-Դարանի, Երևան, 1979
20. **Խեչոյան Ա., Գասպարյան Թ.Զ.**, Գեղամավան – 1 քարայրի ժայռանկարների գեղարվեստական վերլուծության փորձ, Հ.Հ.Մ., հատ., 13, Երևան, 2005
21. **Խնկիկյան Օ.Ս.**, Արհեստները բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1976
22. **Խնկիկյան Օ.Ս.**, Սյունիքի մ.թ.ա. 4-1-ին հազ.թաղման ծեսի մեկնության փորձ, ԲԵՀ, 1993, № 3
23. **Խնկիկյան Օ.Ս.**, Սյունիքը բրոնզի և երկաթի դարաշրջանում, (պ.գ.դ. ատենախոսության սեղմագիր), Երևան, 1997
24. **Կարախանյան Գ., Սաֆյան Պ.**, Սյունիքի ժայռապատկերները, Երևան, 1970
25. **Հեղինակների կոլեկտիվ**, Հայ ժողովրդի պատմություն, հատ.1 (ակադեմիական ձեռնարկ), Երևան, 1971
26. **Հեղինակների կոլեկտիվ**, Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա., III հազ.-մթ. XIVդ.), Երևան, 2007
27. **Հմայակյան Ս.Գ.**, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990
28. **Հովսեփյան Ռ.**, Առատաշենի նեոլիթյան բնակատեղիի հնաբուսաբանական նյութերը, Հ.Հ.Մ., հատ., 13, Երևան, 2005
29. **Մարտիրոսյան Հ.Ա., Մնացականյան Հ.Հ.**, Նոր Արեշի ուրարտական կոլումբարին, Տեղեկագիր, 1958, № 10
30. **Մարտիրոսյան Հ.Ա.**, Հայաստանի հնագույն մշակույթի ուսումնասիրությունը և նրա զարգացման հեռանկարները, ԼՀԳ, 1974, № 7
31. **Մարտիրոսյան Հ.Ա., Իսրայելյան Հ.Ռ.**, Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1971
32. **Միքայելյան Գ.Հ.**, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Երևան, 1968
33. **Ղաֆադարյան Կ.Գ.** Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը, Երևան, 1984
34. **Սարդարյան Ս.Հ.**, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967
34. **Սիմոնյան Հ.**, Շենգավիթի դամբարանադաշտը, ՀՀՄ XIV, Երևան, 2008
35. **Քալանթար Աշխ.**, Մի հնագույն ջրաբաշխական սիստեմ խորհրդային Հայաստանում (Հայաստան, քարե դարից միջնադար: Երկերի ժողովածու), Երևան, 2007

36. **Փիլիպոսյան Ա.Ս.**, Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագործության համակարգում, Երևան, 1998
37. **Փիլիպոսյան Ա.Ս.**, Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը, Երևան, 1999
37. **Абибулаев О.А.**, Энеолит и бронза на территории Нахичеванской АССР, Баку, 1982
38. **Авдусин Д.А.**, Основы археологии, М., 1984
39. **Аникович М.В.**, Три уровня археологического исследования или три ступени исторического познания. С.А.1988, №4
40. **Арешян Г.Е., Оганесян В.Э., Мурадян Ф.М., Аветисян П.С., Петросян Л.А.**, Конец среднего бронзового века в междуречье Аракса и Куры, ИФЖ, 1990, №1
41. **Амальрик А.С., Монгайт А.Л.**, В поисках исчезнувших цивилизаций, М., 1966
42. **Арутюнян Н.В.**, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964
43. **Арутюнян Н.В.**, Биайнили (Урарту), Ереван, 1970
44. **Бадалян Р., Аветисян П., Ломбард П., Шатенье К.**, Поселение Араташен (неолитический памятник в Араратской равнине), КДА, т. 13, Ереван, 2005
45. **Бугиашвили Т.В., Векуа А.К., Векуа З.А., Мчеладзе И.В.**, Древнейшее нижнепалеолитическое местонахождение, ПКСТ, Тбилиси, 1990
46. **Боей У., Трамп Д.**, Археологический словарь. М., 1990
47. **Боряз В.Н.**, О правомерности, выделения "реконструктивного" уровня исследования в археологии, СА., 1988, №1
48. **Гаспарян Б., Петросян А., Наапетян С., Колоне Д., Шатенье К.**, Предварительные результаты исследования палеолитической стоянки Калаван-2 (марз Гехаркуник), КДА., т., 14, Ереван, 2008
49. **Гаспарян Б., Нагапетян С., Саркисян Г., Габриелян С.**, Каменный век Таширского плато, КДА., т. 13, Ереван, 2005
50. **Геворкян А.Ц.**, Из истории древнейшей металлургии Армянского нагорья, Ереван, 1980
51. **Генинг В.Ф.**, Обьект и предмет науки в археологии, Киев, 1983
52. **Гладких М.И., "Генинг В.Ф.**, Обьект и предмет науки в археологии, Киев, 1983", С.А., 1987, №2

53. **Деведжян С.Г.**, Лори-Берд I, Ереван, 1987
54. **Ерицян Б.Г.**, Ереванская пещерная стоянка и ее место среди древнейших памятников Кавказа, Автореферат канд. ист. наук, М., 1970
55. **Есаян С.А.** Древняя культура племен Северо-Восточной Армении, Ереван, 1967
56. **Есаян С.А. Калантарян А.А.** Ошакан I, Ереван, 1988
57. **Захарук Ю.Н.**, Археологическая культура: категория онтологическая или гносологическая (см. Восточная Европа в эпоху камня и бронзы), М., 1976
58. **Захарук Ю.Н.** Ленинское теоретическое наследие и некоторые вопросы развития археологической науки, СА, 1970, № 2
59. **Замятин С.Н.**, Находки нижнего палеолита в Армении, Տեղեկագիր, 1947, №. 1
60. **Каменецкий И.С.** Археологическая куьтура - ее определение и интерпретация, СА, 1970, № 2
61. **Клейн Л.С.** Проблема определения археологической культури, СА, 1970, № 2
62. **Клейн Л.С.**, Археологическая типология, Л., 1991
63. **Клейн Л.С.**, О предмете археологии (в связи с выходом книги В.Ф. Генинга, Обьект и предмет науки в археологии), СА., 1986, № 3
64. **Кушнарева К.Х.**, Поселение эпохи бронзы на холме Узерлик - тепе около Агдама, МИА, 1959, № 67
65. **Кушнарева К.Х.** Новые данные о поселени Узерлик - тепе около Агдама, МИА, 1965, № 125
66. **Кушнарева К.Х**, Двин, Ереван, 1977
67. **Кушнарева К.Х., Обмен и торговля в Закавказье в древности, КСИА, 1974, № 138**
68. **Кушнарева К.Х Чубинишвили Т.Н.** Древние культуры Южного Кавказа, Л., 1970
69. **Куфтин Б.А.**, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941
70. **Любин В.П.** Палеолит Турции и проблема раннего расследования человечества, СА.1957, №27

71. **Мартиросян А.А.** Город Тейшебаини, Ереван, 1961
72. **Мартиросян А.А.** Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964
73. **Мартиросян А.А.**, Аргиштихинили, Ереван, 1974
74. **Мартиросян А.А.** Раскопки в Головино, Ереван, 1954
75. **Манасерян Н.У.** Позвоночные древней и средневековой Армении (автореферат докторской диссертации), Ереван, 2007
76. **Массон В.М.**, Экономика и социальний строй древних обшеств, Л, , 1976
77. **Массон В.М.**, Достижения и перспективы советской археологической науки, СА., 1987, № 4
78. **Маликишвили Г.А.**, Урартские клинообразные надписи, М-Л, 1960
79. **Мунчаев Р.М.**, Кавказ на заре бронзового века, М., 1975
80. **Межлумян С.К.**, Палеофауна эпохи энеолита, бронзы и железа на територии Армении, Ереван, 1972
81. Мезолит СССР (в серии "Археология СССР"), М., 1989
82. **Мелларт Дж.**, Древнейшие цивилизации Ближнего Востока, М., 1982
83. **Оганесян К.Л.** Эребуни, Ереван, 1968
84. **Оганесян В.Э.**, Серебряный кубок из Карашамба, ИФЖ, 1988, № 4
85. **Паничкина М.З.**, Палеолит Армении, Л., 1950
86. **Палеолит Африки:** Возникновение челивеческого общества (см. «Палеолит мира»), Л., 1977
87. Палеолит СССР (в серии "Археология СССР"), М, 1984
88. **Петросян Л.А.**, Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до н. э.), Ереван, 1989
89. **Пиотровский Б.Б.**, История и культура Урарту, Ереван, 1944
90. **Пиотровский Б.Б.**, Археология Закавказья, Л., 1949
91. **Пиотровский Б.Б.**, Ванское царство (Урарту), М., 1959
92. **Пиотровский Б.Б.**, Кармир – Блур (т.т. 1, 11, 111, Ереван, 1950, 1952, 1955)
93. **Пиотровский Б.Б.**, Основные этапы дрейнейшего земледелия в Армении, ИФЖ., 1961, № 3

94. **Палумби Д., Бадалян Р.**, Неолит – энеолитическая керамика поселения Араташен, КДА., т. 13, Ереван, 2005
95. **Пряхин А.Д.** История советской археологии (1917-середина 30-х гг.), Воронеж, 1986
96. **Хачатрян Т.С.** Древняя культура Ширака, Ереван, 1975
97. **Хауэлс Уильям,** Homo Sapiens; 20 миллионов лет эволюции, Курьер, август – сентябрь, М., 1972
98. **Черных Е.Н.**, История древнейшей металлургии Восточной Европы, М., 1966
99. **Чилашвили Л. А.** Городище Урбниси (историко - археологическое исследование), Тбилиси, 1964
100. Энеолит СССР (в серии "Археология СССР"), М, 1982
101. **Фрезер Д. Ж.** Золотая ветвь, М-Л., 1931

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԼՀԳ – Լրաբեր հասարակական գիտությունների
ՊԲՀ – Պատմա-բանասիրական հանդես
ՀՀՄ – Հայաստանի հնագույն մշակույթը
ИФЖ – Историко-филологический журнал
СА – Советская археология
КСИА – Краткие сообщения Института археологии
ПКСТ – Палеолит Кавказа и сопредельных территорий
КДА – Культура древней Армении

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1
Հնագիտության պատմության ակնարկ
1. Հնագիտության ձևավորումն ու զարգացումը մինչև XIXդ. կեսերը 5
2. Հնագիտական աշխատանքները նախախորհրդային Հայաստանում 8
3. Տեսությունները ու դպրոցները XIXդ. վերջում – XXդ սկզբում 13
4. Հնագիտությունը խորհրդային Հայաստանում 16

Գլուխ 2
Հնագիտական հասկացություններ. հուշարձանների հետազոտությունների մեթոդները
1. Հնագիտական սկզբնաղբյուրներ 21
2. Հնագիտական հետախուզություն 22
3. Բաց և փակ համալիրներ 24
4. Դամբարանների և բնակավայրերի պեղումների մեթոդները. հնագիտական հասկացություններ 27
5. Տիպ. հնագիտական մշակույթ 33
6. Նյութերի տարիքը որոշելու մեթոդները 35
7. Հնագիտության կապը այլ գիտությունների հետ 39

Գլուխ 3
Հին քարի դարաշրջան (պալեոլիթ)
1. Դարաշրջանի փուլաբաժանումը 41
2. Վաղ պալեոլիթ 44
3. Միջին պալեոլիթ 49
4. Ուշ պալեոլիթ 51

Գլուխ 4
Միջին և նոր քարի դարաշրջաններ
1. Միջին քարի դարաշրջան 55
2. Նոր քարի դարաշրջան 60

Գլուխ 5
Պղնձե - քարեդարյան մշակույթը (էնեոլիթ)
1. Դարաշրջանի բնութագիրը 66
2. Բնակարաններ 67
3. Նյութական մշակույթը 69

Գլուխ 6
Վաղ բրոնզեդարյան մշակույթը **76**
1. Տարածքային ընդգրկումն ու փուլաբաժանումը 76
2. Բնակավայրեր, տաճար – սրբարաններ 78
3. Դամբարաններ 85
4. Նյութական մշակույթ 86
5. Անցումային շրջան 95

Գլուխ 7
Միջին բրոնզի դարաշրջան **98**
1. Բնակատեղիներ 98
2. Դամբարաններ 102
3. Նյութական մշակույթն ու փուլաբաժանումը 104
4. Անցումային շրջանի մշակույթը 111

Գլուխ 8
Ուշ բրոնզեդարյան մշակույթը **115**
1. Բնակավայրեր և կացարաններ 115
2. Դամբարաններ 119
3. Նյութական մշակույթը 121

Գլուխ 9
Երկաթեդարյան մշակույթը **129**
1. Պատմական ակնարկ 129
2. Բնակավայրեր 130
3. Տաճարական համալիրներ 134
4. Դամբարաններ 138
5. Ա. Վաղ երկաթի դարաշրջանի նյութական մշակույթը 139
   Բ. Երկաթի լայն տարածման դարաշրջանի մշակույթը 145

Գլուխ 10
Տնտեսությունը բրոնզի, երկաթի դարաշրջաններում **152**
Ա. Երկրագործություն և անասնապահություն 152
1. Անցում արտադրող տնտեսության և դրա աստիճանական զարգացումը 152
2. Վաղ երկրագործություն 155
3. Երկրագործությունն ու անասնապահությունը բրոնզի դարաշրջանում 158

Բ. Արհեստները բրոնզի, երկաթի դարաշրջաններում 163
1. Մետաղագործություն և մետաղամշակություն 163
2. Խեցեգործություն 167
3. Փայտամշակություն 171
4. Մանածագործություն և ջուլհակություն 173
5. Կաշեգործություն 174
6. Քարագործություն 175
Գ. Փոխանակություն և առևտուր 177

Գլուխ 11
Հավատալիքներ ու պաշտամունք **183**
1. Հավատալիքները և դրանց առաջացման պատճառները 183
2. Որսորդական հավատալիքներ 185
3. Անդրշիրիմյան կյանք 186
4. Պտղաբերության պաշտամունք: Օջախ-կրակի պաշտամունքը 189
5. Բնության երևույթներ 190
   Ա. Յակերպ արձանիկներ 193
   Բ. Օձապատկերներ և օձագլուխ ապարանջաններ 194
6. Տիեզերական պատկերացումներ 195
   Երկնային լուսատուներ, մոլորակներ 196

Գլուխ 12
Վանի թագավորության մշակույթը **198**
1. Քաղաքաշինություն և ամրոցաշինություն (Էրեբունի, Արգիշտիխինիլի, Թեյշեբաինի, Արագածի ամրոցը) 199
2. Նյութական մշակույթը 211
3. Երկրագործություն և անասնապահություն 219
4. Պաշտամունք և հավատալիքներ 223

Գրականություն **233**

Հապավումների ցանկ **238**

ՕՆԻԿ ՍԱՐԳՍԻ ԽՆԿԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(ՀԻՆ ՔԱՐԻ ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ)

Ուսումնական ձեռնարկ

Համակարգչային ձևավորող՝ Ն.Օ. Խնկիկյան

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ֆորմատ՝ 60x84 1/32, թուղթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 200:
Ք. Երևան, Ղ. Փարպեցի 26/26 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am